

**ԶԱՐԵՆՑՅԱՆ
ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ**

8

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆԻ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ**

ԵՐԵՎԱՆ – 2007

ՀՏԴ 891.981.0

ԳՄԴ 83.3 Հ

Չ 281

**Ժողովածուն հրատարակության
պատրաստեցին Վ. Գարրինյանը և
Ա. Եղիազարյանը**

Խմբագիր՝ Վ. Գարրինյան

Չ 281 Զարենցյան ընթերցումներ (Հոդվածների ժողովածու).
Խմբ.՝ Վ. Գարրինյան, Գիրք 8, Եր., ԵՊՀ հրատ., 2007,
200 էջ:

«Զարենցյան ընթերցումների» այս՝ 8-րդ գրքի հոդվածների
հիմքում ընկած են Երևանի պետական համալսարանի հայ
քանասիրության ֆակուլտետի հայ նորագույն գրականության
ամբիոնի և ՀՀ ԳԱԱ գրականության ինստիտուտի համատեղ
կազմակերպած «Զարենցյան ընթերցումներ» ավանդական զի-
տական նստաշրջանի գեկուցումները:

ԳՄԴ 83.3 Հ

ISBN 978-5-8084-0910-1

© ԵՊՀ-ի հրատարակչություն, 2007 թ.

ՎԱԶԳԵՆ ԳԱՐԵՒԵԼՅԱՆ

«...ՀԱՐՑՈՒՐ ՏԱՍ ՏԱՐԻ, ՀԱԶԱՐ ՏԱՍ ՏԱՐԻ...»

(Ներածականի փոխարեն)

«Արդեն տաս տարի, հարյուր տաս տարի...» բանաստեղծական առղջ այսօր մի այլ իմաստավորումով կրկներգվում էր իմ ուղեղում, անգամ մղում բարձրածայնելու՝ «Հարյուր տաս տարի... հարյուր տաս տարի...»: Չարենցի տարիքն է: Դարը բռնորել է ու նաև երկրորդի առաջին տասնամյակը: (Ու եթե բժախնդիրը լինենք՝ Չարենցը ուսք է դնում իր երրորդ դարը. 19-րդ դարում նա ապրեց երեք տարի, իսկ իհմա 21-րդ դարն է: 1907-ին Կարսի ռեալական դպրոցի 10-11-ամյա աշակերտի համար «զրքերի աշխարհը» մուսքը գործելու, ինչպես նաև, դասընկերների վկայությամբ, գրական առաջին փորձերը անելու ժամանակն էր, ուրեմն թող որ մեզ քույլ արվի ասելու, թե 2007-ը գրական աշխարհ Չարենցի մուտքի 100-ամյակն է):

Իր վերջին ժողովածում՝ «Գիրք ճանապարհին», Չարենցը «մատյան» է անվանել՝ հավատարիմ մնալով միջնադարյան ավանդույթին: Մատյանն էլ «ճանապարհի գիրք» է վերնագրել, որպես «պատմության քառուղիներով» անցած ժողովրդի փորձի իմաստավորում՝ նոր ճանապարհ ընկնողների համար, որ իր օրերի մարդիկ են ու նաև գալիքի: Եվ հատկապես գալիքի:

**Դու գիտես, որ քո մատյանն այս վերջին
Ոչ թե օրերի համար ես գրել,
Այլ տարիների՝ հեռակա ու ջինջ,
Եվ գուցի, անգամ, դարերի նորեկ:**

Տարիներն անցան, և դարն անցավ: «Նորեկ դարերից» դեռ առաջինն է: Քսաներորդ դարի մեր մեծագույն բանաստեղծի ոչ միայն «վերջին մատյանը», այլև ամբողջ ստեղծագործությունը սնեց հետչարենցյան մեր պոեզիան, դարի երկրորդ կեսի մեր գրական մտքի ուշադրությունը քենուց իր վրա՝ դառնալով հետաքրքրության, հիացումի կորող, ծնունդ տալով բազմաթիվ մեծագործությունների, ուսումնասիրությունների, հոդվածների:

Տարիներն անցան, դարն անցավ: Հաճքն անսպառ է, և «նորեկ» առաջին դարն է ահա: Իր համճարի գիտակցությամբ հանդերձ («**Զո անունի, Զարենց/ Ասանանսն է՝ «Արև» - /Եվ բառն-«համճարեղ»...**») համեստորեն «գուցե» քեականն է հավելում, քայլ և դարը գործածում է հոգնակի («**Դարերի նորեկ»**):

Ուշադրություն դարձնենք մի կարևոր հանգամանքի: Եթե «Էպիկական լուսարաց» ժողովածուում Զարենցը հաստատում էր **ի՞ր օրերի գեղագիտությունը**, ուղիներ էր նշում ժամանակի բանաստեղծության ընթացքի համար, նրա գրույցը իր ու նաև երիտասարդ սերնդի գրողների հետ էր («Թուղթ բանաստեղծ բարեկամիս՝ N. N-ին, գրված Երևանից», «Թուղթ Ակսել Բակունցին, գրված Լենինգրադից», «Օվկիանի երգը» և այլն), ապա «Գիրք ճանապարհի» ժողովածուի բաժիններից մեկը՝ «**Տաղեր և խորհուրդներ»** շարքը, գրույց է ոչ միայն ներկայի մարդկանց հետ, խորհուրդ ու պատգամ է՝ եղված ոչ միայն օրերի մարդկանց, ոչ միայն ժամանակի ստեղծագործողներին է սովորեցնում արվեստի գաղտնիքները, այլև՝ առավելաբար գրուցում, խոսք ու խորհուրդ է ասում ապագայի մարդկանց, գալիքի պոետներին: Հիշենք թեկուց մի քանի վերնազրեր՝ «**Տաղ սիրո ծոնված ապագայի պարմանիներին**», «**Տաղ եկվորներին ողջունելու համար**», «**Յոթ խորհուրդ քաղաք կառուցողներին**» («**Ո՞վ դուք, որ գալու եք վաղը...»), «**Յոթ խորհուրդ գալիքի սերմացաններին**», «**Յոթ խորհուրդ գալիքի երգասաններին**» և այլն:**

Ինչո՞ւ է այդպես: Արդիաշունչ ու արդիահունչ մեծագույն բանաստեղծն էր նա, որ հավատացած էր (անցյալի մեծերի և հատկապես՝ Պուշկինի դասերով), թե երգի, պոետի հավերժությունը ժամանակի հետ համահունչ լինելու, նրան նյարդերով կապվելու, կյանքը ճշմարտապես սիրելու և անկեղծության պայմանով է միայն հաստատուն, սակայն ճշմարիտ բանաստեղծության ու բանաստեղծի գնահատման չարենցյան չափանիշը նրա հավերժացուն է դարերի մեջ:

Նկատված է, որ Զարենցի պոեզիայում, սկզբից մինչև վերջ, հաճախաղեալ են սի քանի բառ-պատկերներ, որոնք բնուրագրում, հատկանշում են բանաստեղծի ստեղծագործությունը, բանակի են դառնում նրա՝ կյանքի, աշխարհի ու արվեստի նկատմամբ ունեցած վերաբերմունքը առավել ճիշտ հասկանալու համար: Եթե Աղարարյանը ընթերցողի ուշադրությունը բնեռում է առավելաբար՝ արև և ճանապարհ բառերի ու արևի ճանապարհ արտահայտության վրա, ապա Էդ. Չրբաշյանը առանձնացնում է հատկապես դարք բառ-հասկացությունը և ցույց տալիս, թե ինչ իմաստային նրբերանգներ է ստանում այն Զարենցի պոեզիայի զարգացման տարրեր փուլերում:

Ես պարզապես ուզում եմ ընդգծել, որ դարք Զարենցի համար պոեզիայի հարատեսության չափանիշն է: Այն, որ Զարենցը այն խառնակ օրերին (1920 դժվար թվական), հայտարարում էր, թե իր անունը պիտի դարերում հնչի «քարձր ու մեծ», և որ ինքը դարերից է զալիս ու գնում է դեպի դարերը, «գեղի վառվող ապագան», չհամարենք զուտ սեփական հանճարի գիտակցություն (թեև ենթագիտակցական այդ շերտն էլ բացառելի չէ) կամ՝ հպարտ երիտասարդի անհամեստ ինքնազովություն, այն ավելի շատ և ավելի ճիշտ, Զարենցի հավատն էր հայոց բանաստեղծության ապագայի նկատմամբ, որ դարերից է զալիս և դարերն է գնալու հաստատապես: Զարենց անունը պարզապես խորհրդանիշն է և փոխարինողը հայոց բանաստեղծության:

Նոյեմբերի 1920 թ. «Նախրի երկրից» ռազիոպոեմում ի լուր
աշխարհի հայտարարում էր, ինչպես ռադիոն, որ ինքը՝
«Նախրցի մի հսկա պոետ», եկել է հեռու դարերից ու «կանգ-
նել է սեգ»:

Ոտքերս ամուր հողի մեջ մխած,
Գլուխս աստղերում...
...Իմ հավերժատես, պայծառ աչքերով
Նայում եմ հեռուն:

Նախրյան, հայոց բանաստեղծի մասին են այս տողերը՝
ոտքերը հողի մեջ՝ ճախրյան հողի և գլուխը աստղերի մեջ,
որ զայլքն է: Ընդամենը մեկ տարի առաջ Հովհ. Թուման-
յանը գրեթե նոյմ պատկերով էր բնութագրում «ազատ, հա-
րազատ հողի» վրա ստեղծագործող հայ բանաստեղծին.
«Սինչև այժմ մեր գրականությունը հարազատ հող չի ունե-
ցել իր ոտքի տակ, մեծ մասով զաղութային գրականություն
է եղել: Բանաստեղծի ուսը իրական ու հարազատ հողի վրա
պիտի լինի, նրանից հետո միայն նա կարող է բարձրանալ,
թեկուզ գլուխը մինչև երկինք հասնի...»: Այս խոսքերը «Պա-
տաճի» ալմանախի հարցարանի՝ Թումանյանի պատաս-
խանից են, այն նոյն ալմանախի, որի մեջ 1912 թ. տպա-
գրվել էր Չարենցի առաջին բանաստեղծությունը:

Չարենցն անշուշտ կարդացել է Թումանյանի խոսքը
իրեն առաջինը գրական ճանապարհ հանած ալմանախում,
այն Թումանյանի, որին ընդամենը երեք տարի հետո (նոյ-
նիսկ դասականներին մերժելու շրջանում) պիտի հղեր այս
տողերը. «...Պիտի զամ Թիֆլիս՝ իմ անհուն ակնածանքը բե-
րելու Զեր վաստակած և իմաստուն կյանքին, որ նվիրել է
հայրենի եզրքին այնքան շռայլ ձեռքով հոգեկան բարիք-
ներ ու գանձեր», իսկ դրանից տաս տարի հետո աներ մեծ
ընդհանրացումը՝ «Թումանյանն է անհաս Արարատը մեր
նոր քերթության»:

Ժամանակ և Դար բնութագիր բառերը Չարենցի գեղա-
գիտության մեջ ինչ-որ տեղ հոմանիշներ են դառնում: Դարը

Ժամանակի ընդհանրացումն է, «Ժամանակի շունչը» օրվա համար չի ասված, այլ ժամանակահատվածի, որ ընդհանրացումով դարն է: Չարենցի դարը մեր ազգային ողբերգության, վերածննդի ու տագնապահարույց ընթացքի 1912-1937թթ. ամփոփած ընդամենը քսանինդ տարին է: Բայց դա մի ամբողջ դարաշրջան էր: Այսօրվա հեռվից՝ հետշրենցյան դարը բոլորել է իր յոթ տասնամյակը:

Չարենցի հավատամքով ծշմարիտ բանաստեղծը երեք ժամանակների մեջ է՝ անցյալի, ներկայի ու ապագայի: Նա պիտի ճգտի բարձրանալ դարից: Բայց դրա համար՝ «ոգով դու պիտի թե անցյալը զգաս հարազատ և թե նոր լինես ներկայում»:

Իր պատկերացրած բանաստեղծի պատկերը դեպի ապագա պացող նժույզի վրա նստած այրն է, որ աչքերը հառել է անցյալին: *Տեսանելի և զեղեցիկ պատկեր-կերպավորում* է. հեծյալի և նժույզի ընթացքն է, որ ներկայում է, ապագայի տեսլականը՝ առջնում, բայց ահա հայացքը՝ ուղղված է անցյալին. ի՞նչ է բողել թիկունքում, ո՞վ է ինքը և իր նախնիքը, որտեղի՞ց է գալիս և ո՞ւր է գնում: «**Ի՞նչ ենք եղել երեկ և ինչ պիտի լինենք վաղը**» հարցադրումը բառացի Չարենցը հնչեցրել է իր ստեղծագործական տարրեր շրջաններում:

Չարենցն իր օրերի մեծ բանաստեղծն էր, իր շրջանի հայ բանաստեղծության քիչ է ասել՝ «ողնաշարը», իր դարի, ժամանակի զրահով հանդերձավորված զրական առաջնորդը, սիրված ու զնահատված շատերի կողմից (զրական խաժամուժը, «չնչին ամպերի սև քողը», ավաղ, ավելի ուժեղ գտնվեց), և սակայն բանաստեղծը կարևորում էր սերունդ-ների դերը, որ ծշտելու են նրա տեղը:

**Դարը մեզ մուրիհակ է տալիս, բայց այդ փակ
մուրիհակի հատուցումը**

Սերունդներն են ծշտում ապագա...

Եվ «գալիք կյանքում անխորտակ ու ահազին» կանգնելու պայմանը իր դարի կյանքը ամրողովին՝ «և՛ հուզումնափոր, և՛ խորունկ, և՛ վեհ» պատկերելն է, և՝

**Երգը այնժամ է միայն քնըրաղից և իր դարից անցնում,
Երբ առնչվում է կյանքին հուր միջուկով իր անանց:**

Արդեն յոր տասնամյակ՝ բոցավառ ու խորունկ մարդը, որ Զարենցն էր, չկա, բայց բանաստեղծ Զարենցի կերպարը՝ իր ստեղծագործությունից հառնող, շուրջ մեկ դար սերունդների հետ է:

Ու նաև այսօր՝ իր երկրորդ դարում: Զարենցի խոհերը, խորհուրդներն ու պատգամները ուսանելի են այսօր էլ գուցե ավելի քան: Ու պատահական չէր, որ «Ճանապարհի գրքում» նա չի մոռացել նաև հաջորդ դարի ճամփորդներին, որ այսօրվա սերունդներն են: Երեք «յոր խորհուրդ»-ով, որ ուղղված են զալիքի քաղաք կառուցղներին, սերմնացաններին ու երգասաններին (նաև ապագայի պարմանիներին), նա ասես ամրողացնում էր կյանքի բոլոր բնագավառները՝ կենսական բարիքները արարողներին, շինարարներին, արվեստի, խոսքի վարպետներին:

Եվ մենք՝ գրականագետներս, որ այսօր ստանձնել ենք մեր անցյալի ու ներկայի գրական հունձքը գնահատելու պարտավորություն, պիտի չափանիշներ ունենանք, իսկ չարենցյան զեղագիտությունը ոչ միայն զալիքի երգասաններին, այլև մեզ է սովորեցնում այդ չափանիշները: Զկրկնելու համար «յոր խորհուրդները»՝ եիշենք գոնե մի քանիսը.

**«Երգը երկրից է աճում, և ո՛չ քե ճայներից կամ բառերից...»,
«Երգը - լճքացը է ու հուն, և՛ տեղ է, և՛ ոգու**

աղամանոյա վահան...»,

«Ոչ մի աշխատանք տքնաջան չէ այնքան, որքան

ոգու հերկը»:

Զարենցը որքան որ 20-րդ դարի, նույնքան 21-րդի բանաստեղծն է: Նրա նկատմամբ ընթերցողի սերը շարունա-

կական է, և շարունակական է նրա ստեղծագործության մկատմամբ ներկա գրականագիտության հետաքրքրությունը:

Արդեն երեք տասնյակ տարուց ավելի է, որ համալսարանի հայ նորագույն գրականության ամբիոնը պարբերաբար կազմակերպում է գիտական նստաշրջաններ՝ ընթերցումներ՝ նվիրված Չարենցի ստեղծագործությանը, և որին մասնակցում են ոչ միայն համալսարանի գրականագետները, և ընթերցումների նյութերը տպագրվում են առանձին հատորով: Եվ յուրաքանչյուր անգամ, որ շատ կարևոր է, հետաքրքրիր ընթերցումներով հանդես են գալիս երեք սերունդների՝ ավագ, միջին և կրտսեր, գրականագետներ: Ավանդույթը, անշուշտ, շարունակվելու է, և հավատացած ենք, որ նոր, երիտասարդ սերունդը, հենվելով ավանդների վրա, նորովի է հասկանալու և մեկնարանելու Չարենցին, նրա խորախորհուրդ աշխարհը՝ զարմանալիորեն բազմացան, լայնահուն ու խորունկ, ազգային ու համաշխարհային գրականության նրա յուրովի ընկալումը, աղերսներն ու առնչակցությունը, նրա վերցրածն ու տվածը, նրա անջնջելի հետքը հետագա հայ բանաստեղծության վրա:

Սա շարենցյան հաղթարշավի երկրորդ դարն է, ու գալու է նաև տասներորդը ու ապագայի մի նոր ընթերցող Չարենցի ծննդյան օրը նույնպես հանկերգելու է.

«Արդեն տաս տարի, հարյուր տաս տարի,

ՀԱԶԱՐ ՏԱՍ ՏԱՐԻ...»:

ՎԱԶԳԵՆ ՍԱՖԱՐՅԱՆ

«ԻՍԱՍՏԱՍԵՐ ԲԱՐՁԻ» ԳՈՅԱԲԱՆԱԿԱՆ ԽԸԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ԽՈՐԵՆԱՑՈՒ ԵՎ ՉԱՐԵՆՑԻ

Հայոց առաջին Մեծը, ով ծրագրեց իրազործել ժամանակների տրամարանության որոնում-հաստատումը՝ պարզելու ազգի գոյարանական գաղտնիքները, քերպողահայր Խորենացին էր: Գնահատումների չափանիշը որոշակի էր. «Եթե բանականության պատճառով Աստծու պատկերն ենք, և մյուս կողմից՝ բանականի կատարելությունը խոհականությունն է» (ՄԽ, 67), ապա պարզ է, թե ինչ բացատրություն ունի «մեր նախնյաց անիմաստանք բարքը», ինչպես և ինչու պիտի ծնվեն Չարենցյան նիհիլզմն ու նրա կրողները՝ նաև բանատեղծի ժամանակի կնիքով խարանված: Այս սկզբունքն ավելի է շեշտում «Հայոց աշխարհի ցեղապետերի ու իշխանների» բանական սահմանափակությունը՝ չհանդուրժելով որևէ զիջում. ուղղակի «ինձ քվում է, որ ինչպես այժմ, այնպես էլ իհն հայաստանցիների մեջ սեր չի եղել դեպի զիտությունը» (ՄԽ, 71):

Ընդգծո՞ւմ է մուրք Պատմահայրը. ի՞նչ դիտավորությամբ է բացարձակացնում մի գնահատական, որի հակառակը ցուցադրող բազմաթիվ կերպարներ ու նրանց գործը պիտի տարեզրի նա իր հավերժական դասագրքում: Նոյից սկսելով՝ նա մեր աստվածաշնչաավանդական և պատմաառասպեկային ծագումնարանությունը հասցնում է Հայկ անվանադիր խտացումին, շարունակում Արամաճյակ-Արամայիս-Արամ՝ նույն խորհուրդը կրող ներդաշնակությամբ, որը հաստատումն է Արարատյան (Քիայնա-Վանի) կամ

օտարահունչ Ուրարտուի ըստ էության հայկական պետականության կազմավորման (մ. թ. 9-րդ դարից): Ազգային պետականության պատմությունը որոշակիանում է Երվանդունիների (մ. թ. ա. 6-2-րդ դարեր) և Արտաշեայանների (մ. թ. ա. 189-մ. թ. - 1) գահակալության և նախորդ ուրարտական շրջանի հազարամյակով: Պետականության մոտ մեկհազարամյա կայուն գոյությունը իր ելևէջումներով հասավ իին թվագրության վերջը: Նոր թվարկություննը սկսվեց ետափ-գրանյան անկումների կամ վայրէջքների օրինաչափությամբ, և օտարածին Արշակունյաց միշտ երերացող զահը (66-428 թթ.), նրանցից հետո պարբերաշրջանային տարօդինակ օրինաչափություն դարձող 500-ամյա անիշխանությունը այս հազարամյակը փորձեցին ամփոփել թագավորության (Թագրատունիների) վերականգնումով, բայց նոր թվարկության երկրորդ հազարամյակը ևս սկսվեց անկումների ողբերգությամբ, որը վայրիվերումներով ձգվեց մինչև այդ հազարամյակի վերջին թոփքների (հանրապեհության) և անկումների (Եղեռնի, կորուսանների) դարը, ու սկիզբ առավ հարցականներով լեցուն երրորդ հազարամյակը: Խառնածին (Երվանդունիների) կամ օտարածին (Արշակունիների) արքայական տների փաստը, ինչը բնորոշ է այլ ազգերին ևս, պատճառներից մեկն է այն բանի, որ Պատմահայրը վերապահումով խոսի Երվանդունիների օրինական զահակալության մասին և բացասական դիրքորոշում ունենա Արշակունիների մեծ մասի նկատմամբ, և դրա թեկուց ներհայեցական տեղյակությունը կարող էր դեր խաղալ Չարենցի նիկիլիզմի մեջ:

Սովոր Խորենացին, ով, ետքրիստոնյան առաջին հազարամյակի կենտրոնում կանգնած, առաջինը համարձակվեց ետ նայել, որպեսզի պետականության կորստից 60 տարի հետո տեսանելի դարձնի գոյության գաղտնիքները և ուղին, կարող էր պատմական մանրամասներով իմանալ ու պեղել անցած հազարամյակների փաստերի ստուգարանությունը թե՝ ոչ, թվում է, այնքան էլ կարևոր չէ. որոշողը գոյա-

բանական հիմնավորումն է, որ տրվեց ամենայն խորագիտակությամբ: Սահակ Բագրատունու պատրանքի մեջ (Զարենցը ժամանակների անկումային հեռավորությունից դա պիտի անի ավելի մոլորում՝ Լենինից մինչև Խանջյան) փնտրելով «իմաստասեր բարքը»՝ Խորենացին խոհականությունը օրինակ է դարձնում Հայկ-Արամ-Տիգրան եռախորհրդի մեջ, խոտածնում Մերուակ Մաշտոց-Սահակ Պարքը բարքը անվարան երրորդող իր կերպարում ևս: Մեզ հավերդ ուղեկցող երեքի ու երրորդության այս խորհուրդը վերացարկման մեջ շոշափելի է դառնում նաև նրանով, որ Խորենացին անթաքույց երևում է իր գործի երեք գլուխներում, ինչպես երկրորդ լույս-ուղեցույցը դարձած Արովյանն էր անում իր դժվարին երկունքի երեք գլուխներում, և մարող լույսի մշուշոտ ուղենիշով առաջնորդող երրորդը՝ Զարենցը իր «պոեմանման վեպի» երեք գլուխներում...

Հետաքրքիր է, որ 1933-34 թթ. գրած «Ուրայիններ»-ում Զարենցը պատմության մեջ երեք ուսուցիչ է առանձնացնում.

Պատմությունը տվել է մեզ ուսուցիչներ երեք մեծ.

Մեկը - դեռ հին կապանքներում միտք ու ընթացք մեզ տվեց.

Սյուսն եկավ ու կործանեց կապանքները մեզ զերող. -

Կերտում է կյանք նրանց հունով Ուսուցիչը մեր երրորդ:

(ԵԶ, 3, 174)

Չարվենք երեք մեծերի (Խորենացի-Արովյան-Զարենց) անունների հետ զուգահեռման զայթակղությանը և երեք դասերի խոհական վերացարկման մեջ իրավունք վերապահենք տեսնելու, հասկանալի է, բանավիճային ընդհանրացումներ. հնի ու հավերժի կապանքների կամ ազգային անազատությունների հաղթահարման ելքը «իմաստասեր բարքն» է («միտք ու ընթացքը»), որը կօգնի ազատվել բոլոր իրական կապանքներից (նաև անցյալի մեծերի, կատարելատիալ հերոսների օրինակով), և այս ուղին ու գործոնները պիտի ազատ ապագայի հավատ ներշնչեն, որ կօգնի տեսնել-ծնավորել նոր «հունով» ընթացող կյանքը:

Ահա, խոհականությունը, ըստ Խորենացու, պետք է որոնել հայկազուն տերերի կերպարներում, քանի որ նրանցով է, որ «այժմ ես կուրախսանամ՝ ոչ փոքր խնդություն զգալով, որ հասնում եմ այն տեղերը, ուր մեկ քնիկ նախնիկ սերունդները բազավորության աստիճանի են հասնում» (ՄԽ, 106): Եվ հնարավոր չի լինում սանձել Պատմահոր ներքին պոռքումը. «Չատ կփափագեի, որ նրանց ժամանակ ես աշխարհ եկած լինեի, նրանց տերությամբ զվարճանայի և այժմյան վտանգներից խուսափած լինեի: Բայց շատ վաղ մեզանից այդ դրությունը փախազ, գուցե նաև վիճակը» (ՄԽ, 108), իսկ գուցե եղանակի մասնաւորությունը ևս...

«Իմաստաեր բարքի» երերուն արդյունքների նման ընկալումը չէ՞ր կարող Զարենցի կասկածը մղել նաև դեպի ոգու և դպրության ազգորոշիչ գոյությունը: Ինչո՞ւ բոլոր հաղթանակ-վերելքներն ու նրանց կրողները, որ նաև Արովյանն էր հպարտությամբ շեշտում իր վեպում (տե՛ս, ԽԱ, էջ 69-70), այժմ ընկալվեցին որպես «անստգյուտ» ցնորք ու մորմոք: Խ. Արովյանը, «Հայաստանու սուրբ հողի» հերոսական տերերի (Հայկ, Պարույր, Տիգրան, Վահե, Տրդատ, Վուաշապուհ, Վարդան, Վահան, Բագրատուններ, Ուորինյաններ) մեծագործությունները՝ զենքի հաղթական կոփկը, աշխարհի մեծերին պատուհասելը և «իմաստությունը իրենց կողմը քաշելը», բնդգծելով, անշխանության հաջորդ կես հազարամյակից ավել անցած ժամանակից հետո ցուցադրում է միասնական ոգու ուժը և արժանապատվության ինքնահաստատ կարևորությունը: Զարենցը, որի ողջ ստեղծագործական տվյալտանքը հիմնականում հայրենիքի ու նրա զավակի որոնումն էր, ուր անխուսափելի դարձան մոլորությունները ևս, երբ փրկությունը պեղվում էր պատերազմի կամ հեղափխության մղջավանջներում անզամ, հաճախ չկարողացավ, «Հայաստան» տեսանելի ներկա գոյության միջոցով նույնիսկ, անցյալի ու ապագայի աներեր լույս տեսնել:

Մինչև վերջ «Առաջնորդի», «Հոկտեմբերի» հավասի մրուրը («Զիրք՝ քեզ Իրանը տվեց, խոսք՝ Նախրին հնամյա, - Բայց Հոկտեմբերը կոչեց քեզ հանճարեղ բանաստեղծ» (ԵԶ, 3, 77,- գրում է 1934-ին) պիտի դրամատիկ դարձներ հայրենիքի, նրա անցյալի լույսի որոնումների ճգնանքը: Ծանապարհի սկզբում ապագային հառած միտքը «անցյալի խավարը» իր անձի մեջ սեփականում է բարի ու հարազատորեն մեղմ: 1915-ին «Ո՞վ կհանդիպի, ո՞վ կրարկի» սկսվածքով տալում գրում է. «Ես՝ եղայրորեն ու մտերմաբար՝ (Ողջունում եմ ձեզ անցած խավարի (Իմաստուն, տխուր ժպիտով բարի) (ԵԶ, 1, 8)»: Անցած օրերը իզուր են կանչում, քանի որ նրա դեմ նորմ է, նոր «աշխարհը հրահգոր»: Բայց նույնիսկ այդժամ աշխարհի մեծ տեղաշարժերը չեն հաղթահարում միայնուրիյան վիճակն ու դրա զգացողությունը, որին զուգահեռվում է հայրենի տանից մենակ հեռացողի դրաման.

Ճամփա եմ լճկել ես մենակ,
Քայլել եմ դարե՛ր ու դարե՛ր:
Երգում է սիրոս մանուկ -
Փլում են շնմքերը քարե:

Հեռո՞ւ է տունս: - Հեռո՞ւ:
Ո՞ւր է, ինչո՞ւ է ... Հիմա
Ծուրջս գալաք է հրի,
Ծուրջս մրրիկ է ու մահ: (ԵԶ, 1, 135)

1918-19 թթ.-ին արդեն *Sերյանի* ու սիմվոլիզմի արձագանքները հաղթահարելու հասուն ճիգերը հաստատում են ու նոր օրերի տրամարանուրյամբ իիմնավորում այն միակողմանի պատկերացումը, թե անցյալը չի կարող սրբազն դեպի ապագա շարժման ուղին: Բայց որոշողը դեռ մնում է խաղաղ ու զերմ կարուղ, անզամ ավերն ու արյունը՝ իրենց ծանր տպավորուրյամբ, անճնականում են բանաստեղծի սրտում հնի ու նորի միաձոյլ գոյուրյամբ: Կասկածն է սրվում, թե «ավերակ ու արճաներկ» իր երկերում, ուր «անսփոփ ու կրակուն» սիրտը «կարմիր երգեր» է երգում, «Խնձ-

պե՞ս պիտի արդյոք ինչեն, ախ, այս երգերը իմ կարմիր-//Իմ ավերակ, իմ ո՛րը երկրում...» (ԵԶ, 1, 137): Ներհակ այս ներդաշնակությունը երկրի, ազգի, ժողովրդի անցյալի ու ապագայի հետ գնալով պիտի սրվի ոչ միայն 20-ականների «ձախության» շրջանում, այլև բանաստեղծի պատմափիլիստիկայության նոր շերտերով ընդհանրանա 30-ականների հալածանքի ու մերժման մթնոլորտում:

Դրամատիկ այս վիճակի չերևացող պատճառներից մեկը «ազգ» պատմական կարգի - կատեգորիայի օրյեկտիվ այլափոխությունն է: Խորենացու «հայկազուն - Հայկի ազգը», Արովյանի «հայոց ազգը» վերափոխվում է «ժողովրդի», աղարտվում է ակունքի տրամարանությունը, քանի որ «ժողովրդ» ի վերջո կարող է նշանակել ինչ-որ մեծ (նաև սին) գաղափարի, ինչ-որ բանի շուրջը ժողոված-հավաքված հանրություն, որը որոշ ցնցումների հետևանքով հեշտությամբ «ամրոխ» է դառնում: Ինչ-ինչ ընդհանրություններով հանդերձ «ազգը» առանձնանում է «ցեղ, ժողովուրդ» հասկացություններից նրանով, որ չի հանդուրժում հոգևոր պարտություն, դրա առկայությունը ազգին մոտեցնում է չգոյությանը: Հասկանալի պատմահոգերանական պատճառներ ունեցող ազգարանական այս ճաքը, որ արձանագրվում է ետարպյանական շրջանում, նշմարելի է դառնում Հռվի: Թումանյանի խոսքում ու դրամատիկորեն փաստվում Չարենցի երկերում: Հ. Թումանյանը «Դառնացած ժողովուրդ» հոդվածում (1910 թ.) գրում էր. «Չարենցի ծնող է եղել մեզ համար պատմությունը: Նա երկար դարերով մեզ դրել է բարբարոս ժողովուրդների ոտների տակ: Իսկ ամեն կենդանի գոյություն, որ ոտնատակ է ընկնում, եթե չի մեռնում, այլանդակվում է, դառնանում ու փշանում» (ՀԹ, 253):

Ժողովրդի ճակատագրում տիրակալ հարցականների մշուշը, ահա, Չարենցի համար անընդհատ բացվում է դեպի «սնգոն»: Վահագնը միֆ էր, որին ընկալեցինք որպես «հզոր, երոտ, երածին», հավատացինք, որ մեզ փրկություն

կրերի, մինչդեռ «Սեր կյանքի եխմներն անդունդը ընկան» (ԵԶ, 1, 317): Հայաստանին փոխարիմնել տվեցինք ցնորք Նախրին, Արևելքի ու Արևմուտքի «ճամփեքի մեջտեղում» «Կանգնել է դարերի ուրու/ Հնամյա երկիրը Նախրի» (ԵԶ, 1, 401. «Ամենապոեմ»): Անգոյության մորմոքը դիտվել է մեր սկզբի հետ, թեկուց բազմախոս հակադրամիանությամբ այս վերմագրում. «Ազգային երազ» («Պոեմ երգիծական և ողբերգական»), ուր «Երկիր Նախրի» վեպին բնորոշ նույն երկակի դիտարկման ցավը այսպես է խոսում.

Երբ տեսա, որ այդ քարավանը մնծ
Հին Արարատյան դաշտի մեջ կանգնեց:
Եվ ես լսեցի, որ դաշտում այդ մութ
Զառանցում է մի մեռնող ժողովուրդ:

(ԵԶ, 1, 338)

«Որտեղի՞ց և ո՞ւմ առաջնորդությամբ ենք զալիս» հարցի պատասխանը «Պատմության քառուղիներով» պոեմում մրագնում է այսպես. «օրերի հեռվում» միայն «ստրկություն, մոխիր, մոռացություն ու մահ» տեսնող քանաստեղծը, ով վստահ է, թե մեզ առաջնորդել են «նախնիներ անստույգ ու ոչնչատեսիլ», «արքաներ անժողովուրդ ու զահազուրկ», ի վերջո եզրակացնում է.

Քայց ուղին մեր եղել է միշտ մթին,
Եղել է անստօյուտ ու անփառունակ,
Տարածել է անրոց ու անժախ՝
Ուրիշների փայլով շարունակ
Չառագունված - ոքքա՞ն, ոքքա՞ն աղետավոր...

(ԵԶ, 3, 31)

Ապագայի՝ անցյալից եկող անորոշության մշուշը հածախ հեղձում է նաև երկրի ներկան, երկիրն ընդհանրապես. քանաստեղծը պարզապես պահանջում է «Վառի՛ երկիրս քո դեմ - մի կարմիր կանթեղ» (ԵԶ, 1, 135), իսկ հայտնի՝ «Անկումների սարսափից» տաղում («Ես եկել եմ դարերից...») իր հավերժության ու վերնագրի տարօրինակ ու տարողունակ ներհակության մեջ ձևավորում է հարցը. «Ի՞նչ է

ուզում քո հոգին, հազարամյա Նաիրի» (ԵԶ, 1, 182): Ու ճախլին խաղաղ կարոտին, որ իր մեջ էր առնում անզամ անցյալի խավարը, հաջորդում է դաժան վճիռը՝ կարծես որպես այդ ակնկալիք հարցի պատասխան.

Ու ցանկացա, որ չօրիներգե ոչ մի քնար
Լուսապսակ պայծառ զալիքը Նաիրի...
(ԵԶ, 1, 275)

Եվ եթե «Ռադիոպոեմներ»-ում Նաիրիի «կարմիր սիրտն» է բերում բոլորին, ապա, մինևոյն է, շատ ճուրք շերտերում Նաիրին ու Հայաստանը մոտենում-նույնանում են, և տառապազին այս բացասումը ուղղվում է ոչ միայն անցյալին, այլև ներկա-ապագային: Կտրուկ հաստատում է, որ անցյալց եկող թմրությունն է տիրել միշտ, և 1922-ին «Երևան» բանաստեղծության մեջ գրում է. «Իսկ Մասիսը՝ քնում բմրած՝ (Երազում տեսնում է ինձ)» (ԵԶ, 2, 17), ուսակ պահանջում է չծգտել հնին, չերազել հինքը. «Եվ զուր է, զուր է սիրտ հարրել (Անմխիքար այդ, սին երազում» (ԵԶ, 2, 175. «Էլեզիա, զրված Վեճնտիկում»):

Պարզ է, որ կասկածի տակ են առնվում նախորդ մեծերի՝ Խորենացու, Արովյանի կողմից ընդգծված ոչ միայն ռազմաքաղաքական, այլև հոգևոր-մշակութային գոյակիմքերը: Եթե «Զրահապատ» Վարդան Զորավար»-ում երևոյթը բացվում է սկեպտիկ հարցադրումով՝ «Օ, չի՞ եղել արդյոք մեր պատմությունն ամբողջ (Սի այսպիսի անզո Ավարայր)» (ԵԶ, 3, 81), ապա «Մահվան տեսիլ» պոեմում կտրուկ է ասվում, որ գուսանները, գրի ու երգի մարդիկ կոչված էին ծշմարտության, լուսի ու խնդության փարոս լինելուց, «Բայց սրտերը ծեր բոցավառ- այն /Մտին ողջակեզ բերիք» (ԵԶ, 3, 70): Նույնքան ուղղակի է խոսքը նաև «Գովք խաղողի, զինու և գեղեցիկ դպրության» պոեմի մեջ.

Բայց չեմ գովերգում երգով իմ այս
...Եվ իին դարության հունն այն դժվար:
Օ՛, աքնություն դու դարերի ծեր,

Որ արքաներին միայն լուսել,
Որ ճորտություն ես սերմանել սև
Եվ սին դպրությամբ ոսկեզօծել:
(ԵԶ, 3, 101)

Եվ հետո հեղափոխության խարկանքին տրված «Նախրցի հսկա պաետը», որ «կարմիր Սոսկովից» «երկարե մի երգ է» բերում բոլորին, դարերի ջշմարտության՝ թեկուզ և ոչ լուսավոր ընկալումների ուժով նոյն պահին պիտի կասկածով նայի այս նվիրումին ևս, եիշի ու եիշեցնի անցյալի ուժը: 1929-ին «Զ-ին» բանաստեղծության մեջ գրում է, թե շպետք է կարծել, որ աշխարհը մեզանով է սկիզբ առնում.

Անցյալը հանկարծ այնպիս է հասնում,
Որ շփորձութից մենք քոչում ենք վեր: (Զ, 38):

1933-ին արդեն իր «քսան տարվա գործը» «ցնորք ու երազ» է համարում և «Անվերնագիր» հերթական վերնաշգիրն ունեցող բանաստեղծության մեջ ընդգծում, որ «ուրիշ երով, սիրով ողողված սիրտը» «զոհ է միշտ, միշտ՝ կարմիր նոխազ» (Զ, 70): Հաջորդում է «որոշ օրերի» ծանր պարտադրանքի խոստովանությունը.

Եվ երբ եկան որոշ օրեր,
Որոշ գործեր եկան երը,-
Անվարծ հնչեց քնարը մեր -
Եվ մնացինք առանց երգ...
(Զ, 64)

Վերջնական վերադարձն ու հարությունը կայանում է օրհասական 37-ին, և հոգեվարքի ակնքարթային պայծառության մեջ ինքնազտություն նման հնչում են բառերը:

Ի՞նչ եմ անում այսօրվա ճեր ցնությունն ու բուրյանը.-
Ես երազում եմ լոկ ի՞մը,- այն, որ տվեց ին արյանը
Բույր ու երանգ հնօրյա,-երազ ու ցնորք անմեկին...
(Զ, 221)

Ինքնազմահատումի տվայտանքը միշտ ուղեկցել է Զարենցին, իր անկումներն ու բռիչքները ներդաշնակել երկրի ճակատագրին: Դեռ 1920-21 -ին «Տաղարան»-ի վերադարձով նա չի վարանում «անորոշ Հայաստանի» դրամատիկ ու հոգևոր բռիչքներով ուրվապատկերվող դիմանկարի՝ «ողբանվագ, լացակումած, արճանման, արյունաքամ, ողրածայն» գոյւների ու հնջունների մեջ ընդգծել իր լուսավոր սերն ու նվիրումը: Երկրի ճակատագրին բնորոշ ու դրանից լիցք առած ներհակ տրամադրությունների միաձուլումը անցյալով ու ապագայով հաստատվում է նաև նախորդ՝ «Հազար ու մի վերք ես տեսել - էլի՛ կտեսնես», բայց նաև՝ «Նարեկացի, Ծնորհալի, Նաղաշ Հովհանքան/ Ինչքա՞ն հանճար, Խելք ես տեսել էլի՛ կտեսնես (ԵԶ, 1, 227) պատկերների ներդաշնակումով. Եվ խոհական վերացարկումից «իմաստասեր բարքը» ինքնազերազտնման է տանում կոնկրետ անունների ու դեպքերի վստահ վերիշումներով. 30-ականներին դրանք արդեն դրամատիկորեն կայուն են, ուշ բացվող լույսի նման տենչալի: Ինքնահաստատումն էլ անցյալի լույսի ժառանգման փաստարկումն է, «որդու վերադարձի» ամոքխած խոստովանքը և անկեղծ գիտակցված նվիրումը.

Ինչ ունեցել է ժողովուրդը քո
Հնում, անցյալում-լուսավոր ու վեհ,
Ինչ ունի այսօր, ինչ ցնորդ ու խոհ -
Ողջը հակաբեկ և քեզ է տվել:
(ԵԶ, 2, 167)

«Գիրք իմացության»՝ այս դեպքում ևս խորհրդանշական խորագիրը կրող շարքի դիստիբուններում դարձի զարմանքն է անցյալի հոգևոր-մշակութային բռիչքների նկատմամբ, այն բանի համար, որ «վարժ ու հմուտ վարպետները», «անանուն ծորտ հանճարները» մեր քերթությունը պահել են հակիմայան վառ և անմար.

**Մեր պատմության դառնաշունչ, չար ու խորշակ գիշերում
Ո՞նց է ծաղկել զվարքուն մեր քերպությունն հնամյա:**

(ԵԶ, 3, 176)

**Եվ հոեսորական հարցադրումը, թե իր մեջ արդյո՞ք
արթնացել է նրանց «սեզ հանճարը», ի՞նքն է արդյոք շառա-
վիդը «մեռած հանճարների», ում գրքում պիտի հուրիրա-
նուանց «ոգու ցոլքը», պիտի նրանց «ջանքը եռա», հաստա-
տում է «փմաստասեր բարքի» գոյարանական դերը, որը կա-
րող է և կոչված է լույս-ուղեցույց դառնալու, բայց պատմու-
թյունը չի դադարում «դառնաշունչ, չար ու խորշակ գիշեր»
մնալ: Վերօյն աղոքքներում Աստվածաշնչյան խորհուրդ-
սիմվոլներին վերադառնալով՝ Զարենցը բառացի նմանո-
ղությամբ հարազատանում է անցյալի մեծերին («Քե՛զ, ո՞վ
բաշխող խոհի և շնորհող եռանդ» - Նարեկացի, «Որ բար-
բառեն բանիվ և գեղգեղեն ձեռամբ» - Խորենացի և այլն.
ԵԶ, 3, 323): Արովյանի հետ հարազատությունն ու ընդհա-
նուր ճակատագիրը անքաքույց է, և ուղղակի է նկատել
տվել, Թումանյանի՝ տենչալի բարձունքը լինելը խոստովա-
նում է մի շարք անգամներ, անընդհատ կրկնում «փմացու-
թյան գրքերի» անմահ հեղինակների անունները, ասենք, 37-
ի գրած «Սոնսատիքոսներ»-ում՝ «Ո՞ւմ անվանեմ ես ապա,-
երեւ ոչքեզ, միակըդ, մեծըդ Նարեկ...», կամ՝ «Ո՞չ. մեծերից
մեծագույնը - օ, դու ինքդ ես, անմահ Ծնորհալի» (ԵԶ, 3,
469): Եվ արդեն անվարան հաստատում է իր ծագումնարա-
նությունը, ինչը հաղթահարումն է բոլոր մոլորությունների,
իիմնավրումը բոլոր խորհուրդների ու նաև այն բանի, որ
«փմաստասեր բերքը» պատմության մթին խորշերում է լույս
տալու, ազգի գոյության գաղտնիքը հոգևոր-մշակութային
շարունակության մեջ է.**

Եկած Նայիրյան
Գուսաններից մեծ,
Մեր միջնադարյան
Հայրեններից սեզ-
Զուչակից եկած-
Եվ Հովնարանից-

Եկած ոսկեզարդ,
Հնչուն Գողբանից,-
Սեզ Սայաթ-Նովյան՝
Աղբյուրից եկած,
Ողջ նայիրական
Փառքից ոսկեկայծ... (Զ, 99)

Ծագումնարանական լիցքը միշտ իր մեջ կրած, նաև մոլորությունների տրված բանաստեղծի մեջ ուշացա՞ծ է արդյոք տիղմազերծվում «ո՞վ ենք մենք և որտեղի՞ց ենք զայխ» հարցերի պատասխանը և հստակվո՞ւմ է մինչև վերջ: Խորենացու չափանիշային սկզբունքը՝ խոհականությունը, ինչը Պատմահայրը մարմնավորում է շատ անունների մեջ՝ Հայկ-Արամ-Արա Գեղեցիկ-Տիգրան-Արտաշես-Պարույր Սկայորդի - Արգար - Վաղարշակ - Տրդատ - Վռամշապուհ - Սահակ Պարթև-Մեսրոպ Մաշտոց-Սահակ Բագրատունի և իենց ինքը պատմիշը, հասնում է «անհմաստանը բարքի» մերքին բացասամանը, և խոհականությունը մնում է որպես ապագայում գոյատևման հիմքի առաջարկ: Դրա անխուսափելիությունը ցուցադրելու համար բերգում են նաև ուժուժվում անխոհականության օրինակներն ու դրանց կրողները՝ օտարահաճության ու ներքին կոիվների, բաժանումների անհմաստություններով. Սանարուկը՝ Արգարին, Երվանդը՝ Սանատրուկին, Արտաշեսը՝ Երվանդին, Արտավազդը՝ Արտաշեսի դեմ կամ որդին՝ հոր, Մաժանը՝ իր եղբայրների դեմ, նախարարը՝ թագավորի, իշխանն՝ իշխանի դեմ: Բայց՝ միշտ հավատը խոհականության հաղթանակի նկատմամբ, և մենք՝ միշտ այդ հակասությունների մեջ. իսկ ո՞վ այդպիսին չէ...

Արովյանը բացականչում էր. «Վարդանի թոռները չե՞նք, Տրդատի արինը չի՞ մեր սրտումը, Տիգրանի շունչը չի՞ մեր բերնումը» (ԽԱ, 121), իսկ Զարենցը նույն թե ուրիշ հոգեկան ու բանական փորորիկների մեջ, իր և Արովյանի նորովի գուգակինումներով «գեսվի լյառն» գնալու խորհրդից առաջ տվայտալից հարցնում էր, թե այս գիրքը «Չէ՞ արդյոք խեղճության ու սխալի արդյունք Շերունդների երթին ի վճաս...» (ԵԶ, 3, 45). չէ՞ որ հերոսական նախնի ու կոիվներ եղել են, որ միշտ կորցնելով գոյատևենք, մարի ու զենքի անձնելու պրկումը երկրի ու պետականության պահպանություն չի բերել, այլ ընդամենք ապրելու խնդիրավունք:

Ծա՞տ է, թե՞ քիչ դա... Պատասխանը Արովյանի կո՞չն է՝

«Հայոց ազգ, ծեր ջանին մեռնեմ...» (ԽԱ, 71), և կամ՝ «Հայ չե՞նք, նրա ամեն մեկը մեկ սարի բարերար ա» (ԽԱ, 121), թե՞ նրա իսկ ճգնանքը՝ հայի խեղճության պատճառը օտարի հավերժական տիրակալության և եկեղեցու անպայքարունակ քարոզի մեջ տեսնելու (տե՛ս, ԽԱ, 694), որը հետո պետք է դառնա ազգային վիպասան Բաֆֆու ընդհանուր գաղափարարանությունը։ Կամ՝ շատ ավելի այն, որ դպրության, զրքի ազգորոշիչ դերի չարենցյան երկվորթյունների գնահատականին նախորդող՝ Խորենացու, Արովյանի հաստատումները փաստի մեջ նաև ակնկալիքի արդյունք են, քանի որ ամուր է հավատամքը, թե զենքից ավելի (կամ նրան հավասար) «իմաստասեր բարքը», «լեզուն ու հավատն» են որոշում գոյատևման գաղտնիքը, թեկուց հաջորդեն նոր անկումներ ու տառապանք։ Անհետացումից հինգվեց ամիս առաջ գրած «Ուղևորություն դեպի Անիի ավարակները» գործի մեջ Արովյանը ընդգծում է. «Հայր տառապանք է կրել կրոնի և քանականության» (ԽԱ, 655):

Ինքնին ծագում է մեզ արտաքին կապերի մեջ դիտարկելու անհրաժեշտությունը, ինչը բոլոր մեծերին տեսանելի է դառնում դրամատիկ ու մութ խորշերով՝ անկախ «գիտությունների մայր» Հունաստանի նկատմամբ Խորենացու, «քրիստոնյա Ուստաստանի» հանդեպ Արովյանի, «կարմիր Սոսկովին» ուղղված Չարենցի համակրանքներից։ Թումանյանը «Մեծ ցավը» (1909 թ.) հողվածում նշում է, որ ամենամեծ ցավը այն է, որ «մենք մեզ չենք ճանաչում», ուրեմն և չենք սիրում. այդ դեպքում, «ինչպես կարող է պատահել, որ մեզ սիրեն ու հարգեն օտարները», երբ «մենք որպես առանձին ժողովուրդ չունենք ինքնուրույն պատկեր ու բովանդակություն և հանդիսանում ենք միմիայն իր աղավաղումը» (ՀԹ, 265)։ Չարենցի նիմիլիզմի տարրերը ուղղակի տեսանելի են ամենալուսավոր մեծի հայացքներում անգամ։

Բոլոր մեծերի համար միանգամայն հստակ է նաև, որ մենք ենք սեռները օտարի նկրտումների, ինչը Թումանյանին թերում է շատ որոշակի եզրահանգման «ներսից է լինե-

լու հաստատ փրկությունը, որովհետև ներսից ենք փշացած» (ՀԹ, 286): Արովյանը, ներքին ուժը լուսավորելով և բոլությունը դիտելով նաև արտաքին կապերի մեջ, գրում է ոռուերենով ռուսական մամուլի համար. «Ժող պատասխանեն նրանք, ովքեր այնպես անողորմարար վիրավորում են պատիվն ու անունը մի ժողովրդի, որը այժմյան բարենպաստ հանգամանքներում ընդունակ է ոչ միայն վերակենդանացնելու, այլև նույնիսկ բազմապատկելու իր նախկին առաքինությունները: Պատմությունն ավելի լավ է դաս տալիս բոլորին» (ԽԱ, 655): Իսկ պատմությունը ոչ մի բան չի ասում, այս լուսնի տակ ոչինչ նոր չի լինում, քանի որ, միևնույն է, դաս չենք առնում... Ազգը, մարդը համամարդկային ու տարծամանակյա շառավիղներում քննող Գրիգոր Նարեկացու մեծ Մատյանը անկումների ու անհմասառությունների դրաման ընկալելի է դարձնում այսպիսի պատկերներով.

Յորում զիոնյան իրում ընթացիցն
արտասունիս իմ յեղանակէ.
Չուր ջան, անօգուտ վաստակ,
Անմիտ հետևումն, անշահ արշավանք,
Աւազափուղ շինուածք,
ապականացու ստացուածք,
Կործանական կրթութիւնք,
մոլորապատիր վարժութիւնք...
Քամահանաց տաժանմունք, ինքնամարտ կոի,
Ընդ ոգոյ իրում դատ... (ԳՆ, Բան ԽԸ-ի, 281)
(Կյանքի ընթացքն է պատկերում այսպիս。
Անօգուտ ջանքեր, իզուր աշխատանք,
Հետամտումներ անմիտ, անհերեք,
Գործեր ապարդյուն, անշահ արշավանք,
Ավազափուղ շնեք, անկայուն վաստակ,
Խուսնի տաժանք, ինքնամարտ կոիվ,
Իր հոգու դիմ դատ...) (Ն, 212)

Ահա, նման տվայտալից փորձառությունների ընդհանրացմամբ նաև Արովյանի ցավազին բացականչությունը, ուր շատ են հարազատանում ինքն ու Զարենցը՝ կրելով Խո-

բենացու ոգու լիցքը ևս, ավելի քան արդիական է. բոլոր ժամանակների տերերին և մտավոր-հոգևոր առաջնորդներին. «Դուք ետ եք մնում, իսկ ժողովուրդը իմքնին առաջ է զնում: Վայ ճեզ, եթե նա ճեզանից առաջ անցնի թե՛ խելքով և թե՛ կրքությամբ: Վայ ճեզ, եթե նա ճեզանից չի ստանալու իր հոգևոր սնունդը: Դուք չեք կարող պաշտպանվել ժամանակի բարբարոսությամբ...» (ԽԱ, 663):

Այս մորմոք վիճակների փաստական հիմնավորումը կամ ներհայեցական ընկալումը յուրովի ստվերագծում է «ո՞ր ենք զնում» երրորդ ճակատագրական հարցի պատասխանը, որի խոհական հարցականները ներառվում են մանավանդ «Երկիր Նախիր» վեպում: Սահմանները կրկին հեռանում են, քանի որ Նախիրին, որ «ուղեղային մորմոք, սրտի հիվանդություն է», փաստորեն չկա, որովհետև կան «միայն մարդիկ, որ ապրում են այսօր աշխարհի այն անկյունում, որ կոչվում է «այստան» (ԵԶ, 4, 10): Միֆ-անցյալի մերժումը այսօրվա տեսանելի հաստատումով արվում է ապագայի ուղի՞ն գծելու համար, թե՞ ապագան էլ պիտի ցնորք մշուշի նման երևա:

Նախիրի երկրի ամենահարազատ մորմոքը դարձած Մագութի Համոն ցավի ու ծաղրի մեջ անէացող հերոսի նման բացատրում է՝ մեջքերելով Արովյանին. «Հայրենի երկիր և մայրենի լեզու (ընդգծումները հեղինակինն են - Վ. Ս.): ահա՝ այն երկու հզորագույն ազդակները, որ շաղկապվելով իրար՝ ամեն մի զարգացած ժողովրդից, ամեն մի ցաքուցրիկ ցեղից կազմում են անքակտելի մի միավոր, - կենդանի մի օրգանիզմ - մի ամբողջական ազգություն» (ԵԶ, 4, 97): Մեզ համար դրամատիկ ու ծշմարիտ այս ընդհանրացումը Չարենցը դարձնում է ողբերգախառն երգիծանք: Մազութի Համոյի բացականչությանը, թե «Նախիրին են էի, Նախիրին դուք էիք ու բոլոր նրանք, որոնք մեզ նման խոսում էին Նախիրան քաղցր լեզվով» (ԵԶ, 4, 100), հաջորդում է դրամատիկ-հումորային եզրականգումը. եթե Նախիրին այնտեղ է, որտեղ կա գոնե մի նախրցի, որը խոսում է այդ լեզվով,

ապա աշխարհի թեկուց ամենահեռավոր ո՞ր անկյունում «տոք չի դրել հայրենազուրկ նախրցին» (ԵԶ, 4, 100): Ուրեմն՝ Նահրին իսկապես և՝ կա, և՝ չկա: Վեպի՝ երբեմն միտումնավոր փաստարդաբային ոճավորման մեջ անտեսանելի թվացող ենթատերստային մշուշները փարատվում են նրանով, որ պատերազմների, հաղթանակների, դասալքությունների և այլ կուսակցական ու անձնական կրթերի խառնաշփոթում ի վերջո կործանվում է նախրյան այդ քաղաքը կամ երկիր Նահրին: Չկան այլևս նրա հայտնի հերոսները, իջել է վարագույրը, սա վերջն է, իսկ վեպի այդ վերջին երրորդ գլուխը վերնազրված է «Դեպի Նահրի», այսինքն՝ դեպի չգոյություն...»

«Ո՞ր ենք գնում» հեռանկարը Խորենացու համար Հայկ-Արամ-Տիգրան կատարելատիակերի շարժումն է ժամանակների առաջընթացի մեջ, նրանց գոյաբանական հատկանիշների շառավիղումը՝ որպես ազատափառության (Հայկ), պետականության և նրա գիտակցության (Արամ), արժանապատվության զգացողության և համընդիանուր բարօրության (Տիգրան) գոյաձևային հիմունքներ: Արովյանը ևս ապավիճում էր անցյալի հերոսներին՝ վերածնունդ-հարատևման խորհրդանիշ դարձնելով Անին: Նա ակնարկում էր նույնիսկ քաղաքական ծրագիր. «Միապետություն, խաղաղություն և կրոնի ու ազգային սովորությունների և ապրելակերպի ազատություն» (ԽԱ, 673), և վերապրում իրաշունչ երաշքի բանաստեղծական ոգևորությունը այն բանի համար, որ մայր Արաքսը, «պիտի պատմի և՝ Կասպիական ծովի ափերին, և՝ ամենահեռավոր սերունդներին՝ Հայաստանի-Արարատյան երկրի - Թորգոմյան-Ասքանագյան տան» (ԽԱ, 683) երանելի ժամանակների մասին:

Չարենցը, խոհական վերացարկմամբ մուրի մեջ լոյսի նշաններ տեսնելուց զատ, որքան էլ, կարծեք,- հեռացնում է իրարից Նահրին ու Հայաստանը, առաջինի ցնորք-միջք հակադրում է երկրորդի տեսանելի, թեկուց դրամատիկ առօրյային, միևնույն է, նրանք ի վերջո խոհի ու պատկերի են-

թատերստում նրբորեն նույնանում են: Վստահ լինելով, որ «Զի ընթանում սակայն երբեք պատմությունը դեպի ետ. / Ի՞նչ որ կյանքում վեհ է ու լավ-մեր մեջ է արդ ու մեզ հետ» (ԵԶ, 3, 174), Չարենցը, որ հաճախ էր իր նախրյան ծնունդը, նախրյան պոետ լինելը, իր մեջ կամ իրենից դուրս նախրյան մորմոքը կրելը շեշտում, «Ամենապոեմ»-ի սկզբում նաև ասում է.

**Ես Հայաստանցի պոետ-
Երկիր, ուր մշուշ է ու մահ...
(ԵԶ, 1, 387)**

Անցյալի «ցնորքով» Նախրին միանում է ներկայի «Կարմրակեզ» Հայաստանին ոչ միայն «մշուշ ու մահի» ընդհանրությամբ, այլև արքնացումի սպասումով. «Ողջակեզ- կարմրակեզ բոցում / Արքնացավ արև-Նախրին» (ԵԶ, 1, 424), և նույն «Չարենց-նամե»-ում ուղակիորեն նույնանում են նրանք.

Ինձ կանչում է կարծես անծիր
Կարուով-երկիր Նախրին,-
Նորից Հայաստան զնացի
Տասնինը թվի վերջերին:
(ԵԶ, 428)

Ներդաշնակվող Նախրին ու Հայաստանը լուսավոր թվացող հեռապատկերի վրայից չեն առնում սակայն քանաստեղծական վերացարկման քողը: Դրա հաստատումն են և՝ Չարենցի՝ «կախվածի աշքերի մեջ» «քորր երկրի» լուսավոր ապագան տեսնելու գգտումը, և լավատեսական քանաստեղծական ցոլանքները. «կապուտաչյա հայրենիքի» լուսե ապագայի մասին 18-ամյա Չարենցը գրում էր. «Կտեսնեմ քեզ հանկարծ լուսե՝ ու պայծառ» (ԵԶ, 1, 294), և հավատի ու ոգու նույն կորովը փորձում է պահպանել անցյալի մեծերի հետ հոգեհարազատության ակունքներում, 1936-ին Խանջյանին նվիրված սոնետներում, որոնցից «Դմաստություն» վերճագիրն ունեցողի մեջ ասում է.

Իմաստուն է միայն քառուղիներ հարրող
Վաղվա հաջորդը քո այն երջանիկ,-
Որ պիտի զա, գիտե՞ս-և աճյունի հետ քո
Մեր հաղթության լեզնդը մահվան նաշից հանի...
(ԵԶ, 3, 412)

Սա մաս Խորենացիական «իմաստակեր բարքի» նորովի վերագտնումն է: Իսկ դրա կորստի մղձականջը հաստատող հազարամյակների խորհուրդը ամփոփվում է այսպես: Այդ խորհրդի սաղմերը դրված են եղել հայոց ծագման իմաստասիրության և դրանով նրան վերապահված պատմական դերի մեջ: Աստվածաշնչի «Ծննդոց» գրքում արձանագրվում է, թե սրամք են Նոյի Հարեթյան ճյուղից նրա թռոները կամ «Գոմերի որդիքը՝ Ասքանազ, Ռիփար և Թորգոն» (գլուխ Ժ): Անվանադիր այս ծագումնաբանության խորհուրդը ազգին վերապահում է շարի դեմ կովի ելմելու, արդարություն ու խոհականություն հաստատելու լուսահաճո նվիրումն ու դրանից ծնունդ առած տառապանքը:

Աստվածաշնչյան մարգարեություններում դա ընդգծվում է այսպես: Բարեկոնք մեղքերի անբնական խտացման կրողն է, և ուրեմն՝ «Դրոշակ բարձրացրեք երկրի մեջ, փող հնչեցրեք ազգերի մեջ, նորա դեմ պատրաստեցեք ազգերին, երավիրեցեք նորա դեմ Արարատի, Սիննիի և Ասքանասի բազավորությունները» (Երեմիա, գլ. ԾԱ), և Տերը պետք է Բարեկոնք դեմ հանի «պարսիկները, եթեռվացիները և փուղացիք նորանց հետ, Գոմերը և նորա բոլոր գունդերը, Թորգոնի տունը՝ հյուսիսի ծայրերիցը և նորա բոլոր գունդերը» (Եզեկիել, գլ. ԼՀ):

Նկատվել է, որ Աստվածաշնչի բարգմանության ժամանակներից սկսած՝ ձևավորվում է ազգարանական մի զիտակցություն, ըստ որի հայոց հիմնադիր հայրեմ են համարվում Հարեթի երեք թռոնները, և հետագայում «ողջ երկիրը բնորոշվում է վերադիրներից որևէ մեկով. Արարատի տերություն և Հայք, Ասքանազյան գունդ և Հայաստան, Թորգոնա տուն և Հայոց աշխարհ» (ԱԿ, 426):

Ծագումնարանությունը հայ ազգին վերապահում է Աստծո կամ բանական ու բնական Կատարյալի հոգևոր խտացումի հետ շփումների լրաւեղեն նվիրումը կամ հոգևոր մշակութային գոյաձեռք, ինչը հաստատում են հետագա հազարամյակները: Իսկ ժամանակները ներքին տերերի «անիմաստասեր բարքի» տիրակալության, նաև մեծ երկրների կայսերապաշտական կամ անմիտ կատարելածգոտումի (նոր բարեկոնների) պատճառով նրան անընդհատ պարտադրում են կորուստների ողբերգությունը (Արովյանը փրկության հենարանը տեսնում էր Արարատյան-Ասքանազյան-Թորգոնյան եռախորհրդի մեջ):

Եվ այսպես, մեր բոլոր անկումների գլխավոր գերակատարը մենք ենք, երբ լրում ենք Աստվածորեն մեր ծագումնարանության հետ մեզ արված խոհականությունը: Չուգահեռարար և՝ առաջին, և՝ երկրորդ հազարամյակների սկզբի անկումների ու երրորդի հարցականների հեղինակը Արևմուտքն է: Խորենացի-Արովյան-Զարենց երրորդությամբ խորհրդանշվող մեր բոլոր մեծերի կոնկրետ ուղենչումներն ու բանաստեղծախմատափրական ճառագումը, ջղաճիզ վնտրությն ու դրամատիկ ճիշիլիզմը՝ ծնված անձնվեր սիրուց, ոչինչ չե՞ն ասելու նորերին, հաճախակի դարձած հարցականները Խորենացու կոնկրետ դասերից ու Նարեկացու ողբային ընդհանրացումներից հետո Արովյանի լույս-հավատի ու Թումանյանի իմաստուն կասկածների արդյունքն ամփոփող Զարենցի մերժում-հաստատումներով պիտի թողնե՞ն կրկին անորոշության մշուշը:

Այս վերջին (գուցե՝ ոչ վերջին) հազարամյակի սկիզբը հասած մեծերից մեկը (գուցե՝ ոչ վերջինը),՝ Հրանտ Մաքուսյանը, ով վնտրում էր հային ծնունդ տված հիքսոսների ու հեթիքների՝ նույնիսկ եզիատական ու այլ հաղթանակների հիմքը ու Սեծամորի ճախագահի անունից զարմանում, թե նման հաղթանակներ բերած գիտությունն ու հոգևոր մշակութային ուժը ինչո՞ւ պիտի այսօր ստիպեն, իոդի տակից դուրս գալով, ամբողջ Հայաստանը քանզարան դարձ-

նել, երբ բահը հողին են խփել խաղող աճեցնելու համար, հանկարծ մորմոքում է. «Հրազդանի կամորջն անցել էր, Վաղարշապատի ճանապարհի տակ գանգուր ծիրանուտի միջով հեռանում էր Խաչատոր Արովյանը... Ուսերից մեկը կախ, մյուսը բարձր՝ ծիրանուտով հեռանում էր Զարենցը» (*ՀՄ*, 304):

Ո՞յր են հեռանում. «գեղի լառն Սասիս»-ը կամ «գեղի երկիր Նաիրի»-ն ուղի է՝, թե՝ վերացարկումների ցնորք, հարցականների մշուշը «գանգուր ծիրանուտի» վրա պիտի հավերժ բանձրանա:

Համառոտագրություններ

1. *ԽԱ - Խաչատոր Արովյան, Երկեր, Երևան, 1984:*
2. *ՀԹ - Հովհաննես Թումանյան, Ընտիր Երկեր, հ. 2, Երևան, 1985:*
3. *ՍԽ - Սովուն Խորենացի, Պատմություն հայոց, Երևան, 1968:*
4. *ԱԿ - Ալբերտ Կոստանյան, Բացարձակի որոնումը, Երևան, 2004:*
5. *ՀՄ - Հրանտ Մաթևոսյան, Ծառերը, Երևան, 1973:*
6. *ԳՆ - Գրիգորի Նարեկայ վանից վաճականի «Սատեան ողբերգութեան», Երևան, 2002:*
7. *Ն - Գրիգոր Նարեկացի, Սատյան ողբերգության (քարզմ. Վ. Գևորգյան), Երևան, 2002:*
8. *ԵԶ, 1- Եղիշե Զարենց, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1986:*
9. *ԵԶ, 2 - Եղիշե Զարենց, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1986:*
10. *ԵԶ, 3 - Եղիշե Զարենց, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1987:*
11. *ԵԶ, 4 - Եղիշե Զարենց, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1987:*
12. *Չ - Եղիշե Զարենց, Անտիալ և չհավաքված երկեր, Երևան, 1983:*

ԱՆԱՀԻՏ ՉԱՐԵՆՑ

ԱՅՆԹԱՆ ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ԵՎ ԱՅՆԹԱՆ ԼՈՒՍԱՎՈՐ... (ՉԱՐԵՆՑԸ ԿՅԱՆՔԻ ՎԵՐՋԻՆ ԾՐՁԱՆՈՒՄ)

Քսաներորդ դարի հանճարեղ անհատներից է Եղիշե Չարենցը:

Հայ իրականության մեջ իր ժողովրդի ճակատագրով ապրող ու տառապող մեծ իմաստունք, մտածողն ու առարյալն էր նա: Այդպիսի մարդկանց «հնում մարգարե էին անվանում»: Ասում են՝ «Երանի նրան, ով այցելել է աշխարհը նրա ճակատագրական բողեներին, նրան աստվածները կանչել են խնջույքի՝ իրրև սեղանակցի»:

Եղիշե Չարենցը եղավ աստվածների սեղանակիցը. «Եվ մեծ եմ ես, քանզի ինձ մեծ երք էր նշանակած պատմությունից»: Նա եղավ աշխարհում տեղի ունեցող մեծագույն պատմական դեպքերի ականատեսը, մասնակիցն ու վկան:

Մեփական արյան, անձնական հարցի պես ապրելով Նաիրյան ճակատագրով՝ նա դարի օրհասական պահերին ելք էր որոնում իր ժողովրդի ապրելու, տևելու, նրա ապագայի համար: Դարասկզբին Հայաստան աշխարհը համակած ողքի, համատարած վիհանության, հոգեհանգիստների մինուրատում նա փորձում էր գտնել մեր ազգի համար ամենակարևոր հարցի պատասխանը՝ այդ ի՞նչ ուժ էր, որ պիտի վերադարձներ մեր ավերված հայրենիքին մեր պատմության հազարամյա հուրը:

Չարենց-քանաստեղծը, որ ամրող հայոց պատմության ծնունդն է, «ոսկի երակը հնամյա ցեղիս», հենց ինքը իր գոյությամբ մեր ժողովրդի վիթխարի լիցքերի, անսպառ

հոգևոր կարողությունների, մեր ազգի՝ «Դազարոսի նման մահվան նաշխց» մշտապես հառնելու ուժակության, ապրելու հաստատում, համար կամքի, ազգի լինելիության հաստատումն էր:

Նրա «խորախորհուրդ մատյանի» մեջ կան մեր ժողովրդի և անցյալ փառքերը, և ներկայի ու նաև մեր այսօրվա լուսավոր ու մռայլ ծալքերը ու նաև ապագայի երազները: Եվ քանի որ Չարենցն ապրեց իր ազգի ճակատագրից անբաժան, նրա կյանքը դարձավ մի անվերջ, անմնացորդ, անանձնական նվիրում իր ժողովրդին ու իր հայրենիքին: Նա սեփական անձն էր բերում իր տառապած ժողովրդին՝ «իբրև զոհ վերջին ու զոհաբերում».

Թող ոչ մի զոհ չպահանջվի ինձնից բացի,
Ուրիշ ոտքեր կախաղանին քող մոտ չզան,
Ու քող տեսնեն իմ աշքերի մեջ կախվածի,
Իմ քորք երկիր, լուսապասկ քո ապագան:

Եղիշե Չարենցի կյանքի ու ստեղծագործության մեջ զարմանալիորեն միահյուսված են թե՛ կյանքի, ապրելու «հմկա տենչը» և թե՛ հանուն հայրենիքի սեփական անձի զոհաբերումը: Նա ունեցել է շռնդալից հաղթանակներ, բայց և նրա անցած ուղին խիստ դժվար է եղել, ծանր, տագնապալից, նման իր ժողովրդի՝ «հայրենի երկիր հասնելու ճանապարհի երթին».

Մանկիկս, մանկիկս,
Մանկիկ անզին,
Մենք ո՞սից կյանքում այս
Հաղթենք կյանքին:
Կյանքում պայքար է,
Չկա հանգիստ -
Պարտվից քո հայրը,
Մանկիկ անզին...

Այս նվիրումն է արել հայրս իր «Երկեր» շքեղ երատարակության անձնական օրինակի վրա: Նման դառը խորհրդածություններ արթնացնող առիթներ շատ ուներ

Չարենցը, հատկապես կյանքի վերջին տարիներին: 1930-ական թվականների հենց սկզբից ստեղծված հասարակական-քաղաքական դաժան իրադրության պայմաններում իր համար ստեղծված դժվարին կացության մեջ, որ տագնաափի ալիք է բարձրացնում բանաստեղծի հոգում, պետք էր ուժ գտնել՝ սառնասիրտ ու խոհականորեն պատասխանելու ճակատագրական հարցին. «Զո՞ր չէ արդյոք վատնել անհատնելի իր ճիրքը»:

Բնությունից լինելով բարի ու մարդկային՝ նա հաճախ իրեն անպաշտպան էր զօրում «մենգության ու դավերի» հաճդեպ, և նրան մնում էր իր հոգու հուսահատ ճայնանիշերը արձանագրել բանաստեղծական կտորների մեջ, որ հաճախ ավելի անճնական ապրումի, ինտիմ խոհերի ծնով դրոշմկել է իր այս կամ այն գորքի սեփական օրինակի վրա կարծես միայն իր համար.

Այնքան մաղճ կա իմ սրտում, այնքա՞ն դառնություն.
Ես միայն վիշտ եմ տեսել և քախիծ, և՛ բռյն...

Զգիտեմ՝ ե՞ս եմ եղել մեղավոր, քե ներ
Կյանքն է եղել անողոք, ու մոայլ, ու նեռ...

Ո՛չ բարեկամ ունեցա, ո՛չ քշնամի մեծ.-
Բարեկամը հեռացավ, քշնամին - տևեց:

Համայնական էր քեկուզ կյանքը մեզանում -
Ամեն ոք շուրջս սակայն իր քելմ էր մանում...

Ես էլ, մենակ, մանեցի իմ քելը կյանքում -
Ինչքան որ ուժ ունեի - անխոնջ ու անքուն:

Թույն շահեցի սակայն ես վաստակիս համար -
Եվ մնացել եմ այսպես դառնացած հիմա:

Անարդար վերաբերմունքը իր քսանամյա վաստակի հանդեպ շատ էր դառնացրել Չարենցին: Իհարկե, հայրս միշտ գիտակցել է, որ բնությունից իրեն «շոայլորեն շնորհված համճարը», որ արված է իրեն «իբրև սրբազնագույն պարզեւ», կարող է՝

**Թշնամանք ծնել և դժոնություն իմ շուրջը,
Սերժվածների դաշինք ու հալածանք...**

Ամենօրյա կյանքում իրեն շրջապատող միջակությունների նախանձն ու բամբասանքները դառնացնում էին բանաստեղծի կյանքը, ստեղծում էին նրա համար ապրելու և աշխատելու անտանելի պայմաններ։ Ժամանակի բունավորված մընողրտում աղճատվում էին թե՛ ազնիվ մարդկանց կյանքը և թե՛ հասարակությունն ընդհանրապես, խարարվում էին ժողովրդի ապագային ուղղված նրանց լուսավոր երազները։

Բայց բանաստեղծը զիտեր, որ իսկական ստեղծագործողի գոյությունը մի անընդմեջ ու տրճագան վերընթաց է, ձգտում դեպի արվեստի կատարելության այն բարձունքը, որն ինքը կոչել էր «չարչարանաց լեռ»։ Նա զիտեր նաև, որ յուրաքանչյուր արվեստագետ իր հետ է բերում իր դրախտը և դժոխքը, նայած թե ինչպես է ապրելու իր կյանքը։ Նա վայելել է երկնելու դրախտային պահեր, սակայն նրան քաջ ծանոթ է նաև արվեստագետի դժոխքը, քանի որ նրան հաճախակի դավաճանել են։ Ահա այդպիսի դժվար ու տառապալից ժամերի հիշողության արձագանքն է այս քառատողը, որ ողբերգության պես է հնչում։

**Եվ չէ՞ր արդյոք միակ պատճառն այդ, Տե՛ր,
Որ դառնություն դարձավ, և՝ մաղճ, և՝ բույն
Ջո պարզւած ընծան այդ սրբազնագույն,
Ջո դուստրերի անեղծ մաերմությունն այդ սուրբ...**

Բայց ինչքան էլ դժվարին է եղել իր կյանքը, նա միայն երախտագիտության զացումով է տոգորված արվեստագետի այն բախսի ու բերկրության համար, որ շնորհված է իրեն ի վերուստ, և ոչ մի գերրնական ուժ չի կարող շեղել իրեն այն ուղուց, որ ծակատագիրն է սահմանել իր երկրային գոյության համար։ Ինչ փույթ, որ այդ ուղին խորդուրորդ է և ամենայն ժամ լեցուն է վտանգներով ու փորձություններով, սակայն «մուսաների այդ սուրբ մաերմության»՝

Ակնթարքի համար անգամ թերև
Ես անսահման սիրով կտանեի
Օ՛, բյուպատիկ անգամ և վիշտ, և թեո,
Եվ դառնություն ամեն և անգամ մահ...

Դեռ 1920-ական թվականների վերջերից ամեն առիթով քանաստեղծը զրապարտվել ու քննադատվել էր: Կոմունիստական իրականության ու ստալինյան ռեժիմի պայմաններում գոեհիկ սոցիոլոգիզմի ավերները անցյալի ու ներկայի արվեստների ու գրականության գնահատության մեջ Զարենցը բոլորից շուտ ըմբռնեց. ըմբռնեց ու զգաց իր մաշկի վրա: Իրենց մտածողությամբ ու խորքով բուրժուական էին որակվել նրա առաջին շրջանի գործերը: Պախարակելի էր համարվել հայրենիքի փրկության համար հայ կամավորական խմբերի մեջ նրա մասնակցությունը առաջին համաշխարհային պատերազմին: Ոչ պրոլետարական, «անարխոմանր-բուրժուական տարերային» բունտ էին որակվում նրա հեղափոխական պոեմները: Նրա այս «մեղքերը» այն ժամանակ բացատրվում էին նրանով, որ նա իր ծնունդով «մանր-բուրժուական-սեփականատիրական» տարերքից էր գալիս, չև՝ որ նրա հայրը՝ Արգար աղան, սեփականատեր բուրժուաս էր: Ապա Զարենցին մեղադրում էին, որ նա հեղափոխությունից հետո, «մոռացած ամրոխներին», երգում է «տիկնիկներ», «Էմալե պրոֆիլ» և «ավերակներից դարձյալ վեր է հանում Նարեկացու հայրենիքի» սրբազն իդեան: Ապա «Ասպետականում» ամբողջ տասը դար ետ է զնում, հողմակոծ աշխարհին փոխարինում են պիլիգրիմները, տրուբադուրը և երազական սերը, իսկ «Ը-ումանս անսերում» տրուբադուրի «քքու» իդեալին հակառակում է մի նոր իդեալ՝ «կնոջ կոճքը»: Նացիոնալիստական, շովինիստական էին անվանվում ու քննադատվում էին Զարենցի հայրենաշունչ գործերը: Եվ մի՞քև այս չէր պատճառը, որ հեղինակը իր 1932 թվի ընտիր երկերի շքեղ միհատորյակի մեջ չէր գետեղել «Ես իմ ամուշ Հայաստանի» քանաստեղծությունը:

«Քայց այս բոլորը,- պիտի գրեք հետազայում բանաստեղծը,- անմեղ բաներ էին այն դաժան արշավաճքի համեմատությամբ, որ իմ նկատմամբ սկսվեց «Գիրք ճանապարհից» հետո»:

1933 թվականին, երբ հայրս հազիվ երեսունվեց տարեկան էր, տպագրության հանձնեց իր վերջին գիրքը: 1933-ի աշնանը Եղիշե Չարենցի «Գիրք ճանապարհի» ժողովածուի պատրաստի տպաքանակը պետության կողմից արգելվեց: Այս առիթով Չարենցը վերստին զգաց իր անձի ու գործի շուրջը ստեղծված թշնամական վերաբերմունքի շունչը, որ այս անգամ արտահայտվում էր ավելի «պրովոկացիոն ու վտանգավոր» ձևերով:

«Ես դժբախտություն ունեցա գրելու բանաստեղծությունների ու պոեմների մի նոր գիրք, մեր ժողովրդի անցյալի, ներկայի և ապագայի մասին: Այս գիրքը նախրյան կարճատեսությամբ, թե նախանձից հայտարարեցին նացիոնալիստական-դաշնակցական և ընկ. Խանջյանի բացակայությամբ, երբ գիրքն արդեն վաղուց պատրաստ է լույս տեսնելու, վերցրին և Կենտկոմի քարտուղարության անունից արգելեցին, որպես հակահեղափոխական գիրք, իսկ ինձ դրւու շպրտեցին Պետիրատից առանց որևէ բացառության»:

Ի՞նչի մասին է խոսքը:

Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնի քարտուղարությունը 1933թ. նոյեմբերի 14-ին ընդունեց «Հայպետիրատի արտադրանքի անկայունության մասին» որոշումը, որի մեջ մասնավերապես ասվում էր.

«Չարենցի «Գիրք ճանապարհի» աշխատությունը պարունակում է հակահեղափոխական, արոցկիստական զրապատություն կուսակցության դեմ և կուսակցության առաջնորդ ընկ. Ստալինի դեմ, մի գիրք որը թունդ իդիալիստական մեկնարանում է տալիս Հայաստանի պատմությանը, ակնհայտորեն արտահայտելով հայկական մարտնչող նացիոնալիզմը:

ՀԿ(թ)Կ Կենտկոմի քարտուղարությունը որոշում է.

Արգելել Զարենցի «Գիրք ճանապարհի» գրքի հրատա-
րակումը:

Հեռացնել Զարենցին Պետհրատի գեղարվեստական
սեկտորի վարիչի պաշտոնից:

Պատասխանատվության կանչել այդ գրքի հրատա-
րակման գործում մեղավոր անձանց»:

Թե ինչ էր նշանակում այդ օրերում սովետական մի գրողի գործ հայտարարել հականեղափոխական-տրոցկիս-
տական և պաշտոնական փաստաթղթերի մեջ ու կենտրո-
նական թերթերում գրել, թե Զարենցի գրքում պայքար է
մղվում Ստալինի դեմ, մենք հիմա յավ ենք հասկանում: Այդ
խորապես հասկացել է նաև բանաստեղծը հենց նույն օրե-
րին: Ինչպես ցույց են տալիս ճեռագրերում պահպանված
գրառումները, դիմումները, 1933 թ. Սարիեւա Շահինյանին
գրած նամակը, նա հանկարծ խիստ պարզորշ ըմբռնեց, որ
սա ոչ թե սովորական գրական, անգամ քաղաքական քննա-
դաստություն է, այլ ֆիզիկական հաշվեհարդար: Ուրեմն նա
դեռ 1933 թ. Խոտակ ու շոշափելի զգացել է, որ իր կյանքը, իր
գոյությունը վտանգի տակ են, որ իրեն պարզապես ուզում
են վերացնել:

Նամակից պարզ են դառնում մի շարք մանրամասներ,
որոնք և խորապես դառնացրել են բանաստեղծին: Նա
հայտնաբերել է, որ այս պատմության տակ քաքնված է
նաև մի ստոր խարդավաճք: Պարզվում է՝ դեռ ճեռագիր վի-
ճակում «Գիրք ճանապարհին» կարդացել են Աղասի
Խանջյանը և Կենտկոմի երկրորդ քարտուղար Աշրաֆյանը:
Երբ Խանջյանը արձակուրդի մեջ էր, Հայաստանի Կենտ-
կոմի ղեկավարության մի քանի անդամներ Աշրաֆյանի ղե-
կավարությամբ նախապատրաստում են իշխանափոխու-
թյուն, որն իրականացնելու համար ժավալում են պրովոկա-
ցիոն, քննադատական պրոպագանդա Հայաստանի Կենտ-
կոմի առաջին քարտուղարի դեմ և այդ դավադրության
առանցքն են դարձնում Զարենցին ու իր գիրքը: Ժամանա-

Կի հասարակական-քաղաքական իրադրության պայման-ներում շատ հարմար թիրախ էր ընտրված: Բանաստեղծը հասկանում էր այդ: Նա հասկանում էր նաև, որ հանցանանը ավելի տպավորիչ դարձնելու համար, ապացուցելու համար, որ Խանջյանը պաշտպանել է մի արատավոր գիրը, զանք չեն խնայում սևացնելու «Գիրք ճանապարհին»՝ առաջնորդվելով այն ճշմարտությամբ, որ “*тем страшнее, тем лучше*”:

Այդ մարդկանց արարքը ավելի քան գրգռել է քանաստեղծին, երբ նրան ասել են, թե «Ոչինչ, Չարենցը քող շատ չիուզվի», երբ մենք իշխանությունը կվերցնենք մեր ծեռքը, նրան կվերականգնենք պարտիայի մեջ»:

Իշխանափոխության փորձը ճախողվում է:

Այդ օրերին «Գիրք ճանապարհին» մաս-մաս քարգմանվում է ոռուսերեն, և հատուկ կազմված կողեզիան քաղաքական-իդիոլոգիական առումներով ամենայն մանրամասնությամբ քննում է այն և իր պաշտոնական «ռեզուլտատիվիտմ» հայտարարում, որ այդ գրքում տեղ գտած «Արիլլես, թե՝ Պյերո» ինտերմեդիան հականեղափոխական-տրոցկիստական գործ է և ուղղված է Ստալինի դեմ:

Խանջյանի զանքերով 1934թ. «Գիրք ճանապարհին» լույս տեսավ: Հեղինակին պարտադրեցին գրքից հանել «Արիլլես, թե՝ Պյերո» դրամատիկական պոեմը: Բանաստեղծը դրա փոխարեն գրքում գետեղեց «Արվեստ քերքության» և «Գիրք իմացության» շարքերը: Մեր գրադարանում «Գիրք ճանապարհին» առաջին տպագրությունից, որն ամբողջությամբ ոչնչացվեց, մնացել է մեկ օրինակ՝ քանաստեղծի անձնական օրինակը, որի վրա նա ուղղումներ է կատարել և որը հայրս նվիրել է իր դուստրերին՝ ինձ և քրոջս, հետևյալ մակագրությամբ.

Իմ անգին քալիկներին՝
Արփիկին ու Անահիտին
Իրենց դժբախտ հորից,
Նայիրյան պոետ Եղիշե Չարենցից:

Հայաստանի Խորհրդային գրողների առաջին համագումարում արտասանած իր ճառում Գրողների միության քարտուղար Դրաստամատ Սիմոնյանը ասել է. «Ըստ կենցը համագումարի նախօրյակին լույս է ընծայում իր «Գիրք ճանապարհին», ուր կան այնպիսի գրական գոհարներ, որոնցով նա դառնում է ոչ միայն Հայաստանի զգերագանցված խոշորագույն պոետը, այլև Խորհրդային Սիոնյան խոշորագույն բանաստեղծը: Բայց չնայած սրան, նրա գրքում կան իդիոլոգիական կարգի սայրաքումներ»:

Ավելի ուշ արդեն ընդհանրապես չի խոսվում գրքի արժանիքների մասին և օրեցօր ինչքան լարված է դառնում հասարակական-քաղաքական մթնոլորտը, այնքան նրա դեմ ուղղված այսպես կոչված «քննադատական սլաքները» քունուտ են դառնում: Զարենցի նկատմամբ վերաբերմունքը ժամանակի կլիմայի, գաղափարախոսական նորմերի չափանիշ էր կարծես: Այն, ինչ նրա վերջին գրքում սկզբում որակվում էր իրու «սայրաքում», իետո դիտվում էր առնվազն «սովետական կարգերի և հայ ժողովրդի դեմ ուղղված զրապարտություն»: Այդ օրերի Գրողների միության ժողովների արձանագրություններում կարդում ենք. «Զարենցի «Գիրք ճանապարհին» հայկական նացիոնալիզմի սմապարծ արտահայտությունն է....: «Մահվան տեսիլ», «Պատմության քառուղիներով» պոեմների ամրագ կոնցեպցիայի մեջ գովարանվում և փառաբանվում է հայ նացիոնալիստական, ռեակցիոն-բուրժուական գաղափարախոսությունն և ուղղված է մեր ժողովրդի ապագայի դեմ: Այս գրքի իմանական սիսակ այն է, որ ինչպես ինդինակն է գտնում, մեր անցյալը չի տվել աչքի ընկնող դեմքեր, որպեսզի նրանք կարողանային մեր ժողովրդին տանել ավելի ճիշտ ճանապարհով»: Իսկ մի ուրիշն իր ելույթում պարզապես հայտարարում է. «Այս գիրքը պետք է ոչնչացվի և դուրս շարտվի մեր գրականությունից, որպեսզի իր ազդեցությունը չունենա մեր երիտասարդության վրա»:

Նման մեղադրանքները այն օրերում կարող էին ճակատագրական լինել: Բանաստեղծի համար պարզ էր, որ սա արդեն «Նոյեմբեր» միության ու «Ասոցիացիայի» գրապայքարը չէ, որ սկիզբ էր առել դեռ 1920-ական թվականների կեսերից և իր տեսակի մեջ, ի վերջո, անմեղ գրական բանավեճ էր, որի մեջ պիտի ծշտվեին քասմական թվականների սկզբից ծայր առած ուղղություններն ու հոսանքները։ Սա անգամ գրական-գաղափարական-քաղաքական այն քննադատությունը չէր, որ սկսվել էր 1930-ական թվականների սկզբից։

**Պիտությունն ամբողջ իր ապարատով
Ելել է ահա.. մի պրետի դեմ։**

**Հետզհետե Չարենցի հանար ավելի ու ավելի հստակ են
դառնում երևույթի իրական դրդապատճառները։**

**Հու է զալիս կրկին արյան
Այս վարպետի եփած ճաշից...**

Բանաստեղծի այդ օրերի խոհերն ու գրառումները վկայում են, որ նա անըդիատ քննում ու վերլուծում էր ստեղծված իրավիճակը՝ աշխատելով պարզել ինչպես ինքն է գրում, «Հասարակական կյանքի վերջին տասնամյա կացության բուն պատճառն ու էությունը, որով և հնարավոր է դառնում իմ նկատմամբ տեղական իշխանությունների անհիմն ու անարդարացի քաղաքական մեղադրանքն ու դաժան հաշվեհարդարը»։ Հաջորդ գրառումներում արդեն կարդում ենք. «Սա ոչ միայն տեղական երևույթ է, այլ իր բնույթով «կատակլզմային» պրոցես, ամբողջ Սովորական Միության մեջ կատարվող խոշոր, մեծ մասշտարքների քաղաքական շրջադարձ»։

**Իոհան Ահեղի ստվերն է կրկին
Քարձանում Կրեմլի գետնախորերից.
Եվ զարհութելի, խառնակ օրերի
Սարսակն է կրկին ավետում երկրին...**

1936

Ահա այս կատակլզմային շրջադարձերի բում կենտրոնում հայտնվեց Եղիշե Չարենցը՝ իրքն այդ զարհուրելի, դաժան իրադարձությունների գլխավոր հերոս ու նաև հիմնական քիրախ: «Մեր ամբողջ մտավորականությունը այդ օրերին ցնորվածի նման էր, վախեցած իր զիսի համար, - գրում է Չարենցը դեռ 1933-ին, - բացահայտորեն վայրի, անիմաստ տեսողի հոտ է զալիս..., պատկերացնում եք արդյոք, թե ինչ պիտի վերապրեի ես այդ օրերին, չէ՞ որ ես այդ օրերին կարող էի սպանել թե ինձ, թե իմ ընտանիքը, խելազարվել և զարմանում եմ, որ դա չպատահեց ինձ հետ: Օգնեցեք ձեր կրասեր գրչեղբորը, - գրում էր նա Սարիետա Շահինյանին, - այս փոքր Նայիրյան աշխարհում ես շատ քշնամիներ ունեմ... Առանց ձեր ազնիվ պաշտպանության նրանք ինձ կուտեն... Ինձ կարող են կործանել և շատ հեշտ... Հանուն մեր մշակույթի ու գրականության... օգնեցեք ինձ»:

Հասկանալի է, որ այս պայմաններում նրա ստեղծագործական որոնումների ուղին պետք է խոտորվեր, պետք է շեղվեր իր համար ի վերաստ սահմանված բնական ուղուց: Նրա այս տարիների գործերը խորապես կրում են այս երևույթների կճիքը, ստեղծագործությունը հաճախ ընդմիջվում է մարդկային տառապանքի մասյի ձայնանիշերով, եռագույն խորքերից բարձրացող անզորության ու ցասումի ամենաշատ շեշտերով, որով և ստանում է վավերաբորբակ արժեք.

**Լեցուն է սիրաս լացով,
Թակարդ է քախսոք հինում.
Չգիտեմ՝ ուր եմ գնում
Վարանքով, մրին կասկածով:**

**Ինձ խարում, ինձ դավում են քերևս,
Ինձ տանում են գուցեն դեպի մահ,
Ա՛յս, դատարկ է շուրջս, ամա,
Եվ դահիճ են դարձել ընկերներս:**

1935

**Բայց մյուս կողմից՝ իրքն հանճարեղ արվեստագետ,
զարմանահրաշ մտքի մի գերագույն ճիգով նա կարողացավ**

պահել, ինչպես ինքն էր գրում, իր ստեղծագործական կոնսրով և կյանքի վերջին տարիներին հոգեկան ու ֆիզիկական անսահման տառապանքների մեջ գրեց գործեր, որոնք նրա ստեղծագործական ճանապարհի բնական հունն են խորհրդանշում:

Բազում ուղիներով ու հերկերով անցած և «իմաստության դասնապատիր պառուղը ճաշակած» բանաստեղծը, իհարկե, չհասցրեց իրականացնել իր անհուն մտածումները և մեզ տալ իր նոր գիրքը: Նրա վերջին ճեռագրերի հաճախ խարարված ու անվարտ պատաժկների մեջ մնացին նրա ապագա գրքի տեղ-տեղ բավական հստակ, իսկ հաճախ աղուս ուրվագծերը միայն: Բայց այն, ինչ հասավ մեզ, նրա ստեղծագործական կյանքի վերջին տարիները բնորոշում են իրքը նոր ու բարձրարժեք իրագործումների ու ամենօրյա որոնումների մի հախուսն ու խոստումնալից շրջան, մի բացարձակապես նոր մտածողության տեսակ: Հիմա, երբ իրար մոտ են բերված բանաստեղծի վերջին տարիների՝ ճեռագիր վիճակում պահպանված գործերը, մենք կարող ենք կրահումներ անել, թե իհմնականում ինչ ուղղություններով պետք է ընթանար նրա ստեղծագործական ուղին «Գիրք ճանապարհից» հետո:

Իրքն համաշխարհային չափանիշների մտածող, Զարենցը զարգացման բոլորովին նոր, առաջներում անհասանելի սահմանի էր հասել: Նրա միտքը նորից հարցականների առաջ էր: Նա ցանկանում էր իր համար պարզել արվեստի կատարելության առեղծվածը և այդ փորձում էր անել առաջին հերթին ինքնաճանաչման ուղիով, քննելով սեփական ստեղծագործությունը և «սեփական անձը»:

Զարենցը ուզում է քննել սեփական անձը՝ «ցանկանալով զգալ բափանցել առզվել իր էության խորքը» հասկանալու համար, ինչպես ինքն է գրում, թե որն է իր անձնավորության մեջ կայունը, այն, որ՝ «ինձ հետ է միշտ, որ ինձ է տրված միայն ընդմիշտ ու հավիտյան, քանի կամ, ապրում եմ ես իմ երկրային անկրկնելի կերպարանքը»:

1937թ. մայիսի 1-ի առավոտյան հայրս, կարծես թե ինչ-որ կատարյալ ինքնամոռացության մեջ, հետևյալ հատկանշական մտքերն է արձանագրում մի փոքրիկ բղբի վրա.

«Տուր ինձ շնորք ու կորով մերժելու մութ խոսքերի, գաղտնահենչյուն բառերի նույն շնչին խոհն հաճախ... Վարժիր ինձ անընդհատ, ամենօրյա, անկարելի զոհարերության, ընտելացրու այն մտքին, օրենքին, որ կյանքը ինքը, զոյտությունն ինքը անընդհատ, ամենօրյա ընտրությունն է մահ անվերջանապի... Եվ այս է լինելիության իմաստն ու գաղտնիքը և միակ ուղին, միակ միջոցը-դիսցիպիլնը ոգու, աստծո ու նյութի - Տիեզերքի և ավազի: Եվ այս է հանճարների մեծագործությունը, նրանց շարչարանաց լեռը, որ հասցնում է մինչև աստղերը, մինչև ոգու նոր տիեզերքներ, կազմակերպելու ոգու սիզիֆյան տքնությամբ, անընդհատ խուժող մտքերը և ընտրելով լավագույնը- ստեղծել հնարավորը- լավագույն ընտրությամբ»:

Անհուն փորձառության արդյունք հանդիսացող այս մտքերը բանաստեղծը շարադրում է իր քառասնամյակի օրերին: Նա թեև հեղինակ է կատարյալ և բարձրարվեստ գործերի, որոնք նրան տարել են դեպի արվեստի լեռան զագարը, բայց դարձյալ նրան թվում է, թե կատարելության, մեծագործության այդ կատարը հեռու է տակավին: Ահա հաճարներին հատուկ այս ներքին անրավարարության ծնունդն է «Զարչարանաց լեռան աղոքքը».

Քառասնամյա կյանքի քարն ուսերիս վրա,
Արարչական գործիս անագորույն կնսին-
Թեզ եմ հղում, ով Տեր, ահավասիկ ես իմ
Խոհն անտրասունջ երքիս, աղոքքը իմ լեռան:

Նարեկացիական տառապանքով գրված պոեմի վեհ ընթացքի մեջ կարծես ինչ-որ բախսի ստվերն է բափառում, սակայն յուրաքանչյուր տողից ճառագայթում է ցնծության, երախտագիտության զգացումը իր ունեցած ծիրքի, գրանիտյա կոպիտ բարրառի համար, ի վերուստ իրեն շռայլուն տրված հանճարի համար: Բայց մյուս կողմից բանա-
42

ստեղծի հոգում կա նաև իր բուն էության, իր արյան, իր ներքին անաղարտ կարողությունների զիտակցությունը։ Նա զիտե, որ ինքը իր հաճճարով նաև իր հայրենի ժողովրդի «հազարամյա արյամբ սրբագործված խոհի» ժառանգն է, ուստի հպարտությամբ արձանագրում է.

Ես չեմ շեղել երբեք հերկն հայրենի հողի
Եվ հանդուրժել, որ բյուր սերունդների հերկած
Հին գրքերում մնա անօամ չնշին մի քար
Նետպած օտար ճեղքով, որ խափանե ուղին։

Իր վերջին ստեղծագործությունները գրելիս հայրս տնային բանտարկության մեջ էր։ Արդեն բանտարկվել, զնդակահարվել կամ Սիրիի էին աքսորվել նրա լնկերները, մտավորականության լավագույն ներկայացուցիչները, հայ ժողովրդի նշանավոր դեմքերը։ 1936թ. սեպտեմբերի 24-ին Հայաստանի ներքին գործերի բաժնում նրանից գրավոր տեղեկանք էին վերցրել այն մասին, որ նա գտնվելով հետարնության ներքո, մինչև դատը իրավունք չունի բացակայելու քաղաքից։ Նրան կանչում էին ներքին գործերի վարչություն՝ հարցաքննության։

Զարհուրելի պայմանների մեջ հայտնված բանաստեղծի դառը հոգեվիճակների արտահայտությունն է մի քանի փոքրիկ թերթիկների վրա պահպանված անավարտ մի ստեղծագործություն, որը գրված է այդ օրերին և վերնագրված է՝ «Էկլեզիաստես-Sրիպտիքոս. Խոսք առաջին (Զառանցանք)»։

Ատամնաբափ մի մարդ, գանգով կապկի,
Նստել էր մերկ կրծքիս, - և ինձ խեղդում էր։-

Եվ կար ժայիտ նրա իմաստագործկ դեմքին,-
Եվ բորում էր ժայտը, ինչպես բույնը:-

Եվ ամրոխվել էին շուրջս - քազում մարդիկ,-
Եվ բոլորի՝ էլ դեմքը - միևնույնն էր։-

Ստեղծագործության առանձին հատվածները կիսատեմ, անավարտ, ուստի անկարելի է հետևել հեղինակի մտք-

թի ընթացքին և ամբողջացնել երկի իմաստային կառույցը, սակայն ստացված ընդհանուր տպավորությունը հաշտ է «Էկլեզիաստես» գրքի՝ ամեն ինչ կասկածի տակ առնող ոգու հետ.

**Յուրաքանչյուր շնչող արարածի աշխալ
Նայում է գոյության նույն արամությունը:**

Հիշենք, որ 1935 թ. մարտի 8-ին Եղիշե Չարենցը մի հայտարարությամբ դիմում է Հայաստանի Գրողների միության վարչությանը, որով հայտնում է, որ ինքը դուրս է գալիս գրողների կորպորացիայից: Բացատրելով իր արարքի դրդապատճառները՝ նա մի քանի անգամ խնդրում է շտալ իր դիմումին քաղաքական բովանդակություն: «Ես ոչ ոքի չեմ մեղադրում, ամենից քիչ ես հավակնություն ունեմ մեղադրելու խորհրդային ապարատը: Ինչպես երևում է, պետք է հաշտվել այն բնական դրության հետ, որ փոքր ժողովրդի գրողը չի կարող ապրել գրականությամբ, մնում է, որ նա ձեռք բերի այլ մասնագիտություն և ապրի նրանով»: Գրողների միության մարտի 13-ի նիստում քննարկվում է Չարենցի «Հայտարարությունը», այն հոչակվում է իրքն քաղաքական փաստաթուղթ, և միասնական որոշումով նրան հեռացնում են Գրողների միությունից: Բանաստեղծին շատ է դարձացնում այն լուրը, որ իր գրչակից ընկերները այլպես միաձայն որոշում են ընդունել իրեն գրկել բանաստեղծի կոչումից: Այդ օրերին գրած թղթերից մեկի վրա կարդում ենք: «Դմ վատ եղայրներ, ես ձեր դեմ գրչով, դուք իմ դեմ կացնով»:

Իսկ ամիսներ անց, վերլուծելով ընդհանրապես այդ ժամանակների դեպքերը, հետևյալ խորհրդածությունն է անում. «Այդ ինչպես եղավ, որ իմ ժողովրդի աշխալ օրը ցերեկով, հնարավոր դարձավ անգամ այն խելազարության նման անհերեթ, պրովոկացիայի իմաստ ունեցող այն փաստը, երբ հասարակությանը ոչ մի բացատրություն չտալով ինձ վերաբերող կոնկրետ քաղաքական հանցանքի ենթադրության պատճառով, դուրս են շպրառում ինձ Գրողների

միությունից: Եվ արժանի անգամ չեմ համարում, որ նվաստու, իրքն սուկ խորհրդային պոետ մասնակցեմ հայկական պոեզիայի ու արվեստի դեկադային Սոսկվայում»:

Ինչպես հայտնի է, Սոսկվայում Հայաստանի արվեստի ու գրականության տասնօրյակի առթիվ ընդունելությունը կայացել է Կրեմլում 1935 թ. դեկտեմբերի 30-ին: Ընդունելությանը ներկա էին Ստալինը, Սելյոտովը, Վորոշիլովը, Սիկոյանը և այլոք: Հայաստանի պատվիրակության կազմում էին Աղասի Խանջյանը, պրոֆ. Միմոն Հակոբյանը և մի քանի գրողներ: Հայաստանի գրողների կողմից ճառով հանդես է գալիս Ստեփան Չորյանը: Վերջում Ստալինը հարց է տալիս Չորյանին:

Ստալին. - Ինչպես՞ս է ապրում գրող Չարենցը:

Չորյան. - Ոչինչ:

Ստալին. - Նրան կարծեմ նեղացնում են:

Չորյան. - Նա այժմ իրեն հրաշալի է զգում:

1936 թ. օգոստոսին Թիֆլիսում բացվելու էր Անդրկովկայան երեք հանրապետությունների համագումարը: 1936 թ. հուլիսի 9-ին Թիֆլիսում՝ հենց Քերիայի աշխատասենյակում, սպանվում է Աղասի Խանջյանը: Այս մասին բանաստեղծն իմանում է հենց նույն օրը: Հասկանալի է, թե ինչ ազդեցություն կարող էր ունենալ այս դաժան լուրը երևույթներն արդեն խորապես ըմբռնած բանաստեղծի վրա: Դա վերջնականապես ցնցում և հուսահատեցնում է նրան: Առաջին բանաստեղծությունը, որը Չարենցը գրել է այդ նույն գիշերը, իրքն վերճագիր ունի Խանջյանի եղերական մահվան թվականը.

9 հուլիս 1936

...Կարծես թե միայն իննից հուլիսի,

Այդ քստմնելի օրվանից է, որ

Իմ գրած ամեն մի ոտանակոր

Իր նյութի, իր ողջ իմաստի մասին

Իրքն դրվատող կամ նշավակող,

Կարդալուց առաջ անքառ ավետող
Մի չոր թվական սկսեց կրել...
Եվ վերնազրերն այդ անքառ, անանուն
Դարձան մահվան պես ահեղ ու անհուն...

Ինձ մոտ պահպանվել է մորս՝ Իգարելլա Չարենցի
օրագիրը, որ նա գրել է Սիրիոսիմ: Այդ հուշերից պարզ է
դառնում, որ Խանջյանը Թիֆլիս գնալուց առաջ եկել է մեր
տուն: Ահա հուշերի այդ հատվածը, որ ես արտագրել եմ բա-
ռացի: «Երեկոյան Աղասի Խանջյանը մեզ մոտ եկավ մեքե-
նայով: Մտավ Չարենցի աշխատասենյակը և մոտ մեկ ժամ
խոսում էին ինչ-որ...: Հետո Չարենցը ինձ կանչեց, - Իգա-
րելլա, երկու բաժակ թեյ թեր:- Ես անմիջապես բերեցի թեյը
և տեսա, որ երկուսն էլ ճատել էին գլուխները կախած և
տիսուր էին և լուս էին: Որոշ ժամանակ անց Չարենցը և
Աղասին դուրս եկան աշխատասենյակից: Չարենցը ուղեկ-
ցեց նրան մինչև շքամուտքի դուռը: Չարենցը գնում էր
Խանջյանի ետևից ձեռքերը հետևող դրած, գլուխը կախած,
մեծագույն տիսուրյամբ ու դառնացած: Այդպես կարող էր
գնալ մարդք մտերիմ մարդու դագաղի ետևից: Նա Աղասու
ետևից շրխկացրեց շքամուտքի դուռը և նույն տիսուրյամբ,
անխոս գնաց իր աշխատասենյակը: Երեք օր անց Խանջ-
յանին բերեցին Թիֆլիսից դագաղի մեջ»: 1936թ. հուլիս 11-ի
գիշերը Չարենցը գրում է հայտնի «Դոփին նայիրական» սո-
նենթերի շարքը: Այս բանաստեղծական կտորների բազմա-
թիվ, մի շնչով թղթին հանձնված տարրերակների խառնի-
խուռն, ջղային ձեռագրով գրված տողերում բանաստեղծը
սրտի անհուն ցավով, անպատմելի կսկիծով մրմնջում է իր
մորմոքն ու բախիծը, ողբում է իր հերոսական բարեկամի
մահը և այդ մահվան առջև նրա մոր ու ժողովրդի վիշտն ու
կոկիծը.

Այս գաղթական կանանց ընտանեկան սուզով
Եվ շիվանով միայն շրջապատված,
Փայտյա դագաղն ու դին արյունոտած-
Սիրե՞, օ, Աղասի, - դիակն է քո...

**Դո՞ւ ես արդյոք պառկած այդքան անհույզ դիմքով
Հանցապարտի, գողի դագաղ մտած...**
**Երբ ժողովուրդն անզամ աշընքն իր քաց
Վարանքով է սրբում քաց դագաղի դեմ քո...**

**Նայիրյան վերջին արքայազնի «պարտությունը», բա-
նաստեղծի գնահատմամբ, մեր ժողովրդի բազմադարյա
պատմության մշտապես կրկնված «Հին պարտության լե-
զենդի» նոր վերհառնումն է: Բանաստեղծը հավատացած է,
զիտի, որ «քարուն վերադարձած հայրենական այդ լեզենդի
պես» մեր անցյալի պարտված արքաների շարքում ժողո-
վուրդը դեռ երկար իր հոգու մեջ կպահի այս վերջին Դոֆինի
լուսավոր կերպարը ևս:**

**Աղասի Խանջյանի նենց սպամությունը, որ անձնական
ցավի ու անսահման ողբերգության պես էր վերապրում Զա-
րենցը, նրա հոգում անհանգստության ալիք էր բարձրաց-
նում և հաստատում էր նաև իր մոտալուտ, նմանօրինակ
վախճանի կանխազգացումը և Նահիրյան վերջին արքայի
մասին գրված խոսքերը կարծես թե ինքն իրեն էր հասցեա-
գրում.**

**Եվ լեզենդի նման անիրական կամ մի
Առասպելի նման ժողովրդի հոգում
Կապրի աղետը քո իբրև քաքուն
Կամ ահով եղած նահիրական միք...**

**Մեփիական մահով սրբագործված արարքի և կրկին
հառնելու կարողության մեջ է տեսնում բանաստեղծը ան-
մահության գաղտնիքը, որ ծնակերպում էր իբրև անկասկա-
ծելի ճշմարտություն:**

Նա կմեռնի որպես զոհ, քայց չես հաղթի դու նրան...

**Այս է բնորոշը հայ ժողովրդի պատմության ողջ ճանա-
պարեի համար, որ այսօր էլ կրկնվում է: Մեր պատմությունը
հարուստ է «հաղթական պարտություններով», խորհում է
հեղինակը: Եվ ինչպես մեր ճախսների հազարամյա խորին
ուղիներում, այս անզամ էլ մեր «հաղթանակի լեզենդը» պի-
տի հառնի կրկին «իր պարտությամբ հզոր»: Մըր մեջ է մեր**

Ժողովրդի ապրելու խորհուրդը, և Ղազարոսի նման մահվան նաշից մշտապես բարձրանալու կարելիությունն է այս մոլորակի վրա նրա գոյատևման հնարավորության հիմքը:

Ուրեմն զիավածի արդյունք չէր բանաստեղծի վերադարձը դեպի «Հին պարտության լեզենդը»: Ներկայի ամլույս իրականության մեջ լույս տեսնելու համար էր նա իր հոգում բորբոքում անցյալի մեծ ջահերի հուրը և մեր պատմության հազարամյա փորձի իմացությունն էր նրա հավատի հիմքը.

Ինաստուն է կյանքով լոկ հաղթանակ կերտող
Վաղվա հաջորդը քո այն երջանիկ,
Որ պիտի զա, զիտեմ, իր փառապանժ երբով
Եվ քո աճյունը սիզ քո սև նաշից հանի...

Բայց բավական են պարտությամբ հաղթանակները, -
պատգամում է բանաստեղծը.


Թող բարձրանան քո տեղ առաջնորդներ տարրեր,
Որ պարտվելով մահին և ապրելով հաղթեն...

Տարիներ առաջ Աղասի Խանջյանի քույրը, որ ապրում էր Սոսկվայում, ինձ նվիրեց իր մոտ հրաշքով պահպանված 1932 թ. «Երկերի» շքեղ, սև հասորի այն օրինակը, որ հայրս 1932 թ. հունիսի 7-ին նվիրել էր այն ժամանակ արդեն Հայաստանի Կենտկոմի առաջին քարտուղար Աղասի Խանջյանին: Գրքի վրա Զարենցի մակագրությունն է: «Ընկ. Աղասի Խանջյանին» և հայտնի քառատողը՝ Գյորեից, ոուսերեն բարգմանությամբ, որը նա հետագայում զետեղեց «Գիրք ճանապարհի» մեջ.

Քարեկան, անխախտ հասկացիր դու սա, -
Դարում, ուր Ոգին ու Սիսքն են հորդում -
Լոկ առաջնորդվել կարող է Սուսան,
Իսկ ինքը արդեն չի առաջնորդում: -

Հորս ճեռագրերը հաճախ այնքան խառն են, այնքան անավարտ, որ երբ նրանց մեջ մի մաքրագիր, ավարտուն բանաստեղծություն էր հանդիպում, շատ էի ուրախանում:

Ահա նման ուրախություն պատճառող գործերից է «Շիշտ
այսպիսի անգույն մի գիշեր...» տողով սկսվող երկարաշունչ
երկը, որ գրված է երեք մեծադիր թղթերի վրա, 1936-ին։
Չնայած հողի տակ բաղված ինքնազրերի մեջ էին այս թեր-
թերը, բայց բավական լավ են պահպանված, մաքրագիր են
ու ամրողական։



«Արվեստի կատարելիության» առեղծվածը լուծելու չա-
րենցյան տագնապների արձագանքն է այս գործը։ Այն
իրք և անմիջական հղացք և իրք և հենց ունի Լեռնարդո դա
Վինչիի այն խոստովանությունը, թե «Խորիրդավոր ընթրի-
քը» որմնանկարի Հիսուսի համար ներշնչման աղյուր է
հանդիսացել իր պատամի աշակերտը՝ հետագայում հայտ-
նի նկարիչ Զիովաննի Բելտրաֆիոն (1467-1516)։ Չարենցը
սանձարձակ երևակայությամբ վերականգնում ու նկարա-
գրում է բազում դարերի մեջ սուզված այն «ինքնամփոփ
գիշերը», երբ։

Արքնացել է հանկարծ իր աներազ քնից

Լեռնարդո դա Վինչին...»

Եվ քևոնել է իր աստվածային հայացքը՝

Ահավասիկ այս սուրբ կիսակնոջ,

Այս կանացի դեմքով և պատամու

Անեղրական, անհուն ախրությամբ

Եվ երազով օծված հիսուսային դեմքին...»

Երկարորեն ու լուս նայել է դա Վիճշին իր հրաշակերտ ստեղծագործությանը, ապա բարձրացել է տեղից, վառել ջահը և արքնացնելով եռոտանու այն կողմը՝ մութ անկյունում քնած մատադատի աշակերտին, իր հայացքը սևեռել է մերք «պատանու աստվածային գեղով պսակազարդ դեմքին», մերք նրա պատկերին: Հետո իր դողոջուն ճեռքը բռնել է սիրեցյալ սանի բարակ ու սպիտակ ճեռքը և՝

**Անագորյան սիրով ու կարոտով՝
Տիեզերքի տրոփի հավերժորեն իր մեջ
Անհագորեն, ընդմիշտ ամփոփելու
Անեղրական սիրով - նայել է աչքերին,
Թափանցելով մինչև նրա հոգու հատակը:**

Մինչդեռ պատանին «ամոքիսած, գունատ վար է առել իր հայացքը», և նրա դեմքը ստացել է այն հիսուսային արտահայտությունը, որ «հանճարի սիրով ու վրձինով անմահացած»՝ հասել է մեզ: Ըստ Էության բանաստեղծությունն այստեղ վերջանում է: Բայց բանաստեղծությունը հենց այստեղից է, որ սկսվում է՝ տարածվելով նմանօրինակ արաշագործ գիշերների վրա և պեղելով գերմարդկային ստեղծագործությունների գաղտնիքը. թեպետ Զարենցը հաջորդ տողերում հաղորդում է միայն այն պատմական փաստը, թե «Խորերդավոր ընթիքը» որմնանկարի Հիսուսը՝ Լիոնարդո դա Վիճշիի աշակերտն է

Զիովաննի Քելտրաֆիոն վեշտասմանյա...

Բանաստեղծության ավարտական տողերն ակամախորհրդածել են տալիս դիպվածի այն հանճարային ակնքարքի մասին, որ ծնվում է մեզ շրջապատող շատ հաճախ աննկատ, չափազանց սովորական առարկաներից ու էակներից: Լեռնարդո դա Վիճշիի՝ «տարիներով փնտրած ու երազած» Հիսուսն անընդհատ իր հետ էր, իր աչքերի առաջ, անգամ նույն սենյակում էր քնում, բայց օրերի, ամիսների, տարիների սպասումն էր պետք, որ ուժանար, հասունանար այն ակնթարքը, որ շրջապատի առօրեական իրերի և

արարածների էությունն է լուսավորում, ընդգրկում: Չարեճցի այս բանաստեղծությունը նախ և առաջ այս ամենազօր ակնքարքի գովքն է, փառարանումը, որովհետև նրա արարչագործությամբ են պայմանավորված բոլոր դարերի բոլոր հրաշակերտները: Չարեճցի այս երկը նաև այդ բեղուն ակնքարքի ծնունդ հանդիսացող հափշտակության, ցնծության արձագանքն է, երբ արդեն կատարվում է հրաշքը. ստեղծագործությունը, պոկվելով իր արարչից, թղթի, կտավի, կամ մարմարի վրա ապրում է իր կյամքով, ինչպես հողին ընկած միրգը, որ իր ծառը լինելով հանդերձ, ավելի է իր ծառից: Ահա բանաստեղծն այս անկարելի կարելիության խորհուրդն է նկարագրում հետևյալ տողերում, ուր դա Վինչին արդեն գույն ու ծն հազած, արդեն նյութականացած երազի դիմաց է կանգնած:

Նայել է լուս, երկար, - կասկածելով մի պահ
Այդ հրաշքի՝ այդ լուս խորհրդի
Անգրկելի, անձուկ գոյության
Լինելիությանն անզամ...

Ինչ բնական է նույնիսկ հանճարեղ դա Վինչիի՝ ինքն իր մասին, իր անզուգական կարողությունների մասին տարակուսելու այս պահը: Բնական է, որովհետև գերմարդկային է, անկարելի կարելին է այն, որի առջև հիացագին զարմանքով արձանացել է արվեստագետը:

«Ծիշտ այսպիսի անզույն մի գիշեր» երկը ոչ միայն Չարեճցի վերջին շրջանի, այլև առհասարակ նրա ամբողջ ստեղծագործության ամենախորունկ գործերից մեկն է: «Գիրք ճանապարհիի» «Տաղեր ու խորհուրդներ» շարքի ոճին ու տրամադրություններին հարսդ այս տաղի մեջ «իմաստության դառնապատիր պատուղը» ճաշակած բանաստեղծը լրելյան, առանց ուսուցողական շարժումների, տալիս է իր արվեստի զմբռնման նոր ու քաքուն «խորհուրդները»: Տալիս է դրանք ոչ որպես մերկապարանոց խրատ ու քերթության նախաշավիդ, այլ որպես համապարփակ ապրում ու պատկեր: Լեռնարդո դա Վինչիի «աներազ քնից» արք-

ճանալը և իր ճկարին ճայելը խորհրդանշում է կյանքի բոլոր երևույթների առջև իսկական արվեստագետի զմայլանքը։ Չարենցի այս ստեղծագործության զապանակն էլ հենց իհացումն է, իհացում՝ «Խորհրդավոր ընթրիքը» որմնանկարի «անեղական գեղի տրտմությամբ» շնչող Հիսուսի առջև։

«Արքայական երգ» խորագրով և «Նմանություն Իրսենին» ծանորագրությամբ երեսունյորս տողանոց մի անափարտ մենախոսություն է մնացել Չարենցի թղթերի մեջ։ Ի՞նչ է սա։ Գործող անձանց ցանկը հուշում է, որ սա թերևս նոր սկսված դրամայի սկիզբն է։ Միակ մենախոսությունը, որ գիշերում մենակ մնացած «տիրապետող արքայինն» է՝ Իրսենի, Բրանդի կամ Դոկտոր Ստոկմանի մենախոսությունների ոճով ու հանդիսավորությամբ, պատմում է արդեն իշխանության ու փառքի հասած միապետի ներքին անրուժելի մենակության մասին, զգացողություն, որ, անշուշտ, քանաստեղծի այդ օրերի ապրումներով է ներշնչված։

Որքա՞ն հոգնել եմ ես... Հոգնել այնպես,

Ինչպես կարող է լոկ հոգնել անօգ,

Անապատան նշակն անօրեւան...»

Եվ իիմա իմքն էլ, ինչպես այն «արքան տիրապետող, մեկ հարց ունի միայն՝ իմքո՞ւ, իմքո՞ւ ...»։

Ինչպես այս երկը, այնպես էլ այս շրջանի գործերի համարյա մեծ մասը, մի անընդհատ, անվերջ մենախոսություն է, հեղինակի խոսք, ավելին՝ ներքին մենախոսություն (գործողությունը կատարվում է հեղինակի ուղեղում)։ Ահա այն գեղարվեստական ձևը, որ հատուկ է Չարենցի վերջին երկերին։

Եթե քանաստեղծը հասցներ իրատարակել իր նոր գիրքը, ապա նրա մեջ կհավաքեր՝ «Ճիշտ այսպիսի անգույն մի գիշեր», «Դանքեն», «Սաֆո», «Էկլեզիաստես», «Ույալում», «Նմանություն Իրսենին» երկերը, ապա «Կոմիտասի հիշատակին», «Նավզիկե» պոեմները, «Վերջին աղոթքը», «Հերոսի հարսանիքը», «Չարչարանց լերան աղոթքը», «Ատլանտիդա», «Երազների մասին» պոեմը և ուրիշ գործեր,

նաև բանաստեղծություններ, էպիգրամմներ, ոռուայիններ, որոնք նա չհասցրեց տպագրել։ Դրանք առաջին անգամ հրատարակեցի ես՝ միայն ու միայն հորս իմքնագրերի հիման վրա։

Այս գործերից շատերը մնացել են անավարտ, շատերն էլ անունով միայն կան, բայց դրանք բոլորն էլ պարզում են հանճարի ստեղծագործական անհուն կարելիությունը և նոր իմացությունների անշափելի սահմանները, որ ոռուական ու եվրոպական պեղկայից հասնում են մինչև ճապոնական քանկանները, արևելքի բանաստեղծներից մինչև չինական ու հնդկական իմաստությունները, մինչև բուդդայական կրոնի ու յոգիզմի խորհուրդները։

Համաշխարհային մտքի և արվեստի տիտանների հետ Զարենցի ոգեկան հաղորդակցություննը, որ սկիզբ է առնում «Էպիքական Լուսաբացից», լայնանում է «Գիրք ճանապարհի» ամբողջ տարածքի վրա, ավելի է խորանում նրա վերջին գործերում։ Վերջին տարիների իր ստեղծագործություններում Զարենցը դրւու է զալիս Հայոց պատմության սահմաններից և տարածվելով՝ իր խոհական-փիլիսոփայական պոեմների ու բանաստեղծությունների նյութ է դարձնում այլևայլ ազգերի գրականության ու արվեստի նշանակոր ներկայացուցիչներին։ Աշխարհի բոլոր ազգերի ու ժողովուրդների պատմության ու արվեստների անշափելի ու խոր իմացությունն է, որ զգացվում է հատկապես վերջին գործերում։ Այս իմաստով չարենցագիտության շատ հարցերի լուսաբանման գործում ուսումնասիրողների համար մեծ ու անփոխարինելի դեր ունի նաև բանաստեղծի անճնական գրադարանի ուսումնասիրությունը։ Պահպանվել է գրադարանի վեց հազար կտոր գրքերից միայն հազար չորս հարյուր քսան կտորը, որի հիմնական մասը այժմ պահպանվում է բանաստեղծի տուն-բանգարանում, իսկ որոշ գրքեր էլ դեռ մնում են անճնական արխիվներում։ Սակայն պահպանված գրքերն էլ բավական են՝ պարզեցու համար Զարենցի նախասիրությունները, գրքերի ճեղքերման դիմամիկան, ըն-

թերցման հաճախակիությունն ու ընտրությունը։ Առանձին կարևորություն ունեն նշումները, որ բանաստեղծը կատարել է գրադարանի գրքերն ընթերցելիս։ Այդ նշումները, ինչպես նաև ընդգծումները, որ կան գրադարանի շատ գրքերում, մեզ հնարավորություն են տալիս հետևելու Չարենցի մտքերի ընթացքին, այն բանին, թե հեղինակին ո՛ր մտքերն են դուր եկել, և ինչն է նրա մեջ առաջացրել առարկություններ, անգամ բոլոր ու ընդվզում։ Կարևոր նաև այն է, որ շատ հեղինակների մտքերը բանաստեղծի կողմից ընթրվել են ըստ իր մտքերի հետ ունեցած համահնչումության, կտրված հեղինակային ամբողջական տեքստից և մեկնաբանված յուրովի։ Նրան հետաքրքրել է ոչ այնքան այս կամ այն գրողի կոնցեպցիան, որքան նրանց առանձին մտքերի, օրինակների, փաստարկումների, եզրակացությունների՝ իր ներաշխարհի հետ ունեցած նույնությունը, ընդհանրությունը։ Չարենցի ընթերցած գրքերի մեջ (մնաք չեք ամդրադառնում գեղարվեստական երկերին) հատուկ ընտրությամբ ներկայացված է թե՛ դասական և թե ժամանակակից գիտությունը։ Հատուկ ընտրությունը վերաբերում է մարդագիտության տեսակին։ Չարենցին հետաքրքրել են այն փիլիսոփաները, որոնց ուշադրության կենտրոնում են եղել մարդուն, նրա կյանքի իմաստին, նրա հոգևոր սֆերային, նրա մահկանացու կամ անմահ լինելուն վերաբերող պրոբլեմները, ապա և այն հարցերը, որ վերաբերում են նյութականի և հոգևորի փոխհարաբերությանը, մարդու իմացական կարողությունների հնարավորություններին։ Նրան մեծապես հետաքրքրել են նաև մարդու կատարելագործման հարցերը։ Հին փիլիսոփաներից նա նախընտրել է Մարկ Ավրելիոսին, Պլուտարքոսին, Լուկրեցիոսին, Պլատոնին, վերածննդի շրջանի հեղինակներից՝ Զորդանո Բրունոյին, Կամպանելային, նորագույն փիլիսոփաներից՝ նա անշափ հետաքրքրվել է Սպինոզայով, Լեսինգով, Հելվեցիոսով, հատուկ ջանասիրությամբ ուսումնասիրել է գերմանական դասական փիլիսոփայության հայտնի ներկայացուցիչներին։

Ֆիխտեհն, Շելինգին, Կամտին, Հեղելին, Ֆոյերախին, ռուս փիլիսոփաներից՝ Օգարյովին, Գերցենին, Դորրոլյութովին, Չեռնիշևսկուն, նորագույն փիլիսոփաներից՝ Նիշշեհն, Մախին, Ավենարիուսին, Լամարգին: Նա ամենայն հետևողականությամբ ուսումնասիրում էր Լենինի, Մարքսի, Էնգելսի, Պլեխանովի աշխատությունները: Նա իր գրադարանում ուժի ժամանակակից փիլիսոփայությունը ներկայացնող բոլոր հիմնական աղբյուրները: Սպիտակայի աշխատությունների 10-ից ավելի մեծապես հատորները նա կարդացել է ամենայն մանրամասնությամբ և ընդգծումներ ու ճշումներ է արել համարյա բոլոր գրքերի վրա:

Զարենցը հատուկ սեր ուներ նաև սոցիալական ու պատմական գրականության հանդեպ: Նրան հատկապես հետաքրքրում էին հասարակության ու մարդու կյանքի համար վճռական նշանակություն ունեցող խոշոր իրադարձությունները: Նրան հետաքրքրում էին հեղափոխության կողմից բարձրացրած այնպիսի ուժեղ ու ողբերգական անհատականություններ, ինչպիսիք էին Ռոբերտ Քանտ, Մարքսի, Սարատը: Առհասարակ նկատվում է Զարենցի առանձին հետաքրքրությունը ֆրանսիական հեղափոխության իրադարձությունների նկատմամբ: Այդ մասին նա հավաքել է բազական ընտիր գրականություն: Բանաստեղծը ցանկանում է հասկանալ նաև ժամանակակից կապիտալիստական հասարակարգում ապրող մարդու հոգերանությունը: Երևում է, որ նա մի անգամ չէ, որ անդրադարձել է Հորսոնի «Ժամանակակից կապիտալիզմի զարգացումը», Հելֆերդի «Ֆրանսիական կապիտալը», Հակնզիերի «Արևմտաքաղաքական մթնշաղը» գրքերին, Կլաուզվիցի «Պատերազմի մասին» կապիտալ աշխատության բոլոր հատորներին և այլն:

Զարենցը հատուկ հետաքրքրություն ուներ նաև Արևելքի նկատմամբ: Արևելքի կրոնների պատմությունը՝ բուդայականությունը, բրահմայականությունը, մուսուլմանական կրոնը նա ուսումնասիրել է երկար ժամանակ: Նա նույնպիսի հետևողականությամբ ուսումնասիրել է նաև հասարա-

կական ֆորմացիաների զարգացումը՝ սկսած նախնադարյան հասարակությունից մինչև ժամանակակից Արևելքի և Արևմտութքի պատմությունը։ Թվենք նրա կողմից հետաքրքրության արժանացած մի քանի աշխատություններ։ Վիպակք՝ «Հռոմի պատմության ուրվագիծը», «Հին Եվրոպա», «Քուղղան, նրա կյանքը և ուսմունքը», *Սարաւի*՝ «Հին Արևելքի պատմություն», *Ծարաւու*՝ «Հիսուսի կյանքը», *Ծել-վիճակի*՝ «Հնդկաստան» և այլն։

Այժմ փորձենք ավելի հանգամանորեն պարզել մեկ հարց. այն, թե հատկապես կյանքի վերջին տարիներին ի՞նչ հարցերի վրա է սևող Չարենցն իր ուշադրությունը, և ինչքանով են դրանք առնչվում նրա այդ տարիների ստեղծագործական մտահղացումներին։ Տանք դրանցից մի քանիսի բնութագրությունները։ Հետևելով հայ մեծ գրողի ու մտածողի՝ այդ գրքերի վրա կատարած նշումներին՝ աշխատենք պարզել նրա ներաշխարհի այդպիսի ցուցանիշներով մեզ հասած առանձին կողմերի բովանդակությունը։ Այս և նման այլ հոգերանական, փիլիսոփայական, իմացարանական, մարդարանական հարցեր պարզելու ճանապարհին Չարենցը մի կողմից դիմում է ոռուսական, գերմանական, ավստրիական գրականության ու փիլիսոփայության խոշոր ներկայացուցիչներին, մյուս կողմից՝ Արևելքի կրոնների ու պատմության խոշոր գիտակներին և Արևմտութքի փիլիսոփաների ստեղծագործությունների ուսումնասիրությանը։ Նա դիմում է նաև հոգերանական գրականությանը և հատկապես Ֆրեոյդին։

Չարենցի բոթերի մեջ և մի առանձին տետրում «Երազների մասին», «Պոեմ անվերնագիր» խորագրերի տակ պահպանվել են ստեղծագործության մի քանի տարրերակներ։ Այս նոյն տետրում պահպանվել է նաև մի էջ, որի վրա հետևյալ գեղագրված ծեռագիրն է։

«Պոեմ անվերնագիր

1. Երազների մասին
2. Երազը

3. Բանալին

**Ըստ Եղաքար Պո-ի+Ֆրեոյդի
սկսված է 2-IV-1937 Երևան
Anno Domini MSMXXXVII
Ի ԹԻԱԿ. ՀԱՅԿ. Ո-ՅՉԷ
ԵՎԻԾԵ ԶԱՐԵՆՑ
ՄԵՂՍԱՔԱՐՈ ԴՊԻՒ ԵՐԳԱՍՍԱՆ»**

Տետրում պահպանված տարբերակներն ու հատվածները հատկապես հուշում են, որ Զարենցը ծրագրել էր գրել մի քանի մասից բաղկացած ընդարձակ մի ստեղծագործություն, որի մտահղացումը, անկասկած, կապվում է Ֆրեոյդի «Երազների մասին» հայտնի աշխատության հետ: Ավտորիացի նշանակոր հոգերանի ուսմունքի համբեպ բանաստեղծի հետաքրքրության շարժառիթը ինքնաճանաշման այն ճգույնն է, որ գնալով ավելի է ուժեղանում Զարենցի մոտ: Նույն այդ տետրում պահպանվել են բանաստեղծի գրառումները, որ նա արել է 1937 թ. մարտին, իր 40-ամյակի օրը. «Մի քանի շաբաթ առաջ, այն է մարտի 1-ին լրացավ իմ կյանքի 40 տարին... Ես այդ օրը, ինչպես և իիմա, ինչպես վերջին երեք տարին անընդհատ - պառկած էի անկողնում, ննջասենյակում, դիմաց՝ զգեստի պահարանն է, որի դրան մեջ հազցրած է մի հսկա, եիանալի հայելի: Ամեն առավոտ արքնանալիս ես, աչքերս բանալով, իմ դեմքն եմ տեսնում այդ հայելու մեջ, միշտ նույն, կարծես ավելի քան ծանոթ հավիտյան նույն դեմքը, նույն կերպարանքը, մի մարդու, որ ես եմ: Նայում ես ինքդ աչքերիդ խորքը - և որքան ճգնում ես մի քանի հասկանալ, այնքան անհասկանալի ու անճար է դառնում քո կերպարանքը...»:

Բանաստեղծը ցանկանում է հասկանալ բանականության գործունեության օրինաչափությունները: Կարևոր ճգտելու, հասնելու, ցանկանալու ու կատարելու կամային ու գիտակցական պրոցեսների միասնությունն է: Նման բացարձակ եղրակացությանը Զարենցը հակադրում է ստեղծագործական պրոցեսի ենթագիտակցական լինելու դրույ-

թը: Նա լավ է հասկանում, որ ծշմարիտ բանաստեղծությունը գրվում է սրտով, արյամբ, հոգով, ներշնչումով, և ոչ թե միայն սառը տրամադրությամբ: Նա գտնում է, որ միայն զուտ բանականությամբ առաջնորդվող գրողը, որ բանաստեղծությունը ենթարկում է տրամարանության օրենքներին, փիլիսոփայական մտքերն ու դատողությունները դնելով տաղաչափական ճնշերի մեջ, ոչ թե բանաստեղծ է, այլ ամենաշատը՝ «ագիտատոր»: «Ինչ ուզում են քող մեր «մարդուստ» քննադատներն ասեն, զրողը «կրուտակում է» իր գանձը, ոչ թե զիտակցարար, այլ միանգամայն «ենթագիտակցար»: Եվ այս է ստեղծագործության զաղտանիքը...»:

Ահա այս և նման հարցերի բացահայտման ճանապարհին Չարենցը դիմում է հոգեքանական գրականության օգնությանը, նաև Ֆրեոյդի ուսմունքին և հիմնականում նրա այն ուսումնասիրություններին, որոնք վերաբերում են բացատրելիի և անբացատրելիի, կամածինի և բնազդայինի, զիտակցածի և անզիտակցականի պրոցեսին: Բացի Ֆրեոյդի ուսմունքը մեկնարանող գրքերից, Չարենցն իր գրադարանում ունեցել է Ֆրեոյդի համարյա բոլոր աշխատությունները՝ «Տունն և Տարու», «Մանկան հասակի պսիխոանալիզը», «Դասախոսություններ հոգեքանության ներածության հարցի շուրջ», «Մեթոդիկա և տեխնիկա», և այլ աշխատություններ: Այս գրքերում բանաստեղծի կատարած ընդգծումները և նշումները ցույց են տալիս, որ Ֆրեոյդի ուսմունքի հանդեպ նրա հետաքրքրությունը հիմնականում թելադրվում է մարդուն ավելի բազմակողմանի ու լիրվ հասկանալու հանգամանքով: Չարենցին հատկապես հետաքրքրել են այն ժամանակ Սովետական Սիության մեջ արգելված այն աշխատությունները, որտեղ զիտնականը աշխատել է պարզել մարդուն ծայրահեղ ներվայնության և անգամ խելագարության հասցնող կյանքի կոնֆլիկտների և աֆեկտիվ երևույթների էությունը: Նրան հետաքրքրել են ոչ միայն զիտակցական պրոցեսները, այլև բնազդներն ու անորոշ մղումները:

Չարենցի «Երազմերի մասին» խորագիրը կրող անափարտ ստեղծագործության պահպանված հատվածների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այս պրոբլեմի ու հարցադրումների շրջանակում էին նրա հետաքրքրությունները։ Հետևելով բանաստեղծի ընթերցումներին և նրա մտքերի ուղղությանը՝ մենք կարող ենք հաստատապես պնդել, որ Չարենցը մեծ հետաքրքրություն էր հանդես բերում գենետիկ սոցիոլոգիային վերաբերող հիմնական պրոբլեմների նկատմամբ, նրան հետաքրքրում էր այն հարցը, թե ինչպես է առաջանում մարդու մոտ չարությունը, բռնությունը, անմարդկայնությունը, սաղիզմը։ Այդ ամենը նա ժառանգաբա՞ր է կրում իր մեջ, թե՞ այն մշակվում է հետազայում։ Նրան հետաքրքրում են նաև տոտեմի և տարուի պատկերացումները, ամեն տեսակի համացեղային նշանակության տարուները։ Դրանք անգիտակցորեն գործող ուժերն են, որ մարդու մոտ, հատկապես կյանքի ծայրահեղ կոնֆլիկտային պայմաններում (որում գտնվում էր հայրս այդ օրերին) առաջացնում են ինչ-ոք անորոշ տագնապներ, ամեն տեսակի ախտաբանական վիճակի հասցնող մտավախություններ, ահարեկիչ երազներ, ամեն տեսակի պատրանքներ, անորոշներ, տեսիլքներ, հոգերանական խոր տրավմա։

Մուտք

Երազմերի մասին

Երազմերին ես չեմ հավատացել երբեք,
Չեմ համարել ոգու ինչ-ոք վերին նշան։
Պատահել են քեզ ինձ այնախսի դեպքեր,
Ոք ընդունակ են տալ ինչ-ոք վերին, դաժան,
Անազորույն խորհուրդ երազներին երբեմն…

Չարենցին հետաքրքրել են նաև էքսիկական հոգերանության հարցերը։ Ի՞նչ ընդհանուր գծեր կան առանձին մարդու ներաշխարհի և իր ժողովրդի հոգերանության միջև, ի՞նչ է գեում և ի՞նչը չի գեում անհատից դեպի ժողովրդը և ընդհակառակը, և ի՞նչ ճանապարհներով։ Նա ճգտում էր անհատի հոգերանության հարցերը քննելու միջոցով ճանա-

պարի հարթել դեպի ժաղովուրդների հոգերանության չուսումնասկրած բնագավառը: Սրանք հարցեր են, որոնք Զարենցին հետաքրքրել են ոչ միայն Ֆրեոյդի ուսմունքի կապակցությամբ, այլև ընդհանրապես:

Իհարկե, այս հարցերի Զարենցյան ըմբռնումները մեզ համար ավելի հստակ կլինեին, եթե նա կարողանար իրականացնել իր բոլոր մտահղացումները:

Կյանքի վերջին տարիներին, երբ բանաստեղծը հասկապես ավելի բարձունքներին հասնելու նոր ուղիների որոնման հարցականների առաջ էր կանգնած, Գյորեի ու Դանքեի կողքին նաև Պուշկինի «վեհ կերպարի» հաճախանքն է ունենում: Ուղիղ հարյուր տարի իրենից առաջ զոհված հանճարի ու իր ճակատագրի ընդհանրությունը նա արձանագրեց հետևյալ առղերով.

Ո՞չ: - Չնչին ամպերի սև զորքը

Պաշարնեց - Արևից առաջ քեզ: -

Իսկ այնտեղ, ներքեւում երգի սով էր, -

Բայց ցնծում էր Պատման առանց քեզ: -

Պուշկինը Զարենցի համար «հանճարի մեծագործության» կատարելության չափանիշ է: Զարենցի կողմից Պուշկինի ստեղծագործության նշանակության խոր ու բազմակողմանի ըմբռնումը մեզ հայտնի է դեռևս «Էպիքական լուսարացից»: Պուշկինի հարցը պարզապես զրականության պատմության քննարկում չէր կամ էլ Պուշկինի դերի ու մեծության գնահատություն: Նա խորապես ըմբռնեց ուսւմնել պետի ստեղծագործության անմահության գաղտնիքը՝ այն, ինչով Պուշկինը մնաց մեծ, մնաց մաքուր ու վիթխարի: Պուշկինյան արվեստի խորությունը, ժողովրդայնությունը, նրա պոեզիայի համամարդկային հնչեղությունը, վեհությունն ու պարզությունը այն հատկություններն էին, որ արվեստի տեսարան Զարենցը ցանկանում էր տեսնել նոր ժամանակների պոեզիայում:

1937-ին, երբ նշվելու էր Պուշկինի մահվան 100 ամյակը, Զարենցը համամիութենական հորելյանական հանճարությունում 60

դովի անդամ էր, Հայաստանի հոքելյանական հանճնաժողովի նախագահ: Ինչպես այս օրերին մտորում էր Զարենցը, «մեր ոգու անհաս զենիքում» այսօր էլ տիրականորեն կանգնած Պուշկինի անմահ կերպարը ապացույցն է, որ «զնշին ամպերի սև զորքը» անկարող է պաշարել Արևը, և որ զալու է հատուցման ժամը:

* * *

Երբ կարդում ենք՝ հաճախ շտապ, հազիկ հասկանալի նախադասություններով քրջին հանճնված ավարտուն ու անավարտ վերջին բանաստեղծությունները, որոնց մեջ հեղինակը ծրագրային հետևողականությամբ արձանագրել է իր ապրումներն ու մտածումները, տեսնում ենք, որ օրեցօր հուահատությունն ավելի ու ավելի է խսանում բանաստեղծի տրամադրության մեջ: Շուրջը կատարվող դեպքերը, մենակությունն ու անզորությունն զլատում են նրա ուժերը: Հիմա արդեն «փր մեռած խոսքերն է քափում զալիքից տագմապող մի մարդ».

Աշունը, ախ, այնպես անցավ՝

Եվ ցնցող և ծանր՝ ինչպես

Հանճարեղ ոճիր կամ հանցանը:

Նման բանաստեղծական կտորները, վերջին ամիսների իմքնագիր խառնիխումն էջերը, խոների ու գրառումների պատառկները, նամակների ու դիմումների սևագրերը կազմում են Զարենցի անտիպ ժառանգության այն մասը, ուր ամենից սուր է զգացվում ժամանակի ազդեցությունը, իր ամեն մի նյարդով վերապրող արվեստագետի ու մարդու հոգու տառապանքն ու մաքառումը. «Սիրե՞» կարող է գոնե խորերդային գրական հասարակյանության համար զաղտնիք հանդիսանալ այն զարհութելի բառացի իմաստով անգամ քստմնելի՝ հասարակական-քաղաքական հալածանքն ու օստրակիզմը, որի հետևանքով ավելի քան երեք տարի է, որ ես դուրս եմ շպրտված գրական-հասարակական ասպարեզից», - կարդում ենք նրա օրագրային վերջին գրառումներում: Այս նույն ապրումների ու զգացողությունների վկայությունն է նաև 1936թ. դեկտեմբերին գրած հանճարեղ «Տես-

*բապտիքոսը», որ վերնագրված է «Ճ խորոց սրաի խոսք ընդ
Աստուծո»:*

Ինչպես դարեր առաջ - վկան Նարեկացի, -
Քեզ նմ հղում ես ողքս, ո՞վ Արարի,
Ես մեղավոր քերողս աստվածարյալ դարի, -
Ողջակիցյալ արյունս վարակածին...

Չարենցի վերջին շրջանի ստեղծագործությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քանաստեղծն իր գերագույն ներշնչման պահերին մեծ մասամբ մոտեցել է իր երկարաշունչ գործերից մեկն ու մեկին և նրան է փոխանցել իր հույզերն ու խոները: Այսպես է թվում, քանի որ նախ՝ Չարենցը սովորություն է ունեցել աշխատելու միաժամանակ մի քանի գործերի վրա և, երկրորդ, որովհետև պոեմներն, ինչ խոսք, նրա այս շրջանի ստեղծագործության կշեռքի ծանրագույն նժարն են կազմում՝ ավելի համապատասխանելով քանաստեղծի հայսուն ապրումներին: Քանի տասմյակ ավարտուն քանաստեղծություններ են ծնվել վերջին պոեմների կողքին, որոնց մեջ է հատկապես, որ Չարենցը գրեթե միշտ ինքն իր հետ է, ինքն իր դիմաց: Նա անընդհատ քրքրում է իր կյանքը, նոր լույսի տակ դիտում այն քեկուզ աննշան դեպքերն ու սիրելի դեմքերը, որոնք ճառագել են իր պատանեկության, երիտասարդության մեջ: Բայց սա հասարակ կյանք չէ, այլ մեծ քանաստեղծի մրրկոտ քառասմանյակ, «Կարմրածուի կեսօր», ինչպես ինքն է հիշանալորեն բնորոշում իր անցած ուղղու վերջին հանգրվանը: Ուստի հասկանալի է ու բնական, երբ տարիների հետ մեկտեղ Չարենցին այցելում է քանաստեղծ լինելու ինքնազիտակցությունը, որ Մուսայի հանդեպ երախտիքով ու հպարտությամբ է լցնում նրա էությունը.

Մաքուր իմ սեր, միակ իմ զեն,
Միակ իմ հուր, իմ սուր, իմ զարդ, -
Հարս իմ լուսե, քույր իմ հպարտ,
Իմ անաղարտ սիրո հույզեր,
Լույս իմ կյանքի, հույս իմ զվարք...

1937 թ. մայիսի 10-ին Հայաստանի Կենտկոմի առաջին քարտուղար Ամատունուն ուղղած դիմումներից մեկի մեջ Զարենցը գրում է. «Ընկեր Ամատունի,- և, ընդհանրապես, - ընկ. Կենտկոմ. - Ես իմ գրական հասարակական ողջ եռոքամբ, - վերջապես իրքև հասարակ մարդ և հասարակ շարքային քաղաքացի- չեմ կարող լինել, եթե ուզենամ անգամ, իմ խորհրդային երկրի ու ժողովրդի դեմ։ Երբ հարցը վերաբերում է 25-ամյա գրական-քաղաքական անցյալ ունեցող որևէ քիչ թե շատ ազնիվ մարդու, որն իրեն պատասխանատու է զգում իր կատարած հասարակական յուրաքանչյուր քայլի համար։ Նա առավել պատասխանատու է զգում իրեն, երբ նրա առջև լինել չլինելու խնդիր է դրվում - ամրող մարդկության ու կուլտուրայի համար մեծագույն ու ճակատագրական քայլումների ճախօրյակին, ամենի քափով տեղի ունեցած դասակարգային ուժերի բևեռացման ու կողմնորոշման վճռական ժամկեն։»

Քանաստեղծի հոգեկան լարվածությունն իր գագարնակետին է հասնում, երբ նա իր մենության ու լրումի խորքերից հառաջում է ու հարցենում ամենատես արարիչ - Աստծուն.

**Մի՞քե իրոք այսօր ես դուրս մնացի
Չո արկից, երկրից, ժողովրդից անեզը, -
Չե՞ զառանցանք արդյոք սա...»**

Զարենցի «Վերջին աղոքք» կոչվող այս սոնետը նրա ապրած ողբերգության անկեղծ վկայությունն է, որ մատնում է քանաստեղծի տառապանքի ողջ տարրությունը։ Սակայն հակառակ այս ողբերգությանը, նա ուժ ու հավատ է գտնում իր մեջ և սոնետը վերջացնում է քայլերգի, իիմնի վճռականությամբ ու անհուն լավատեսությամբ։ Իր ամրող կյանքը պայքարով անցած պոետը, երբեք չկորցրեց ոգու պայծառությունը։

**Կյանքը թերել է փորձանք ու անկում, -
Միշտ համբերել ես դու, սիրտ իմ անքուն...»**

Այս տողերով է սկսվում Չարենցի ամենավերջին բանաստեղծություններից մեկը, որն իր ընդհանուր տրամադրությամբ առնչվում է դեռ 1934-ին գրած նրա «Resignation» (համակերպություն) ուսանավորի հետ, ուր ֆրանսիացի խորհրդապաշտ քանաստեղծ Պոլ Վելենի երգերի չափով ու ոգով նա մրմնջում է իր մորմոքն ու թախիծը, առանց, սակայն, երես դարձնելու հույսից և ապագա պայծառ օրերի սպասումից: Ուստի անխախտ հավատով ու ժողովրդական իմաստությամբ ասում է ինքն իրեն.

**Խմիր հոժար կամքով, իրքն լելի մի քաս,
Տառապանքիդ բաժակը՝ վաղվա կյանքով հոյի:**

**Հալածանքի օղակը սեղմկում էր քանաստեղծի շուրջը.
«Ի խորոց սրտի», հոգու անհուն խորքերից Արարչին է
ուղղում իր խոսքը քանաստեղծը՝**

**Եվ - քունավոր, ինքյան, որպես կարիճ՝
Ահա կանգնած եմ - զորկ անգամ դժնի հացից, -
Եվ կախված է զլիս - մի արեգնացյալ կացին...**

**Այժմ նրան մնում էր միայն հաշտվել մահվան հետ՝
չնայած մահը հիմա քանաստեղծի համար իր երիտասար-
դության «զուսավոր առասպելը» չէր այլև:**

**Եվ այսպես, մահվան կանխազգացումի վերապրումնե-
րը, մոտալուս մահվան, վերջին հանգրկանին մերձնենալու
սուր զգացողությունը այն հիմնական ապրումն է, որով
ստեղծվում են վերջին տողերը.**

**Սառ՝ մորմոքում է Մայրամուտը,
Սահվան մշուշ է մովից մաղում, -
Սեռնում է մութը մքնշաղում, -
Սառ մորմոքում է մայրամուտը:
Ստորուներս մահ են, մութ են,
Սարիս մտքեր են միայն մխում, -
Եվ մորմոքում է մայրամուտը,
Սահվան մրուր է մովից մաղում...**

26 -28 V. 1937

Հատկապես 1936-1937 թթ. գրված բանաստեղծություններից շատերը իրենց գեղարվեստական արժեքից ավելի ունեն վավերաբղիք, փաստաբղիք նշանակություն: Դրանք կարծեն զերմաշափն են արտաքին աշխարհի, որ լեցուն է դաժան անակնակալներով: Թեև այս ամիսներին հայրս զնդիանապես տանից դուրս չէր գալիս և մարդիկ հազվադեպ էին նրան այցելում, բայց արտաքին տագմապալի խլրումների լուրը բափանցում, հասնում էր իրեն, և նա ավելի հաճախ փոքրիկ բանաստեղծություններով արձագանքում էր արտաքին աշխարհի դեպքերին:

Նստած է այսօր երկրի Նայիրյան
Երգեհոնն ամրող ներքնահարկում փակ,
Ամրաստանության փոստն դժնդակ..., -

անհուն ցավով արձանագրում է բանաստեղծը: Իհարկե, Չարենցի մտերիմներն ու գրչակից ընկերները միշտ չեն, որ զորավիզ են եղել նրան, բայց փորձության պահին նա միշտ էլ առիթ է փնտրում վկայելու իր հանիրավի դատապարտված ընկերների ազնվությունն ու անմեղությունը, կարծեն նրանց դատի պաշտպանը լինի.

Ոչ չեմ հավասում, որ Նայիրական
Աշխարհում ամրող գտնվի գեր մի
Պուտ, որ այսօր իր բախտը գտնի
Իր ժողովրդի վսեմ, աիրական
Երբ խափանող ուղիների մեջ:

Անհուն ողբերգություն կա նրա մի հայտարարության մեջ, որ կարդում ենք բանաստեղծի դատական հարցաքննություններից մեկի արձանագրություններում. «Ես ոչ ոքի հետ չեմ հաղորդակցվում, ես ոչ ոք չունեմ, ես միայնակ մարդ եմ»: Աշխատասեմյակի պատերից օր ու գիշեր նրան էին նայում արդեն մտերիմ դարձած հարազատ դեմքեր՝ Պուշկինը, Գյորեն, Լեռնարդո դա Վինչին, դա Վինչիի Հիսուսը, Մայակովսկին, Դանքեն: Ներշնչման ու հոգու պայծառության պահեր էր ունենում բանաստեղծը իրեն պաշա-

բած հոգեկան ծանր ապրումների ու անլուր տառապանքների բոցեներին, երբ զրուցում էր «իր շուրջը բազմած» այդ մեծերի հետ.

Դարձնել է ինքնության դկիզ,
Սեփական գոյության պարու,
Ինքնագտնան փարոս -
Այդ դելին դեմքը Դանքնի:

1936 թ. օգոստոսի 21-ին «Խորհրդային Հայաստան» թերուում սպազրվում է Անդրկովկասյան ֆեղերացիայի քարտուղար L. Բերիայի հողվածը. «Փոշիացնել, հողմացրիվ անել սոցիալիզմի թշնամիներին», որի մեջ մասնավորապես ասվում էր. «Երևանում (Հայաստանում) մերկացված է Ներսիկ Մտեփանյանի հակահեղափոխական, տրոցկիստական, նացիոնալիստական խմբակը... Ինչպես պարզվում է Հայաստանի Կենտկոմի նախկին քարտուղար Աղասի Խանջյանը դեռ 1934-1935թթ ազդանշաներ ստանալով Ն. Մտեփանյանի և նրա խմբի տեռորիստական, քայլայիշ աշխատանքի մասին, որևէ միջոց չձեռնարկեց այդ խմբակի ոչնչացման համար...: Այժմ պարզվում է, որ Խանջյանը սիստեմատիկաբար, տարիների ընթացքում նամակագրություն է ունեցել արտասահմանում (Փարիզում) գտնվող ունի Արշակ Չոպանյանի հետ, որը հայկական հակահեղափոխական, բուրժուա-նացիոնալիստական Ռամկավար կուսակցության ամենաականավոր գործիչներից մեկն է: Այդ նամակագրությունը Խանջյանը քաքցնում էր կուսակցությունից: Խանջյանին գրած իր նամակներում այդ Չոպանյանը հակահեղափոխական, ազգայնական խորհուրդներ էր տալիս Խանջյանին:

Այդպիսի նամակներից մեկում 1933 թվին Չոպանյանը գրում է Խանջյանին. - «Չատ լավ կանեք, եթե ձեր մամուլի մեջ և ձեր ճառերում քստ հնարավորության քիչ խոսեք դաշնակների մասին»:

Իսկ մի ուրիշ նամակում, ոոր Սահմանադրության կապակցությամբ, Չոպանյանը խորհուրդ է տալիս Խանջյա-

ճին, իարց իարուցել Հայաստանի սահմանները վերաքննելու և ընդարձակելու մասին: Խոսքս, - գրում է նա Խանջյանին, - ոչ միայն Տաճկաստանին հանձնված Անիի, Արարատի, Ղարսի և Սուրմալուի մասին է, այլև Ղարաբաղի և Նախիջևանի, որոնք միշտ Հայաստանի մասն են կազմել»: Խանջյանն արդեն սպանված էր և հենց Քերիայի ծեռքով, հուլիսի 9-ին:

1936. 9 հուլիս

Թվում է վայրկյանից այդ սկ.
Հուլիսի 9-ից մինչև
Ահա այս վայրկյանը երազ
Զառանցանք, որ դեռ չի անցել:

Չեռագրի քայրայված թերիկների վրա պահպանվել են անունները Զարենցի արդեն գնդակահարված կամ բանտարկված ընկերների՝ Ներսիկ Ստեփանյանի, Գուրգեն Սահարու, Արտօ Եղիազարյանի, Գուրգեն Վանանդեցու, Ակսել Բակունցի, Նորենցի, Ալազանի: Կարծես տեսդի մեջ բոթին հանձնված տողերը, ավելի քան այլ բանաստեղծական կտոր, պարզում են բանաստեղծի հոգեկան տագմաայի անսահմանությունը: Իր շուրջը դարձող դեպքերի այս ամբողջ շղթան նրան քվում է մի «ցնցող, անհնար... զառանցական երազ», որ դարի տևողություն ունի:

Այս օրերին դրսում մնացած գրողները ժողովներ էին անում և երծվագին ոգևորությամբ դատափետում էին արդեն բանտարկված գրողներին, մտավորականներին, պետական գործիչներին: Երբ կարդաւ ենք այդ ժողովների արձանագրությունները, տեսնում ենք, որ դատապարտության ամենասուր սլաքները դարձյալ ուղղված են դեռ չբանտարկված Զարենցի դեմ: Խոսելով «Գիրք ճանապարհիի» մասին՝ մեկն իր ելույթում ասում է. «Զարենցի այս գիրքը պետք է անշուշտ զախցախվի և դեռ շպրտվի, որպեսզի իր ազդեցությունը չունենա երիտասարդ գրողների վրա»: Իսկ մի ուրիշը իր ելույթում ուղղակի կոչ է անում. «Զարենցը մի

քար է ընկած հայ պոեզիայի ճանապարհին. պետք է օր առաջ վերացնել այդ քարը»:

1936-1937 թվականների գրավոր թե բանավոր ելույթների այս իմնական ոգին ու մթնոլորտը հազվադեպ ծեղքվում էր մի լուսավոր խոսքով: Այդպիսին է Զապել Եսայանի խոսքը ասված՝ Գրողների միության ժողովում, բանտարկությունից մեկ ամիս առաջ. «Եղիշե Զարենցը մեր ամենամեծ բանաստեղծն է, այդ անուրանալի է բոլորին համար: Նրա տաղանդը շողշողուն լույսի պես շլացնում է մեզ... Սեզանից շատերի անունները կփոքչեն, բայց զալիք սերունդները չեն մոռանա Զարենցին: Թերևս մեզանից ոմանց անունները անցնեն զալիք սերունդներին միայն այն պատճառով, որ Զարենցի արժեքով մեկի հանդեպ եղել ենք արդար կամ անարդար»:

Զարենցն իր վերջին տետրակներից մեկում կես-ուսերեն, կես-հայերեն, խոշոր, հատ-հատ տառերով գրել ու մի քանի անգամ ընդգծել է հետևյալ նախադասությունը. «Այս պես վերջանում է Աղասի Խանջյանը և սկսվում է իսկական Ստալինյան հայ դեկավարություն»: Եվ իրոք Հայաստանում նոր դեկավարություն էր հաստատվել: Բանաստեղծի այս օրերի գրառումներում կարդում ենք. «Այդ ի՞նչ էր նշանակում Կենտկոմի պահակատանը ինձ խուզարկելու փաստը...»: Կենտկոմի շենքը մտնելիս Զարենցին խուզարկում են, որովհետև նրա դեմ մեղադրանք էր հարուցվել, որ նա Հայաստանում գործող գաղտնի տեռորիստական խմբի դեկավարներից է, և որ ինքն անձամբ պլանավորել է սպանել Կրեմլի կողմից նոր նշանակված քարտուղարներից մեկին՝ Լևոն Արիսյանին, որպեսզի տեռորիստական գործողությունների միջոցով «արթնացնի ժողովրդին»:

Բանաստեղծը մշտապես եղել է Ստալինի և ընդհանրապես Խորհրդային Սիության դեկավարության ուշադրության կենտրոնում: Կրեմլի և ուղղակիորեն Ստալինի կողմից դեկավարվող համախորհրդային մուկովյան հատուկ գաղտնի ծառայության բաժնից 1937 թ. հունվարի 27-ին

Հայաստանի կառավարությունը ստանում է Կենտկոմի առաջին քարտուղար Ամատունուն հասցեազրկած մի տեղեկանք: Այս գրության մեջ բարացիորեն ասվում է. «Հայաստանի հայ բանաստեղծ Եղիշե Չարենցի «Գիրք ճանապարհի» գրքում զետեղված է Պատգամ վերնագրով մի բանաստեղծություն: 269-270 էջերում գտնվող այս բանաստեղծության առաջին տառերից հետո երկրորդ փոքրատառերը երե կարդացվեն վերևից ներքև (բանաստեղծության սկզբից մինչև վերջը) կտացվի հետևյալ նացիոնալիստական լոգունզը: «Ով հայ ժողովորդ, քո միակ փրկությունը քո հաշվաքական ուժի մեջ է»: Խնդրում եմ շտապ պատասխանել այս գրքի առիրով ծեռնարկված միջոցառումների մասին: - Մամուլում ռազմական գաղտնիքների պահպանման Խ.Ռ. լիազոր, գլավկիսի պետ Ինգուլով»:

Հասկանալի է, թե այն ժամանակվա տերմինոլոգիայով ինչ էր նշանակում «միջոցառումներ ծեռնարկել»: Պաշտոնական փաստաթղթերում պետության կողմից այդ տողի համապարփակ իմաստը ձևակերպվեց այսպես. «Հակասությունական լոգունզ, ժողովրդին ոտքի հանելու գաղտնի կոչ»:

Բանաստեղծի հոգեկան լարվածությունն իր զագարնակետին է հասնում, նրան համակում է մոտալուս մահվան սուր զգացողությունը.

Իր հոգերանական խորքով ու ապրումի հարազատությամբ այդ օրերին գրված գործերից երկի թե վերջինը պիտի մկատվի «Ես դեռ չեմ տեսել կյանքում իմ - Այսքան տրամաբախիծ քաղում...» տողով սկսվող «Անվերնագիրը», որի քայքայված ինքնազիրն է պահպանվել բանաստեղծի անտիպներում: Այս երկի գրավչության գաղտնիքը այն իրապաշտ մանրամասներն են, որոնցով բանաստեղծը նկարագրում է մի խումբ խեղճ մարդկանց բախորում և արևելյան նվազախմբի ողորմելի քայլերգի հնչյուններով ուղեկցվող անծանոթ մեռելի հուղարկավորությունը: Այս բաղման բախորի, այդ տիսրագույն մարդկանց ողորմելի, անազորույն երթի հանդեպ հմայված ու նախանձով, նաև անհուն

տիսրությամբ, նա քղթին է հանձնում իր վերջին ցանկությունը.

... Այդպիս, օ սիրա իմ,
Ես կուզեի, որ քեզ մի իրիկուն տանեն
Այս տների միջով, ուր կատուներն անգամ
Քեզ ճանաչում են...

Տուր ինձ, երկինք,
Այդպիսի մահ...
Եվ այդպիսի քաղում...

1937 թ. հուլիսի 27-ին հայրս՝ Եղիշե Չարենցը բանտարկվեց:

Երկու ամիս անց, մայրս քանտից ստանում է հորս սպիտակեղենը՝ լվանալու համար: Սպիտակեղենի մեջ նա հայտնաբերում է քաշկինակի նման մի կտոր, որի վրա քիմիական մատիտով գրված էր մի նամակ: Նամակը վերջանում էր այսպիսի տողերով. «Ոգով պայծառ եմ և առույգ, ընտանիքիս հոգսն է միայն ինձ հոգեպես ընկճում ու հոշոտում, այդ էլ բաղնում եմ Ալահին և հայ ժողովրդին: 27 սեպտեմբեր 1937, բանտ»:

1937 թ. հոկտեմբերի 6-ին հայրս բանտից վերջին նամակն է գրում մորս, Իգարելլային: Ահա այդ նամակն ամբողջությամբ.

«Ողջույն: Ինչպես եմ ես կարոտում քեզ, Բոժիկին, Աղոկին... Էհ, լավ է զգեստ: Աստուծով կհանդիպենք իրար: Ամուր եղիք, հարազատս, եթե նոյնիսկ փողոց զցեն: Չէ՞ որ միայն մենք չենք տառապում, այլ շատ շատերը, նոյնպիսի մարդիկ ինչպես մենք ենք: Միայն աշխատիր պահել քեզ և երեխաներին, ես քեզանից պահանջում եմ միայն դա: Թող Աստված ծեզ պահապան լինի, չէ՞ որ մենք, հարազատս, ոչ ոք չունենք: Համբյուրում եմ ծեզ շատ, միլիոն անգամ և ավելի»:

Այս տողերը գրելիս հայրս չգիտեր, որ հազիվ մեկ ամիս անց բանտարկվելու և ապա Միքիր է աքսորվելու նաև մեր

մայրը Իզարելլա Չարենցը: Այս նամակը հորիցս մեզ հասած վերջին բառերն են:

Սուտ քսան տարի անց՝ 1955-ին, Ստալինի մահից հետո, Հայաստանի պետական անվտանգության կոմիտեից, ես ու քոյրս ստացանք մեր հոր «Մահվան վկայականը» որի մեջ «մահվան պատճառը» հարցի դիմաց զիծ է դրված, իսկ մահվան օրը նշված է 1937 թ. մոյեմբերի 27: Նրա գերեզմանի տեղը անհայտ է:

Այսպես ընդհատվեց հայ ժողովրդի մեծ բանաստեղծի կյանքը, «արարշական գործի ճանապարհի կեսին»:

Ահա այսպես է ներկայանում ինձ իմ հայրը:

Ամբողջ կյանքում ես մնացի ծովածքած նրա ճակատագրին, քանի որ իմ կյանքի պատմությունը նրա կյանքի պատմությունն է: Իսկ հորս համար ես եղա, ինչպես ինքն է գրում ինձ նվիրած «Ըմ Աղոնիսին» բանաստեղծության մեջ, «Քր արյան մուգ երանգի, իր մեջ հորդող սերմի փոխանցումը»:

Հորս, նաև Չարենց-մարդու, Չարենց-բանաստեղծի կերպարը պատկերանում է ինձ իր գրքերի, իր ձեռքով գրված փոքրիկ թերթիկների, երբեմն էլ մազաղարի նման լայնածավալ դեղնած ու գունաւո թղթերի միջից ու նաև հարազատների ու բարեկամների հուշերում:

Ես նրան տեսնում եմ մերք Մահաթմա Գանդիի պես, մերք արևելքի իմաստունի կերպարանքով, մերք իր երգած ամբոխների վիքիսարի տարերքում ու աշխարհի մեծ քաղաքների բազմություններում: Ես նրան տեսնում եմ նաև հայրենի քաղաքի՝ Ղարսի այգում, իր սկրեյխների՝ Կարինեի, Տերյանի, իր կանանց, իր Նավզիկեի մասին հյուսած հեքիաթներում:

Բայց ավելի հաճախ նա երևում է Նայիրյան քախիծի միջից:

Եվ վերջապես, ի՞նչ է այդ Նաիրին, հարցնում է բանաստեղծը, զիտես, որ նա եղել է, կա և իին է ինչպես իմ արյունն է իին:

Եվ այսօր հայ ժողովրդի մեծ բանաստեղծն ու տառապյալը ապրում է ծովզած այդ Նախրյանին, իին է նրա նման ու նոր: *Տասնամյակների, քայլ ասես իր ժողովրդի պատմության հազարամյակների հեռավորությունից նա երևում է մեզ այնքան հեռու ու առասպելական, այնքան ողբերգական և այնքան լուսավոր, ինչպես ներկայացել է իրեն՝ բանաստեղծին, իր երկիրը, իր Նախրին:*

Եղիշե Չարենցը կենդանության օրոք տեսավ հարազատ ժողովրդի սերն ու պաշտամունքը և խորապես գիտակցեց, որ այն տևելու է հավետ, քանի կա հայ մարդմ աշխարհում, քանի կա լառն Արարատ: Նա ապրեց իր մեծության ու հավերժության խորին գիտակցությամբ.

**Զո անունի, Չարենց,
Ասոնանսն է՝ Արե-
Եվ բառն - «հանճարեղ...»**

Վերջին տարիների ճեռագիր վիճակում մեզ հասած չարենցյան խոհերը, պոեմներն ու բանաստեղծությունները սմած տառապաճրի ու իմաստության բյուրեղացումից էին ծնունդ առնելու նաև այն գլուխգործոցները, որոնց ընդառաջելու բուռն ցանկությամբ նա անընհատ հղում ու կատարելագործում էր իր արվեստի վարպետությունը՝ իրեն օգնության կամչելով մուսաներին և բոլոր դարերի անմահներին:

Հորս զրադարանում պահպանվել է Նիշշեի «Այսպես խոսեց Զրադաշտը» գրքի մի օրինակ, որի վրա Չարենցը ընդգծել է հետևյալ տողերը, որ կարծես հենց իրեն են բնորոշում. «Գեղեցիկը այնտեղ է, որտեղ ես կուզենամ և սիրել և կործանվել» և վերջում՝ «Դու հավերժական վերադարձի ուսուցիչ ես և դրանում է իիմա քո կոչումը»:

ԱՉԱՏ ԵՎԻԱԶՄՐՅԱՆ

ՉԱՐԵՆՑ ԵՎ ՊԻՐԱՆԴԵԼՈ

Չարենցը հայ դասական գրականության այն հեղինակն է, որն ամենից ավելի նյութ է տալիս գրական առնչությունների մասին խոսելու: Ամենատարբեր կապերով կապված է եղել հայ և համաշխարհային գրականության ամենատարբեր հեղինակների հետ: Չարենցի ստեղծագործությունը թերևս «ամենազդքայինն» է հայ բանաստեղծության մեջ, ամենից ավելի հագեցած գրական գուգորդումներով ու հղումներով: XX դարի եվրոպական գրականության համար սա նորություն չէր. ընդհակառակը, դա դառնում էր նրա բնորոշ առանձնահատկություններից մեկը՝ ասպարեզ բերելով այնպիսի երևույթ, ինչպիսին էր ինտերտերայտուալությունը, որն հետո դարձավ եվրոպական գրականագիտության ամենատարածված թեմաներից մեկը: Չարենցը, ինչպես և եվրոպական հայտնի գրողները, չէր կարող շրջանցել այն վիրխարի հարստությունը, որն ստեղծել էր համաշխարհային գրականությունը, և իր ժամանակն արտացոլելու համար նա ազատորեն դիմում էր այդ հարստությանը: Չարենցը, լինելով հայ նորագույն գրականության «ողնաշարը», ինչպես նրան անվանել էր իր ժամանակին Աղասի Խանջյանը, ավելի քան քսան տարի լինելով հայկական գրական կյանքի կենտրոնում, միաժամանակ անշրջանցելի կապերով կապված էր եվրոպական հին և նոր գրականության հետ: Չարենց-Պիրանդելո խնդիրը իմաստ ունի այս համատեքստում:

Նորելյան մրցանակի դափնեկիր Լուիջի Պիրանդելոն ոչ միայն XX դարի իտալական ամենանշանավոր հեղինակներից է, այլև առհասարակ եվրոպական նորագույն գրա-

կանուքյան ամենահայտնի դեմքերից մեկը, որը մեծ ազդեցություն է գործել Եվրոպական գրականության հետագա զարգացման վրա: Նրա հոչակը առաջին հերթին կապվում է «Վեց հերոս, որոնք հեղինակ են փնտրում» պիեսի հետ: Դա իսկապես արտասովոր կառուցվածք ունեցող գործ է: Մինչ այդ Պիրանդելլոն գրել է ռեալիստական դրամաներ, որոնց մեջ պատկերել է հասարակ մարդու կյանքը: Բայց ինչոր պահի դասական բատերգությունը այլևս չի բավարարում նրան: «Վեց հերոսս...» հարցականի տակ է դնում դասական բատրոնի սկզբունքները:

Պիեսի գեղարվեստական իրականությունը երկշերտ է: Մի կողմից, հանդիսատեսին ու ընթերցողին ներկայացվում է բատրոնի սովորական առօրյան: Թատրոնում հավաքված արտիստները տնօրեն-բեմադրիչի գլխավորությամբ փորձում են իր իսկ՝ Պիրանդելլոյի պիեսներից մեկը (այս տեսարաններում Պիրանդելլոն հեզանում է ինքն իրեն՝ դերասաններին և բեմադրիչին ասել տալով բավական տհաճ բաներ իր պիեսի մասին, դրանով իսկ ընդգծելով դեպքերի առօրեականությունը): Փորձի ընթացքում դահլիճում հայտնվում են տարօրինակ մարդիկ: Նրանք ներկայանում են իրեն չգրված պիեսի հերոսներ, որոնք հեղինակ են փնտրում իրենց դրաման բեմ բարձրացնելու համար: Ներկաները սկզբում, ինչպես կարգն է, զարմանում են այս ֆանտասիկական արարածներին տեսնելիս, բայց հետո աստիճանաբար ներքաշվում են նրանց ստեղծած մթնոլորտի մեջ, ինտարրությամբ լսում են նրանց մռայլ պատմությունը իրենց ընտանիքի մասին: Այսինքն, իրական ու հնարովի դեպքերը միահյուսվում են: Պիրանդելլոյի պիեսի բուն նորությունը այստեղ է: Երբ ասում ենք իրական, արդեն պայմանականորեն ենք խոսում իրականության մասին, որովհետև այդ իրականությունը դրամատուրգի երևակայության ծնունդն է (թատրոնն ու դերասանները): Բայց հանդիսատեսն ու ընթերցողները այնքան են կարծիք այդ պայմանական իրականությանը, որ դրա պայմանականությունը այլևս

“չեն նկատում”: Իսկ դաելիծ ներխուժած վեց հերոսները, այսպես ասած, կրկնակի պայմանականության արտահայտություն են. ընդ որում, նրանց պայմանականությունը ընդգծված է: Նրանք մերկացնում են զրական ստեղծագործության բուն խոհանոցը: Պիրանդելլոն քանդում է գեղարվեստական իրականության սահմանները, ընդգծում, մերկացնում դրա պայմանականությունը¹: Գեղարվեստական իրականությունը գրկվում է իր սեփական ներքին արամաբանությունից, դառնում հեղինակի խաղի առարկան: Միայն հեղինակի “քմահաճույքով” չգրված գործի վեց հերոսները կարող եին խուժել քատրոնի իրական աշխարհը: Սա մողեռնիստական գրականության կարևոր նորություններից մեկն էր, և դրա հեղինակն էր դառնում մի գրող, որը մինչ այդ իրականության վերարտադրման ռեալիստական եղանակով էր համրավ նվաճել: Ուրեմն, եվրոպական գրականության մեջ ինչ-ինչ էական փոփոխություններ էին տեղի ունենում:

Զարենցը “Աքիլլես, թե” Պիերո” դրամատիկական պոեմը գրել է Պիրանդելլոյի պիեսից ավելի քան մեկ տասնամյակ հետո: Երբ ես խոսում եմ “Զարենց-Պիրանդելլո” առնչությունների մասին, նկատի ունեմ առաջին հերքին հենց այս պիեսը: Ընթերցողը հիշում է, որ Զարենցի պոեմում ևս արտասովոր իրականություն է պատկերվում: Թատրոնում ներկայացնում են Սեծ Հեղինակի անավարտ պիեսը, որն ավարտել է քատրոնի տնօրենը: Իրադարձությունները տեղի են ունենում պիեսի ներկայացման ժամանակ՝ ընդմիջումին: Բեմ է քարձրանում քատրոնի տնօրենը

¹ Սովետնիզմին նվիրված ամենավերջին իրապարակումներից մեկում ընդգծվում է պայմանականության կարևորագույն դերը նողերնիգնում: “Գեղարվեստական պայմանականությունը իր ամենատարբեր դրսերումներով տիրապետում է այդ գրականության մեջ” (“Лите^Ратурная энциклопедия терминов и понятий”, кол. 570, Москва, , НПК “Интелевак” 2003). Ընդ որում, խոսքը “բուն պայմանականության” մասին է, որը նշանակում է “գեղարվեստական ճշմարտանմանության գիտական ավերում” (նոյենը, սյուն 1116):

և մի զարմանալի հայտարարություն անում: Հայտնվել է մեկը, որը ներկայանում է իրքն Մեծ Հեղինակի պիեսի գլխավոր հերոսը և պահանջում է իրեն համապատասխան տեղ պիեսում: Հետագա դեպքերը ոչ այլ ինչ են, եթե ոչ Տնօրենի և Հերոսի վեճը՝ հանդիսատեսների մասնակցությամբ: Այսինքն, Չարենցի ինտերմեդիայում նույնպիսի իրավիճակ է, ինչպիսին Պիրանդելլոյի պիեսում: Քատրոն, տնօրեն (որն այս դեպքում և՛ հեղինակ է, և՛ քեմադրիչ), ներկայացման հերոս: Եթե Պիրանդելլոյի պիեսում ֆոն են դերասանները, այստեղ՝ և՛ դերասանները, և՛ հանդիսատեսը: Պիրանդելլոյի պիեսում վեց հերոսներ են հանդես գալիս, Չարենցի ինտերմեդիայում հերոսը մեկն է: Բայց սրանք ընդամենք մանրամասներ են: Երկու պիեսների կառուցվածքի ընդհանրություններն ակնհայտ են: Չարենցը ևս դուրս է գալիս դասական դրամայի սահմաններից, ստեղծելով մի երկ, որն իր գեղարվեստական առանձնահատկություններով մոտենում է մոդեռնիզմին: Կարելի է նշել ևս մի, ավելի մասնավոր առանձնահատկություն, որը մոտեցնում է Չարենցի և Պիրանդելլոյի պիեսները. Պիրանդելլոյի վեց հերոսները հեղինակի անավարտ մտահղացման ծնունդն են, այսինքն, նրանց գրական գոյությունն իսկ անհաստատ, երերուն է: Նույն վիճակում է Չարենցի ինտերմեդիայի Հերոսը. «գործող պերսոնալի» մեջ նա ներկայացվում է այսպես՝ «Հերոսը, կամ գլխավոր անձը, որին Մեծ Հեղինակը կամ Թատրոնի Տնօրենը ջնջել է քատրերգությունից»: Եվ ինչպես Պիրանդելլոյի վեց հերոսները, այնպես էլ Չարենցի հերոսը գոյության իրավունք են պահանջում:

Չպետք է ուշադրությունից դուրս քողնել և այն, որ Չարենցի պիեսում էլ քատրոնի իրականությունը, այս դեպքում հանդիսատեսները և դերասանները, ներկայացվում են միանգամայն առօրյա գոյներով: Քաղքենիական հասարակություն, որն այնքան հեշտ ընկնում է Թատրոնի Տնօրենի ազդեցության տակ. քավական է հիշել միայն հանդիսականներին Չարենցի տված քնութագրերը՝ «մի քամք ձայն

դահլիճից», «մի կերկերուն ձայն դահլիճից», «մի անվստահ ձայն դահլիճից», «մի այլ անվստահ ձայն դահլիճից» և այլն: Եվ ամենակարևորը՝ դահլիճից լսվող ռեալիկները ենց քաղքենիական ամբոխամտության ապացույցներն են: Այս իրողության լույսի տակ թերևս ավելորդ չէ մի զուգահեռ անցկացնել ինտերմեդիայի և «Երկիր Նահրի» վեպի միջև, ավելի ճիշտ՝ վերջինիս այն հատվածի միջև, որտեղ նկարագրվում է նահրցիների միտինզը Առաջին համաշխարհային պատերազմը սկսելու առթիվ: Ամրադ դահլիճում միայն մի մարդ է զտնվում, որը համարձակվում է զեկուցողին չհավատալ և տհաճ հարցեր տալ նրան ցարի խոստումների խւկության և հարակից հարցերի մասին: Բայց նրան ոչ ոք չի պաշտպանում. Համո Համբարձումովիչի ազդեցությունը դահլիճի վրա, նրա ինքնավտահ կեցվածքը որոշում են հավաքվածների տրամադրությունը: Եվ Կարո Դարայանին ծեծելով դուրս են հանում: Նման մի բան տեղի է ունենում քատրոնի դահլիճում: Գտնվում է մի տարիքոտ հանդիսական, որը վստահ ու համարձակ դեմ է գնում Թատրոնի Տես-րենին: Նա պնդում է, որ ինքը տեսել է Մեծ Հեղինակի այն ծեռագիրը, որտեղ գլխավոր դերը հատկացվում է հերոսին: Բայց դահլիճը, ինազանդ տնօրենին կամքին, ի վերջո, մերժում է և՝ Տարիքոտ Հանդիսականին, և՝ Հերոսին: Զաղբենիական ամբոխավարության այս մքնոլորտը, ուրեմն, լավ ծանոք էր Չարենցին, և նա մի անգամ ևս անդրադառնում է դրան ինտերմեդիայում:

Եվ այսպես, և՝ Պիրանդելլոն, և՝ Չարենցը իրենց պիեսներում կտրուկ շրջադարձ են կատարում դեպի բացահայտ, ընդգծված պայմանականությունը՝ դա զուգակցելով իրականության միանգամայն ռեալիստական, տպավորիչ պատկերների ինտ: Մենք գիտենք, որ երկու պիեսների կոնկրետ բովանդակությունը տարրեր է: Հերոսները և Տեսրեները քննարկում են միանգամայն տարրեր խնդիրներ: Չարենցի դեպքում հասարակական և քաղաքական մեծ խնդիրներ են՝ անհատի դերը պատմության մեջ, անհատ

զանգված, իսկ այս խնդրի հետևում բաքնված են քսան-երեսնական թթ. խորհրդային քաղաքական կյանքի իրադուրյունները: Պիրանդելլոյի վեց հերոսներին և մյուսներին հետաքրքրում են արվեստի խնդիրներ՝ կյանքի և իրականության, գեղարվեստական կերպարի և իրական մարդու հարաբերությունները, որոնց հետևում բարձրանում են դարձյալ ժամանակի կարևորագույն հարցերը:

Խնդրի ամրող բարդությունը պատկերացնելու համար պետք է ուշադրություն դարձնենք մի հանգամանքի վրա: Պիրանդելլոն իր ռեալիստական պիեսներում պատկերում է առաջին հերթին միջանձնական հարաբերությունները: Բնականարար, հաճախ է ներկայացնում ընտանեկան կյանքը, տղամարդու և կնոջ հարաբերությունները: Կրքերը շիկանում են, բախումները՝ սրվում («Ինչպես առաջ, բայց ավելի լավ, քան առաջ», «Պատվաստ», «Ուրիշի իրավունք» և այլն): Իր աշխարհընկալումը այսպես է մարմնավորում Պիրանդելլոն: Այս առանձնահատկությունը պահպանվում է նաև «Վեց հերոսում...»: Այդ հերոսները մի ընտանիք են, և ինչպես պարզվում է դեպքերի զարգացումից, խորապես դրամատիկական պատմություն ունեցող ընտանիքի, որի անդամների միջև սրված, շիկացած հարաբերություններ են, որոնք նրանք աշխատում են պարզել անվերջ վեճերի ու փոխադարձ մեղադրանքների միջոցով:

Զարենցի ստեղծագործության մեջ մարդը ներկայացվում է հասարակության հետ ունեցած իր հարաբերություններում կամ, թերևս, ավելի ճիշտ, ամեն տեսակի հարաբերություն Զարենցի գործերում վերածվում է «մարդ-հասարակություն» հարաբերությունների: Հատկապես Պիրանդելլոյի հետ համեմատության մեջ այս առանձնահատկությունը հստակ ուրվագծվում է: Զարենցի Հերոսը միայն դահլիճին (ասել է՝ հասարակությանը) կարող է դիմել իր բռնոքով, որովհետև իր բնույթով արդեն նա հասարակական մարդ է, ինդավորիական մեծ բախումների մասնակից: Զարենցը, որը 1925-ին արդեն խորապես զգում էր մարդկային

անհատի բազմակողմանի պատկերման անհրաժեշտությունը, այդ անհատին երբեք չպատկերեց ընտանեկան, սիրային ինտրիգներում: Մերը նրա գործերում միշտ դառնում է հասարակական մեծ բախումների տարր, լրացում (հիշենք, ինչպես է պատմում իր սիրած աղջիկների մասին «Չարենց – նամ» պոեմում, կամ ինչ համատեքսուում է հիշատակում Կարինեն Գորանճյանին «Տաղ անձնականում»): Նույնիսկ Արփենիկին նվիրված բանաստեղծություններում առկա է հասարակական մեծ վերափոխումների ֆոնը): Չարենցի ստեղծած ուժեղագույն, հոգերանորեն միանգամայն իիմնավոր ու բարդ էպիկական կերպարը Խմբապետ Շավարշի կերպարն է: Բայց Շավարշի դեմ կանգնած են ոչ թե իր նման մարդիկ, անհատներ, որոնք հասարակության հետ ուղղակի կապ չունեն (ինչպես, օրինակ, Պիրանդելլոյի հիշված գործերի հերոսները), այլ հասարակությունը, պետությունը, բանակը, Դրոն՝ իրքը պետական մեքենայի ներկայացուցիչ: Ի վերջո, բուն պիեսում Չարենցը քննում է անհատի դերը հասարակության մեջ, հասարակական մեծ հեղարեկումների ժամանակ: Այնպես որ իրենց թեմատիկ հետաքրքրություններում Չարենցն ու Պիրանդելլոն իրարից շատ հեռու են, հեռու են իրքը ստեղծագործական անհատականություններ: Բայց...

Պիրանդելլոն, ինչպես վերև ասացի, իտալական ռեալիստական գրականության (նրան կապում են նաև նատուրալիզմի, Վերիզմի հետ) հայտնի դեմքերից էր դեռ մինչև «Վեց հերոսները...» գրելը: Նա ստեղծել էր անցյալ դարավերջի և նոր դարի սկզբի իտալական հասարակության դեմքերի հարուստ պատկերասրահ: Բայց ինչ-որ պահի նա պետք է զգար մի իրողություն, որն ակնհայտ էր դառնում ողջ արևմտանվողական մշակույթում՝ արվեստի դասական ձևերն սպառել էին իրենց, մարդու դասական պատկերն սպառել էր իրեն: Երկանդ Քոչարը, որն այնքան լավ զիտեր անցած դարի 10-20-ական թթ. եվրոպական մշակույթը, այսպիսի մի միտք ունի. «Ավանդական արվեստը վեր-

ջացել, սպառել է իր բոլոր հնարավորությունները... Նորեքը կարծես մոռացել են կամ ուզում են մոռանալ եղածը, և նրանց հիշողությունն է միայն տեսնում»¹: Հայտնի իրադության ծզդիտ ձևակերպումն է այս միտքը: Եվրոպական արվեստագետները տեսնորեն նոր ձևեր էին փնտրում նոր իրողություններն արտացոլելու համար. ողջ մողեռնիզմը, ի վերջո, այս փնտրությունների արդյունքն էր: Իհարկե, այդ ձևերի փնտրությունը միշտ չէ, որ մեծ արդյունքների էր համագեցնում, բայց Պիրանդելլոյի պիեսը եղավ շատ արդյունավետ եվրոպական գրականության հետագա զարգացման համատեքստում:

Չարենցի դեպքում ինտերմեդիայի ձևի ընտրության պատճառները ավելի բարդ են: Նախ և առաջ, գրական ամենատարբեր ձևեր օգտագործելու Չարենցի հակումը: Չարենցը, ինչպես վերն ասվեց, ինչ-որ իմաստով “գրքային” հեղինակ էր. նա սիրում էր օգտագործել պատրաստի գրական ձևերը, ներքնապես հիմնավոր վերափոխելով դրանք. և դա այդպես էր դեռ նրա գրական ճանապարհի հենց սկզբին: Սա ժամանակի մշակույթի, եվրոպական հոգևոր մթնոլորտի ազդեցությունն էր: Մշակույթի կուտակված հարստությունները չէին կարող իրենց դրոշմը չդնել նոր գրական մտածողության վրա: Եվ ուրեմն, Պիրանդելլոյի ստեղծած ձևը չէր կարող ինչ-որ պահի չհրապուրել Չարենցին: Իհարկե, այստեղ շատ կարևոր է դառնում, թե Չարենցը արդյոք ծանոթ եղե՞լ է Պիրանդելլոյի պիեսին: Տրամաբանության նա չէր կարող ծանոթ չինել այդ գրողի ստեղծագործությանը (այս մասին՝ քիչ հետո): Բայց, անկախ դրանից, նշանակած ընդհանրությունները հետաքրքրական են: Չարենցը, մինչև ուղարկում ու ծուծը հայ գրող, այնքան լավ էր զգում եվրոպական գրական զարգացման միտումները, որ կարող էր այսքան մոտենալ եվրոպական նորագույն գրականության որոնումներին:

¹ Երվանդ Զոչար, Ես և դուք, Երևան, “Մուղնի” հրատ., 2007, էջ 27:

Մյուս կողմից, այս նոր ու անսպասելի ճեղ շատ հարմար էր անհատի և հասարակության հարաբերությունների քննարկման համար: Հերոս, որ հանդես է զալիս գրական հերոսի տեսքով, և հասարակություն, որն ընդունում է քատերական հանդիսականների տեսք:

Կար միայն մի իրողություն, որ դուրս էր զալիս զուտ գրական խնդիրների սահմաններից և թելադրված էր երեսնականների խորհրդային քաղաքական իրադրությամբ: Չարենցը եթե շատ ուզենար էլ, չէր կարող ուղղակիորեն գրել այն խնդիրների մասին, որոնք այդ տարիներին գրադացնում էին նրան դրանց մասին մամրամասն տե՛ս՝ իմ գրքում՝ «Չարենցը և պատմությունը», 1997, էջեր 166-179): Այնինչ այդ ինտերմեդիայի կառույցը նրան հնարավորություն էր տալիս խոսել շատ ու շատ բանների մասին:

* * *

Բայց վերադառնանք այն հարցին, թե Չարենցը ծանոթ եղե՞լ է արդյոք Պիրանդելլոյի ստեղծագործությանը, մասնավորապես “Վեց հերոս...” պիեսին: Չարենցի անձնական գրադարանում պահպատ է Պիրանդելլոյի պիեսների խորհրդային ոռուերեն առաջին երաժշտականությունը՝ Լուծակ Պիրանդելլո, Օնհայութիւն մասնակիութիւն, 1932. «Վեց հերոս...» այնտեղ չկա: Բայց կա բացատրություն՝ «Պիրանդելլոյի լավագույն պիեսներից մեկը՝ «Վեց հերոս, որոնք հեղինակ են փնտրում», այս հատորում զետեղված չէ միայն այն պատճառով, որ արդեն 1923 թ. թարգմանվել է ռուսերեն և տպագրվել “Современный Запад” հանդեսում» (էջ 25): Չարենցի առաջնային այս հանդեսը չկա: Բայց դժվար է ենթադրել, որ նա Պիրանդելլոյի հոչակավոր պիեսը չէր կարդացել¹: Նախ, շատ մեծ հավանականու-

¹ Պիրանդելլոյի գրքի անվանաթերթի վերևում իր ձեռքով գրված է՝ Չարենց: Այս նշումը կարելի է տեսնել Չարենցի անձնական գրադարանի գրքերի միայն մի փոքր մասի վրա: Այս իրողությունը առնվազն նշանակում է, որ այդ գիրքը հետաքրքրել է Չարենցին...

թյամբ, նա իր գրադարանում եղած զիրքը կարդացել էր: Մենք զիտենք, որ Չարենցը մոլի ընթերցող էր, և Պիրանդելլոն էլ այն ժամանակներում շատ հայտնի հեղինակ: Այսինքն, թեկուց հենց այդ զիրքը նրան պետք է հուշեր կարդալու «Պիրանդելլոյի լավագույն պիեսներից մեկը», եթե նա մինչ այդ չէր կարդացել:

Բայց եթե անգամ նա «Վեց հերոսը...» չէր կարդացել, ապա նա Պիրանդելլոյի մողեռնիստական հնարներին ուշադրություն կարող էր դարձնել իր ունեցած գրքում եղած այլ պիեսների, մասնավորապես «Մենք իմպրովիզացիանք անում» պիեսի մեջ, որի իրադրությունը ինչ-որ կողմերով հիշեցնում է «Վեց հերոսի...» իրադրությունը. դարձյալ քատրոն, դարձյալ տճօրեն-քեմադրիչը քեմադրություն է պատրաստում՝ այս անգամ ուղղակի հենվելով իտալական միջնադարյան քատրոնի (դել արտե) ավանդույթների վրա, այսինքն՝ իմպրովիզացիա անելով: Իմպրովիզացիայի քեման նորից ընտանեկան կյանքն է, ընտանեկան վեճերն ու սկանդալները: Դարձյալ հանդիսարահն ու քեմը խառնված են իրար, քեմական իրականությունն ու քատերական առօրյան ներքափանցում են մեկը մյուսի մեջ, ավերելով բոլոր սահմանները, ընդգծելով քատերական իրականության պայմանականությունը:

* * *

Մի վերջին խնդիր: Իհարկե, Չարենցը պայմանական քատրոնի դիմում էր ոչ առաջին անգամ: Ի վերջո, «Կապկազը», որը գրված է 1923 թ., քատերական պայմանականության վառ դրսնորումներից մեկն է հայկական քատրոնում, եթե ոչ քարձրագույնը: Հեղափոխական իրականությունը դրդում էր հեղափոխական փորձերի և արվեստում, որի վկայությունն է քսանականների խորհրդային արվեստի ողջ մքննորությունը: Ղարան, որն ինքն արդեն քատերական հերոս է, անդրկովկասյան իրականությունը ներկայացնող պիես՝ քամաշա է քեմադրում: Անկասկած է նաև այն, որ

Չարենցը «Աքիլե՞ս, թե՞ Պիեռո»-յում շարումակում էր «Կապկազի» գիծ՝ իր պայմանական բատրոնի առանցք դարձնելով մեծ, ժողովորդների համար ճակատագրական իրադարձությունները, մի կողմ բողնելով ընտանեկան հարաբերությունները, սերը, այն, ինչ քիչ առաջ անվանեցինք միջանձնական հարաբերություններ:

Եվ այնուամենայնիվ, «Աքիլե՞ս, թե՞ Պիեռոն» չի կարող «Կապկազի» ուղղակի հաջորդն համարվել: Ժամանակները շատ էին փոխվել, Չարենցն ինքը շատ էր փոխվել: Երեսնական թթ. սկզբին Չարենցն արդեն անդառնալիորեն հեռացել էր հեղափոխական փորձարարության, հեղափոխական բատրոնի սկզբունքներից: Իր սեփական ճանապարհի շատ կարծ հատվածում նա կարծես կրկնում էր եվրոպական արվեստի ճանապարհը՝ դասականությունից դեպի մոդեռնիզմ: Նրա պիեսում արդեն կամ չկա, կամ շատ աղոտ է հեղափոխական աներեր լավատեսության այն մքնոլորտը, որը ծնունդ էր տվել «Կապկազին»: Չարենցի վերջին (Եթե մի կողմ բողնենք «Հերոսի հարսանիքը») պիեսը անպայման շփման կետեր ունի արևմտյան մոդեռնիզմի հետ, նույն Պիրանդելոյի հետ:

ԺԵՆԹԱ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

ԶԱՐԵՆՑՅԱՆ ԻՆՉ-ԻՆՉ ԱԶԴԱԿՆԵՐ ԱՐԴԻ ՀԱՅ ՊՈԵԶԻՎԱՅՈՒՄ

Ֆիզիկայում հայտնի՝ նյութի (մատերիայի) պահպանության օրենքի սկզբունքը գործում է նաև հոգևոր մշակույթի բնագավառում: Եթե օրենքն ազդարարում է, որ բնության մեջ ոչինչ չի կորչում և ոչինչ չի ավելանում, նյութի մի տեսակը փոխարկվում է մի ուրիշ տեսակի, ապա հոգևոր մշակույթի ոչ մի ձեռքբերում անհետևանք ու անհետք չի անցնում, զարգացման ամեն հաջորդ փուլ տեսանելի և հաճախ անտեսանելի կերպով իր մեջ ներառում է նախորդ փուլերի առանձին տարրեր: Զարգացման տարրեր աստիճաններն ու նոր որակն առաջանում են նախորդ վիճակում գոյություն ունեցող տարրերի զուգակցման կերպից: Ուղղությունների, հոսանքների, ժամերի, ոճերի, թեմաների, սյուժեների, պատկերավորման միջոցների, բանաստեղծական տաճկառուցման ձևերի և այլնայլ հանգամանքների զուգորդումը զրականության մեջ և արվեստում առաջանում է անսահմանության ճգույն հնարավորություններ: Սա, անշուշտ, չի նվազեցնում իրական կյանքի թելադրիչ դերը, որ մշտապես մնում է առաջնային, եթե անգամ հստակ չի բնդգծվում, բայց խոսքն այստեղ վերաբերում է ոչ թե զրականության նյութին, այլ մտածողությանը և նրա դրսևորման եղանակներին: Այսինքն՝ մտածողությունը ևս չի կարող անկերպ քարմանալ ու բռնորովին նոր լինել, մտածողության ամեն մի նոր եղանակի մեջ ևս հնի ու կրկնության տարրեր կամ:

Իհարկե, արդի զրականության և մշակույթի մեջ ցույց տալ տարրեր տարրերի ու շերտերի գոյությունը, ինչպես դա

կարելի է անել երկրաբանական գոյացության շերտերի դիտարկման դեպքում (որն, անշուշտ, մասնագիտական գիտելիքներ ու աչք է պահանջում), բարդ ու տևական աշխատանք է և ոչ կարճառոտ խոսքի նյութ: Բայց ժամանակային կարծ հատվածում, թեկուզ հպանցիկ, կարելի է հետևել բանաստեղծական մտածողության փոխակերպումներին: Այս առումով շատ կողմերով ելակետային կարող է լինել Եղիշե Զարենցի պոեզիան, որի արմատները ծգվում են մինչև հնադար, իսկ, պատկերավոր ասած, ճյուղերը տարածվում մինչև զալիք ժամանակները: Ամենին էլ պատահական չէ, որ շարենցյան ոճերը, դարձվածներն ու պատկերները շարունակում են ազդել ժամանակակից բանաստեղծների վրա՝ երբեմն նախորդ սերնդով միջնորդավորված, ավելի հաճախ՝ ուղղակիորեն: Խոսքն այստեղ չի վերաբերում շարենցյան ավանդների ամրող համակարգին, այլ Զարենցի պոեզիայի այն հատկանիշներին, որոնք այսօր, հետողին միզմի տիրապետության շրջանում ևս ընկալվում են իրքն արդիական և շարունակվում են ժամանակակից բանաստեղծների երկերում: Համոզվելու համար դիտարկենք մեկերկու խնդիր:

Որպես օրինակ վերցնենք ժամանակի ընկալման հարցը: Առհասարակ մեր գիտակցության մեջ տիեզերական անսկիզր ու անվախճան ժամանակը տրոհվում է երեք շփումների՝ անցյալ, ներկա, ապառնի: Այսպիսի ըմբռնումը երկրաշափորեն կարելի է պատկերել ուղիղ գծի ձևով, որի որևէ կետից սկսում ենք հաշվել մեզ անհրաժեշտ ժամանակը, որը մեր ընկալման սահմաններից դուրս շարունակվում է մինչև անսահմանություն: Կարելի է ասել, որ նորագույն գրականության մեջ Զարենցն առաջինն է, որ իր պոեզիայում ժամանակի ուղիղ գիծը կորացնում է դեպի հետ՝ ապագայից զալով դեպի անցյալ:

Այքերս հառել եմ անցյալին՝ ապագայի նժույգը նստած...

Թերևս մի փոքր վերապահում կարելի է անել Սիամանքոյի համար, որ հատկապես իր «Դյուցազնորեն» շարքում ոգեկոչում է անցյալի մեռելներին՝ հանուն գալիք հույսի ու արշալույսների.

**«Եվ վայրկյան նր մքաստվերին մեջնն,
Եթև կրնաս, անհունորեն ետիդ դարձիր,
Ու տես մեռելներուն եռդեն ժայբքումն հանկարծական
Որ զերեզմաններուն ու քանդկած քաղաքներուն տակնն,
Սեկնիմնեկ փրկության ոգորումներեն շնչավորված՝
Սեր ետևնն, այս իրիկուն, տեմրուտըն ոտքի՝
Դեպի Հույսին բացաստանները պիտի քալնն»:**

Սիամանքոյի բանաստեղծության մեջ թեև առկա են ժամանակային երեք չափումները, բայց մի գծի վրա, ներկա պահին, այսինքն անշարժ կետում բանաստեղծը ոգեկոչում է անցյալը հանուն ապագայի: Սակայն Զարենցի պատկերավոր տողը հուշում է, որ անցյալի իմաստավորումը ոչ թե ներկայի, տվյալ պահի, այլ ապագայի դիտանկյունից է կատարվում: Տարբերությունը ոչ այնքան իմաստի մեջ է (Սիամանքոն էլ հանուն ապագայի՝ Հույսի է դիմում անցյալին), որքան պատկերի կառուցման առանձնահատկության: Զարենցի պոեմում ժամանակի կորագիծը փակվում է շրջանաձև: Ինչպես հայտնի է՝ «Մահվան տեսիլ» պոեմի վերջում լապտերով մարդը (Լենինը) փրկում է անցյալի մղձավաճաշից և՝

**Այն ոսկյա լապտերի լույսով իս դարձա Գալիքի
երգիչ,-**

Այսինքն՝ ապագայի նժույգը նստած բանաստեղծը, շրջելով անցյալում, վերադառնում է գալիք, որ նույնն է, թե՝ ապագա:

Մասնակիորեն ժամանակի՝ իրարից հակառակ ուղղությամբ ընթացող թերերը Զարենցը ի մի է քերում նաև «Յորը խորհուրդ քաղաք կառուցողներին» երկում, ուր զրում է.

**ԵՎ յոքերորդ խորհուրդը, որ տալիս եմ ես ձեզ-
Կառուցելուց առաջ ձեր քաղաքը,
Այրեցնք մազաղարյա մարմինը ննջեցյալ
ԵՎ մոխիրը նրա հազարամյա
Խառնեցնք ձեր ապագա պարիսպների քարին:**

**Այստեղ ևս կա վերադարձ ապագայից դեպի անցյալ,
բայց դա փակ ու անշարժ շրջան է, ուր շարժումը մի ուղղու-
թյամբ է՝ ապագայից անցյալ, թեև ինքնըստինքյան են-
քաղրկում է անցյալի ներկայությունն ապագայում:**

**Զարենցի անմիջական հաջորդների մոտ ընդհանուր
առմամբ ապագա-անցյալ-ապագա սխեման չի գործում,
ժամանակն ընթանում է ուղիղ գծով կամ առաջ, կամ հետ,
լավագույն դեպքում՝ հետ ու առաջ, իբրև ներկայի ու անց-
յալի հակադրություն: Որպես ցայտուն օրինակներ կարելի է
իիշել Հ. Սահյանի «Հայաստանը երգերի մեջ» / «Մի փո-
շոտված փշատենի...», Ս. Կապուտիկյանի «Երգ քարերի
մասին» / «Սև են եղել ու մուր մեր շենքերը դարեր...» / բա-
նաստեղծությունները: Այս սերնդի բանաստեղծների մոտ
եթե կամ էլ երևոյթների դիալեկտիկ կրկնության պահեր,
ապա կրկնությունները պարույրածն են, ոչ շրջանածն: Այլ
կերպ հնարավոր էլ չէր, որովհետև խորհրդային գաղափա-
րախոսությունը հենվում էր, այսպես կոչված, օրենսդիր, այ-
սինքն՝ աշխարհը կարգավորող բանականության ու տրա-
մարանության վրա և չէր կարող հանդուրժել, այսպես
ասած, հակատրամարանական «խաղեր»:**

**Իհարկե, հետշարենցյան սերնդի մոտ էլ երբեմն առան-
ձին շեղումներ են նկատվում, որոնք սակայն ժամանակի
շարժումը չեն դարձնում շրջանածն: Օրինակ, այս առումով
բավականաշափ հետաքրքրական է Պ. Սևակի «Քայլող իի-
շողություն կամ վառվող արյուն» բանաստեղծությունը, ուր
հեղինակը գրում է.**

**Ե՞ս, որ կարող եմ ինքըս ինձ կոչել
Եկած ապագա,
Ես նաև քայլող իիշողություն եմ՝
Ապրո՞ն պատմություն:**

Այս տողերում թեև կա ժամանակի երեք չափումների ըմբռնումը, բայց չի շեշտադրվում ժամանակի շարժման ուղղության հարցը, որովհետև ներկա պահն իր մեջ խտացնում է և՝ ապագան, և՝ անցյալը՝ իհշողությունը: Պ. Սևակի մոտ դարձյալ կարելի է հանդիպել այլ օրինակների, երբ պահն իր մեջ ամփոփում է ժամանակային բոլոր չափումները: Փիլիսոփայական առումով դա ընդհանրական ժամանակն է, թեև գիտակցության մեջ տրոհված, բայց յուրաքանչյուր պահի մեջ՝ եռամաս:

*Սոսափն եմ լսում այն անտառների,
Որոնք բյուրհազար տարիներ ենսոն
Այս քարածուիսին պիտի վերածվեն...*

*Եվ ճայնը նաև
Իմ նախա-նախա-նախապապերի,
Որ որս են անում այդ անտառներում...
(«Վառարանի առաջ»)*

Չարենցի մոտ ժամանակն ընթացքի մեջ է (նժույզմ իմքը շարժման խորհրդանիշ է), Սևակի մոտ՝ կայուն ու բաղադրյալ ներկա: Իսկ արդեն 60-ական թվականներին գրական ասպարեզ իջած բանաստեղծական սերնդի մոտ առկա է ժամանակի շրջանածև զարգացման, իրրև օրինաչափության ըմբռնումը, որի հիմքը հետառողեռնիզմի գեղագիտությունն է: Երբ Ռազմիկ Դավոյանը գրեց՝

*Քայլիր մի տարի, և միլիոն տարի,
մինչև որ հասնես նախապապերին,*

քննադատությունը դա անտրամարանական համարեց: Կարելի էր սա ևս ուս ուղիղ գծով հետընթաց շարժում համարել ժամանակի մեջ, եթե բանաստեղծն անցյալում չտեսներ ապագան.

*.. . և նրանք են, որ մոտիկ են արդեն
ապագաներին բոլոր իին ու նոր:*

Այստեղ խախտվել է ժամանակի առօրյա ըմբռնումը. Իետքնքաց շարժումը տանում է դեպի ապագա: Դավոյանի մոտ ևս ժամանակի շարժումը շրջանածն է, ուստի փակ շրջանի մեջ անցյալն ու ապագան կարող են հանդիպել: Սա բանաստեղծական խաղ չէ, այլ համոզմունք, որովհետև բանաստեղծի կարծիքով ճիշտ է այս ընթացքը, երբ իին ու նոր սերունդների ճանապարհները հանդիպում են: Գաղափարական իմաստով սա ժառանգական կապի պահպանման, ավանդների շարունակության խնդիր է.

**Եվ եթե հանկարծ քո ճանապարհին
նախապապերիդ դու չհանդիպես,
ուրինն՝ սխալ ճամփով ես գնում,
և ոչ մի երաշք չի փրկելու քեզ:**

Փիլիսոփայական առումով խնդիրը հանգում է ժամանակի անտրոնելիության, միասնականության գաղափարին. Հետ անցյալ ու ապագա, կա ժամանակի հավերժական շրջապտույտ: Այս պարագայում ժամանակի անահմանությունը դժվար է պատկերացնել ուղիղ գծի ձևով, ուստի անսահմանության պոետիկական ձևը դառնում է շրջանը, որը մշակույթի պատմության մեջ վաղուց է ընկալվում իրեն հավերժության խորհրդանիշ: Բայց, համոզվելու համար, որ արդի բանաստեղծության մեջ ժամանակի շրջանածն շարժման ըմբռնումը օրինաչափ երևույթ է, բերենք ուրիշ օրինակներ ևս: Արևշատ Ավագյանի պոեզիայում անցյալն ու ապագան անվերջ հերքագայում են իրար, որ հնարավոր է միայն շրջանածն պտույտի միջոցով: Նա գրում է.

**Ես ծնվել եմ
Իմ երեսնի որդու՝
Հորս կողմից,
Նրա երակներում
Բոցավառված արյունը իին
Այսօր ջահելացել ու հոսում է
Որդուս երակներում... («Տիեզերական»)**

Առհասարակ Ա Ավագյանի պոեզիայում կարևոր տեղ է գրավում ոչ միայն ժամանակի, այլև ընդհանրապես տիեզերական երևույթների պարբերականության, անվախճան կրկնության խնդիրը։ Այս առումով բնութագրական կարող են լինել «Պորտալար» բանաստեղծության հետևյալ տողերը։

**Ես չգիտեմ՝ ծնվել,
թե մահացել եմ այն օրը,
երբ մորս երկունքի ցավերով ապրող
իմ տատմնը կտրել է
մայր բնությանն ու անհունին կապված
իմ պորտալարը։**

Ժամանակի անտրոհելիության գաղափարն այլևս դարձում է տիրապետող 60-ականների սերնդի բանաստեղծների՝ Հովհ. Գրիգորյանի, Էդ. Միլիտոնյանի, Հ. Էդոյանի և ուրիշ շատերի համար։ Օրինակ՝ Հովհ. Գրիգորյանը գրում է։

**Եվ ջահել մայրը կարող է
բացել դուռը
ծերացած որդու առաջ... («Կգա օրը»)**

Իսկ Հ. Էդոյանը ուղղակի հայտարարում է ժամանակի փակվող շրջանի մասին։

**Ժամանակ, դու չես կարող կանգ առնել այստեղ,
Այս երկրում, ուր կրկնվում է ամեն ինչ սկզբից
և վերադառնում՝ որտեղից սկսել էր։
(«Առանց պատասխանի սպասման»)**

Ժամանակների ներթափանցման հետաքրքիր երևույթի (երբ ապագան հայտնվում է անցյալում) հանդիպում ենք Էդ. Միլիտոնյանի «Պենելոպե» բանաստեղծության մեջ, ուր Պենելոպեն իր անվերջ հյուսվող-քանդվող գործվածքի մեջ ներառում է ապագայի դեպքերը։

**Քայց ինչպե՞ս և ինչ՞ո՞ւ, Պենելոպե,
Հանկարծ այս դասական գործվածքի մեջ**

Ներմուծվեցին սոցիալիզմի կայսրության
Նորահայտ երկրների սահմանագծեր,
Ոմբակոծված, քրքրված աիրությունների
չալմայակիր շեյխսեր,

Եվ էլի բաներ, որ ոչ մի կերպ չեն կապվում Ռոյսևսի հետ:

Թերևս նոր օրինակների կարիք չկա, բայց անհրաժեշտ է ընդգծել մի կարևոր հանգամանք: Մեր կարծիքով, Չարենցի համար ապագայի նժույզի վրայից անցյալին նայելը ավելի պոետիկական, բանաստեղծական, քան վիլխովիայական արժեքը ունի, իսկ արդի բանաստեղծների համար դա գերազանցապես վիլխովիայական ըմբռնում է: Չարենցի համար ժամանակն այնուամենայնիվ, ունի մեկ, այն է՝ առաջընթաց ուղղություն (իիշենք ոուրայիններից մեկի տողը՝ «Չի ընթանում սակայն պատմությունը դեպի ետ»): Այսինքն՝ Չարենցը աշխարհայացքով և, անշուշտ, ժամանակի թերապանքով, բանականությամբ կարգավորվող աշխարհի կողմնակից է, ուր իրերն ու երևույթները գտնվում են տրամաբանական, պատճառահետևանքային կապի մեջ, և ընդհանուր առմամբ էլ ժամանակն անցյալից շարժվում է դեպի ապագա: Ժամանակակից բանաստեղծների համար ժամանակը տիեզերական քառսի մի արտահայտությունն է: Հետմողեռնիզմի վիլխովաները մերժելով տիեզերքի ոացիոնալ, տրամաբանական կառուցվածքը և բանականության կարգավորող դերը՝ կարգավորված աշխարհի մողելի փոխարեն առաջարկում են անորոշ, պատճառի ու հետևանքի կապը ժխտող քառսային մի իրականություն, ուր ճշմարտությունը կարելի է որոնել սոսկ այս պահին և այստեղ և ոչ ավելին: Այսպիսի ըմբռնումով ժամանակի հավերժական պտույտը նույն ուղեծրով, այսինքն փակ շրջանով, չի քողնում առաջընթացի հնարավորություն, քանի որ անցյալն անվերջ հայտնվում է ապագայում և հակառակը: Ըստ մշակութարանների՝ հետմողեռնիզմը հասել է ծայրահեղությունների՝ «ջնջելով անուններն ու թվերը, ոճերն ու

ժամանակները» և այլն (Культурология, 2001, с. 335., Ростов на Дону, под редакцией Г. В. Драча): Սա նշանակում է, որ ժամանակի արտահայտման չարենցյան պատկերը մնում է պոետիկայի սահմաններում՝ առանց ազդեցու ժամանակակից բանաստեղծների իմացարանության վրա:

Նոյն հետմողեռնիզմի փիլիսոփայության տեսանկյունով են բացատրվում նաև արդի բանաստեղծության մեջ սյուրբեալիստական, սիմվոլիստական, այլարանական պատկերները, որոնք ծնվում են ոչ թե արտաքին կամ թեկուց մարդու ներքին աշխարհի ճանաչողությունից, այլ են-բազիտակցության կամ անզիտակցության թելադրանքով։ Ժամանակին (1964) բուռն արձագանքի արժանացավ Հովհ. Գրիգորյանի «Աշուն» բանաստեղծությունը.

**Փողոցներում
ծառերից կախված
օրորվում են բանաստեղծները:
Դեղին ժայռ կա դեմքերին նրանց,
ձեռքերին՝ հաճած ծխախոտ։**

Մյուրակալիստական աղմկահարույց այս պատկերը ոչ իմացարանական հիմքով, այլ զուտ պատկերային առումով լսատ էության նորություն չէ։ Չարենցի «Մական տեսիլ» պոեմում նման պատկերները, որոնք պարզապես անվանվում են իրրև գրուտեսկային (սյուրբեալիզմը այն ժամանակ չէր գիտակցվում, պարզապես «մողա» չէր), ազատորեն կարող են նախահիմք լինել ժամանակակից բանաստեղծների համար։

**Եվ տեսնում ենք ապա, այլայլված հայացքով նայում
ենք երբ վեր –
Ծառերի ճյուղերից կախված կմախքներ՝ տապից չորացած։
Կամ՝**

Իսկ ծառի ճյուղերից կախված կմախքները այն չորացած, Շարժելով ծննդներն իրենց՝ սկսեցին ամսիի կափկափել- Եվ լուսինը, ի վերուստ տրված իր ժայռար անդարձ մոռացած, Սկսեց քրքչալ և վերից մեր գլխին պաղ մոխիր թափել։

Անշուշտ, Զարենցի պատկերի հիմքը ազգային ողբերգության պատճառով առաջացած իրական դժոխքն է իր քստմնելի պարունակներով, բայց նաև դրան գումարվում է բանաստեղծի երևակայությունը և ենթագիտակցության մութ շերտերում ձևավորված աղավաղված ու աղճատված տեսարանները, որոնք, բնականաբար, չեն զիջում ոչ մի սյուրունավայրի պատկերի: Զարենցի պատկերի հիմքում՝ ողբերգությունն է, Հովի. Գրիգորյանի պատկերի հիմքում՝ երգիծանքը: Գաղափարական իմաստով թերևս հակադիր, բայց պատկերակառուցման իմաստով նույնական: Զարենցն իր հերթին ազդակ է ստացել Սիամանթոյից, Սիամանթոն՝ երկի վկայաբանական, վարքագրական տեսչիներից: Այսինքն՝ մենք գործ ունենք ասելիքով և ուղղվածությամբ տարրեր, բայց պատկերի կառուցման իմաստով նույնական երևույթի հետ: Զարենցի մոտ կմախքները շարժում են իրենց ծնոտները, Հ. Գրիգորյանի մոտ՝ բանաստեղծների դեմքերից ընկնում են դիմակները՝ ժայիտները վրան և այլն:

Ընդհանուր առմամբ ժամանակակից պոեզիայում իռացիոնալ (տրամարանությունից դուրս) պատկերները եզակի չեն, որոնք մարդու ենթագիտակցական ու անգիտակցական աշխարհի դրսնորումներ են, և որոնց մասին Հրաշյա Թամրազյանն ասում է.

Մենք հաճախ ենք մտածում

Գերիրական պատկերների մասին,

Որոնցով քունավորված է մեր բանականությունը:

(«Եղծված բնություն»):

Զ. Ֆրոյդի, Կ. Յունգի և նրանց հետևորդների հոգեվերլուծական տեսություններում կարևոր տեղ է գրավում երաշը: Յունգը զտնում է, որ մարդու ես-ի գիտակցությունը սահմանափակ է, բայց երազի մեջ մարդը կարծես վերադառնում է այն ամբողջական, հավերժական ու նախաստեղծ էակին, որը դեռևս բաժանված չէ բնությունից և ապրում է մախնական տիեզերական խավարի մեջ: Հենց այստեղից էլ

ծնունդ առած երազի մեջ մարդը անգիտակցարար հաղորդակցվում է առօրյա գիտակցության անմատչելի զգայությունների հետ։ Չարենցի՝ երազ պատկերող բանաստեղծությունները, որ վերաբերում են հատկապես կյանքի վերջին շրջանին (թեև ստեղծագործական կյանքի առաջին շշանում՝ 1917-ին է գրել «Ազգային երազը»), սերտորեն կապված են իր օրերի ժամը այլումների, տագնապների և, ինչո՞ւ ոչ՝ վախի և մահվան այն մութ զգայությունների հետ, որոնց գիտակցությունը դեռևս հստակ բանաձևում չէր կարող տալ։ Նրա «Պոեմ անանուն»-ի առաջին գլուխը կոչվում է «Երազների մասին», և այդտեղ պարզորոշ երևում են բանաստեղծի ենթագիտակցարար ծնված մտորումները.

Չարմանալի շփոք, ու անհերեք ու մութ
Ես մի երազ տեսա այն երեկո հանկարծ –
Ոչ քե երազ էր այդ, այլ էապես մի սուտ
Չառանցական տեսիլ, կամ հոգևոր արկած...

Պատկերը կրկնվելով՝ բացվում է «Էկլեզիաստես» (տրիպահրոս) ստեղծագործության մեջ, որի ենթավերնագիրն է՝ «Խոսք առաջին – Հյուղու (զառանցանք)», և որն սկսվում է.

Ատամնարափ մի մարդ, գանգով կապկի,
Նստել էր մերկ կրծքին, - և ինձ խեղդում էր...

Չարենցի երազի մեջ գիշերվա ու մահվան զուգորդումը դուրս է գալիս որոշակիության շրջանակից և ծեռք է բերում ավելի ընդհանրական իմաստ ու հանգում հավերժական տիրության ու կյանքի ունայնության զաղափարին, որն ածանցվում է ժողովողի առաջացրած տրամադրությունից.

Եվ գոյության անհուն տիրությունն էր նայում
Այդ աշքերով – կյանքի, մահվան տիրությունը...

Անշուշտ, ուղղակի ազդեցություններ, պատկերների շատ քեզ զգալի նմանություններ Չարենցի երկի և ժամանակակից բանաստեղծության մեջ գտնելն անհմաստ է, այ-

մուամենայնիվ, մեզ թվում է, կա կյանքի և երազի կապի մի տրամաբանություն, որն իրապես գործում է թե՛ Թումանյանի, թե՛ Զարենցի, թե՛ Ժամանակակից բանաստեղծների, մասնավորապես Ռ. Դավոյանի պոեզիայում՝ անկախ երազների բովանդակությունից: Հոգեվերլուծարանների նշած մարդու ամբողջության վերականգնումը երազի միջոցով, ըստ Էության ընդհատվում է արքնացման պատճառով, երբ մարդն անմիջապես կորցնում է կապը անգիտակցական, քասուային աշխարհի հետ և սկսում է մտորել իր երազի մասին: Մարդու և, բնականարար, բանաստեղծության մեջ դա կատարվում է օրինաչափորեն նույնակերպ: Թումանյանը, Դեպի Անհունը պոեմում գրում է. «Վեր բռաքնից, գրուսը նայեցի» «Զարենցը գնահատում է տեսածը. «Զարմանալի շվեր, ու անհերեք ու մութ/ Ես մի երազ տեսաւ այս երեկո հանկարծ», Ռ. Դավոյանը «Երազ և արքնություն» բանաստեղծության մեջ գրում է. «Կեսզիշերին հանկարծ / մեկն ինձ արքնացըց, / շատ իրական ծայթով ինձ ծայն տվեց՝ / վեր կաց....»: Երազը նույն ազգեցությունն է բողոքում Թումանյանի և Զարենցի վրա.

Գիշերն անցել էր, քայլ իր ետևից
Սլոայլ էր բոլել զեռ ցած՝ հովհանում:
Էղպես տակավին անցած երազից
Խավար մի քան էր նրատած իմ սրբառում:

(«Դեպի Անհունը»)

Գիշերը զնաց, քայլ երկա՛ր, երկա՛ր
Իմ սրափ վրա ծանր, որպես քար,
Սի քախիծ մնաց երազից էն մութ-
Սի ճնշող քախիծ, ծանր մի խորհուրդ:
(«Ազգային երազ»)

Տեսած երազի մռայլ հաղթահարելու համար բոլորն էլ ապավիճում են երազի սուտ լինելու հանգամանքին: Թումանյանն ասում է.

Կյանքը երազ է, երազն էլ մի կյանք,
Երկուսն էլ անցվոր, երկուսն էլ պատրանք:

Քայց, այնուամենայնիվ, Թումանյանը գտնում է երազի ու իրականության կապը՝ «Արդյոք իմաստուն հոգին չի՞ միայն նա», որ թե երազում, թե կյանքում «Ապրում է, տեսնում, զգում ու հուզվում...»։ Չարենցը ևս թեև «Ազգային երազում», գուցե հենց Թումանյանի ազգեցությամբ, զրում էր. «Միրած է կյանքը, երազ ու տեսիլ, / Չո այդ երազում դու կյանքն ես տեսել», բայց հետազայում «Էկլեզիաստես»-ի մեջ ուզում է քոքափել ծանր տպավորությունը և ապափեռում է երազի սուտ լինելու գաղափարին.

Ոչ թե երազ էր այդ, այլ էապես մի սուտ...

Դավոյանի բանաստեղծության մեջ երազը թեև մղձավանջային չէ, բայց նա ևս երազի տպավորությունը հաղթահարում է նույն կերպ.

...և հասկացա, որ դա
անիմաստ է և սուտ-
կյանքի հոգսի դիմաց
երազն ո՞վ է հիշում:

Չարենցյան երազի զառանցական ու մղձավանջային բնույթը Դավոյանի պոեզիայում արձագանքվում է մղձավանջների («Հեքիաթ մղձավանջներով») և տեսիլների մեջ, որոնք ընդհանուր առմամբ ոչ թե խսկական, այլ արքմանի երազներ են։ Բովանդակային առումով կարելի է հիշել Մղձավանջ-21-ը, որտեղ ասվում է.

Սիրտս այնպես է տրոփում՝
սունն է ցնցվում ահից,
ինձ ասին՝ սև ժապավենով
բուրք է նկել մահից:

Մեր կարծիքով նույն դաշտում կարելի է դիտարկել նաև Հ. Էդոյանի «Կեսարիերային մղձավանջ» բանաստեղծությունն այն առումով, որ Էդոյանը ևս խոսում է կյանքի սարսափից (չարենցյան զառանցանքն ու Էդոյանական մղձա-

վանջը կարող են իրու հոմանիշներ քմրոնվել) և դեպի մահը սլացող մարդկանցից.

Չամին լուսն է գիշերվա միջանցքներում:

դժոխքի ճայներից

**հեռազրայուները դողում են սարսափահար
իրենց քնի մեջ:**

.....
**Փողոցում հոսում է մարմինների մի գիտ
ուսուի դեպի անդունդ: Կանգնեցրու հոսքը նրանց,
Հավերժի Ականատես:**

Այստեղ թերևս ավելորդ չի լինի հիշել մշակութաբանների այն դիտարկումը, թե ըստ հետմողեռնիստ վիլիսովաների, մարդք գտնվում է հաղորդակցման անսահման տարածության մեջ, ուր ինֆորմացիան թափառում է՝ հայտնի չէ՝ որտեղից սկիզբ առնելով և ինչ հասցեատեր վնարելով: Ըստ այդմ կարելի է ասել նաև, որ վերը նշված հեղինակները ոչ թե ազդակ են ստացել միմյանցից, այլ գտնվել են «այսպես կոչված» նույն ինֆորմացիոն դաշտում:

Կա ևս մի խնդիր, որ կողմնակիորեն է առնչվում Զարենցի հետ, քայլ հետաքրքրական է իրու երևոյթ: Խոսքը վերաբերում է ինտերտերստուալությանը կամ արտատերստայնությանը: Այդ ըմբռնումը կապվում է հետմողեռնիզմի գեղագիտության հետ, շշանառության մեջ է մտել 1960-ական թվականներից: Ըստ ինտերտերստուալության ըմբռնան ամրող մարդկային մշակույթը համարվում է մեկ ընդհանուր տեքստ, յուրաքանչյուր հեղինակ ակամա երկյանության մեջ է մտնում իրենից առաջ և իր կողքին գոյություն ունեցող գրականության հետ, ուստի ամեն մի տեքստ իրենից ներկայացնում է մի ինտերտերստ, որտեղ տարրեր մակարդակներով ու տարրեր ծեներով ներկա են նախորդ և շրջապատող մշակույթի տեքստերը: Ինտերտերստուալությունը անանուն բանաձևերի ընդհանուր դաշտ է, որտեղ հազվադեպ կարելի է հայտնաբերել զանազան քաղվածք-

ների ծագումը, որոնք հաճախ անանուն են, անզիտակցաբար հղված և առանց չակերտների:

Ժամանակակից հայ բանաստեղծներից մեծ մասի ստեղծագործության մեջ առկա են նախորդ մշակույթի անանուն հիշատակություններ: *Օրինակ՝* երբ «Հայոց լեզու» բանաստեղծության մեջ Հակոբ Մովսեսը գրում է.

Ասում եմ՝ ահա նարմինս միակ, ասում եմ՝ ահա արյունս
արդար,-

Չեոք դնում եմ բառերիդ մաքուր զոհասեղանին,
աչքերս փակում...,

ապա հասկանալի է, որ նրա տեքստ է բափանցել աշակերտների հետ վերջին ընթրիքի պահին Հիսուսի ասած խոսքը՝ «Առեք և կերեք, այս է իմ մարմինը...»: Կամ՝ արտասահմանյան գրականության մի ամբողջ հասված կա Հովհ. Գրիգորյանի «Վերջին դուրլ» բանաստեղծության մեջ. «Զգիտեմ՝ ո՞ր մեղքիս համար՝ զանազան հեռախոսահամարների, ազգական-քարեկամների, նախարարների ու ԱԺ պատգամավորների հետ մինչև ի մահ պիտի հետո քարշտամ նաև Ստիլվեն Դեղալին, որը նույն ինքը Տելեմաքն է, Լեռպողդ Բլումին, որպես Ողիսևս, Բլումի կնոջն առ այն, որ նա Կալիպսոն է, որն ինչպես հայտնի է, կաշկանդել էր Ողիսևսին միայն Հոմերոսին հայտնի պատճառներով...»: Նման օրինակները բազմաթիվ են:

Սակայն, այնուամենայնիվ, երևույթը թեև կապվում է հետմողեռնիզմի հետ, բայց առկա է նրանից շատ վաղ, երևույթի գիտակցումն է ուշ ձևակերպվել: Այս առումով ժամանակակից բանաստեղծների ամենամոտիկ նախորդը կարող է լինել Զարենցը, որից այստեղ կարելի է հիշել սուկ մի նմուշ.

Օ՛, Ակեքսա՞նդր,-ոչ հոչակ, ոչ գանձ
Ես չեմ երազում օրերիս նաշում:
— Ախ, կյանքում եքն արվե՛ր ինձ հանկարծ
Սի, քողինյանն աշուն...

«Քոլդինյան աշունը» Ա. Պուշկինի ստեղծագործական վերելքի բարձրագույն և բեղմնավոր պահն է, երբ 1830 թ. Նա Նիժնի Նովգորոդի Քոլդինո գյուղում երեք ամսվա ընթացքում ստեղծեց տարրեր ժամրերի հիսուն երկ:

Այսուհանդերձ, Զարենցը չէ ինտերտերստուալության սկզբնավորող հայ գրականության մեջ: Առանց մանրամասնելու հիշենք Նարեկացու «Մատյանի» բագում հիշատակումները (ոչ խորհրդանշիշերը), որոնք ակնարկ-հղում են այս կամ այն աստվածաշնչյան պատմությանը, սրբերին, մարգարեններին, առաքյալներին ու նրանց գործերին: Այս հանգամանքը թույլ է տալիս վերադառնալու հողվածի սկզբում արված այն դիտարկմանը, որ գրականությունը թե՛ ժամանակային, թե՛ բովանդակային, թե՛ խորհրդանշային ու պատկերային առումով բազմաշերտ է, և ամեն մի նոր շերտի մեջ հնի կրկնությունը կա: Այս երևույթի արմատներն ավելի խորը են և կապվում են մարդկային կյանքի ու տիեզերական օրինաչափությունների պարբերականության հետ, որի անդրադարձը մեզ չափազանց հեռու կտանի: Վերադառնալով Զարենցին՝ նկատենք, որ նա հրաշալի գիտակցել է մշակույթի զարգացման շղթայում իր միջանկյալ դերը, որ շարունակելով նախորդներին՝ սկիզբ է դառնալու հաջորդների համար.

Լավ իմացիր, որ եքն դու ուզում ես մի օր չտևել,

Քեզ լոկ օղակ համարիր, և ոչ քն սկիզբ կամ վախճան:

Իր բազմաշերտ ու բազմարովանդակ ստեղծագործությամբ Ե. Զարենցը կանգնած է այսօրվա պոեզիայի ակունքներում և հաճախ անտեսանելիորեն շնչավորում է ժամանակակից բանաստեղծների մտածողությունը:

ԱՐԾՐՈՒՆ ԱՎԱԳՅԱՆ

ՀԱՅՈՅ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑՅԱՆ ԵՎ ԸԱՀՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԸ

«Դուք վերև եք նայում, երբ ուզում եք քարձրամալ:
Իսկ ես նայում եմ ներքեւ, քանզի քարձրացել եմ»:
Ֆրիդրիխ Նիցշե

Հայոց պատմության և առհասարակ հայ անցյալի գնահատման ու մեկնության իրողություններ մեզանում դրսւորվել են հայ գրականության ճևավորման առաջին իսկ ժամանակներից: Բավական է հիշել Մովսես Խորենացու «Հայոց պատմության» բովանդակությունն ու նպատակադրումները, Փարագեցու «Օթղթերը», Ազաթանգեղոսի ու Բուզանդի գործերը: Սեր նախնիների ու նախորդների ապրած հոգևոր ու ֆիզիկական կյանքը, նրանց գործունեությունը նույնքան մտահոգիչ է եղել նաև Արովյանի ու Ռաֆֆու, Դեմիրճյանի, Կ. Զարյանի, Մահարու և մի շարք այլ գրողների համար՝ ավել կամ նվազ:

Իրարամերժ, հակասական և քարդ այդ անցյալն ամեն անգամ մի նոր սրությամբ է դրսւորվել մեր պատմության տարրեր ժամանակամիջոցներում: Սակայն այն առավելագույն ճակատագրական է եղել հատկապես ժողովրդի կեցության բեկումնային շրջաններում, որոնցից մեկն էլ 20-րդ դարասկզբի առաջին տասնամյակներն էին, երբ տառացիութեն զլիսիվայր շուր էր եղել ամեն ինչ, վտանգվել ժողովրդի ֆիզիկական գոյությունն ու Հայաստան աշխարհի սահմանները, իրար քախվել հայ մարդու քաղաքական կողմնորոշումներն ու տնտեսական կացութաձևները, որոնց վրայով

տրորելով անցնում էին հայ եղեռնի թողած հետևանքներն ու սփյուռքի հեռաստաններում ուժացող զանգվածների սպառումները:

Քաղաքական ու ազգային նման փլուզումների պայմաններում, բնական է, որ հայ զրի այնպիսի մեծություններ, ինչպիսիք էին Եղիշե Չարենցն ու Շահան Շահնուրը, չէին կարող անտարբեր մնալ ժողովրդի անցած ճանապարհի նկատմամբ, մանավանդ՝ անմիսիքար էր «տխուր ներկան» և խամրած՝ «պայծառ զալիքը Նայիրի»։ Ավելին, կարելի է ասել, որ այս զրողների ողջ գրականությունն է քրծկած հայոց պատմության անրութելի «վերքով», նրա պատճառած ցավերով ու մորմոքներով, ելման դռների որոնումներով։ Եզ իննց սա էր, որ նրանց զրիչը հաճախ դարձնում էր անողոք ու երգիծախառը, իր ժխտման տեհնդով հակադրվում փառաբանական այն պանծացումներին, որոնցով լեցուն էր հայ զիրն ու խոսքը։

Այդ նույն պատմության տխուր բերումով երկու զրողները հայտնվել էին քաղաքական ու աշխարհագրական տարբեր ծայրաքանոններում։ Մեկն իր ստեղծագործական առաջին շրջանի ոգևորություններն ու դրան հաջորդած իիասթափություններն էր ապրում մայր հողի վրա՝ ի տես խորհրդային իշխանությունների խոսքի ու գործի անհարիրությունների, թգաչափ թողնված Հայաստանի տարածքների ու քաղաքական բռնությունների, մյուտք՝ սփյուռքի խարակներում բախվող, Վահան Թեքեյանի բնորոշմամբ՝ «փոշի» դարձող, «ազգային նալի» խորտակման ականատեսը դառնում։

Այս իրավիճակի պատճառները շատ էին՝ ընթացիկ գահավեժ դեպքերն ու մանավանդ ... տխուր պատմական անցյալը, որը որպես մահվան օղակ նետված էր ժողովրդի վզին օտարների ու յուրայինների ծեռքով։

Թեև Շահնուրն իր զիսավոր երկը՝ «Նահանջը առանց երգի» վեպը, գրեց և մեր «պատկերազարդ» պատմությունը քննադատության ենթարկեց ավելի վաղ (1927-29 թթ.), քան Չարենցն իր զիսավոր գրքում՝ «Գիրք ճանապարհիում»,

սակայն անցյալի նկատմամբ մերժողական վերաբերմունքը Զարենցի գործերում դրսևորվել էր դեռևս 10-ական թվականներին, երբ արդեն անցել էր գրական որոշ ծանապարհ և սիմվոլիզմին ու որոշ գրական մոդեռն ուղղություններին հարելով հանդերձ, թևակոխում էր պատմական ռեալիզմի խորքային ոլորտները: Եղեռնը իր հետևից բողել էր արյան վտակներ ու աշխարհի չորս ծագերը բռնած հազարավոր գաղքականների բզեզած ծվեճներ: Ազգային փլուզումը աննախադեպ էր կյանքի բոլոր բնագավառներում: Եվ պատահական չէ, որ 1915-16թ.. գրած «Կապուտաչյա հայրենիք», «Դանքեական առասպել», «Վահագն», «Արիլլա» պոեմներին, ուր առկա են փոխնիփոխ իրար հաջորդող ոգևորության ու անկման տրամադրություններ, հաջորդեց 1917-ին գրած «Ազգային երազ» ողբերգաերգիծական պոեմը, որտեղ գրողը փաստում է, որ վառվում է «ողջ երկիրն Հայոց» ու զառանցում է «մի մեռնող ժողովորդ»: Զարենցն այստեղ շատ որոշակի է խոսում մեր պատմական ոչ վաղ անցյալի մասին, որը սին ու անարդյունավետ է եղել հաճախ ուղղված մեր իսկ դեմ, անհմաստ մի գործունեություն, ուր ընդամենը մի շնչին սխալ է արվել՝ նրանց գյուղի տեղ՝ մեր գյուղն ենք այրել: Սա բոլորովին պատահական միտք չէ այս պոեմում ու նաև Զարենցի աշխարհայացքում: Պատմական անցյալի իրենց մեկնություններում Շահնորբ ու Զարենցը հենց այս հայեցակետի վրա են շեշտը դրել, ուր հաճախ զանց է առնվում օրյեկտիվ գործոնը (թշնամին թշնամի է, ու նա պիտի վարվեր այնպես, ինչպես վարվեց) և խոսքի ծանրությունը տեղափոխել սուրյեկտիվ գործոնի վրա (մենք է, որ սխալներ պիտի չկատարեինք)` նպատակ ունենալով սրավիման մղել ժողովրդին և գործունեության ճիշտ ուղղություն կանգնեցնել սերունդներին:

Թեև պոեմում Զարենցը անուններ չի տալիս (եթե բացառենք Ավետիք Խսահակյանինը), սակայն ակնարկների ու բարախադերի միջոցով տեսանելի է դարձնում 19-րդ ու 20-րդ դարերի մեր պատմական թատերաբեմի շատ գործիշ-

ների՝ ազգային առաջնորդների, գրողների, կուսակցականների, որ զիտեն խոսել «աղբյուրի նման կարկաչուն ու հորդ», քշնամուն անվանել խարող ու վախկոտ, հայոց ազգին՝ աստվածահանձար, աշխարհին՝ կարելից մեր վշտին, որ իր լուսավոր ափերում նստած... մեր վշտերի համար արցունք է թափում.

Սակայն մինչև զա օգնությունը այդ -
Ով մի սուր առած, ով թեկուզ մի փայտ,
Շարքերով անծայր, ստվար, բազմահոծ -
Երբա՛նք փրկելու ժողովուրդն հայոց¹

Երգիծական ուրիշ ի՞նչ ճևակերպում պիտի տրվեր գրողի կողմից մեր պատմության միամիտ այս ընթացքին, որ միշտ օտար խարույկներից է հայցել փրկության կրակ (օտար ուժերին ապավիճնելու պահվածքը Զարենցը քննադատել է նաև մի շարք այլ գործերում, որոնց թվում և «Սասունցի Դավիթ» պոեմի Ձենով Օհանի կերպարով):

Ու թեև «Ազգային երազին» հաջորդած մի շարք գործերում և հատկապես «Երկիր Նաիրի» վեպում Զարենցը այս կամ այն շափով անդրադառնում է մեր ժողովրդի անցած անդեկ ճանապարհին ու մեր պատմության ճախավեր դրվագներին, սակայն դեռ բավական ժամանակ պիտի անցներ, որ նա հասներ հայոց անցյալի գնահատման 30-ական թվականների դարն ու ցավալի քանձրացումներին և «ազգային տկլորության» գաղափարին, ինչին նրան հաճգեցնում էին բոլշևիկյան բռնությունների նոր ծավալումները ևս:

Թեև կար այն իրողությունը, որ չէր կարող լինել ավելի վատ այն բանից, որ արդեն եղել էր, այնուամենայնիվ, Զարենցն ու Շահնուրը միսրճվում են մեր պատմության քառուղիների մեջ՝ նպատակ ունենալով ոչ միայն վեր համել հայոց նախորդների «անծին ու անպոտ» վարքը, այլև

¹ Ե. Զարենց, Պոեմներ, բանաստեղծություններ, Երևան, 1984, էջ 49:
103

պատասխանելու ներկայի ու զալիք ժամանակների ծագող հարցերին:

Չարենցը հայ սերունդների նկում ուղիներում տեսնում է ստրկություն ու մահ, մի անցյալ որ շառագունված էր միայն ուրիշների փայլով, զմրուստության պակաս, ուր կյանքը վեր էր ածվել մահվան տեսլների ու հայ պատմության վրայից արյուն հոսեցրել: Այդ նոյն ողբերգությունը, զարմանալի չքվա, ստեղծագործական ներշնչանք է դառնում նաև Շահնուրի համար, ծնում ազգային անցած ճանապարհի գնահատումների նոյնանման մեկնություններ, ինչը և իրար է հյուսում «հնամյա քախիծը նախրյան» և նորօրյա նահանջը զաղքահայության (շատ տարրեր չեր նաև Չարենցի ու Շահնուրի անձնական կյանքի ընթացքը՝ տևական հալածանքներ ու մոտիկ «քարեկամների» նենգություններ):

Երկու գրողներն էլ տեսնում էին, որ «Անվավեր փառքի առասպելյալ» դարերը ժողովրդին կանգնեցրել են շատ տիսուր փաստի առջև՝ արևմտահայությունը կորցրել էր հող ու հայրենիք, արևելահայությունը՝ իր անկախությունն ու ազգային արժեքները՝ որպես ժառանգություն պահելով տաճուլ տրված դարերի կորուստը միայն:

Այս ամենի գեղարվեստական խտացումները դարձան Չարենցի հատկապես երկու պոեմները՝ «Պատմության քառուղիներով» և «Մահվան տեսիլ» (թեև 1933-ին լույս տեսած «Գիրք ճանապարհի» գրքի մի շարք այլ գործերում էլ նվազ չէ հոռեստեսությունն ու անցյալի ժխտումը) և Շահան Շահնուրի վեպն ու «Ավագ ուրբար» պատմվածքը, «Ազատն Կոմիտաս» ու «Վավերաբուղբը» հոդվածաշարերը:

Չարենցյան «անգաղափար», «ցաքուցրիվ», «անղեկ» որակումները, որ «Պատմության քառուղիներով» պոեմում տրվում են մեր պատմությանը իին դարերից մինչև ներկան, «փառապանծ» նախնիների երկրային անիմաստ կյանքի գնահատականն է, որ ծավալվելով ավելի ու ավելի քանձր երանագավորումներ է ստանում: Ոչնչատեսիլ նախնիների նշած այդ ուղին գրողը աղետավոր է համարում սերունդնե-

թի համար «խորշակյալ ու անդրու» Արարատյան դաշտում:

Ուշագրավ է, որ Զարենցը պոեմում բացասական քնութագրումներ տալով հանդերձ ողջ հայության անցած ուղուն («չեղյալ փառապանծ ուղի», «հանգուցյալ փառք», «հազարամյա խեղճուրյուն», «գարերի կորուստը» կրողներ, «անխոն ու անզաղափար», նաև «անդեկ» ճամփորդ)` այնուամենայնիվ իր խոսքը հիմնականում կառուցում է ժողովրդի առաջնորդների ու իշխանավորների գործունեության դատապարտման հենքով՝ նրանց մեղադրելով մանափանդ այն բանում, որ նրանք սերունդների մեջ սերմանել են ոգու խեղճուրյուն, հուսալքության ու ճորտության հոգերանուրյունը, ուրիշներին առաջնորդել դեպի Երկիրը Ավետյաց՝ ժողովրդի մասին տարածելով անուժության գաղափարը և զմբռստության պակասը: Մորթապաշտ, փառասեր ու նյութապաշտ այդ առաջնորդներն իրենց խղճուկ ապահներում մի բուռ ուկի են պահել միայն.

Եվ ոչ մի, ոչ մի մեխ -

Ո՛չ մի կտոր երկաք, կամ անագն շաղախ,

Կամ մարմարյա մի սյուն, կամ թեկուզ կիր,

Որ փորձության պահին անձրևներից մխար

Եվ իր ծովաչը խառներ բմբռստության երգին...¹

Այդ ամենը հանգեցրել է նրան, որ ժողովուրդը ահից կծկվել է, դարձել հնազանդ զանգված: Այսուհանդերձ, Զարենցը պոեմում նկատել է տալիս, որ կրելով հանդերձ քիրտ բռնությունը տերերի ու իշխանավորների, որոնց տեղը նոր օրերում ուկին է նվաճել, այդ ժողովուրդը չի ջլատվել, կարողացել է ամենդ պահել ազատության տենչանքը: Նա եղել է կառուցող, արև երազել, իր կրծքում կրել վսեմ գաղափարներ և ստեղծարար մտքեր: Այս առումով Ծահնուրը ևս միադեմ չէ իր քննադատություններում և ժողովրդի գոյատևման ու ստեղծագործական պառթկումի վերաբերյալ լավատեսական տրամադրություններ ունի. «Այն պարզ իրողութիւնը, թէ

¹ Ե. Զարենց, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1987, էջ 34:

Հայր կրցեր է դիմադրել դարերու խորտակիչ ճնշումին, ինքնին արդէն յաղքանակ մըն է: ... Նոր յաղքանակը պիտի գայ այսօր եւս, քանի որ անցեալի մէջ ան մեզ շնորհված է բազմից», - զրել է Շահնուրն իր «Ազատն Կոմիտաս» հոդվածում¹: Իսկ «Թերթիս կիրակնօրեայ թիւր» գրքում զետեղված «Ֆրանսահայ տողանցը» քրոնիկոնում արձանագրել. «Կարելի՞ բան է Հայուն ննան ազգ մը... որ կու գայ ալեկոծ դարերու խորէն եւ խորխորատէն, իր հետ բերած չըլլայ առաքինութիւն մը: Գէք առաքինութիւնը՝ դիմադրող, տոկուն և ճեռմերէց ոգիի»²:

Միամանքոն թեև «Հոգևարքի և հույսի ջահեր» շարքում իր ժամանակի համար էր գրում «Կոտորա՛ծ, կոտորա՛ծ, կոտորա՛ծ», սակայն այն ավելի լայն ընդգրկմամբ պետք է ընկալել, ինչը և Զարենցը շեշտել է իր «Սահկան տեսիլ» պոեմի բնարանում՝ մեր պատմության երկարածիք ընթացքը բնութագրելու համար, որը եղել է մի հասատարած «շարչարանց» ճամապարհ, զուրկ հերոսությունից, ոգեղեն ոգորումից ու իմաստնությունից:

Եթե «Պատմության քառուղիներով» պոեմում Զարենցը հայոց պատմության գնահատումները տալիս էր ավելի ընդհանրացված կերպավորումներով, որից ընթերցողը պիտի զնա մասնավորեցումների, ապա «Սահկան տեսիլ» պոեմում գրողը շատ ավելի կոնկրետ է պատկերում պատմական բատերաբեմի վրա գործած ազգային գործիչներին ու մտավորականներին, թեև որոշակի անուններ նույնական չեն տալիս (կոահումներին օգնում են այդ մարդկանց շատ որոշակի արտաքին նկարագրություններն ու գործունեության հիշատակումները):

Պոեմում գրողը Հոմերոսի, Վիրակիլուսի, Ֆիրդուսու մասին խոսելիս՝ նրանց անվանում է քերթողահայրեր ու մտքի զագաքներ, որ թեև երգել են արշավանք ու հերոսների մահ, բայց եղել են «սրտով խաղաղ», մինչդեռ ինքը ցավի ու

¹ «Յառաջ», Փարփա, 1970, 24 հունվարի:

² «Թերթիս կիրակնօրեայ թիւր», Պեյրութ, 1958, էջ 75:

ողբերգության մորմոքների մեջ է ու ինչ ներկայացնում է, «չէ լյառ հերոսության», այլ դժնի ու գունական մի մահվան ափ:

«Պատմության քառուղիներով» պոեմում Զարենցը քեն իիշատակում է «առասպելյալ» Հայկերի, «անժողովուրդ ու զահագուրկ» քազում Տրդատների ժամանակները, խոսում Հայատանի ֆեռդալական ու իշխանական ժամանակաշրջանների մասին, սակայն նա էլ, Ծահնուրի նման, իր հայցը սկզբում է մեր պատմության հատկապես վերջին հարյուրամյակների դեպքերին, որ եղել են «ճորտության ու տառապանքի» թիարաններ, «անհանճար ու անքանքար» և զալիքի առջև պարզվել են.

Զարմանալի՝ թերև, զարմանալի՝ անդիմ՝

Մերկության պես տկլոր ու անանցյալ...¹

Հայոց անցյալը որպես մի մոռայլ եզերը է պատկերվում գրողին, ուր չի եղել ոչ ուղի, ոչ հավատ: Ազգային միայնության ու մահվան այդ իրողությունները Զարենցին ի վերջո հանգեցնում են համատարած մերժմանը, ուր այլևս չկան անձեր, այլ կա ընդհանրացված մի ընթացք, որ հայոց անդեմ ու միշտ նույնական պատմությունն է: Մի պատմություն, որի սև ընթացքը չէր կարող չհանգեցնել համազգային խորշակին՝ եղեռնին՝ այն էլ ոչ միայն ֆիզիկական, այլև հոգևոր:

Ելակետային նույն զնահատումներն ունեն Զարենցն ու Ծահնուրը նաև հայ մտքի մշակների նկատմամբ: Հայ գրողների երգերն էլ այլ քան չեն եղել, եթե ոչ՝ «մահվան հառաջանք», որ հնչել են կերկերուն ձայնով, «քաղումի նման դառնադես» և մարդկանց սրտերը լցրել ցավով ու վշտով, նրանց տարել ոգեղեն խեղճության: Այդ էր պատճառը, որ, անցյալի գրական մշակներին զնահատելով պատմական դեպքերի լույսի տակ, Զարենցն ու Ծահնուրը հայ գրական անդաստանում առանձնացնում են ընդամենը մի քանի դեմքերի՝ Դուրյանին, Միամանթոյին, Վարուժանին, որոնց Զա-

¹ Ե. Զարենց, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1987, էջ 40:

բենցն անվանում է իսկական սրինգ ունեցողներ ու վերին շնորհով օժտվածներ, Ինտրային, Տեմիրճիպաշյանին, որոնց Շահնուրը համարում է սեփական ճայն ունեցողներ և սիրողական («ամաքլոր») մակարդակից վեր գրողներ:

Իսկ մնացածներն ու մնացյալները... Այդ մասին շատ ավելի ժխտողական է խոսում Շահնուրը, երբ իր վեպում գրում է, թե «Հայր ամուլ է, անծին, անսպասլ», թե մեր նախնիները եերուսների փոխարեն դրել են մշակներ, աղիքների ճրչի փոխարեն՝ արցունքներ, զաղափարների փոխարեն՝ կադապարներ, ստեղծել կյանքից կտրված մի գրականություն, որ ավելի շատ ցանկալին է պատկերել քամ՝ իրականը:

Նախորդ դարի 20-30-ական թվականներին ազգային շատ խնդիրներ էին առկախ մնացել: Փակ էին տունդարձի ճամփաները, կյանքի նոր պայմաններում ի հայտ էին գալիս ազգային «քայլքայումի» (Ը. Շահնուր) բոլորովին նոր երևույթներ: Գաղթահայր, որպես վերջին փրկազին, վճարում էր «այն, որ պիտի զար»՝ ծնվելիք սերունդը: Հայրենի հողի վրա ծավալվող քաղաքական բռնությունները մարդկանց ուղղակի անտարքը էին դարձնում համազգային իդեալների նկատմամբ: Այս ամենը պրկում էին թե՝ Զարենցի, թե՝ Շահնուրի հոգին, նրանց խոսքը դարձնում զայրալից, ծայրահեղ և երրեմն էլ անարդարացի, մի քան, որի զիտակցումն իհարկե երկու գրողներն էլ ունեին: Օրինակ, «Սահկան տեսիլ» պոեմում արտահայտած Զարենցի արձանագրումները իր «անօգնական» վիճակի, «ահավորված» ու «վարանոտ» լինելու վերաբերյալ ինչը իրեն «Ոչ փառքի զագար է խոստանում, ոչ քերթության Պառնաս», կամ Շահնուրի խոստովանություններն իր խոսքի ու բնութագրումների «աղի-լեղի» համի, իրենների հանդեպ «չափելուրս անզութ» լինելու մասին:

Ինքնակասկածի ու իմքնազնահատման այդ նույն դրսևորումը Զարենցն արտահայտել է նաև “HEINRICH HEINE” բանաստեղծությունում՝ խոսելով իր «մեղքերի» մասին, որոնք ուրանալ ինքը չի կարող, բայց և փաստելով

այն մասին, որ այդ «մեղքերը» թեթև եմ՝ քանզի ինքը պռետ է: Ծահնուրն էլ «Քաց տոմարում» գրում էր, որ իրեն կհասկանա այն մարդը, «որ երբ նայի իր ետին, տեսնէ նոյն բանը: Փոս մը»¹:

Իրենց մերժողական դիրքորոշման մեջ, իհարկե, տեսանելի է Զարենցի ու Ծահնուրի նպատակադրումը, ինչի մասին իրավացիորեն գրել է և գրականագետ Հրանտ Թամրազյանը. «Եղ. Զարենցն իր ժխտման միջոցով ուզում էր սերունդներին հանել ազգային հպատության ուղին՝ դեմ ելնելով դարերից մնաց հասած հոգևոր խեղճությանը»²: Իսկ Ծահնուրն իր նպատակադրումների մասին շատ ավելի հստակ է արտահայտվել. «... ուզեցի գտնել լուծումի մը հույսը»:

Եվ իրոք, միայն ազնիվ գրողներին է տրված խսնելու ազգային թերությունների մասին, մատնանշելու ազգային չարիք դարձած սխալներն ու վրիպումները, ինչը բոլորովին էլ չի նշանակում «հայրենասիրության պակաս» (Վ. Շուշանյան, տես «Սարդ մը, որ Արարատ չունի իր հոգւոյն խորը»), հուսալքել կամ քանդել «միասնության շարքերը», դիմադրության ոգին և կամ ազգայնական տրամադրություններ արտահայտել, որի մասին աղմկում էին հայրենական ու սփյուռքյան գրաքննադատները: Արշակ Զոպանյանը, օրինակ, «Անահիտում» գրում էր, որ Ծահնուրի գիրքը «վիհատեցուցիչ» է, «նոր սերունդը իր ազգէն պաղեցնող», Վաղարշակ Նորենցը «Գրական դիրքերում» տպագրված իր հոդվածում Ծահնուրի վեպն անվանում էր «գաշնակցական գրականություն», հոռետեսության մարմնավորում: Իսկ թե շարչարանաց ինչ ճանապարհ անցավ Զարենցի «Գիրք ճանապարհին»՝ ամենքին է հայտնի, երբ այն երկնած հեղինակին անվանում էին «մի քար»՝ ընկած հայ գրականության ճանապարհին: Սարդիկ պարզապես չէին ուզում հասկանալ, որ իսկական այդ գրականության արժեքն ու էությունը ոչ թե «վեր ելլելու» մեջ էր, այլ՝ «վար իշնելու»: Ողբերգական

¹ Յ. Ծահնուր, «Քաց տոմար», Փարիզ, 1971, էջ 152:

² Հ. Թամրազյան, Հայ քնարերգուներ, գիրք Բ, Երևան, 1989, էջ 29:

իրականությունը, ազգի ծանր կացությունը, որքան էլ դա ցավալի է, փաստում էր այն բանը, որ հայ մարտիրոսների դարավոր գոհողությունները անարդյունք էին եղել՝ ուրեմն և՝ սխալ: Սակայն, ծշմարտություն ասելը կամ գրելը շատերի կողմից ընկալվում էր որպես մի անքավելի մեղք:

«Անանցյալ անցյալի», տխուր ներկայի ու անորոշ գալիքի մտատանջանքները շատ են նմանեցնում Զարենցի ու Շահնուրի գրականությունները: Սակայն թե՛ արտաքին և թե՛ ներքին թեմատիկ, գաղափարական ու զգայական հարազատությունը բոլորովին էլ չի նշանակում, թե մեկը մյուսի կրկնությունն է: Պատմական ժամանակաշրջանն ու ժողովրդի կացությունը ուղղակի թելադրում էին նման ընկալումներ ու մեկնություններ, անգամ՝ պարտադրում: Եվ այդ՝ միայն գրողական նկարագիր չէր կամ ստեղծագործական պոռքկում: Կարելի է ասել, որ երկու գրողներն էլ քաղաքացիական կեցվածք էին դրսնորում, ներքուստ ապրում ազգային ողբերգությունը, տառապում ու մորմոքվում հոգեպես:

Դեռևս 10-ական թվականներին տպագրված «Ողջակիզվող կրակ» շարքում Զարենցը գրում էր.

Ինչպես երկիրս անսփոփ, ինչպես երկիրս բախտազուրկ,

Ինչպես երկիրս ավերակ ու արնաներկ –

Մխում է սիրտս հիմա ոքք, մխում է սիրտս բախտազուկ,

Մխում է սիրտս ավերակ ու արնաներկ¹:

«Հայությամբ տառապելու» նրա «Քեռան տակ ճգմվելու» նոյնական վիճակը Շահնուրը արձանագրում է «Ավագուրք» գործում. «Հայաստան, Միություն, Անկախություն, Հայկական գրականություն, Անցյալ, Ներկա՝ այս բոլորը զիս հալածեցին ու կը հալածեն ամեն օր ավելի հաճախաղեպորեն»²:

Ազգային կյանքի համընդիանուր անկման պատճառը, իհարկե, նախ և առաջ կապված էր օտար ուժերի ու նենգ հարևանների հետ: Այդ լավ գիտակցելով հանդերձ՝ երկու

¹ Ե. Զարենց, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1986, էջ 276:

² «Չվարքնոց», N 2, Փարիզ, 1930, էջ 341:

գրողներն էլ մի կողմ են թողնում հարցի այդ կողմը և իրենց ուշադրությունը քևեռում «շիջումի զառիքափի» այն պատճառների վրա, որ պայմանավորված էին մեր «կորաքամակ թերություններով» (Ը. Չահնուր): Խնդիրը սևեռուն էր դառնում նաև այն պատճառով, որ հեղափոխության հետևանք կյանքի խեղումները և սփյուռքի անդաստաններում ծավալվող սպառումները ժողովրդին դարձրել էին համակերպվող: Երկու գրողներն էլ իրենց խոսքով սրափման էին ոգեկոչում, զանում ժողովրդի մեջ բռրոք պահել ընդդիմության ոգին, նրան «կովի» տանել, քանի որ «Կովիը սրբազն բան է, ճակատամարտը երբեմն նույնիսկ օգտակար անոնցմէ ազգ մը դուրս կուգայ պարտուած կամ յաղբական, սակայն երկու պարագային ալ դուրս կուգայ»¹:

Թե՛ Զարենցի, թե՛ Չահնուրի համար հարցերի հարցը եղել ու մնում էր երկիրն ու ժողովրդին ապրեցնելը: «...Գոյություն չունի, գոյություն պետք չէ ունենա հայուն փրկութենեն դուրս որևէ բան», - գրել է Չահնուրը «Մենք» հոդվածում²: Նաև նոր սխալներից հայ մարդուն հեռու պահելը, ինչը կարելի էր անել սեփական ուժերի համախմբմամբ, ինքնածանաշմամբ ու հոգևոր նվիրմամբ, որ Զարենցի հայտնի «Ակրոստիքոսում» ստանում էր «Ո՞վ հայ ժողովորդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է» ձևակերպումը, իսկ Չահնուրի խոսքում՝ միշտ ավելի մեծ Սեր, միշտ ավելի մեծ Հույս առ Հայը («Հարալեզներուն դավաճանությունը»):

Այլապես հայ մարդը մնալու էր Չահնուրի «Ավագ ուրբաթ» պատմվածքում ներկայացված վիճակում՝ ասել է՝ մահվան գրկում:

«Մահվան տեսիլ» պոեմում, ի շարս ազգային մի շարք գործիչների՝ Աղիշանի, Րաֆֆու, Ստ. Նազարյանի, Ավ. Ահարոնյանի և այլոց երգիծական ու ողբերգական կերպավորումների, Զարենցը Քրիստովոր Միքայելյանին ևս ներ-

¹ Ը. Չահնուր, «Նահանջը առանց երգի», Բեյրութ, 1981, էջ 123:

² Ը. Չահնուր, Երկեր, Երևան, 1985, էջ 53:

կայացնում է արտառոց մի պատկերով.

Կարծես մեկը առել էր մի խորձ ոսկորներ և խառնել էր իրար,
Իսկ հետո - իրարու կապել, խառնելով ազդեցի ու գլուխ:

Այսպես հայոց ողջ պատմությունն էր խառնված, ուր
գլուխը դրված էր ոտքին, ճեղքերը տեղերից պոկված, մի
խոսքով՝ այն պոեմի՝ Գրիգոր Արծրունու նկարագրում ար-
տահայտված «մի գլուխ և մի կուզ» էր, որոնցից մեկը միշտ
առաջ է նայել, մյուսը՝ ես: Սա ողջ հայ պատմության խտա-
ցումը չէ: Հայ տառապալից այդ պատմությունը՝ սրածված
մարդկանց այդ երբք դեպի Երիքով, որ անընդհատ է եղել,
ամեն ինչ չի առել իր նզովքի տակ և մարդկանց հոգում
բույն կաթեցրել:

Իսկ ի՞նչ էր պահել այդ պատմությունը Զարենցի ու
Շահնուրի համար: Մեկը, հազիվ իր քառասունը բոլորած,
մահվանից առաջ գրում էր. «... ահա ես – 25 տարի ստեղ-
ծագործական աշխատանքով հայրենի հերկը խսփով ոգե-
կան հերկելուց հետո՝ ահա տոնում եմ իմ կրկնակի հորելյա-
նը – մենակ ու հալածական՝ պոետ աքսորյալ սեփական
հայրենիքում՝ հերկի եզերքին հայրենական երգի՝ ամայա-
ցած դաժանագույն եռանդով սեփական նախարարների և
պետերի՝ հայրենի երգակիցների դեռ մնացած մի քանի
խեղճերի հայուսոն ցնծության ներքո...»¹:

Մյուսն էլ փաստում, որ «.. պիտի գար օր մը, երբ քաց
վէրք մը պիտի կրէի ոչ միայն հոգեկան-իմացական կեան-
քիս մէջ, այլ նաեւ բուն իսկ մարմնիս վրայ...»²:

Հայոց ցավալի պատմությունը այս դեպքում ևս
կրկնվում էր զրեք նույնությամբ, որն այդպես էլ չդարձավ
քաղձայի ազգային իրականություն և ի հավելումն դրան՝
տասնամյակներ ու տասնամյակներ արգելման ու մոռացու-
թյան մատնեց երկու գրողներին էլ:

¹ Ե. Զարենց, Պոեմներ, քանաստեղծություններ, Երևան, 1984, էջ 731:

² Ը. Շահնուր, «Թերքիս կիրակնօրեայ թիւը», Բեյրութ, 1958, էջ 49:
112

ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ

«ՈԱՆԹԵԱԿԱՆԻ» ԵՐԿՈՒ ԸՄԲՈՆՈՒՄ. ԶԱՐԵՆՑ – ԾԻՐԱԶ

Կաղուց նկատվել է, որ հայոց Մեծ եղեռնը միջազգային չափանիշներով գնահատելու առաջին փորձերը մեզանում կատարվել են շուրջ մեկ դար առաջ, և գրական այդ ավանդույթը սկզբնավորել է Սիամանքոն: Գրականագետ Ս. Աղաբարյանը՝ Հովհ. Ծիրազի «Հայոց դանքեականը» պոեմի հրատարակության առիջիկ գրած համառոտ հոդվածում նշել է. «Արդեն Սիամանքոյի «Դյուցազնորեն» շարքում հայոց ճակատագիրը համեմատվեց դանքեական ճանապարհի հետ»¹: Անշուշտ «Դյուցազնորեն» կամ «Հոգեվարքի և Հոյսի ջահեր» շարքերում, իրոք առկա են ողբերգականի մռայլ ու մղձավանջային պատկերները: Իրականում Կիլիկիայի հայերի ջարդի (1909) առիջով գրված «Կարմիր լուրեր բարեկամեն» ժողովածուի և մասնավորաբար նրա «Թթենին» բանաստեղծության մեջ է Սիամանքոն վկայակոչել Դանքեին ու եղեռնի իրողությունն անվանել «մահերու և մոխիրներու դանքեական ճանապարհ».

Սինչ՝ մահերու և մոխիրներու մեր դանքեական

ճանապարհին՝

Ինձ ուղեկցող ընկերուին մանկան մը պիս սկսավ լալ...

Թուրքիայում 1909 թ. իշխանափոխության օրերի հեղափոխական կարգախոսներն ու հայ - բուրք եղբայրության կոչերը դեռ օդում չմարած՝ անակնկալ պայթում է Կիլի-

¹ Ս. Աղաբարյան, Հովհ. Ծիրազի «Հայոց դանքեականը»: Պոեմի 1989 թ. հրատարակություն, էջ 338:

կիայի հայկական բնակավայրերի ավերման և ավելի քան 30 000 հայերի ջարդի բռքը: Այն հանձնաժողովը, որ մեկնում էր Կիլիկիա՝ կատարված ողբերգությունը տեսնելու և աղեայալներին օգնություն կազմակերպելու, մեկ կին անդամ ուներ միայն՝ արիասիրտ Զ. Եսայանը, որը նավով, կառուվ, ծիռվ, ուտրով ճամփորդելով, իր ազգակիցներին օգտակար լինելու գիտակցությամբ՝ մի կողմ էր դրել անձնական կյանքը, հանձն էր առել բոլոր դժվարությունները հաղթահարելու գոհողությունն ու պատրաստակամությունը: Իսկ Մերսինում, Աղանայում, Հաջընում, Չորք Մարզպանում կատարված դեպքերը իրոք ցնցող տպավորություն են գործում զգայուն հայուհու վրա: Ամուսնում՝ Տիգրան. Եսայանին, Մերսինից 1909 թ. հունիսի 18 թվակիր ճամակում գրել է. «... ոչ մեկ հույս, ոչ մեկ ապագայի նշույլ ... մահ, ավերակ, անորություն, իիվանդություն և բանտ ... երկիր մտած միջոցնիս առաջին տպավորությունն այն է, որ մեռելի տուն կը մտնամ կոր, այն ալ դեռ չքաղված, քարմ մեռելի տուն»¹ (ընդգծ. մերն են – Ս. Մ.):

Իսկ ինչպես է նա ճանաչել ու բնորոշել՝ իր երեկ իրագործած ցեղասպանությունից այսօր դեռևս հոխորտալով իրաժարված ոճրագործ քուրքին. «Վերջապես ահավասիկ, ոճրապարտ և քշնամի, անկուշա քշնամի ցեղ մը մեզ փշացնել ծրագրած և գործադրած է. ներփակյալ պիտի գտնես պատկեր մը, որ առնված է Տավրոսնեն. հորիզոնին վրա գտնված գիծը մշակություններն են այդ տեղերուն, իսկ ասդին գտնված կմախրները՝ մշակմերուն կմախրները. մարդակերներն իսկ վեր են այս միկալներեն. գոնեն անոնք իրենց անորությունը հագեցնելու համար զիրաք կուտեն»² (ընդգծ. Ս. Մ.):

Հովհ. Թումանյանը 1914 թ. գրեց «Դժոխքի հանդեպ» բանաստեղծությունը, ուր ակնհայտ է Դանտեի պատկերած դժոխքի հետ անմիջական զուգահեռը: Ե. Չարենցը, որ Դանտեին դիմել է տարբեր առիթներով, իր ռազմաճակա-

¹ Զ. Եսայան, Նամակներ, Եր., 1977, էջ 93:

² Նույն տեղում, էջ 94:

տային անմիջական տպավորություններով հյուսված պոեմը վերնագրել է «Դանքեական առասպել», իսկ «Մահվան տեսիլ» պոեմում, եղեռնի դժոխքով ու երևակայությամբ պատկերած անդրշիրիմյան տեսային ճամփորդության ընթացքում, իրեն առաջնորդ է ընտրել Դանտեին:

Այս է եղել միմչեւ Հ. Շիրազը եղած դանքեական վկայակոչումների պատկերը հայ գրականության մեջ: Այս ամենը, սակայն, անգամ Զարենցի «Դանքեական առասպելն» ու «Մահվան տեսիլը», որոնց էջերում անմիջականորեն պատկերված են հայկական եղեռնի տեսարաններ, չեն բավարարել բանաստեղծին, թեև նյութի գեղարվեստական մարմնավորման համար նախորդները ստեղծել էին ավանդներ ու մատնանշել իտալացի հանճարին հայոց ողբերգության պատկերման միջոց դարձնելու հնարավորությունը: Այս եիմքի վրա էլ Հ. Շիրազը դիմել է «Դժոխքի» Վարպետ Դանտեին, պաղատելով բերել է նրան հայ իրականություն: Վաղ շրջանի Զարենցը թե՝ ազգակցությամբ, թե՝ ազդեցությամբ կապված էր հայրենի գրականությանը ու իր մերձավոր նախորդներին և ուսուցիչներին՝ Թումանյան, Սեծարենց, Տերյան, Սիամանթո, և միայն անմիջական կամ միջնորդավորված ազդեցությամբ՝ համաշխարհային գրականությանը, ուսւ և ելքոպական սիմվոլիստներին:

Առիք ունեցել ենք խոսելու Սիամանթո - Զարենց գրական ազգակցության¹ մասին: Այժմ հարկ ենք համարում ընդգծել միայն, որ հայոց եղեռնը Դանքեի «Դժոխքի» հետ զուգահեռելու խնդրում Սիամանթոն ուսուցիչ էր թե՝ Զարենցի, թե՝ Հովհաննեսի վերջին անմիջարար Սիամանթոյից ու Զարենցից է ստացել և զլիասպորապես վերջինի «Դանքեական առասպել» ու «Մահվան տեսիլ» պոեմներից, բայց և արմատներով կապված էր ինչպես Սիամանթոյին, այնպես էլ

¹ Տե՛ս մանրանասն մեր «Սիամանթո – Զարենց գրական ազգակցությունը» ուսումնասիրությունը, Գրական հանգրվաններ, գիրք Ա, Երևան, 2003:

Մեր ողջ տեսիլային գրականությանը:

Տասնութամյա Չարենցը 1915 թ. վերջերին կամավոր մեկնել էր ռազմաճակատ՝ հայրենիքը փրկելու ազնիվ մտահոգությամբ և պատերազմի անմիջական տպավորությամբ գրել «գանքեյան տողերն իմ երե» (այսպես է իր պոեմը որակել ենդինակը «Չարենց - ճամե» պոեմում) ու նվիրել Սովորագի «սրբազան մարտում» 1915 թ. գեկտեմբերի 25-ին «Սրբազան ու սիրատուն Հայրենիքի» համար նահատակած իր ընկերներին՝ Սիրեան Մարգարյանին, Ստեփան Ղազարյանին և Աշոտ Սիլիոնյանին: Չարենցյան մի կարևոր վկայության, սակայն, ցայսօր կարևորություն չի տրվել. պոեմի 1916 թ. թիֆլիսյան առաջին հրատարակության մեջ վերը բերված հիշատակությունների կողքին կանակ հետևյալը՝ «Տաճկաստան - Պարսկաստան, ռազմաճակատ»: Մրանից կարելի է եզրակացնել, որ դեպքերի ընթացքում և անգամ պոեմը գրջանում Չարենցը եղեռնի մասին չի ունեցել այնպիսի խոր իմացություն ու ամբողջական պատկերացում, ինչպես հետագայում՝ «Մահվան տեսիլ» պոեմը գրելիս: Եվ սա միանգամայն բնական է. հետագայում պիտի հասկանալի դառնար, որ կատարվածը եղեռն է ու ցեղասպանություն:

Հայտնի են գեներալ Զեռնոգուրովի հրամանատարությամբ Արևմտյան Հայաստանում կռված յոթերորդ կամավորական բանակի երթուղին ու կռվի վայրերը: Բայց դրանք զանգվածաբար տեղահանված հայության բնաջնջման բուն վայրերը՝ սիրիական անապատները չեն, որ Չարենցը տեսներ իրական եղեռնադժոխքը: Իսկապես, ի՞նչ պիտի տեսած լիներ զինվոր Չարենցը Արևմտյան Հայաստանում 1915-16 թթ. մի քանի ամիսներին՝ առանց ծրագրված երթուղուց դուրս գալու: Գուցե ուսւ գորակրամանատարը իրավունք էլ չուներ բուրքերի դեմ լայնածավալ ռազմական գործողությունների, ինչպես գեներալ Վեդենսկին և մյուսները, որոնց հրամայված էր կազմակերպել ռուսական զորքերի դիվանագիտական ճահանգը՝ անգեն հայ բնակչությանը

թողնելով թուրք մարդակերների բնազանցական ախտրժակին: Մի իրավիճակ էր դա, որում, ըստ Վեղենսկու՝ ցարին ուղղված նամակի՝ անգամ գեներալ-մայոր Անդրանիկը, Վաճից բնդամնենը երկու ժամ հեռավորության վրա գտնվելով, իրավունք չի ունեցել օգնության հասնելու Վաճի ինքնապաշտպաններին: Անշուշտ, այդպիսի բանակում, այդպիսի իրավիճակում հայտնված Զարենցը չէր կարող տեսնել իրագործվող հայոց Եղեռնի զարհուրելի ողբերգության ամբողջ համայնապատկերը: Ինքը հետո պիտի ասեր՝ «ճա տեսնում է լոկ այն, ինչ տեսնում է»:

Չորս տարի շարունակ Եղեռնի զարհուրանքները տեսած եր. Օտյանն էլ հետո պիտի խոստովաներ, թե «իր սկզբնավորության մեջ չէի պատկերացներ աղետին ահօնի մեծությունը» և գրեթե ամբողջությամբ տեսնելուց հետո պիտի ըմբռներ թուրքերի կողմից անմեղ հայերի անասելի տանջանքների զերազանցությունը Դանտեի «Դժոխքի» երևակայական պատկերներից: Բավական է եր. Օտյանի «Անիծյալ տարիներ» հուշագրությունից հիշել միայն Օսմանինից Խսլահիե կառքով ճանապարհվելիս նրա տեսածն ու նկարագրածը, և պատկերը պարզ կդառնա. «Այս ճամրուն վրա տեսանք տարագիրներու քարավաններուն աննկարագրելի խեղճությունը: Հազարավոր կիներ, աղջիկներ, տղաք, իրենց բերներուն տակ կրած ոգեսպառ ու ցավատանք կը քալեն ելևէջավոր քարուն ու ցեխոտ ճամբաններե, ողը ու կոծի աղաղակներ քարձրացնելով: Դիակներ եռս ու եռն, գիշատիչ թոշուններե, շուներե ու բորնիներե հոշոտված: Հիվանդներ, որոնք ծառներու տակ կը հեծեծնեն անօգնական: Նորածիններ լրված, որոնք կը ճկան անորի: Ափեափո, գեշ քաղված մետյալներ որոնց սրունքը կամ թւը դուրս մնացած է... դժոխային ահօնի տեսարան զոր ոչ մեկ Դանքն կրցած է երևակայել»¹ (ընդգծ. մերն են – U. U.):

Սա էլ «դանքեական» մյուս կարևոր զուգահեռը, որ

¹ Եր. Օտյան, Անիծյալ տարիներ, «Նախք», Երևան, 2004, էջ 193-194:

դարձյալ նպատակամիտված է հայոց ողբերգությունը համաշխարհային չափանիշներով բնորոշելուն և մանավանդ Դանթեի հետ զուգահեռելուն: Բայց սրանք դեռևս չեն դարձում ցեղապահության ողբերգության ամբողջական գեղարվեստական պատկերը, որ պիտի ստեղծեին Զարենցն իր հետագա բանատեղծություններում ու պոեմներում և Հովի. Շիրազը՝ շուրջ չորս տասնամյակների տքնանքով ստեղծած «Հայոց գանձեականը» պոեմում:

Փաստորեն հայ գրականության մեջ ճնակորվել է «Ղանձեականի» երկու հիմնական ըմբռնում՝ չարենցյան և շիրազյան, որոնք էական ընդհանրություններով հանդերձ ունեն այդ երկու հեղինակների խառնվածքով, գեղարվեստական մտածողության յուրահատկություններով և գաղափարական ու գեղագիտական նպատակադրումներով պայմանավորված էական տարրերություններ:

Զարենցը վաղ շրջանում իր տեսածք մարմնավորելու համար արտահայտչակերպ վիճարելիս Սիամանթոյի միջոցով հայտնաբերել է Դանտեին և նրա «Աստվածային կատակերգության» կառույցը, «Դժոխք» մասի բովանդակությունն ու պատկերավորման ճները պատաճի բանաստեղծին հարմար են թվացել, ընդգծում ենք, պատերազմի դաշտից իր տպավորություններն ուրվագծելու համար: Իսկ Զարենցի տեսածքը, թեկուց և սահմանափակ, շատ էր հիշեցնում դանձեական «Դժոխքի» պարունակները: Դանտեն իր պոեմը կառուցել էր եռատող տներով կամ տերցիններով և ապահովել 3 և 9 խորհրդանշական թվերի անխարպությունը. տունը՝ 3 տող, գլուխը՝ 99 եռատող, 9 պարունակ, 9 երկինք և այլն: Զարենցը մասսամբ է օգտագործել թվային այս սիմվոլիկան՝ երկու եռատող տուն միավորելով մեկ վեցատող տան մեջ և ստեղծելով 9 գլուխ (նետագա երատարակություններում նա զուտ գեղագիտական նկատառումներով կրծատել է ամրող 7-րդ գլուխը), Դանթեի «Դժոխքի» պարունակներին նմանեցրել է խաղողի տումկերի տակ դիակներ թաքցնող այգին, ջրհորը, Սեռած քաղաքը՝ իր «մոր

սարսափահար աչքերի նման» բաց պատուհաններով, անգամ «տան շեմքին զարկված կատվով» և այլն:

Զարենցի համար թեև հասկանալի էին պատերազմական աղետի՝ իր բնորոշումով՝ «զար հողմերի» ողբերգական հետևանքները, սակայն, այնուամենայնիվ, նա դեռևս մնում է հրետորական հարցի շրջանակներում և ամրող պոեմում ոչ մի անգամ չի գործածում եղեռն կամ ցեղասպանություն բառերը և դրանով չի որակում կատարվածն ու իր աչքով տեսածը: Այդպիսի համոզման նա հանգում է հետագայում՝ ողջ Արևմտյան Հայաստանը, Արևելյան Հայաստանի մի զգալի մասը և իր ծննդավայր Կարսը կորցնելուց հետո: Ահռելի ցավի այդ կսկիծը զգալի են նրա «Վահագն»-ում, «Հարդագողի ճամփորդներ»-ում, «Ողջակիզվող կրակ» շարքի բանաստեղծություններում, «Ամենապոեմում» ու «Զարենց – նամե»-ում, «Երկիր Նախրի» պոեմանման վեպում, «Խմբապետ Շավարշը» պոեմում: Համաշխարհային հեղափոխության կոչերից, հեղափոխական բանակներով իր ավեր ու արնաներկ երկրին փրկություն բերելու խարուսիկ հույսերից, ազգերի եղբայրության ու իրավահավասարության քարոզների թմբիրից արթնացող Զարենցն աստիճանաբար հասկացավ կատարվածի ողբերգականությունը.

Ողջո՞ւն ճեզ ողջո՞ւն, օ Լենին, օ Սարբս,

Ու գործ ու պայքար ու վեհություն...

Էլ երրեք, երրեք դու չես մտնի Կարս՝

Տերյանի, Մահարու կամ քո երզի հունով:

Երբեմնի գաղափարական համոզմունքներից շրջադր նոյնքան ցավազին ու ողբերգական պիտի լիներ, որքան նրանցից խոր հիասթափությունը, որովհետև թե՝ կոտորված ժողովրդի ողբերգությունն էր իրական, թե՝ ծննդափայրի ու պատմական հայրենիքի կորուստը: Այս զգացողությունն էր նրան թելադրում գրել «Ապստամբություն» եռամաս պոեմը, որի առաջին մասն էր «Խմբապետ Շավարշը»: Նա հաջորդ մասերը չգրեց, որովհետև չէր համ-

դուրժում կեղծիքը. հավատացել էր՝ անկեղծորեն, իհաս-
թափվել էր՝ անկեղծորեն, և բուն իրողությունը խորությամբ
ըմբռնելուց հետո ոչ թե նոր կեղծիքներ պիտի հորիներ, ինչ-
պես իր ժամանակի մյուս գրողները, այլ հենց պատմական
ծշմարտությունը գեղարվեստի լեզվով բացահայտելու հա-
մար պիտի գրեր «Գիրք ճանապարհին» և նրա մեջ՝ 1933-ի
«Սահման տեսիլը»։ Այս երկում արդեն Չարենցը եղեռնի
մասին խոսում է բարձրածայն, անկարելի ժամանակներում
ու պայմաններում հանդգնորեն ասում հայոց մեծ ողբերգու-
թյան մասին ծշմարտությունը, որ արգելված էր պետակա-
նորեն։ Այստեղ արդեն «Դանքեական առասպելի» մահվան
սարսափի հատուկենտ պատկերները չեն, այլ մի ողջ ժո-
ղովրդի բնաջնջման համայնապատկերը՝ կերտված այդ
ողբերգությունն իր ողջ խորությամբ ըմբռնող հանճարեղ
բանաստեղծի գրչով։ Այստեղ արդեն տեսնում ենք դանքա-
կանի որի՞շ ըմբռնում, որը նախորդի հակադրությունը չէ,
այլ խորացված, ընդլայնված պատկերացումը՝ «մտածու-
մի նավով» դեպի անցյալ ճամփորդելու, «աչքերը անցյալին
հառած»։ բայց և «ապագայի նժույգը նստած» բանաստեղ-
ծի՝ ներկայի համար անհրաժեշտ պեղումներ կատարելու
նպատակադրումով։ Այստեղ արդեն առարկայանում է
Դանտեն՝ «քարքարոս Վիրօհիլ» հետ միասին, և հանուն ա-
պագայի դեպի անցյալ երևակայական ճամփորդությունը՝
հայ ազատագրական շարժման գաղափարական առաջ-
նորդների ու պայծառ քերթողների, հայ արյունով դաշտեր
ոռոգող և հայ գանգերից երկնահաս բուրգեր կառուցած
«գեղին Արքայի»՝ սուլթան Համիդի ու նրա հաջորդների
կերպավորումներով, հայոց Եղեռնի, դեպի մահ ընթացաղ
բռնագարողների քարավանների դանքեական պատկերում-
ներով Չարենցը նոր սկիզբ էր դնում, ստեղծում այնպիսի
նախադրյալներ, որոնք նրա անմիջական հաջորդ Հովհան-
նիքազին պիտի տային նոր լիցքեր, Եղեռնը պատկերող
լայնակտակ շափածո երկ ստեղծելու նոր հնարավորու-
թյուններ։ Եղեռն հասկացությունը կոմունիստ Չարենցն

արդեն չի թաքցնում, ընդհակառակը, Դանտեի հետ ներկայանալով որպես մարդկության «երկու տարրեր հասակ», ընդգծում է այդ սոսկալի ողբերգության ահավորությունը՝ սերունդներին ճանաչելի ու հասկանալի դարձնելու համար նրա էությունը.

Սեր դեմից անցնում էին արդ մանուկներ մեռյալ և ծերեր,
Հաշմանդամ սերունդներ ամրող՝ Եղեռնի հմձանին ընծա...
...Սրածկած սերունդներ էին արդ անցնում, քաղաքներ քանդած,
Հեղեղի պիս պրծած զնում էր երկիր մի ամրող.-
Անցնում էր արմատից պոկած, անխնա կտրած մի անտառ,-
Սարսափած նախիրի նման՝ սպանդից փախած մի ամրոխ...

«Դժոխքի» հեղինակ Դանտեն՝ «Մահվան աշխարհի Վարպետը», սակայն, հայոց ողբերգության նկատմամբ որևէ վերաբերմունք չի արտահայտում: Իսկ այդ մութ անտառի մղձավանջից մարդկանց դուրս է բերում «ոսկեզօծ լապտերով» մի մարդ: Բոլոր հերոսները ծածկանուներով են, և նրանց հնարավոր է ճանաչել միայն հեղինակային բնորոշումներով: Ակնարկներից երևում է, որ այդ փրկարարը Լենինն է. նշանակում է՝ պոեմը գրելու շրջանում, իսկ այն թվագրված է «1933, 5-րդ 4», որ նշանակում է՝ Չարենցը դեռևս հավատում էր նրան, այդ պատճառով էլ «գեղին Արքայի» հաջորդները՝ արյունարրու Թալեարը, Էնվերը, Զեմալը, Քեմալը կերպավորված չեն, և Եղեռնի «դանթեական» այս ընկալումն էլ դեռևս պատմական ու գեղարվեստական լիարժեք ծշմարտությունը չէ: Սակայն Չարենցն իր երկերով ու «դանթեականի» իր ըմբռնումով արդեն ստեղծել էր գրական մի ավանդույթ, մի նոր սկիզբ, որը պիտի իր դրսւորումն ու զարգացումն ունենար գրական հաջորդ սերունդների ստեղծագործության մեջ:

Դանթեականի մյուս ըմբռնումը կապված է Հովհ. Շիրազի ամվան հետ: Արդեն կար չարենցյան նախօրինակը, բայց նրա ստեղծագործություններով՝ «Դանթեական առասպելով», անգամ «Մահվան տեսիլ» պոեմով Եղեռնի իրությունը դեռևս հնարավոր չէր ճանաչելի դարձնել ամրող

մարդկությանը: Ժամանակ ու հնարավորություններ, նոր հանգամանքներ էին պետք՝ նախ՝ շարենցյան ավանդները յուրացնելու և ապա՝ նույն թեմայով նոր խոսք ասել կարողանալու համար: Դրանք շուտով ներկայացան: Մարդկությունը նոր աղետների մատնվեց, նոր ողբերգությունների առջև կանգնեց երկրորդ համաշխարհային պատերազմով: Հիտլերյան Գերմանիան կրկնեց ընդամենը քառորդ դար առաջ իր դաշնակից թուրքերի կատարած ոճրագործությունը՝ ընդարձակելով զանգվածային մարդասպանության ու ցեղասպանության ծավալներն ու աշխարհագրությունը: 1941 թ. աշնանն արդեն գերմանական զորքերը հասել էին Հյուսիսային Կովկաս: Հիտլերի հրամանները հար և նման էին Համիդի, Թալենարի, Էնվերի, Քեմալի հրամաններին և գործադրվում էին նույն հետևողականությամբ: Բարի Յար կոչված քարածայոից, միշտ ու միշտ թուրքերի նման, ֆաշիստները անդունդն էին գլորել տասնյակ հազարավոր խորհրդային մարդկանց՝ առանց ազգության, սեռի ու տարիքի խտրականության: Ֆաշիստների այս և մյուս բարրարությունները Հովհ. Շիրազին հիշեցրին մոտիկ անցյալի հայոց կոտորածները, և նա այդ ժամանակներից սկսած, գրեթե մինչև իր կյանքի վերջը, «գանեթականի» նոր ըմբռնումով, սկսեց գրել իր պոեմը՝ ծգտելով իր նպաստը բերել հայոց եղեռնի համաշխարհային ճանաչմանը:

Զարենցի ստեղծագործական փորձն արդեն կար. «Դժոխքի» վարպետ Դանտեին հայ իրականություն բերելն ու նրա հետ միասին երևակայությամբ ամցյալում ճամփորդելը, ուրիշական հետ գրուցելով գեղարվեստական ճշմարտության բացահայտման նոր փորձը, սակայն, կճախողվեր առանց նոր ասելիքի: Շիրազի համար էլ Դանթեն հայր է, ուսուցիչ ու Վարպետ, բայց նրա կերպարաւմ խոացված են իտալական ժողովուրդն ու ողջ Եվրոպան: Նա իր մտքի ծնունդ «Դժոխքում», Վիրզիլիոսի հետ ճամփորդելով, պատկերել էր աստվածային պատժով պատժվածների հավիտենական տանջանքները: Հիմա անհրաժեշտ էր նույն

Դանտեին ու նրա հետ միասին հայ և համաշխարհային մեծությունների ոգիններին բերել հայոց Եղեռնի իրական դժոխքը, որ տեսնեն ու դատապարտեն մարդկության դեմ գործած առաջին ցեղասպանական ոճիրը և Ահեղ դատաստան աշխարհ բերեն: Չարենցի օրինակով՝ Հովհ. Շիրազն էլ դիմում է Վերածննդի դարաշրջանի նախասիրած բանաստեղծական ձևերին: Պոեմի առաջին տարրերակը հյուսված էր սոնետներով. հետագա վերամշակումների ընթացքում թեև այդ կարգը խախտվել է, սակայն իրատարակված տարրերակում պահպանվել են անխաթար մնացած ամբողջական սոնետներ: Հետևողական պարզապաշտ Հովհ. Շիրազն իր պոեմի բոլոր գլուխների սկզբում դրել է արծակ առաջարաններ, որոնք, շիրազյան բանաստեղծական արծակի բացառիկ հետաքրքիր նմուշներ լինելով, իրականացնում են բազմակի դեր. դրանք, Երկիր մոլորակի բոլոր ժողովորդներին, աշխարհի մեծ մարդասերներին ուղղված դիմումներ լինելով, ուղղորդում են պոեմի գործողությունների ընթացքը և հայոց ծանրագույն ողբերգությունը հեղինակի իսկ ծանրային բնորոշմամբ՝ ողբամունչ դատաստանամատյանում զնահատում որպես համաշխարհային երևոյթ: Այս երկում կերպավորված ոգինների խմբում են Հոմերոսն ու Մաշտոցը, Շեքսպիրն ու Խորենացին, Դանտեն ու Նարեկացին, Այվազովսկի Սեծ Հովհաննեսն ու Անդրանիկը, Բայրոնն ու Փոքր Հովհաննես հեղինակը: Վերջինիս պաղատանքով հայտնվում են բոլոր ոգինները և ճամփորդում Եղեռնի գիշերվա մեջ: Նպատակային այս «ուղևորությունը» կատարվում է մի գերագույն նպատակով. աշխարհի հին ու ներ մեծերի առջև բացվում է հայոց վշտի վարագույրը, պատկերվում է ցեղասպանության եղեռնադժոխը: Պատկերների հիմքում համբյան, երիտրութրական ու քեմալական շրջանների հայ իրականությունն է, որոնց ականատես ուրվականները սկզբում թերահավատ են, բայց տեսնելով իրողությունը՝ դատապարտում են ոճրագործներին: Այստեղ հնարավորություն չունենք անդրադառնալու

բոլոր ուրվակերպարմերին, իսկ Դանտեի կապակցությամբ պետք նկատենք, որ Նարեկացու հետ համաքայլ շրջող «Դժոխքի» Վարպետը սկզբում կարծես անտարբեր էր իր երկրի ու ողջ Եվրոպայի նման, բայց հայոց կոտորածների լարիրինքոսում նա աստիճանաբար ճանաչում է իրողությունը, ըմբռնում ծշմարտությունը Եղեռնի մասին: Իր «Դժոխքում» մեղավորներն էին տանջվում, այստեղ՝ ամենդեռը և այն էլ այնպիսի զարհուրատեսիլ ծներով, որ իր երևակայությունից վեր էր: Լուս ու անխոս ոգին հայոց դժոխքի պարունակներով անցնելիս ու ոճրագործների աներևակայելի պատժածները տեսնելիս աստիճանաբար շորթերն էշարժում, ցավից մեջքն է ծռվում, աչքերը շաղվում, խելահեղվում է և զարհուրած փախչում դեպի քավարան, որովհետև տեսնելն անգամ մեղք էր, ուր մնաց գործելը: Հեռացող Դանքեն դատապարտում է իր ազգի լուրջունը.

Ես նզովում եմ նրանց, որ երեկ
Գործով են մրցնել գրած դժոխքին,
Ես նզովում եմ լուրջունն ազգիս...,-
Ասաց ու գնաց իր խղճին ելու
Դանքեն՝ իր աչքի մեղքը քավելու:

Եվ սրանից հետո բանաստեղծի դատապարտող խոսքը ձեռք էր բերում մեծ կշիռ ու արժեք.

Ով լիբր լուրջուն...Ու լուսմ են, տե՛ս,
Հյուսիս՝ իր հավերժ սառույցների պիս,
Արևելք՝ ինչպես ծուխն իր դեյլանի,
Արևմուտքն՝ ինչպես պոռնիկն անսահման...
Այնինչ, ով աշխարհ, թե քա լրինի
Այս չորս քերանով գոռայիր մի հեղ՝
Պատյան կքաշվեր քուրը սուլքանի,
Չեր հորդի դժոխքն այսքան խելահեղ,
Սի բուռ չեր մնա ծովից՝ ազգը մեր...
Ով ժաման մարդկություն, վիշապ օճաքիստ,
Դահիճ լուրջուն, քա՛ծ դու անտարբեր,
Ո՞նց էիր հացդ կուլ տապիս հանգիստ,

Երբ մի ողջ ազգ էր գլխատվում անտեր,
Ու մահիկի պես նայում էիր վար՝
Թե ոնց են ճռում մեզ կախաղանին:
Նայում էր աշխարհն, ասես հիանում՝
Թե ոնց էր անզոյգ մի ազգ չքանում:

*Մեր մեծ ողբերգության հանդեպ աշխարհի լուսության
դեմ է ուղղված չարենցյան ներշնչումներով գրված «Հայոց
դանքականը»։ Դանքեի և աշխարհի մեծերի դատապար-
տող խոսքը կարող էր խթան դառնալ ժայռե լուսության
ապառաժը շարժելու, եղեռնը ճանաչելու և ցեղասպանին
դատապարտելու համար։ Չմոռանանք, որ այս դատաստա-
նամատյանը գրելու ընթացքում դեռ ոչ մի ազգ ու պետու-
թյուն չէր ճանաչել ցեղասպանությունը։ Հիմա՝ է այն լայն
քափ առել, և ավելի շուտ կիրականանար, եթե պոեմը քարգ-
մանվեր ու որպես վավերագեղարվեստական ապացույց
դրվեր մարդկության սեղանին։*

ՍԵՅՐԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԵՂԻԾԵ ԶԱՐԵՆՑ ԵՎ ՊԱՐՈՒՅՔ ՍԵՎԱԿ

Հայոց լեզվում կա մի բառ, որի դիմաց բացատրական բառարաններում առկա է «հազվադեպ» նշումը: Դա «դառնապատճիր» բառն է, որ նշանակում է դառնորեն խարող:

Գրեքե անգործածական, անզամ հայկազյան բառգրում չընդգրկված այդ բառը, սակայն, «Գիրք ճանապարհի» հատորի «Տաղեր և խորհուրդներ» շարքում նրբամտորեն և արտիստիկ հնչերանգով օգտագործել է Եղիշե Չարենցը, այն էլ ոչ թե մեկ, այլ երկու անզամ: Առաջինը «Տաղ՝ ձոնված մեռյալներին» բանաստեղծության սկզբում է.

Տիսրությամբ ու դառնապատճիր ցավով ենք ձեզ դնում
ճանապարհ,
Ո՞վ անդարձ հեռացողներ, ո՞վ մեռյալներ...

Երկրորդը դարձյալ սկզբնամասում է «Յորք խորհուրդ գալիքի երգասաններին» քերթվածի:

Բազում ուղիներով ու հերկերով անցած,
Եվ ճաշակած արդին իմաստության
Ռառնապատճիր պտուղը, - ահա տալիս եմ այս
Խորհուրդները ես ձեզ, ո՞վ մեր վաղվա անհաս
Երգասաններ փառի ու վեհության ...

1934 – ին լրացաշխարհ եկած և շատ շուտով Չարենց անվան հետ խավարին հանձնված այս վեհաշուք բառը, բվում է, գոնե մի քանի տասնամյակ պիտի մատնվեր մոռացության: Բայց Չարենցի եղերական մական հինգ հինգ տարի էլ շանցած՝ «Սովետական գրականություն և արվեստ» ամսագրում «Անխորագիր» վերմագրով տպագրվում է տասնութամյա ուսանող Պարույր Ղազարյանի առաջին բանաստեղծությունը, որի մեջ կան այսպիսի տողեր.

**Գիտեմ, որ մահը շուայլ է այնտեղ
Իր դառնապատիր գգվանքների մեջ ...**

Դառնապատիրը՝ Զարենցի հանճարեղ բառերից միակը չէ, որ հանդիպում է Պարույր Սևակի ինչպես վաղ, այնպես էլ հասուն շրջանի գրականության մեջ: Ավելին, նրա ստեղծագործությունը ցուցահանում է հատակորեն արտահայտված չարենցյան ծագումնաբանություն, որի ծշզրիտ ձևակերպումը գրականագետների քորով նշմարներից առաջ տվել է ինքը՝ Սևակը. «Իմ առաջին փորձերը գալիս են Զարենցից ...»: Ընդ որում, գրականությունների համաշխարհային պատմությանը հազիվ թե ծանոթ է նման երկրորդ դեպք, երբ ժառանգորդը հայտնվում է ավանդատուից անմիջապես հետո՝ տարացիորեն չորս – իինգ տարի անց: Զարենցին զլսատող ուժը երևակայել անգամ չէր կարող, որ արգելանքի ու քվացյալ անհայտության մեջ սուլվելու փոխարեն չարենցյան հատիկը ընկնում է հողի մեջ և բազում արդյունք առնում՝ վերստին հաստատելով ավետարանական առակի ճշմարտությունը:

Եղիշե Զարենց - Պարույր Սևակ աղերսը բազմաբարդ իրողություն է և բնորոշվում է ինչպես ծագման ու զարգացման օրինաչափություններով, այնպես էլ հակասություններով: Դրանց կիզակետն այն է, որ Զարենցը ավարտում է տերյանական շրջանի պոետական միզամածության, սիմվոլիզմի և ֆուտուրիզմի հաղթահարումը մի յուրօրինակ նեռասականությամբ, իսկ Սևակին բաժին է ընկնում չարենցյան դասականության արոհումը սյուրբալիզմի տիրապետության դարաշրջանի թելադրած արդիապաշտ եղանակներով: Այս իմաստով քննվող կազմը ոչ զտարյուն համաձայնություն է, ոչ էլ բացահայտ հակառապություն, այլ երկուսի բարեխառնությունը, ավելի ստույգ ասած, դիալեկտիկական համադրությունը:

Սևակը սկզբից մինչև վերջ հետևում էր այն երկու սկզբունքներին, որ հատակորեն ձևակերպել է Զարենցը դեռևս 1926 քվականի ոուրայաբում: Նա նույնպես իրեն

համարում էր ոչ թե սկիզբ, այլ օդակ. և զիտեր, որ հաստատումը և ժխտումը միշտ գործում են միասին: «Եվ ինձ ժխտելով՝ ինձ կհաստատեն» կտակը՝ ուղղված գալիքի բանաստեղծին, դրա բանաձևային բնորոշումն է, որ գոեքե կրկնարանում է Չարենցի հայտնի ոռորայիռում ասվածը.

Դու մի օր աչքերդ կփակես, որ ուրիշը քո տեղ գոյանա.

Կզնաս, կանցնես աշխարքից, որ ուրիշը քո տեղ գոյանա:

- Այն դու՛ ես, իմաստու՛ն, այն դու՛, - բայց արդեն դարձած

մի ուրիշ.

Հաստատեց, ժխտելով նա քեզ, որ ուրիշը քո տեղ գոյանա:

Բազմաթիվ են քննվող կապի թե՛ արտաքին - փաստական, թե՛ սքողված բնագրային դրսնորումները: Արտաքնապես կարծես թե ամեն ինչ տեսանելի է: Պատաճի Պարույր Ղազարյանը դպրոցում կարդացել է Չարենցի գործերը Հ. Սուրխարյանի «Գրական գոհարներ» գրքից, տպավորվել նրա այն բնորոշմամբ, թե Չարենցի մոտիվները միջազգային են, իսկ հորիզոնը ամբողջ աշխարհն է:

Իմացել է Աղ. Խանջյանի գնահատականը, ըստ որի՝ Չարենցը հայ գրականության ողնաշարն է: 1937 թ., լսելով Չարենցի մոտալուս արգելման լուրը, դպրոցի գրադարանից գողացել է «Գիրք ճանապարհին», տարել տուն և կարդացել: Չարենցով, ավելի որոշակիորեն՝ «Գիրք ճանապարհի»-ով է հագեցած 1942 թ. օգոստոսին Չանախչից Հովի. Ղազարյանին հղված գրույրունը, որ նամակ լինելուց ավելի ստեղծագործական հանգանակ է:

Հետագա տարիներին և Չարենցը շարունակում է չափանիշի, ինքնաստուգման միջոցի դեր կատարել Սևակի համար: 50-ական թթ.՝ արգելանքը վերացվելուց հետո, Ուգինա Ղազարյանի խնդրանքով նա մասնակցում է հողի տակից հանգած չարենցյան ճեռագրերի վերծանմանը, դրանց փրկչի վկայությամբ՝ կռահում շատ դժվարընթեռնելի տեղեր:

Չարենցի 70-ամյակի օրերին Սևակը եռադրվագ ծանրակշիռ մասնակցություն է ունենում մեծ բանաստեղծի

գրական ու գիտական ճամաչման գործին: Առաջին՝ կազմում է Զարենցի քնարերգության հատընտիրը, երկրորդ՝ հանդես է գալիս «Ե. Զարենցը և արդիականությունը» գեկուցմամբ, երրորդ՝ մաս է կազմում Զարենցի երկերի վեցհատոր ժողովածուի չորրորդ հատորի խմբագրական կազմին և, ժամանակակիցների վկայությամբ, էական դեր խաղում «Գիրք ճանապարհին» պարունակող այդ հատորը ճակատագրի նոր հարվածներից փրկելու, այլև այն քնարագիտական պատշաճ տեսքով պատմությանը հանձնելու գործին:

«*Habent sua fata libelli*» - «Գրքերն էլ ունեն իրենց ճակատագիրը» լատինական քնակոր խոսքը, որ Զարենցից ոչ պակաս սիրում էր հնչեցնել *Սևակը*, հիրավի ճակատագրական իմաստ է հաղորդում «Գիրք ճանապարհի»-ի հետ Պարույր *Սևակի* հոգևոր հաղորդակցությանը:

Զարենցի հատորը լժակիցների հետ միասին փրկելուց մեկ - երկու տարի անց սկսվում է այս անգամ *Սևակի* ճանապարհի գրքի՝ «Եղիցի լույսի» չարչարանացը: Մատնությունների, խարդավանքների, սովետա-հայկական նեղճակատության և փարիսեցիության թանձրացումները, որ հարև և նման էին 1933 թ. դրսևարումներին, *Սևակին* մղում են հուսահատության և զղախախտումի, որոնց ներգործությամբ նա ևս հրաժարվում է աշխարհային թվացյալ պարզեցներից (օրինակ՝ մոսկովյան համագումարին մասնակցելուց), ինչպես Զարենցն էր ժամանակին հրաժարվել գրողների միությանը անդամակցելուց: «Գիրք ճանապարհին», ինչպես իիշում ենք, փրկվեց միայն «Աքիլե՞ս, թե՞ Պյեռ» ինտերմետիայի գեղջումով: Վերջինս նաև *Սևակի* ջանքերով դեռ նոր էր առաջին անգամ հանձնվել լույսին, երբ շուտով արդեն իր՝ *Սևակի* գիրքը ենթարկվեց այլնայլ գեղջումների: Բայց այս անգամ նույնիսկ դրանք ի զորու չեղան փրկելու գիրքը, և *Սևակը*, ի տարբերություն ուսուցչի, այդպես էլ չտեսավ իր վերջին գիրքը:

«Եղիցի լույսը» և «Գիրք ճանապարհին», անշուշտ, մեր-

Ժակցություն ունեն նաև հենց իրու գրքեր՝ բնագրային – ստեղծագործական առումով։ Դրա քննությունը առանձին ճերկայացվելիք նյութ է։ Իսկ մինչ այդ նկատենք, որ «Եղիշի լույսից» համված որոշ կտորներ, որ երկար ժամանակ մնացին անտիպ, ապշեցուցիչ նմանություն ունեն «Գիրք ճանապարհի»-ից հետո Չարենցի գրած և երկար ու ճիզ տասնամյակներ անտիպ մնացած գործերի հետ։ Բերենք միայն մեկ օրինակ։ Սա Չարենցի բանաստեղծությունն է։

Երբեք չի եղել այսքան միայնակ
Մարդը իր կյանքում ու շրջապատում,
Որքան այս կտես արեգակի տակ,
Երբ կառուցում ենք կարծես աշխարհում
Այնպիսի մի կյանք, որ սիրառ մարդու
Մարդկանց հետ պիտի լինի զվարքուն ...

Ահա և Սևակի «Մանկական ճոճք» բանաստեղծության վերջնամասը.

Ո՛չ մի ժամանակ,
Ո՛չ մի ժամանակ,
Մենք այնպես մենակ ու մենիկ չենք,
Ինչպես որ հիմա,
Երբ միասին ենք բոլորս առավել,
Քան թե որևէ ուրիշ ժամանակ ...

Բերված հատվածների նմանությունը կարող է լինել դիպվածային, կարող է նաև հետևանք լինել Սևակի կողմից շարենցյան ճեռագրերին լավ իրազեկության։ Ամեն պարագայում ակնհայտ է ինչպես երկու բանաստեղծների, այնպես էլ նրանց վերջին մատյանների ճակատագրական հարազատությունը։ Ավելին, դժվարը մբռնելի ինչ – որ ընդհանրություն կա նաև Չարենցի ու Սևակի մահերին հաջորդած, այսպես ասած, հետմահու ճակատագրերի միջև։ Նախ, Եղիշե Չարենցը և Պարույր Սևակը թերևս ամենից շատ ամափաներ բողած հայ բանաստեղծներն են։ Բայց որ ավելի էական է, նրանց այդ մեծածավալ ու արժեքավոր ճեռագրե-

բը անշափ դժվարությամբ և մեծ ուշացումով են հասնում քննիչներցողին, հասնելու դեպքում էլ ենթարկվում են համանման փորձությունների, անդամահատումների և աղավաղումների: Այս պարագայում արդեն ողջամիտ քննիչներցողի և մասնագետի հույսը կարող է լինել ամենազոր ժամանակը և այն հուսադրող վիրտուալ ճշմարտությունը, որ հնչում է բուզակովյան հերոսի շուրջերից: «Զեռագրերը չեն այրվում»:

Գրականագիտական տեսանկյունից առավել նույր հետաքրքրություն են ներկայացնում քննագրային կապերը՝ Չարենցի քննագրից Սևակի գործերի մեջ ներթափանցող իմաստային, ժամրային, կառուցվածքային և ոճական միավորները: Դրանք հայտնվում են հենց սկզբից՝ 1942 թ. գործերից և որոշ քննիչատումներով և կերպավոխություններով գործում մինչև վերջին գործերը: Առավել մեծ ուշացության է արժանի վաղ շրջանի սևակյան քննագիրը՝ որպես սկիզբ, որ մի կողմից ավելի անխաքար է պահում շարենցյան վերիշումները, մյուս կողմից՝ կանխորոշում է ուղեգծեր, որոնք թեկուց և նվազած ու փոփոխված՝ արտահայտություն են գտնում հասուն շրջանի սևակյան չափածոյություն:

1942 թ. օգոստոսյան հայտնի նամակում պատանի քանաստեղծը շուրջ երկու տասնյակ մեջքերումներ ու հղումներ է անում Չարենցից: Դրանք հանգամանորեն մեկնաբանվել են սևակագիտական գրականության մեջ: Այստեղ արժե քննդել միայն, որ քաղաքերումներն արված են Չարենցի տարրեր գործերից՝ «Ծիածան», «Էպիքական լուսարաց» և հատկապես «Գիրք ճանապարհի»: Հետաքրքրական է նաև հաստատումի և Ժմանումի երկմիասնությունը: Մի կողմից՝ Սևակը Չարենցով ինքն իրեն ստուգում և համոզվում է, որ ինքը քանաստեղծ է, որ «մի անտես նետ» է քերել և ձգտում է դեսպի «մշանի ահազնությունը»: Մյուս կողմից՝ պարզաբանելով ժամանակի և տարածության վիճակական ըմբռնումը՝ «ժամանակի շունչը դատնալու» խնդրի տեսանկյունից՝ Սևակն իր համար ավելի հմայիչ ու ընդունելի է համարում «վերջին շրջանի Չարենցը, քան սկզբնական շրջանի Չարենցը»:

Եվ հենց վերջին շրջանի Զարենցն էլ ըստ ամենայնի մասնակցում է պատանի բանաստեղծի պոետիկայի և գեղագիտության գոյափորմանը: Ամենասկզբունքային դասերից մեկը Զարենցի գերհարուստ, բազմանիստ ժանրային համակարգի փոխանցումն է: «*To be or not to be (Լինել թե չլինել)*» ծրագրային բանաստեղծությունը Սևակը ենթավերնագրով ճևակերպել է որպես «Նամակ բարեկամիս՝ գրված պոետական և աշխարհագրական հեռուներից»: Զափածոն նամակի այս ժանրաձևը կարող էր ծագել բացառապես Զարենցի չափածո թղթի տեսակից և շարակայտորեն կրկնարանում է «Թուղթ բանաստեղծ բարեկամիս՝ N. N-ին, գրված Երևանից» և «Թուղթ Ակսել Բակունցին, գրված Լենինգրադից» դարձյալ ծրագրային – խոհական հանգակոր նամակների վերնագրերը:

Նման հղումները չափազանց շատ պիտի լինեին Սևակի առաջին՝ «Մահվան Վեներա» գրքում, որը բացվում է իիշյալ չափածոն նամակով: Արդեն Զանախչից գրված իրական նամակում հանգամանորեն ներկայացնելով գրքի պլանը՝ Սևակը կատարում է Զարենցին միտող ևս մի քանի քայլեր: Առաջին՝ «Խոռվթի երգեր» շարքում ինքը պիտի ճգտի լրիվ դասնալ «ժամանակի շունչը»: Երկրորդ՝ «Մահվան Վեներա» «ցիկլի վերջում դրված կլինի նույնանուն պոեման», որ, ըստ Սևակի, մի յուրատեսակ «Ամենապոեմ» է: Միջանկյալ նկատենք, որ մոնուննտալ պոեմի այն ճևը, որ Զարենցը մշակեց «Ամենապոեմում», առհասարակ էական տեղ է գրավում պոեմի ժանրի սևակյան համակարգության մեջ և նույր բափանցումներ է ունեցել, ասենք, «Անլի զանգակատան» բազմաշերտ կառույցում: Առհասարակ Զարենց – Սևակ ժառանգորդական կապի առանցքներից մեկը պոեմի ժանրի զարգացումն է: Նկատենք նաև, որ Սևակը գրելիք նոր «Ամենապոեմի» բովանդակությունը բնորոշում է Զարենցի գործի սուրխաթյանական բանածեռուով: «Այստեղ իմ մոտիվները կլինեն միջազգային, և իմ հորիզոնը կլինի համաշխարհը»:

«*Requiem*» վերնագիրն էր կրելու Սևակի առաջին գրքի իինգերորդ շարքը, վերնագիրը, որ շատ սիրելի էր Զարենցի համար (այդպես էր վերնագրված «Երեք երգ տիրադալուկ աղջկան» գրքի մի երգը, և այդպես էր խորագրվել «Կոմիտասի հիշատակին» պոեմը, թեև վերջինիս մասին Սևակը դեռ չգիտեր): «Մահվան Վեներա» գրքի վերջում Սևակը պիտի դներ «Ուղերձ առ քննադատն» գործը վերջերգի փոխարեն: Թե՛ վերնագիրը, թե՛ հղացումը ակնհայտորեն կրում են չարենցյան դրոշմը: Գիտենք, որ քննադատներին չափածոյախոսությամբ հաճախակի դիմող Զարենցը «Էպիքական լուսաբացի» շարքերից մեկը ավարտում է «Ներքող առ քննադատն» գործով: Սևակի մոտ «ներքողը» փոխարինվել է «ուղերձով», որ դարձյալ գրեթե բացառապես չարենցյան է. «Տաղեր և խորհուրդներ» շարքի որոշ գործեր կրում են հենց «ուղերձ» ժանրանվանումը:

Վերջապես, իր ամբողջ հղացումով և ստեղծագործական պլանով Սևակի երազած «Մահվան Վեներա» գիրքը բանաստեղծական հատուկ ժանր է, շարքերի ներքին և արտաքին փոխկապակցությամբ ապրող ամբողջական սիմֆոնիա, որպիսին հայ պոեզիան տեսել էր միայն Զարենցի վերջին երկու գրքերի՝ «Էպիքական լուսաբացի» և «Գիրք ճանապարհիի» մեջ և ավելի քան քառորդ դար հետո պիտի տեսներ «Մարդը ափի մեջ» և «Եղիցի լուս» գրքերում: Բանաստեղծական բնագրին տիրապետելու, զաղափարները բանաձևելու գործում պատահի Սևակին Զարենցը օգնության է գալիս նաև խիստ ուղղակիորեն՝ շարահյուսական կաղապարներով, բառաձևերով, բառացիորեն համընկնող արտահայտություններով:

«Այդ մենք ենք գալիս» բանաստեղծության մեջ Սևակը օգտագործում է «գալիքի սերմնացաններ» չարենցյան համահայտ բառակապակցության «ապագայի ... սերմնացաններ» տարրերակը.

Հանել էիր դու լայն աշխարհներում անծիր
Ապագայի հազար, բյուր սերմնացաններ ...

Ճիշտ է, պոետական մուտքը կազմող երգերում առկա են նաև բառային քաղումներ այլ բանատեղծներից, մասնավորապես Պետրոս Դուրյանից (օրինակ՝ «որ չզգունի Եվ կանաչի ծառը իեզ Սարդկության»), սակայն և՛ քանակական, և՛ հնչերանգային տպավորության առումով գերակշռում են ինձն չարենցյան տեղիները։ Վերջիններս մի ամբողջ շարք են կազմում սոնետներում։ 7-րդ սոնետի երկրորդ տողով («Մայր է մտնում արևն ահա արևմուտքում») Սևակը գրեթե բառացի կրկնաբանում է «Ամրոխները խելազարված» պոեմի հայտնի տողերը («Արևը, բորբ՝ մայր էր մտնում արևմուտքում», «Մայր էր մտնում իրիկնային արևը՝ թեժ լույսով վառված» և այլն)։ 11-րդ սոնետի վերջին եռատողում Սևակը օգտագործում է «արև ու գարուն» արտահայտությունը։

Եվ միշտ ունկնդիր մոլի ամպերի մոլուցքին
Իմ զագաքները տեղա անձրևը վարարուն,
Եվ միշտ հմայեն երգերիս արև ու գարուն ...

Այս կիրառությունը աղոտ կերպով արքնացնում է հիշողություն Սեծարենցին վերաբերող չարենցյան տողերի մասին։ «Արև է երգել ու գարուն»։ Եվ ահա մի քանի էջ անց՝ 15-րդ սոնետում, որ Դուրյանին նվիրված երեք սոնետներից մեկն է, Սևակը նրա մասին խոսում է ճիշտ Չարենցի այդ բառերով՝ Սեծարենցին բնորոշող նրա թևակոր արտահայտությունը վերագրելով Պետրոս Դուրյանին։

Օ՛, ոքքա՞ն ցավեր ու կսկիծ է ամբարել,
Օ՛, ոքքա՞ն նրանուր, ոքքան խո՞ր ու խորունկ,
Այս հիվանդ, մխացող պատանին հանճարեղ ...

Բնագրային այս նմուշները քաղված են Հովհ. Ղազարյանի կազմած «Պարույր Սևակ, Սուտք» (Ե., 1985) գրքից, որը, լինելով հանդերձ սևակյան վաղ չափածոյի անտիպ հատվածի առաջին ծավալուն հրատարակությունը, երբեմն կասկած է հարուցում ծեռագրի վերծանումների հավաստիության առումով։ Այսպես, 19-րդ սոնետի վերջում տեղ է

գտել ծրագրային մի խոհ, որ ոգով ու ոճով հարազատ է «Էպիքական լուսարացի» խոհերին.

- Սոլորյալ պոետ, նայիր միջտ առաջ և բարձր նայիր,
- Վազել կարող ես – միշտ վազեր առաջ, քքած զրկանքին,
- Վազել չես կարող - գոնե առընչիր դարդիդ ընթացքին ...

Թվում է՝ վերջին երեք բառերը կրում են չարենցյան պատգամախոսական հնչերանգի դրոշմը, այն վերապահությամբ, որ «գարդ» բառը ամենեւին հարիր չէ ոչ սոնետին, ոչ էլ առհասարակ Սևակի պոեզիային: Ծանոթ չիմելով ինքնազրին՝ ենթադրում ենք, որ բանաստեղծը գրել է «առընչիր դարդիդ ընթացքին»՝ գործածելով ուսուցչի ոճարանությունը և հատկապես «Էպիքական լուսարացում» խիստ հարգի «գար» բառապատկերը:

Պատահական չէ, որ եենց հաջորդող սոնետում «հյութեխ»՝ լուրյանական թվացող արտահայտությանն առընթեր Սևակը հղում է կատարում Մայր Բնությանը, որ ակնհայտորեն կրում է բնությանը ծոնված չարենցյան հաճարակայտ տաղի «Օ՛, Բնություն, օ՛, Մայր» տողի ազդեցությունը.

- Ողջույն Ձե՞զ, ո՞վ Մայր Բնություն, արքա հյութեխ,
- Տու՛ր հալածական ուժերին ամպրոպ ու ցասում,
- Եվ զորություն տուր, կորով տուր բոլոր բույլերին ...

Ակմիայտ է հարազատությունը և՝ հասկացությունների մեծատառումով, և՝ երկխոսային դիմելածնով, և՝ ոքքան էլ զարմանալի թվա, իրեն Բնության հյուկեն համարելու բանաձնումով (Չարենցի տաղի վերջում առկա են «Հնդունիքի ճակ այս երգը գորովական / Որ քո չնշին հյուկեն մի գիշեր աստղալից / Մատուցեց քեզ սիրով ու որդիաբար» տողերը):

Չմոռանանք, որ վերջին հղումը, ինչպես և «ապագայի սերմնացանների» հիշատակությունը կապված են պատանի Սևակի գրադարանի «քաքուն զարդը» կազմող «Գիրք ճանապարհի» հատորի «Տաղեր և խորհուրդներ» շարքի հետ, և նույն գոքին է հղված նաև «հիվանդ, հանճարեղ

պատաճի» շրջասության քաղաքերումը:

35-րդ սոնետի վերջնամասում, արդեն բոլորովին այլ շարակարգության մեջ անդրադառնալով ալեզարդ պապի կերպարին, Սևակը բնագրային հիշողության մղումով դարձյալ Չարենցի նման ողջունում է Մայր Բնությանը.

- Օ՛, Մայր Բնություն, անտանջանք կյանքը սուզ է,
Ողջույն: -

«Սոնետներ» շարքի առանցքային մոտիվներից մեկը կազմող ծրագրային խոհերք դարձյալ մերքընդմերք հարուս են «Էպիքական լուսաբացի» գեղագիտական խոհերին: «Թուլք բանաստեղծ բարեկամին՝ N. N.-ին, գրված Երևանից» չափածո նամակում տեղ է գտել պոետական խնդրի լուծման «պարզ - բարդ» հանրահայտ երկմիասնությունը.

Հարկավոր է ճուլվել դարին,
Ասում եմ ես ... Քայց կա՞ արդյոք
Այդքան անհուն ու դժվարի՞ն,
Այդքան թե՛ պարզ, թե՛ բարդ մի գործ:

37-րդ սոնետում Սևակը կիրառում է ընթերցողին դիմելու՝ Չարենցի հասուն գրքերից հայտնի մոտիվը և պոետական արարումը գուգադրելով արևի շուրջը երկրի կատարած պտույտի հետ՝ երևույթը վերստին բացատրում է «և՛ պարզ, և՛ բարդ» լեզվական ձևակերպումով.

Պարզ է այնքան, - ասացի ես զոհ ու հպարտ, -
Այդ պատույտի նման, սակայն նույնքան և բարդ ...

Իսկ ահա վերջին, 40-րդ սոնետը խորհրդանշական և շատ իմաստալից կերպով սկսնակ բանաստեղծին դարձյալ վերադարձնում է «Գիրք ճանապարհի» պատկերաշխարհը:

Դեռևս 20-ական թվականների վերջից Չարենցի պոետիայում սկսում են ծանրակշիռ տեղ գրավել Գյորեի արվեստն ու փիլիսոփայությունը: Էպիգրամներում, ուրայիններում, զանազան բանաստեղծություններում ձևավորվում է

մի փիլիսոփայական գրույց, որը պայմանականորեն կարելի է բնորոշել հենց Զարենցի վերնագրով՝ «Պատասխան Գյորեին»: Դասականության ոլորտը մտած բանաստեղծը քաղվածքներ է անում մեծ վայմարցուց, բարգմանում տողեր և գործեր, ստեղծում վարիացիաներ, բայց այդ ամենը միշտ կապում է իր փորձի և նպատակների հետ, Գյորենը ստուգում ու զնո՞ւմ իմքն իրեն: Ընդ որում, Գյորեի հետ գրույցները ընդգրկում են նաև նշանավոր «Ֆառուսը» և նրա հերոսներին:

«Գյորեից» և «Պատասխան Գյորեին» զուգամիասնությունը բանձր նստվածք է տալիս և ավարտին հանգում հենց «Գիրք ճանապարհիի» վերջնամասում՝ «Իմացության գրքում» (թեև վերջին տարիներին և Զարենցը դիմել է ոլիմպացուն):

Եվ ահա «Գիրք ճանապարհին» մինչև ուղնուծուծը յուրացրած պատաճի Սևակը «Սոնետներ» շարքը ավարտում է Գյորեից քաղված մի բնարանով. «Թշվառ Ֆառուս, ես քեզ էլ չեմ ճանաչում ...»: Իսկ անմիջապես հետո միշտ Զարենցի նման դու - ով դիմում է գերմանացի բանաստեղծին (կամ նրա հերոսին): Բանաստեղծությունը ներկայացնում է մի յուրօրինակ «Պատասխան Գյորեին» և մտքի կառուցվածքով ակնհայտորեն կրում է չարենցյան դիմումների խոհական տարերքը.

Իմ կյանքի դեմ օրերն ահա նահանջում,
Օրերն ահա նահանջում են անշտապ.
Անցնում են իմ երազները ջերմ ու տաք,
Ու ես նոր եմ, ես նոր եմ քեզ ճանաչում

Երր մանկական իմ բողբոջն էր կանաչում,
Կարո՞ղ էի հասկանալ ես միքն քեզ ...
Ու քա մտքի անձայրածիր կանաչում
Սահում էին երազներն իմ կապտակեզ:

Երիտասարդ տարիքի մեջ երր անցա,
Նորեն մատով շոշափեցի հսկայիդ
Ու զգացի պատկառանք ու ակնածանք ...

**Նստել եմ ա՛րդ հասունության իմ գահին,
(Թեկուզ դեռ չեմ տեսել տասնինը գարուն),
Սակայն արդեն ճանաչում եմ հսկայիդ ...**

Բնագրային ընդգծված «հիշողություններ» են պարունակում նաև Սևակի պատանեկան քնարի՝ շարքերից դուրս գտնվող բանաստեղծությունները։ Մեզ հայտնի առաջին գործերում առնչության եզրը պոեզիայի որպիսությանն առնչվող գեղագիտական բանածեռումներն են, որոնք շատ կողմերով ածանցված են «Էպիքական լուսարացի» հանգանակներից։ Մասմավորապես, «To be or not to be» բանաստեղծության մեջ Սևակը ոչ միայն ենթավերնագրով կրկնարանում է «Ժուղութ բանաստեղծ բարեկամիս՝ գրված...» վերնագրային – շարահյուսական կաղապարը, այլև կիրառում է Չարենցի զույգ չափածո նամակներում հնչած «իմ բարեկամ» կոչականը և «հանգավոր նամակ» ժանրային բնորոշումը։

Վերիշենք «Ժուղութ Ակսել Բակունցին, գրված Լենինգրադից» նամակի սկզբունքը։

**Իմ սիրելի Ակսել, չե՞ն մոռացել ես քեզ
Ահա նստած այստեղ, այս խստաշունչ հեռվում,
Մտարերում, հիշում, - ու, տե՛ս - գրում եմ ես
Քեզ հանգավոր նամակ։**

Ահա և մի հատված սևակյան չափածո նամակի սկզբանասից։

**Ես – սրտիս մեջ Դարի տառապանքը և
հանճարի շունչը դարերի,
Ես – տրտմաքախիծ, ինչպես օրը արկից առաջ
և խնդրությամբ ցամաք,
Այս խավար գիշերին երկունքի նստած՝ հայացքը
դեռ անհայտ արևին,
Երկունքից առաջ, բարեկամ, չափավորում եմ
խոռվոն իմ հոգու և հանգավորում
որպես քեզ նամակ։**

Վաղ Սևակը շարենցյան փորձին մերձենալու որոշ միտումներ է դրսևորում նաև պոեմի ժամրում: Որքան հայտնի է, Սևակը չի գրել «Մահվան Վեներա» պոեմը, որ պիտի լիներ մի յուրատեսակ «Ամենապոեմ», «Յօնա և մոր» կամ «Լուսին»: Հետաքրքիր է, սակայն, որ գրված և պահպանված երկու պոեմներում էլ անուղղակիորեն առկա է շարենցյան արծագանքը: Հատվածաբար պահպանված «Allo Մայակովսկի» պոեմը ուշագրավ է արդեն իսկ նրանով, որ Չարենցը նույնպես իր պոեզիայի (հատկապես պոեմի) որոշ հանգուցային դրվագներ ստուգում էր Մայակովսկու փորձով: Իսկ ահա «Լուսին» պոեմի հատվածները վկայում են, որ իր առաջին ծավալուն պոեմում պատաճի բանաստեղծը ընդիանուր առմամբ գտնվում է շարենցյան պոեմի՝ «Դաճքեական առասպելից» մինչև «Ամենապոեմ» ճգվող ժանրային տիրույթում: Մերձակցության եզրերն են պատերազմի բարբարոս ուժի բանաստեղծականացումը, աշխարհը կործանող դիվային ոգիների սիմվոլացումը, մոնումենտալ – մասշտարային կառուցվածքները: Մրանց առջնիքը պոեմի սողերում առկա են Չարենցի որոշ բնագրերի մերձեցող բառային և շարակայտական ծևակերպումներ. «ծաղիկները վառման» արտահայտությունը հիշեցնում է «ծաղիկների ու վարդերի բույրը վառման» հայտնի կապակցությունը, իսկ «Որ ողջ աշխարհը՝ Նյու – Յորքից մինչև Հրազդան, Լոնդոնից մինչև Հնդկաչին, Դառնա, գիտե՞՞ք ինչ ... մի ռասա» հատվածը և «բու՛մ, բու՛մ, բու՛մ» բաղաձայնույթը խիստ որոշակիորեն մոտենում են «Ամենապոեմի» բնագրին:

Այսպիսով, արդեն տասնութ տարեկանում Պարույր Սևակը բազմաթիվ և տարակերպ բնագրային քաղումներ է անում Եղիշե Չարենցի պոեզիայից: Այսքանը կարծես թե լիակատար իիմք է, որ տասնամյակներ անց Սևակը խոստովանի, թե ինքը «հապարտություն ունի իրեն համարելու Չարենցի հոգևոր որդիներից մեկը»: Իսկ որ վերջինս ոչ թե հարգանքի տուրք է, այլ պոետական գործումնեության իիմավորված ինքնազիտակցում, վկայում է այն, որ նույն 1967

թվականին արդեն կայացած անհատականության դիրքերից Սևակը հայտարարում է, թե «Ամենապռեմով» (որով տարված էր ինքը պատաճի օրերում) «պոեմի ժանրը հայ գրականության մեջ ապրեց իր զարգացման նոր փուլը»:

Այս ամենին առընթեր զարմանալի է թվում, որ Պարույր Սևակի տպագիրը չափածո՞ն՝ «Ամենահները երամայում են» մուտքից մինչև «Եղիցի լույսը», բնագրային սերտ առնչություններ չունի Զարենցի պոեզիայում։ Կարելի է, իհարկե, ցույց տալ որոշ տպագորիչ զուգահեռներ, մոտիվների, պատկերների և բառերի ինչ - ինչ ընդհանրություններ, բայց դրանք այլևս չունեն համատարած և համակարգված բնույթ։

Պատճառներից մեկը կարող է լինել այն, որ վաղ շրջանի ազահ քաղաքերումներով Սևակը հագեցրել է իր հետաքրքրասիրությունը և աշակերտման շրջանով ավարտին հասցրել չարենցյան հափշտակությունը։

Կա նաև մեկ այլ, թերևս ավելի խորը բացատրություն։ Նկատի ունենալով, որ ընդհուպ մինչև վերջին հարցազրոյցը Սևակը ժամանակ առ ժամանակ սկսում է միտքը Զարենցի գործին, կարելի է մտածել որ Զարենցը նրա ստեղծագործության մեջ գործում է թաքնված ձևով՝ բնագրի մակերեսից թափանցելով համակարգի խորքը։

Չբացառենք ևս մեկ կարևոր իրողություն, որ գրեթե օրինաչափության ուժ ունի։ Ամրող զիտակցական կյանքում լինելով հանդերձ չարենցյան զրարկեստի մթնոլորտում՝ Սևակը սկզբից մինչև վերջ իր մեծ նախորդի նկատմամբ ունեցել է ոչ միանշանակ, վերլուծական, հաճախ էլ վերապահ մոտեցում։ Վերջինս վկայող դիպվածային տեղեկություններ են հաղորդում նաև հուշագիրները։ Ը. Գրիգորյանն, օրինակ, մեջքերում է Սևակի մի խոսքը, թե իրեն պատվիրել են կազմել չարենցյան ընտրանու երկու հատոր, այնինչ ինքը հազիվ մի հատորի նյութ է տեսնում։ Իսկ ըստ Հ. Թամրազյանի՝ Սևակը դժգոհում էր Զարենցի պոեզիայի խորության պակասից՝ այլարանելով, թե նա

ավելի շատ լողորդ է, քան սուզորդ:

Նման վկայությունները կարող են հավաստի չքվալ միայն ճրան, ով զգիտի հենց իր՝ Պարույր Սևակի տասնյակ վերապահությունները: Իսկ ամենից ցնցողն այն է, որ կասկածանքները եղել են հենց սկզբից և, որ նույնքան պերճախոս է, այդ մասին Սևակը խոսում է ճանապարհի վերջում՝ 1971 թվականի հայտնի հարցազրույցում. «Ուստի շատ ցավեցի, երբ իմացա, որ Չարենցի գրքերը հանելու են գրադարանից, և «Գիրք ճանապարհիի» մի օրինակը գողացա ու տուն տարա: Մինչև լուս կարդացի գիրքը, չհավատացի ոչ խանջյանին, ոչ Սուրխարյանին, որովհետև Չարենցը, ըստ իմ ճաշակի, բնավ բանաստեղծ չէր»:

Խոսքի անմիջական շարունակությունը ցույց է տալիս սակայն, որ հիասքափությանը շրուտով փոխարինել է հիացմունքը. «Երբ համալսարան եկա, այս անգամ նորից հույժ գաղտնի, որ իսկապես մի կյանք արժեք, կարդացի Չարենց, կարդացի և հասկացա, որ ինչպես ես, այնպես էլ նրանք, ում բանաստեղծ եմ համարել, բանաստեղծ չեմ: Դրանից հետո վճռականապես համոզվեցի, որ բանաստեղծ չեմ և սկսեցի գրադարձ բանասիրությամբ, զիտակցարար զգելով ոչ մի տող:

Երևի Չարենցն ինձ սպանել էր, հետո հարություն տալու բաքուն մտադրությամբ»:

Փոխացառում թվացող այս խոստովանություններից հետո է, որ Սևակը անում է հայտնի հավաստումը, թե երկու տարի անց նորից սկսեց գրել, և իր «առաջին լուրջ փորձերը գալիս են Չարենցից»:

Հիացմունքի և վերապահության բնեռները առկա են մաս 1942 թ. հայտնի ճամակում: Մի կողմից՝ Սևակը պոետական իր հանգանակները ճետում է չարենցյան տողերից, մյուս կողմից՝ կտրուկ մտահանգմամբ երկինդկում Չարենցի պոեզիան՝ հայտնելով, որ իր համար ավելի հմայիչ է «վերջին շրջանի Չարենցը, քան սկզբնական շրջանի Չարենցը»: Ավելին, նույնիսկ իրեն միառժամանակ սպանած

«Գիրք ճանապարհին», որից բազմաթիվ եղումներ է անում ոչ միայն նամակում, այլև չափածո գործերում, թափանցիկ ակնարկով արժանանում է խիստ դատաստանի («միայն մնում է հիշեցնել քեզ իմ վերաբերմունքը ... նոյնիսկ Չարենցի «Գիրք ճանապարհի» - ի նկատմամբ»):

Ժամանակ առ ժամանակ, արդեն նաև հասուն շրջանում, Սևակը խոսում է Չարենցի հնամալու մասին: Բայց նման դատումը պարզ ժխտում չէ, այլ գրական ժառանգորդության մի յուրօրինակ ըմբռնում, որ 1964 թ. մի նամակում ձևակերպվում է այսպես. «Ինչպես որ Ալիշանն ու Պատկանյանը հնացան Թումանյանի աչքին, այնպես էլ Թումանյանը հնացավ Վարուժանի ու Չարենցի աչքին: Չարենցն էլ օրեցօր հնանում է իմ ու քո աչքին: Ես ու դու էլ մեր կենդանության օրոք կինանանք հաջորդ սերնդի աչքին»:

Բնագրային թափանցումների նահանջը, սակայն, չի նշանակում, թե Չարենցը բացակայում է Սևակի հասուն պոեզիայից: 50 - ական թթ. կեսերից Չարենցը «վերադառնում է» սևակյան չափածո արդեն սկզբունքային միջամտությունների ձևով՝ հետք բողնելով նրա թեմատիկ - գաղափարական, ժանրային և պատկերային համակարգերի որոշ բաղադրիչների վրա: «Նորից քեզ հետ» /1957/ գրքում, օրինակ, Սևակը դիմում է ուրնյակի ժանրաձևին, որ իրենից առաջ ամենից ցայտուն արտահայտվել է Չարենցի «Ուրնյակներ արևին» շարքում: Բովանդակային զգակի առանձնահատկությամբ հանդերձ՝ ժանրային «հիշողությունն» ակնհայտ է:

Փոքր - ինչ ուղ երևան եկած «Անլոելի զանգակատուն» պոեմը ևս, մշակութային - բանաստեղծական հազարավոր առնչություններին առընթեր, մասամբ կրում է նաև Չարենցի ներգործության ցոլերը: Զնոռանանք, որ այդ ժամանակ արդեն տպագրված էր «Կոմիտասի հիշատակին» պոեմը, և Կոմիտասին վերաբերող «միջամածությունը» Սևակի ստեղծագործական հոգերանության մեջ պոեմի ծն կարող էր առնել նաև չարենցյան ազդակով: Այս պարագայում արդեն

գործում է պոեմի ժամրային հիշողությունը, որն ունի նաև կառուցվածքային որոշակի ներքափանցումներ: Օրինակ՝ չարենցյան ռեքվիեմի առանցքային մոտիվը՝ «Վերադարձը», պատմագեղարվեստական բավական մոտ լուծում ունի «Ղողանջ վերադարձի» զլիում: «Չանգակատան» չարենցյան շերտը չի սահմանափակվում կոմիտասյան թեմայով: Այսպես՝ պոեմի քնարական էպոսի մոնումենտալ ճևում մերքընդմերք զգացվում է «Ամենապօեմի» ներկայությունը, «Ղողանջ պոլսական»-ում՝ «Ստամբոլի» պատմական կերպավորումը, առանձին տեղերում՝ նաև «Դանքեական առասպելի», «Պատմության քառուղիներով» -ի, «Մահվան տեսիլի» ինչ – ինչ լուծումներ:

Իսկ ահա «Մարդը ափի մեջ» (1963) և «Եղիցի լույս» (1969) ժողովածուներք չարենցյան պոետական մշակույթին հարազատ են ինչպես շարքերից կառուցված ամբողջական գրքի ժամրածևով (ևս մեկ ժամրային հիշողություն, որ զալիս է արդեն «Էպիքական լուսաբացից» և «Գիրք ճանապարհի»-ից), այնպես էլ մարդու, պատմության և պոեզիայի փիլիսոփայության հիմունքներով:

Հիշելով չարենցյան «Ես մարդ եմ, պոետ ու քաղաքացի» նշանավոր տողը՝ Պարույր Սևակը հայտնի զեկուցման մեջ տալիս է հետևյալ մեկնարանությունը. «Այսպես էր ահա, որ Չարենցի պոեզիան լցվեց այս մարդերգությամբ կամ (եթե կարելի է ասել) մարդապաշտությամբ»:

Մարդերգությունը Սևակին Եղիշե Չարենցի պոեզիային կապող ամենից բնորոշ կամուրջներից է՝ այն հավելումով, որ ուսուցչի հոչակած ու պաշտպանած «հոյցերն ու կոքերը» Սևակը ենթարկում էր վերլուծական նոր տրոհումների՝ այդ ընթացքում օգնության կանչելով նաև ուրիշ բանաստեղծների: Վերջիններիս թվում են ինչպես հներք (օրինակ՝ Չարենցին շատ սիրելի Նարեկացին, Սայաթ – Նովան, Ուիթմենը կամ Պաստեռնակը), այնպես էլ հետչարենցյան դարաշրջանի համաշխարհային պոեզիայի նոր դեմքերը:

Այս հանգույցում երևան է զալիս Եղիշե Չարենց – Պա-

բույր *Սևակ* ժառանգորդական կապի մեկ այլ իմքնահատուկ ձև, որ դարձյալ խորքային է ու «բաքնված»: Խոսքը վերաբերում է այլ՝ հանրահայտնի և «նորահայտ» պոետներից կատարված բազմաթիվ բնագրային քաղվածքներին, որոնցով ողողված է ինչպես Զարենցի, այնպես էլ *Սևակի* հասուն պոեզիան: Վտանգավոր աստիճանի հաճախաղեաց քաղաքերումներով սևակյան չափածոն հայ պոեզիայում ամենից ավելի մոտ է չարենցյանին: «Գրքային բանաստեղծության» այդ տեսակը կամրջովում է նախորդի փորձին նաև այսպես կոչված մշակութային ավազանի ընդհանրությամբ:

Բնորոշ է, որ *Սևակը* տևականորեն հմայվում ու ապրում է այն բանաստեղծներով, որոնք հատկապես սիրելի են նաև Զարենցին (հայ պոեզիայից՝ Նարեկացին, օտարեներից՝ Ուիթրմենը և Բորիս Պաստեռնակը): Այս տեսակետից առանձնապես տպավորիչ է *Սայաթ* – Նովայի պարագան: *Սարդերգության* ժամանակակից պահանջներին մոտենալու մղումով նրանք երկուսն էլ իրենց պոետական խոսքը «ստուգում են» մեծ աշուղի բնագրով: Պատահական չե, որ Զարենցը դրան նվիրեց մի ամբողջ շարք, իսկ *Սևակը*՝ մի առանձին մենագրություն:

Այսպիսով, Եղիշե Զարենց – Պարույր *Սևակ* խնդիրը երևան է հանում գրական ժառանգության բազմաշերտ, բազմանիստ, հակասական զարգացումներով բնութագրվող մի երևույթ, որ 20-րդ դարի հայոց բանաստեղծության երկու գլխավոր դեմքերի ստեղծագործական նկարագրին հաղորդում է նոր իմաստ և ինչեղություն:

ՆՈՐԱՅՐ ԴԱԶԱՐՁԱՆ

ՉԱՐԵՆՑԻ «ԻՄ ԼԵՐԱՆ ԱՂԱԹՔԸ» ՊՈԵՄԸ

Իր քառասնամյակի օրերին Չարենցը գրել է «Իմ լերան աղոթքը» պոեմը (երկու տարրերակը՝ ճույն, երրորդը՝ «Լերան աղոթքը» վերնագրով): Պոեմի ծրագրային նշումներում նախատեսել էր «Չարչարանաց լերան աղոթքը» վերնագիրը, սակայն գրելիս «Չարչարանացը» դուրս է քողնում՝ այն օգտագործելով «Իմ լերան աղոթքը»-ի երկրորդ տարրերակում («Իմ հանճարի անցած չարչարանաց լերան...»): Հիշենք, որ Չարենցը «բարձր լեռան առջև» «ահավորված» էր դեռևս «Սահկան տեսիլ» պոեմում:

«23.X.1936» վերնագրված և երկու օր անց գրած «Վերջին աղոթք» բանաստեղծություններում ևս հեղինակը դիմում է Աստծուն՝ իր կատարած հոգևոր գործի և անազույն բախտի քննությամբ: Նկատի ունենալով նաև «Ի խորոց սրտի խոսք ընդ Աստուծո» խորագրով չորս սոնետները, կարելի է ենթադրել, որ Չարենցը նախապատրաստում էր քննարձակ խոսք՝ «ընդ Աստուծո», սակայն որը չամբողջացավ: Այս շրջանում Չարենցը հոգևոր շրջադարձ է կատարում և ինչպես Ժ. Քալանքարյանն է ասում «Ի խորոց սրտի...»-ի առիթով, նրա և Նարեկացու «աստվածները նույնանում են» («Անդրադարձներ», Երևան, 2002 թ.):

Մեզ հայտնի է, որ Հ. Թումանյանն իր 40-ամյակի օրը գրել է «Վայրէջը» բանաստեղծությունը: Չգիտենք, «Իմ լերան աղոթքը» պոեմի հղացումը «Վայրէջըի» հետ կապ ունե՞ր, թե՝ ոչ: Սինէդեռ Թեքեյանի «Քառասնամյակ» բանաստեղծությունը կապված է «Վայրէջըի» հետ.

- ... Սինչև երեկ լիոն ի վեր ելած էինք, արդ կիշնանք...

«Վայրէջքում» Թումանյանի տրամադրությունը խոր լավատեսական է.

- Իջնում եմ զվարք իմ լերան նուն...

Թումանյանին համակել է մի տրամադրություն, որը համապատասխանում է Նիշշեի «Այսպես խոսեց Զրադաշտ» գրքի՝ «Ուրախ, զվարք է ազնվացածի հոգին» ասույթին (էջ 107):

Սա պատահական համընկնում չէ: Թումանյանը բարձրից է նայում «աստծու աշխարքին» («Բարձրից»): Նա բախտավոր է հոգևոր «անհուն գանձեր» ունենալու համար, և Աստծո տվածը վերադարձնելու բերկրանքն է վայելում:

- Ինչքա՞ն շատ եմ դեռ Ձեզ տալու, որ միանանք մենք նորից:

Գրականագետ Ժ. Քալանքարյանը Թումանյանի մի քանի բանաստեղծությունների («Տրտունջ», «Դու քո ճամփեն զնա, քույրիկ», «Պանդուխս եմ, քույրիկ», «Ընտրյալը») հղացման հիմքում տեսնում է նիշշեական տրամադրություններ («Անդրադարձներ», «Թումանյան և Նիշշե»): Մենք այս շարքում կավելացնենք «Վայրէջք», «Իմ երգը», «Բարձրից» բանաստեղծությունները, որոնք մարդու էռության ընկալման նիշշեական նկատելի տարրեր են պարունակում: Զրադաշտն ասում է. «... անհազ է ձեր հոգին բաշխել կամենալու մեջ» (104 էջ): Թումանյանը «Բաշխողի» ուրախությունն է ապրում՝ «Ինչքա՞ն շատ եմ դեռ Ձեզ տալու....» (քայլակ), «Ինչքան էլ որ բաշխեմ ձրի - սերն անվերջ է, բարին՝ անհատ» («Իմ երգը»):

Թումանյանը աստծուն Շռայլ է անվանում, Զարենցը՝ Բաշխող խոհի («Իմ լերան աղոքը»): «Շռայլն» ու «Բաշխողը» նույնական են: Թեև տրամադրությամբ ու հոգեվիճակով հակադիր են «Վայրէջքը» և «Իմ լերան աղոքը», սակայն Բաշխողի առաքինությամբ ընդհանուր եզրեր ունեն: Զրադաշտի հորդորն է՝ վեր լինել «զովքից ու պարսավից»: Թումանյանը «Վայրէջք»-ում ասում է.

- Թողել եմ ներքև, մեծ լերան տակին,
Եվ փառքը, և գանձ,
Եվ քեն, և նախանձ-
Ամենը, ինչ որ ճնշում է հոգին:

Սա իմաստունի հոգեվիճակ է. «Իմ լերան աղոթքը» պոեմում և մի քանի քանաստեղծություններում Զարենցը շնորհակալ է Տիրոջը՝ իրեն շնորհած իմաստության համար:

«Թումանյան և Նիշշե» հոդվածում Ժ. Քալանքարյանը նկատում է, որ Թումանյանի ստեղծագործության մեջ գերմարդը և Քրիստոսը համադրվում են որպես կատարելատիպեր՝ երևոյթը համարելով զուտ քումանյանական, մինչդեռ նույնը տեսնում ենք Զարենցի հատկապես վերջին շրջանի ստեղծագործության մեջ (ան «Իմ լերան աղոթքը» պոեմում): Նիշշեն գերմարդուն է հավասարեցնում զաղափարի սուրբին: Զարենցը գերմարդու տարրերակի՝ զաղափարի սուրբի և Քրիստոսի միջք մեկտեղում է:

Նարեկացու և Զարենցի աստվածները, ինչպես ասվել է, նույնանում են «Ի խորոց սրտի խոսք ընդ Աստուծո» ստնետների շարքում և «Իմ լերան աղոթքը» պոեմում: Թե Թումանյանը և թե Զարենցը կյանքի վերջին շրջանում (Թումանյան՝ քառյակներ, Զարենց՝ «Ի խորոց սրտի...» և «Իմ լերան աղոթքը») օգտագործում են Սատյանի ստեղծագործական որոշ սկզբունքներ: Արդեն ասել ենք, մեկի համար Աստվածը Շռայլ է, մյուսի համար՝ Բաշխողը խոհի: Երկուսմ էլ նրան շնորհապարտ են՝ իրենց ստացած հոգեկան զանձերի համար:

Զարենցի ստնետներում «նարեկյանը» հոգեկան երկատման, ողբերգության ու սարսափի, մասի, արյան հաճախանքի, անօգնական լինելու զգացումն է (թեև Նարեկացու հույսը անբաժան է Աստծուն հասնելու զաղափարից): Թումանյանը Նարեկացուց ժառանգել է Աստծո հետ զիտական հոգևոր կապը: Մինչդեռ Զարենցը Քրիստոսին է դիմում փրկվելու վերջին ճիզով կամ, ավելի ճիշտ, միջի առջև վերջին ինքնախոստովանություններով (հուսահատությունից դրդված):

Եվ կախված է զլիսիս - մի արեագնացյալ կացին...

«Իմ լերան աղոռքը» պոեմում, դիմելով Աստծուն, քանաստեղծը նրամից ուժ չի հայցում («Ուժ չեմ հայցում, չեմ հայցել և չեմ հայցի երթեք»): Թեև «Վերջին աղոռք»-ում Աստծուն դիմում է՝ «Էորյուն իմ», «հարազատ իմ», այնուամենայնիվ նրան համարում է արարած՝ «քերևս անզոր իմն պես»: Չարենցը ինքնարդարանում է՝ «Ես ուն դիմեն, ով Տեր, արդ՝ Քեզանից բացի»:

«Այզարացի» հանդեպ խարված հավատը քանաստեղծին միակ ուղիղ, անթեք կապով կապում է Աստծուն: Որպես քննիանրացում ասենք, որ «Ի խորոց սրտի խոսք ընդ Աստուծո» շարքում, «Իմ լերան աղոռքը» պոեմում ոգին և պոետիկան նարեկացիական են:

Չերմ ու սրտարուխ է Տիրոջը աղոռքային դիմումը: Հուզապրումները կենդանի են ու կոնկրետ, շարժման մեջ են իրենց քրիստոնեական լիցքերով: Չարենցը հասնում է քրիստոնեական քանաստեղծության բարձրությանը: Եվ եթե Ժ. Քալանքարյանի նկատած տեսանկյունով Նարեկացու և Չարենցի աստվածները նույնանում են, այնուամենայնիվ այդ աստվածները ամենավերջում նույնական չեն: Դա են ցույց տալիս «Ես ամեն առավոտ երբ հանկարծ» և «Ծիշտ այսպիսի անզույն մի գիշեր» քանաստեղծությունները, որոնք գրված են «Ի խորոց սրտի խոսք Աստուծո» շարքի և «Իմ լերան աղոռքը» պոեմի գրության ժամանակներում: Նշված երկու քանաստեղծություններում Հիսուսը «կանացի դեմքով» է և «պատանու», «քախսծաղենմ», «կնոջական Հիսուսն է» («Հիսուսը - կնոջական դեմքով և պատանու մարմնի...»): Նա Նարեկացու «հզար զարութիւն»-ը, «ամէնարուեստ քժիշկ»-ը չէ: Ինչպես նշել ենք, Տերը «անզոր» է քերևս իր նման («Վերջին աղոռք»): Անզոր Քրիստոսի միֆը Չարենցի մեջ ծովզում է պարտված Արայի կերպարին: Հիշենք, որ «Վահագն» բալարում հայոց ուժի աստվածը դիակ էր: Արա - Խանջյան զուգահեռության պարագայում քանաստեղծը վերջնականուեն «գրանցում» է միփի կործանումը:

- Եվ մինչև ե՞րբ, այսպես,- մահով հաղթես...
Լավ է նաշից քո ել չքարձրանաս...

«Դոֆին նայիրական», «Ի խորոց սրտի...» շարքերը՝ քրիստոնեական և հեթանոսական միջերի նույնական բովանդակավորմամբ, շեշտում են պարտությունը, կորուստը, անկումը, անելանելիությունը: «Կյանքն եմ մեռած արդյոք ոգեկոչում դարձյալ...», - ինքն իրեն է դիմում բանաստեղծը («Եվ ես - տխուր, ինչպես վկան Նարեկացի»):

Արայի պարտության պատկերով Զարենցի հոգերանական հենարանը Նարեկացու Աստծուց փոխադրվում է դեպի իր «ես»-ը, որը չի սարսում «արտաքին և ոչ մի ուժից» («Իմ լերան աղոքքը»): Նման պարագայում հոգեկան հենարանը հանճարի ինքնազիտակցումն է և ինքնարժենորումը: Վերջին միջերի պարտությունից հետո (որքան էլ Ղազարոսի հառնումի մտապատկերը բույլ ընդգծվի): Զարենցն անցում է կատարում նիցշեական «գաղափարի սուրբի»՝ հանճարի, ստեղծողի, Բաշխողի անձնակենտրոն կամքին: Միփական մտածողությունը տեղիր է տալիս գոյարանական մտածողությանը: «Իմ լերան աղոքքը » պոեմում քրիստոնեական դիմում - աղոքքին միահյուսված են նիցշեական արժեքներ մատնաշղող բառ - խորիդանիշներ:

«Իմ լերան աղոքքը» պոեմում քրիստոնեական ու նիցշեական ներկյուսման իիմքը Քրիստոսի և գերմարդու տարբերակը հանդիսացող «գաղափարի սուրբի» նույնացումն է: Նիցշեն կողմնակից է հոգեկան մեծ տառապանքի, որը և քրիստոնեական ուսմունքի առանձնահատկությունն է: Փորձնեք զմենել, տեսմել «Իմ լերան աղոքքը» պոեմում նիցշեական «շերտը»: Ահա բնորոշ մի քառատող.

-Ընորհակալ եմ, Տե՛ր, ես առավել սակայն,
Որ կոչեցիր դու ինձ ոչ սոսկական Զերբող,-
Այլև ասպետ, և պետ, և զինակիր
Եվ սերմնացան աննինջ՝ դժնի ժամանակի:

«Ասպետ», «պետ», «զինակիր» բառերը առնչություն ունեն Նիցշեի՝ ուազմիկի և իմացության սուրբի ձևակեր-

պումների հետ: Դեռևս «Էպիքական լուսաբաց» ժողովածուի «Մուսայիս» բանաստեղծության մեջ Զարենցը մուսային համարում է զինակից, «Խոհ»-ում արտահայտում է սվին կրելու պատրաստակամություն: Նա 25-րդ դիստիքոսում հավասարության նշան է դնում «իմացության սրբի», պոետի և ռազմիկի միջև.

- Դևն ելան իրար մի անգամ - հանճարեղ պետն ու ռազմիկը, Շանաշնց մարդուն, հանճարին - հանճարեղ ռազմիկը միայն:

«Այսպես խոսեց Զրադաշտը» գործում ասվում է. «Եվ եթե դուք իմացության սրբեր լինել չեք կարող, գոեն դրա ռազմիկները եղեք»:

«Իմ լերան աղորքը» պոեմում աղորքը մասմակիորեն ընդիանրացնում է բանաստեղծի անցած ճանապարհը, որը նաև ռազմիկի ճանապարհ է: Սակայն ռազմիկը այլևս հետևում է մնում: Զարենցը տրված է «զաղափարի սուրբի», հանճարի ինքնազգաց տարերքին: Ուժի խնդիրը քննվում է իրքն անցած երևոյթ, հանրագումարային փաստ: «Իմ լերան աղորքը»-ում, անցած ճանապարհի ամփոփումից հետո («Եղել եմ, այս, ես հոգևոր պետ...», «Օր կոչեցիր երգիչ ու բանաստեղծ, //Նվիրեցիր տավիդ և էվոյան քնար», «Ո՞վ դու, որ պետ ես կարգել ինձ՝ տարերքին անդեմ...») Զարենցը տրվում է իր հոգու ինքնարուխ տարերքի ճյուղավորմանը, որով նա տեսանելի է դարձնում հանճարի՝ ամեն ինչից անկախ հոգեկան ընթացքը: Բանաստեղծը նման է Նիցշեի հերոսին, «որի հոգին շռայլում է իրեն... և ետ չէ դարձնում, որ նվիրում է և պահել չէ ուզում» (այսպիսին էր Թումանյանի հերոսը):

Հոգեկան ահռելի ուժը պատկերների հեղեղային հուքում է ներդաշնակություն որոնում և դեռևս անզոր է կարգավորելու նրանց ընթացքը: Նա արդեն նման է Նիցշեի «Աստվածների մթնշաղ»-ի հանճարին՝ «...ստեղծագործության, գործի մեջ անհրաժեշտարար վատնիչն է, որ նա իրեն է շռայլում՝ դա է նրա մեծությունը... Նա հորդում է, նա ժայրքում է, նա մսխում է իրեն, նա իրեն չի խնայում» (էջ 245):

Քանաստեղծի խոհերք անձև տեսք են ստանում: Սա արդեն «Լիրիկական անտրակտի» Շռայլողի հոգեվիճակը չէ: «Լիրիկական անտրակտի» բախտի զգացումը նույնական է Թումանյանի «Վայրէջք»-ի հետ («Դու շատ ես գրել, տվել քամուն//Չո զանձը, որպես շռայլ տղա, //Դրա համար էր արդյոք տրված// Այս վսեմ բախտը քեզ աշխարհում»), մինչդեռ նույնը չենք ասի «Իմ լերան աղորքը» պոեմի դեպքում: «Արքայական երգ»-ում արդեն բանաստեղծը տարակուսում է իր բախտին.

... Ինչո՞ւ, ինչո՞ւ տարակուսում են արդ,
Տարակուսում անգամ արքայական բախտի:

Զարենցը, կանգնած «միջնադարյան» կացնի առջև, ողբերգության զարինորելի զգացողությամբ, ընկած է հոգու ալեկոծությունների մեջ ու զնում է դեպի կյանքի նարեկյան միստիկ ըմբռնումները: Հոգու ալեկոծ ծյուղավորումները, որոնք սկսվում են աղորքային դիմումից հետո, վկայում են ծանր փորձության մեջ գտնվող բանաստեղծի՝ ինքնահսկողությունից դուրս՝ հոգեկան ուժի հորդացման մասին (Զրադաշտն ասում է. «Օրինիր այն բաժակը, որ լցվել հորդացել է»): Ներքին ազատության զգացումն անկարգ է: Ըստ Նիշշեի՝ համարի մոտ «ինքնապահպանման բնագդն ասես ծխնիներից ընկած է, հորդացող ուժի գերիզոք ճնշումը նրան արգելում է նման ցանկացած պաշտպանության և զգուշության» («Աստվածների մթնշաղ», էջ 245):

«Հորդացող ուժի գերիզոք ճնշումը» քանդել է պատկերավորման երրենմի հունը և սկզբնավորել հոգևոր հեղեղումների առանձին ճյուղեր («Եվ մտքերի որպիսի հեղեղումներ եմ հիշում...»): Զարենցի համար իհմնովին փոխվել են երգի չափումները: Առանցքը և խորքը բոլորովին այլ են: Ահա թե ինչու հեղեղների պարզել նրա համար «խեղճ մի քանի երգ» է: «Զվարք գիտություն» բանաստեղծության մեջ (զրված իր 40-ամյակի օրը) «զվարք գիտության» քուրմին՝ զրկված երկնային շնորհներից, համեմատում է իր հետ:

Բանաստեղծի հոգին երկատված է.

«Ես - ինքս եմ իմ դեմ - ո՞վ Տեր, - հայցում զրահ»:

Չարենցն այս անգամ ևս Նիշշեի «հետևորդն է» (մի դիստիրոսում նրան անվանել է «գարի մեծագույն առաջնորդ»). «Բայց ամենավատքար թշնամին, որին դու հանդիպել կարող ես, միշտ էլ կլինես դու երբեւ ինքդ» («Այսպես խոսեց Զրադաշտը»):

Անել վիճակի հասած բանաստեղծի միակ ցանկությունն է.

Տուր գորություն երկարյա կամքով աներկրա

Կանգնած հայութն այդ հողմի զալարմունքի հանդեպ՝

Պատկերների, խոհերի հեղեղութն անդիմ

Թեքել հունի մեջ ոգու՝ հեղեղի պես այն...

Մենք արդեն ասել ենք, որ չարենցյան հոգեվիճակը մոտ է նարեկյանին, բայց և միաժամանակ համադրում է նիշշեականը: Նիշշեականի համադրումը, սակայն, ենթարկված է որոշակի կառուցվածքի (հետևողականորեն «հղումներ» են արկում «Այսպես խոսեց Զրադաշտը» գրքից):

Ես չեմ շնորհել երեք, - երբեք ես չեմ դարձել՝

Ակրսներից երկար, և քարքարոտ, և դար:

Հիշենք, որ ճանապարհից հետ չդառնալը Զրադաշտի սկզբունքն է: Զրադաշտը քուն էր մտել գետնին, մամուսի վրա: «Դրանից հետո Զրադաշտը երկու ժամ էլ գնաց՝ վստահ իր ճանապարհին և աստղերի լույսին »: «Իմ լերան աղոքքը»-ում Չարենցը կրկնում է նրան.

Ապա քնել եմ ես դաշտում քնով ուշիմ,

Օր լուսաստղից առաջ - կրկին ելնեմ երքի:

«Եվ ինքը նստեց գետնին՝ մամուսի վրա: Եվ շուտով ճարպունքն է մտավ, հոգնած մարմնով, բայց անդորր հոգով»:

Պոեմում տեղ գտած լեռան, բարձունքի, ճանապարհի խորհրդանշանները, անշուշտ, նիշշեական են: «Իմ լերան աղոքքը» պոեմից բերենք երկու տող.

Քարձունքներից աննախորդ ու աննախընթաց,-

Քարձունքներից այն անհաս, անհունձ, անկոխ...

Չրադաշտը մատնացույց էր արել՝ «Հազարավոր շավիղներ կան, որոնցով դեռ ոչ ոք չի գնացել»: Չարենցին հարազատ է աղամանդի՝ ոգու ամբության խորհրդանշիցը:

Նիշշեն մարդու առջև դնում է ներքին հաղթահարումի խնդիր. «Մարդը նետ ու աղեղ պետք է ունենա»: «Իմ լերան աղոռքի» «ասպետը», «զինակիրը» Նիշշեն վերտիշյալ ասույթի, իսկ «զորապետ ու արքա, սուվերեն ու տեր», «Մոգ ինքնախոհ ու իոզ, ճարտարապետ կարող...» կապակցությունները՝ «կրելու ունակ ոզի» եզրարանությանն է կապվում: «Հազարամյա արյամբ սրբազործված խոհի...» տողը ևս նիշշեական առնչություն ունի. «Քոյոր գրածներից միայն այն եմ սիրում, ինչը մեկը իր արյունով է գրում» (էջ 49):

Չարենցի «Անտիպ և չհավաքված երկեր» գրքում տեղ է գտել «Չարչարանաց լերան աղոռքի» օրագրային նշումը (1937 թվականի մարտի 1): Գրելով ծրագրված պոեմը, վերնագրից Չարենցը «չարչարանաց» բառը դուրս է հանում, օգտագործելով տեքստում:

Պոեմի երկու տարրերակների վերնագիրն է «Իմ լերան աղոռքը», վերջինին՝ «Լերան աղոռքը»: Սեր դիտարկումները ցույց են տալիս, որ նախապես գրվել է գրքում տեղ գտած վերջինը՝ «Լերան աղոռքը», քանզի այն ծրագրային նշումին ավելի մոտ է: Նշումը սկսվում է «Տուր ինձ շնորհը և կորով և <1 անընթեռնելի բառ> մերժելու մութ խոսքերի, զաղտնահնչյուն բառերի նույն շնչին խոհն - հաճախ - բյուր կողմերից խուժող պատկերների...» պարբերությամբ: Պարբերույթի սկսվածքը՝ «Տուր ինձ շնորհը և կորով...», համընկնում է «Լերան աղոռքի» առաջին տողին. «Տուր ինձ կորով, տուր ինձ ուժ, տուր գոյություն անկոր»:

Ծրագրային նշումի «Բյուր կողմերից խուժող պատկերների» կապակցությունը նույնիմաստ է «Լերան աղոռքի» «Այս բառով խաժադուժ արշավանքի հանդեպ» տողի հետ:

«Լերան աղոռքի» վերջին մասի առաջին տողն է՝ «Քառասմամյա հոգսի բեռն ուսերիս վրա», որը քիչ տարբերությամբ, դառնում է «Իմ լերան աղոռքի» առաջին բանա-

*ստեղծության սկզբի տող՝ «Քառասնամյա կյանքի քարն
ուսերիս վրա»:*

Հետևենք ծրագրային նշման մեկ այլ եզրի՝ «ոգու դիսցիպլին»: «Դիսցիպլինը, // որ սաստում է թե կամք, թե ինտելեկտ», առկա էր «Էպիքական լուսարաց» ժողովածուի «Ars poetica» շարքում: Սակայն «Իմ լերան աղոքքը» պոեմում «ոգու դիսցիպլինը» «Աստծո դիսցիպլինն է»: Բանաստեղծը ճգտում է կամքն ու ինտելեկտը ի մի բերող «ոգու դիսցիպլինի» («Կոփել կայուն գիտության գրանիոյա գետին», «Պատկերների, խոհերի հեղեղումն անդեմ // Թեքել հունի մեջ ոգու...»): Բայց դա ընդամենք ճգտում է կամ ցանկություն: Բանաստեղծին վիճարկված է «սիզիֆյան տքնությանը» հետ մղել «անընդհատ խուժող նոր խոհերը»: «Պոես անվերնագիր»-ում նա աչքերը բաց՝ երազների ու տեսիլների մեջ է («Զառանցական տեսիլ, կամ հոգևոր արկած, // որ ապրեցի կարծեն կախարդական քնում, // Աչքերս բաց, անխոհ, կիսարթըմնի պարկած...»):

«Ընդհանրապես նկատված է, որ անգիտակցական բովանդակությունները դուրս են լրում այն գիտակցության ոլորտը, որի լարումը բուլացած է կամ շատ ցածր» («Գարուն», № 9-10, 2006 թ., էջ 79): Հիշենք, որ Նիշշեի հանճարի մոտ «ինքնապահապանան բնազդն ասես ծխնիներից ընկած է», խսկ, ահա, վերը մեջ բերվածից պարզվում է, որ ենթագիտակցական դրսւորումները ուժեղանում են գիտակցության լարման բուլացման դեպքում: Չարենցը կրվում է այդ երևոյթի դեմ և ուզում՝ «կոփել... գրանիոյա գետին»: Մինչես իրականն այն է, որ «անընդհատ խուժում են» նոր պատկերներ: «Իմ լերան աղոքքը» պոեմի ստեղծման շրջանում գրված «Ես ամեն առավոտ, երբ հանկարծ» բանաստեղծության մեջ Չարենցը «ինքնությունը» կորցնելու և դժվարությամբ վերադարձնելու ժամբ ապրումների մեջ է: Ենթագիտակցականը իշխում է գիտակցականին: Փրկում է մտասնեռումը.

-Ինքնագտնան փարոս,-
Այդ դեղին դիմքը Դանիքի...

«Ինքնության վերագտնումին» ուղեկցում է նյութի տարերքին իշխնելու ճգոտումը (Զրադաշտը խնդիր էր դնում՝ «երբ... ձեր կամքը հրամայե բոլոր իրերին...»): «Դուք դեպի ծեղ և ծեր մեջ եք քաշում բոլոր իրերը...»): «Իմ լերան աղոքքը» պոեմը ենթագիտակցական հորդումի պատկերակարգումն է. կենտորնական պատկերը ենդեղն է ու հեղեղումը.

Պատկերների, խոհերի հեղեղումն անդեմ...
Եվ ինչպիսի հեղեղներ երանգների, խոհի...
Հեղեղատներ ես ապրել ոգևորության...
Հեղեղատով ողողված հովհաններում հողե...
Հուն փորողին զարնանային հեղեղատի համար, որ...
Վար գլորվող ահռելի հեղեղների համար...
Կոճ ու ծառեր բռնելու հեղեղատի միջից...
Վարդանա նա պղտոր հեղեղատից այդ որսալ...

Կ. Յունգը եզրակացնում է, թե «Զուրը հանդիսանում է անգիտակցականի ամենից հաճախ հանդիպող խորհրդանիշը» (*Կ. Յունգ, Аналитическая психология, С. Петербург, 2001, с. 278*): Երազներում ջրի խորհրդանիշի մասին նա ավելացնում է՝ «Զրերի մեջ նայողը տեսնում է իր սեփական դեմքը»: «Խոհերի հեղեղումի» մեջ Զարենցը որոնում է իր դեմքը, զուրը «ինքնազտնաման» հենարան է, ինչպես «Ես ամեն առավոտ, երբ հանկարծ» բանաստեղծության մեջ «ինքնազտնաման փարոս» էր «գեղին դեմքը Դանքեի»:

Ասենք, որ Զարենցը վերջին շրջանի ստեղծագործություններում ապրում էր երկատման ծանր տառապանք: «Զվարք գիտություն» բանաստեղծությունը նա գրել է իր քառասունամյակի օրը: «Երոսը փողոցային երգիչ է, «Այս և և անօգ, և բոկոտն, և կորովի ծաղրածուն», «մի հաշմանդամ մուրացիկ...», «Անհամակիր այս դեմքով, տափակ զիխով ու ծաղատ...», «Ծնորհներից երկնային զրկված ստրուկն այդ ահա»: Բանաստեղծը «ծաղրածուին» համեմատում է իր հետ. «Զվարքազին գիտությանց» քուրմն այդ ահա, ինչպես ես..., կամ՝ «Գուցե երգի՞չն ես այդ դու,- քե՞զ ես տեսել դու գուցե...»: Ս. Եսենինի «Սև մարդը» պոեմի հերոսը իր՝ բա-

մաստեղծի երկվորյակն է՝ «Օ, սև մարդ//Քեզանից տմարդի հյուր չկա»։ Ես-ի օտարումը «կոպիտ, վայրագ, ծեր» մարդու պատկերն է ստանում Ինտրայի «Ներաշխարհ»-ում («Դեմքը մղճավանջի պես ապուշ է. հայիության մը պես խելացի, և սակայն բարեմտությամբ մը...», «եղերական բան մը կրխի մարդեն», «Զայնը... ամենորեն մարդկային տրտմությամբ մը լեցուն ...»)։

Չարենցի «Անվերնագիր» պոեմի մշակը՝ «մամռագույն, մանրամարմին», նման է Ինտրայի «Ներաշխարհի» «կոպիտ» ծերին։ Իսկ «Իմ լերան աղորքը» պոեմը, պատկերային անկախ ճյուղավորումներով, նմանություն ունի Ինտրայի «Ներաշխարհի»՝ խելագարի և հանճարի նույնությունը հատկանշող մի վերլուծության հետ, որտեղ նշվում է նրանց «կենսական ուժի ապակեղրոնացումը», «արտուղորեն և տարակշռորեն բորբոքված... մտապատկերները»։

Ողբերգական երկատմանը Չարենցը հակադրվում է զրի և լեռան խորհրդանշաններով։ Վերը նշեցինք, որ զուրքը ինքնագտնման հենարան է։ Ինքնացման խորհրդանիշ է նաև լեռը։ «Իմ լերան աղորքը» պոեմի վերմագիրը ոչ միայն ավետարանական՝ վերջին ճշմարտության իմաստն ունի, այլև ինքնացման, էացման։

«Լեռը, որպես համաշխարհային ծառի մեկ այլ տարբերակ... կապված է մահվան ու անմահության գաղափարների հետ» («Գարուն», № 9-10, 2006 թ., էջ 82)։

Պոեմում պատկերային անկախ ճյուղավորումները անմահության կանխազգացման սկզբնավորումներ են, երբ «գիտակցության լարումը» իջել է, քայլ բարձր է ենթագիտակցական ուժի ճնշումը։ Իսկ եթե Չարենցի «Իմ լերան աղորքը» պոեմի և Հերմես Եռամեծի «Լեռան զաղտնի քառզը վերածնության և լուրյան կանոնի մասին» տրակտատի միջև զուգահեռ ենք անցկացնում, ապա, սխալված չինելու պարագայում, հանգում ենք այն մտքին, որ Չարենցը հուշում է մեկուսանալուն իր պատրաստ լինելու, «ճշմարտության քաղցր պտուղները ստանալու» («անմահ հունձք») մասին և այն, որ «չափելի չեմ», «օտար եմ այդ բոլորին»։

ՍԱԹԵՆԻԿ ԱՎԵՏԻՄՅԱՆ

ԶԱՐԵՒՑԸ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՔԱՌՈՒԴՎԻՆԵՐՈՒՄ

Հայոց բազմադարյա պատմության տառապագին քնացքը գրականության, առհասարակ մշակույթի գործիչների համար կարևորել է ազգային թեմատիկայի ակտուալությունը, և տևականորեն իրար հաջորդող դարերի ընթացքում հայ գրողն ու մտածողը պարբերաբար փորձել են թերթել պատմության էջերը՝ անցյալը հասկանալու, ներկան բացատրելու և ապագան կանխատեսելու միտումով։ Բայց արդյո՞ք այդ էջերի, մանավանդ վերջին 2000 տարիների գրավոր պատմության քննությունը բացահայտում է ծշմարտությունը, օգնում է գտնել վրիպումների, երեխն աններելի սխալների ակունքները, պատճառահետևանքային կապ ստեղծել մերօրյա իրադարձությունների և աշխարհաքաղաքական գործընթացների միջև։ Ներքնատեսությունը, վերլուծական մտածողությունը, ճանաչողության անպարփակ սահմանները, օժտվածությունը միայն կարող են հայոց պատմության գաղտնագրված, իսկ առավելապես խեղարվության կապի միջնորդ համադրումից և գաղտնագերծումից, նրանց կապի տրամաբանական գարգացման ընթացքից բարձրանալ մինչև իրական ճանաչողություն, պատմական ժամանակի բացահայտում։

Եղիշե Զարենցի կյանքի ճանապարհն ու հայ ազգի պատմական ժամանակը 20-րդ դարասկզբին զուգահեռվեցին, ու թեև զուգահեռները չեն հատվում, նրանք հատվեցին ու զորվեցին միմյանց։ և 20-րդ դարասկզբի հայոց քառասուն տարիների պատմությունը դարձավ Եղ. Զարենցի կեն-

սապատումը, իսկ չարենցյան 40-ամյա կենսագրությունը հայոց կորուստների, տառապանքների, ցավերի պատմությունն էր: «Հայրենյաց ցավը բանաստեղծին համակեց շատ վաղ. 1915 թ. գրած «Կապուտաչյա հայրենիք» պոեմում հայրենիքը ներկայանում էր տիսլական, որը, արնաքամ ու ավերակ.

Օ՛, իմ հեռու, կապուտաչյա սիրուի,
Երկիր իմ որք, արնաքամ ու ավերակ...¹

Չատ շուտով հայրենացավի ախտամիշները կխորանան, որովհետև կապուտաչյա տեսիլքից հայրենիքը կվերածվի մորթված դիակների, դատարկված զյուղերի ու քաղաքների իրական դժոխքի: Մերկ նյարդերով 19-ամյա բանաստեղծը միսրճվում է իր ցեղի արյունու սպանդի մեջ և «մորթվում» նրա հետ. վերջերս միայն հոգերանները փորձում են քննել ու բացահայտել այն հոգերանական-բարոյական հետևանքները, որ կրել է հայ ժողովուրդը ցեղասպանության՝ ջարդի ու աքսորի տաիններին ու այնուհետև: Ֆիզիկական հայրենիքի և նյութական անդառնալի կորստի հետ ավելի քան կործանարար էր հայոց հոգուն հասցված հարվածը. հայի հոգին էր հիվանդանում, հոգենյութը աղավաղվում էր, օտարվում իր սկզբից և հակադրվում ինքն իրեն: Չէ՝ որ միարժեք էր հայ միլիոնների կործանման պատճառը. նրանց միտումնավոր օտարում էին բնօրրանից, ոչնչացնում էրնիկ պատկանելության համար: Իրողության խորքային գիտակցումը հայասպանդի միջով անցած ինտելեկտուալ հայի մեջ պիտի սրեր ինքնազոհարերման պահանջը, ցեղի փրկությունը իր կորստով ապահովելու ճիզը. «Թող ոչ մի զոհ չպահանջվի ինձնից բացի» տողի ծնունդը հետևանք էր հոգևոր ցնցումի, մորմոքի ու նյարդերի ծայրաստիճան լարման, որ Զարենցն ապրել էր՝ որպես կամա-

¹ Եղիշե Զարենց, Երկերի ժողովածու, հ. I, էջ 294 (Այսուհետև նույն ժողովածուից բոլոր մեջքերումների հղումները կնշվեն տեղում, միայն հատորը և էջը):

Վորական անցնելով Արևմտյան Հայաստանի տարածքով, բայց բնական մղումին զուգահեռվում էր հայամերժումի սրված զգացողությունը, զգացում, որ ավել կամ պակաս չափով իր հոգում կրում է յուրաքանչյուր հայ. հոգերանական բարդույթ, որն արդյունք է դարավոր պետականազրկության, անվերջ ֆիզիկական ու հոգևոր հալածանքի, պատմության ճանապարհի ողբերգական ընթացքի խեղարյուրված ընկալման, պատմական կեղծիքի, որը դարերով հրամցվել է որպես պարզունակ ճշմարտություն, և անպտուղիկ տալով, խարխլելով սեփական կեցության հիմները՝ շենք կարողացել տեսմել-ճանաչել իրական քշնամուն, փնտրել-գտնել անգո-անիրական հակառակորդին:

Ե՞րբ, ինչո՞ւ, ո՞ւմ դավադիր ձեռքով, ո՞ւմ խարդավանքի հետևանքով հայր կորցրեց իր պետականությունը, ինչո՞ւ գորեղ պետականության տեր, հոգու ու մտքի անպարազիծ ճկանակումներ ունեցող ազգը հայտնվեց հալածյալ խեղճի, աշխարհից գութ մուրացող արհամարհված մուրացիկի կարգավիճակում: Որտե՞ղ ենք քաղել ահեղ ճշմարտությունը: Չարենցի ստեղծագործության տարեզրությունը փաստում է, որ ստեղծագործական ճանապարհի բոլոր կետերում այս հարցադրումները ուղեկցել են բանաստեղծին, ժամանակ առ ժամանակ նա քեմաների, ժանրերի, ոճերի բազմազանության տիրույթում հաճախ պատրանք է ստեղծել, թե բոքափել է հայրենացավը, մոխրացրել է իր հոգու հրդեհը, անթեղել այն լուսավոր ապագայի ճգտումներում՝ Հայաստանի ուրվագծվող պետականության ներքո: Սորբվել ու տեղահանվել էր մի ամրող ժողովուրդ, մնացել էր մի փոքրիկ հողակտոր-երկիր, փրկվել էր մի մանուկ. նրան գուրգուրել էր պետք, պետք էր փարվել այդ գանգրահեր մանկամը, և Չարենցը դրդում էր նրա կյանքի համար, բայց հոգին լալիս էր, ցավը խորն էր, մանավանդ այն ահազնացավ և անտանելի դարձավ Կարսի անկումից հետո: Չարենցի համար դա հայրենյաց ողբերգության վերջին արարն էր, անդառնալի հարված Չարենց բանաստեղծին և մարդուն,

հային ու կարսեցում. կործանվել էր ոչ թե հոգևոր հայրենիքը, այլ ֆիզիկական, տարածական բնօրրանք, իր մանկության, պատանեկության աշխարհը: «Երկիր Նախրին» ծնվեց հայրենացավից, ցավ, որը երիտասարդ Զարենցին մղում էր խոսքի միջոցով ամրողացնել ազգային ողբերգությունը, դառնազին ծաղրով գեղարվեստական պատկերի վերածել Կարս քաղաքը, կարսեցուն, նրա կեցուրյունը՝ սկսած առաջին համաշխարհային պատերազմից մինչև Կարսի ամորթալի անկումը, մինչև հայոց ոգու բարոյալքուն ու քայլայունը: «Երկիր Նախրին» գրվեց Կարսի կորստից անմիջապես հետո: 1914-1921 թթ. տեղի ունեցած դեպքերը չեն հասցրել պատմություն դառնալ, բայց դրանք վերածվեցին գեղարվեստական պատումի՝ հեղինակի խորաքափանց հայացքի և ճանաչողության անպարազիծ հնարավորությունների շնորհիվ: Ի՞նչ էր ուզում ասել 24-ամյա Զարենցը «Երկիր Նախրի», վեպով՝ անողոքաբար խարազանելով ազգային կեցուրյան ու գաղափարաբանության բոլոր շերտերը, ցավազին ծաղրով ոճավորելով պատումի դրամատիկ ընթացքը: «Եղինակի սուր հայացքից չի վրիպում ազգային կյանքի ոչ մի մանրութ, որը կարող էր ճախապայման հանդիսանալ ապագա ողբերգական իրադարձությունների պատճառաբանման: Զարենցը վեպը գրեց 1921-1924 թթ. ժամանակահատվածում, որը գրականության պատմաբները համարում են Զարենցի կենսագրության ամենաանկայուն, գաղափարական մոլորությունների և ճախութունների շրջանը, ինչին վերագրվում են այն բոլոր թվացյալ թերությունները, որ նկատվում են վեպում տարրեր ուսումնասիրողների կողմից: Վեպում նկարագրվող դեպքերն ու դեմքերը հեղինակը գիտի հնարավոր մանրամասնությամբ, ու թեև փաստում է, որ իր վեպում հերոսներ չկան, սակայն որոշ կերպարներ իրենց արվեստով դառնում են ժամանակի հայ հասարակական-քաղաքական կյանքը բնութագրող տիպեր, իսկ Կարսի կառույցների կենդանի, ոգեղեն նկարագրությունը մի առանձին կերպար է դարձնում քաղաքը, որի

փառավոր պատմությանը հակադրվում է ոգեզուրկ ու ամենազ ներկան: Իսկ ինչո՞ւ է վեպը կոչվում «Երկիր Նախրի», ինչո՞ւ է Կարսի պատմությունը հեղինակը նույնացնում առ հասարակ հայրենիքի պատմությանը: Հեղինակ-հերոսը՝ Զարենցը, վեպի առաջարանում մորմոքող կարոտով փնտրում է պատմական Նախրին՝ որպես նյութական, քանձրացյալ իրողություն: «Չէ՞ր կարելի արդյոք տեսմել մարմնավոր, պատկերացնել հաստատ երկիրը Նախրի: Նու, թեկուզ հենց իրենց՝ նախրցիների կյանքում, կենցաղում: Ծոշափել այդ երևոյթը – նախրյանը - սրտով, շոշափել մարմնավոր, պատկերել երկրային... Գուցե սուտ է Նախրին, Նախրին – չկա... Գուցե հուշ է միայն, - ֆիկցիա, միֆ: -Ուղեղային մորմոք, սրտի հիվանդություն» (IV, 10): Այս տողերի գաղափարական մեկնությունը կեհմնավորի այն հայեցակարգը, որից սկսվում և որի վրա հենվում են վիպական կառույցի մյուս հանգուցային իմաստային կենտրոնները:

Կարսի պատմաքաղաքական իրադարձությունների և կարսեցու կեցության առօրեական դրսնորումների համադրում-զուգորդումը, աշխարհաքաղաքական իրադարձությունների և հայոց ազգային հիմնախնդիրների առնչակցությունը կամ խաչածնումը, և այդ բարդագույն հանգույցքնօտիկի մեջ ազգային գործիչների անհեռանկար, կարճատես, պառակտված գործունեությունը հանգեցնում են հայրենիքի կործանմանը, ոչ միայն Կարսի, այլև առհասարակ Արևմտյան Հայաստանի՝ պատմական Նախրիի վերջնական անկմանը: Կարսի կործանման մոդելը նույնանում էր Արևմտյան Հայաստանի մյուս գավառների ու քաղաքների կործանման պատմությանը, Ազգային գործիչների չհաշվեկշռված, ազգակործան քաղաքականությունը տարածվում էր ողջ Արևմտյան Հայաստանի վրա: Զարենցը վեպի երեք մասների համար ընտրել է խորհրդանշական քնարաններ: «Այստեղ Նախրյանն է նազում...» Տերյանի տողը երգիծական ենթատեքստով բացահայտում է հայրենյաց կացութաձևի այն շերտերը, որոնցում Զարենցը գորշություն, ան-

շարժություն, զաղափարի ու խոհի վտանգավոր բացակայություն է տեսնում. այս հենքի վրա էլ ծևավորվում է հայրենիքի ընկալման այն էական տարրերությունը, որ կա Տերյանի և Չարենցի բանաստեղծական ու փիլիսոփայական համակարգում. Տերյանը ազգային քշվառ կացությունից ելքը տեսնում է մշակութային վերելքի, հոգևոր դաշտի հզորացման միջոցով՝ հոգևոր Հայաստանի ծևավորումն համարելով նյութական հայրենիքի փրկության խարիսխը:

1914 թ. գրված «Հոգևոր Հայաստան» հոդվածում իր ավերված երկրի ապագայի փրկությունը կապելով հայոց իիվանդ հոգու վերակերտման, վերափոխման հետ՝ Տերյանը հավանաբար չէր կարող գուշակել մոտալուս ողբերգության ահռելի չափերը: Թեև չէր հավատում Տաճկահայաստանի ապագային, և հայության փրկությունը պայմանավորում էր միայն մշակութային-ոգեղեն գործոններով. «Իր աջքերը Հայաստանի դաշտերին ու սարերին հառած հայությունը պիտի ներշնչվի մի նոր ու առավել բարձր տեսչանքով, մի պարզ ու խորին գիտակցությամբ, մի անսասան բաղձանքով՝ կենդանություն ներշնչելու մեր կիսամեռ հոգևոր հայրենիքին, մեր ավերվող ու անդարձ անհետացող հոգևոր Հայաստանին: Զէ՝ որ նյութական կորուստները միշտ կարելի է վերադարձնել, իսկ հոգևոր կորուստն անդառնալի է»¹: Համաձայնելով Տերյանի դրույթին, որ անպայմանորեն հոգու իիվանդությունն է նախորդում մարմնի ախտահարմանը, և որ այդ իիվանդությունը գոնե 2000 տարվա պատմություն ուներ, պիտի կարևորենք չարենցյան պատմահայեցողությունը, որի պարագծում ընդգրկվում էին հայոց պատմության անցանկանալի ընթացքի բոլոր շրջադարձային հանգույցները, որոնք սպանել էին հայոց հոգին, և տևականորեն մահ ապրած ժողովուրդը գոյատևել էր ինքնամերժման, ցեղի հանդեպ սրված ատելության զգացողությամբ, իր գոյության հիմերը խարիսխող պարտադրված

¹ Վահան Տերյան, Երկեր, ՀՊ-Գ, էջ 349:

Կեցությամբ: Պետք էր նախ և առաջ պահպանել նյութական հայրենիքը, որովհետև յուրաքանչյուր էթնիկ միավորի տեսակի պոպուլյացիան և շարունակությունը հնարավոր էր Աստծուց նրան տրված տվյալ աշխարհագրական տարածքի սահմաններում: Հոգևոր դաշտի առկայությունը այս պարագայում անհրաժեշտ, քայլ ոչ պարտադիր պայման է: Հայտնի է, որ շատ ազգեր հզոր պետականություն և նյութական հայրենիք ստեղծեցին բռնության շնորհիվ՝ ոգեղեն դաշտի իսպառ բացակայությամբ, մշակութային արժեքների գրոյական մակարդակում: Դրսից մի աներևույթ թշնամի հայոց ընթացքի բնական աճը, արդեն կայացած ազգային մշակութային դաշտը ավերում, ջնջում էր, որպեսզի այնուեղ զրի մի կեղծ պատմություն հայի անգաղափար ճանապարհի, խեղճության ու ոգու սովոր մասին: «Երկիր Նահրի» վեպը ծախ մոլորությունների արդյունք չէր, դա հայոց պատմության միջաւ ընթերցման, աշխարհաճանաչողության և հզոր հայրենացավի արգասիք էր: Զարենցի վեպում ամենահաճախ հանդիպող խորհրդանշական պատկերը Կենտրոնական կեղծարդի պատկերն է, վեպի ամենասուր երգիծանքով ոճավորված հատվածը, ուր հեղինակը դառն հեզնանքով փորձում է բացել այն խնամքով թաքցրած ուժը, որը մեր դարավոր աղետների, ազգային բռլոր մեծ ու փոքր ողբերգությունների գաղափարական կազմակերպիչն ու սնուցողն է: Այսինքն՝ Զարենցը բացել է անկումների պատմության գաղտնիքը, որը ճպվում էր դարերի խորքից և հասնում է մեր ժամանակները: Հայոց ճակատագրի, լինելիության, պետականության, հավատի, բռլոր մեծ ու փոքր քաղաքական, սոցիալական խնդիրները լուծում է չգիտես՝ ով, չգիտես՝ որտեղ, անքացատրելի տրամարանությամբ, բացահայտ հայասիրության-հայափրկության ծրագրով, քողարկված, գաղտնագրված հայահալած, հայասպան միտումով: Կարսի անկման պատմությունը, ամբողջ Արևմտահայաստանի կործանման ընթացքը պատճառարանվում է դրանով՝ առերես բարեգործ, քողարկված թշնամու աներևույթ գոյու-

թյամբ: «Երևակայո՞ւմ եք՝ այնտեղ, իր անհայտ տեղում, սենյակում իր նստած՝ սարդային այդ ուղեղը կամ ուղեղային այդ սարդը կարող է շարժել, մի փոքր ճգել, տատանել հազարերորդ իր ճանկը, ճանկի ամենածայրը, և ահա ՆյուՅորքում այսինչ-այնինչ քելիկները, քելիկային մարդիկ կանեն, ինչ որ ինքը՝ Կենտրոնը կամենա, Կենտրոնառուղեղասարդը, իր հազար և մեկերորդ քելիկը, և ահա Ժնևում, Եվրոպայի մեջտեղում, նահրատառ «Դրշակի» վրա կշարվեն ահեղամոռնչ, գահակործան կոչեր...» (Ե. Զարենց, Երկերի ժողովածու, IV, 80): Դրսից եկած հրամանը առանց քննության իրագործում են տեղական «զյսավորաթելերը» «քելիկային մարդիկ» կամ «քելիկներից ամենաթելիկները» և չգիտես ինչու հայրենափրկիչ բոլոր ծրագրերը, որոնք խանդակառությամբ էին ընդունում և փորձում հրամանի տառին համաձայն իրագործել, ավարտվում էին արյունով, հայոց հոգու, մարմնի, իսկ այս դեպքում երկրի կործանումով: Ինչո՞ւ. չէ՞ որ հրաման-պարտադրանքները փրկություն էին բարբառում, չէ՞ որ իրագործողները դույզն-ինչ չէին կասկածում դրանց շահավետությանը: Դրսից եկած ազդեցիկ գրությունը բարբաջում էր «ըղձալի տեղեկություն» այն մասին, որ Առաջին համաշխարհային պատերազմը բերելու է հայոց հարցի լուծումը, հայր ոստիխ լծից ազատազրելու է իր հայրենիքը և ապրելու է երջանիկ, ստեղծագործ կյանքով: Եվ Աստծու պարզևած ուղեղի ոչ մի բջիջը, տրամարանության ոչ մի կենտրոնը շաշխատեցնելով՝ «ուռա՛» ենք գոյում ու գնում մահվան շքերթի՝ աշխարհաքաղաքական հզոր անցուդարձերի մեջ չտեսնելով վտանգը, ժամանակի լարած դավը և կորցնելով իրատեսությունը հորբային հրճվանքով մորթվում՝ ցավին անտեղյակ, պահին անհաղորդ չէ՞ որ մեզ հաղթանակ էին խոստացել. չէ՞ որ ճակատամարտի նախազիծը փրկություն էր ավետում:

Տրամարանությունը մեկն է. արտերկրում գործող թվացյալ հայտնի, իրականում եռոյժ գաղտնի կենտրոնները իրագործում են ծրագրեր, հայությանը հղում են զաղափարները,

որոնց վտանգավորությունը ի սկզբանի է, ավելին՝ դրանց վերջնական իրագործումը աղետ է հայության համար:

Չարենցը վեպ էր գրում ոչ թե Կարսի ողբերգության մասին, այլ որոնում էր առհասարակ հայության բնօրրանի՝ պատմական Նախրիի կործանման պատճառը: Պատճառը գտնված էր. Կենտրոնառողեղասարդի խորհրդանշական պատկերի միջոցով բացահայտվում էր օտար մի ազգակործան ուժի նպատակների, գաղափարների վտանգավորությունը, անպայմանորեն օտար, որովհետև նրա ծրագրերի վերջնակետը հայ տեսակի ոչնչացումն է: Այդ ուժը մոլորեցնում էր հայոց ազգային կուսակցություններին, ներկայանում արյունակից, իր փորձում հնարավոր նյութական ու գաղափարական զինանոցը ի նպաստ դնել հայության փրկության գործին: «Երկիր Նախրի» պատմական կոճենցիան ծախս որոնումների ու գաղափարական մոլորությունների արդյունք չէր. իր ստեղծագործական կյանքի վաղ շրջանից մինչև աշխարհայեցողության ու ճանաչողություն գաղափարական հասուն մակարդակ, մինչև «Գիրք ճանապարհի» և մինչ իր եղերական վախճանը Չարենցը մնաց հայոց պատմության ընկալման նույն շրջանակում, քսանինենց տարի շարունակ նա քննում էր այդ պատմությունը, «անցնում» նրա քառուղիներով, խորհում ու փնտրում ծշմարտությունը և զաղափարական այդ փնտրությունը հարցադրումների ու երրեմն ոչ ավարտուն պատասխանների ձևով հայտնվում էր նրա ստեղծագործություններում, որոնց թվաքրումը վկայում է, որ հարցադրումները բառամբերքի և ենթիմաստի առումով հարազատ են, երբեմն՝ նույնական:

1915 թ. Կարսում գրած «Կապուտաչյա հայրենիք» պոեմում ցավը ամոքող, լուսավոր վերջարանի պատրանք կամ հավատ կա, տեսլական հայրենիքը պայմանական կամ ենթադրական մի ժամանակում կերծանկացնի հայրենացավից տառապող սիրեցյալին:

Յավում է հոգիս ու խոցվում է խոր,
Վառվում է քա հին կարոտն իմ հոգում:
Քայց ինչո՞ւ է սիրտս այսպես բախտավոր,
Քայց ինչու է ցավն այսպես ամոքում... (I, 293)

Ամիսներ հետո կամավորական զինվոր Չարեցը հայրենաց ողբերգությունը պիտի զգա մարմնավոր, ցնորսի հոգով ու մտրով.

Եվ ո՞վ է լարում այսպիսի դավեր,
Կյանքը դարձնում նզովյալ գեին:

Հարցի պատասխանը նրան անմիջապես տաճում է դիցարանական ժամանակներ, երբ հայ ոգին հզոր էր, կամը՝ պարտադրող, հակատը՝ հաստատ: Քայց ե՞րբ կորցրինք մեր փրկության արևը, մեր քրի ուժը. «Թե մի՞՛ էիր դու» հարցադրումն ունի իր պատասխանը. ռազմի աստծո գաղափարի կործանումը ավերեց մեր կյանքի իիմերը, քանի որ ուժեղ ազգային զաղափարախոսությունն է ազգի գոյության հենարանը: Ուժի և հզորության փնտրութից պիտի ծնվի «Արիլլան», իսկ ազգային երազի իրազործումը հնարավոր է միայն ուժեղ արքայի և հզոր պետականության շնորհիվ, հակառակ դեպքում կրակից բուրդ փրկելու ապարդյուն ջանքերով կփորձնենք գոյատևել, քայց ոչ հայրենաց վերելքն ապահովել: Չարենցը իր ստեղծագործական հղացումները իրացրեց բազմազան գրական սեռերի, ժամերի, քեմաների ու ոճերի միջոցով: Ժամանակ առ ժամանակ ոգևորվելով հեղափոխությամբ, անձնական ու անանձնական տարարնույթ խոներով ու զաղափարներով՝ նա պարբերաբար վերադառնում էր ազգային ճակատագրի ցավոտ խնդիրներին: Հայրենիքի ապագայի լուսավոր տեսիլքը նա փայփայեց իր բոլոր ստեղծագործություններում՝ մոռթված, կորուսյալ երկրի ցավը մեղմելով նորօրյա Խորհրդային Հայաստանի պատկերով: Քայց անգամ սոցիալիզմի՝ հային ֆիզիկական ու մտավոր վերելք խոստացող ներկան նրան չկտրեց հայրենացավից: 1927 թ.

գրված «Խմբապետ Շավարշը» պռեմը վերադառնում էր համազգային ողբերգության ակունքներին, պատկերում ոգեղեն դաշտի լուծարման, բարոյալքման իրողությունները, դեմքը կորցրած, սեփական հղացումներ իրականացնելու անկարող ազգային գործիչների դրամատիկ վախճանը: Չարենցի ստեղծագործական երթի բարձրագույն աստիճանը «Գիրք ճանապարհի» ժողովածուն էր: Ո՞ւմ ճանապարհի մատյան էր դա՝ Եղ. Չարենցի՝ թե՝ հայ ազգի. թե՝ մեկը, թե՝ մյուսը: Պատմական ծշմարտության որոնումը նրան տանում է մինչև առասպելյալ Հայկ, մինչև անգո, անիրական ճախնիմերի ինքնության առեղծվածի շեմը: Լերկ կողերով ու քննուս զայլի խորհրդանշական պատկերը՝ որպես էքնոսի պաշտամունքի առարկա, խտացնում է ազգային գաղափարաբանության ախտահարված վիճակը. չունես ուժեղ աստվածներ, չունես ամուր պատմաքաղաքական գոյավիճակ: Միանշանակ է, որ ազգի հանրային կյանքը կարգավորող ինստիտուտները՝ պետությունն ու եկեղեցին պիտի պաշտպանեն նրա հոգևոր ու ֆիզիկական ներուժն ու աճը՝ հենվելով միայն հայրենական ծագում ունեցող ազգապահան ծրագրերին: Պետությունն ու եկեղեցին, 4-րդ դարից սկսած, սնվում էին օտար գաղափարներով, հաճախ հակադրվում էին ներքաղաքական շահերով, և երկրի կառավարման համար պետության և եկեղեցու մրցակցությունն ավարտվեց պետականության կորստով: Հինգերորդ դարում պատմանշակութային խոպան իրականության մեջ ծնվեցին երկեր, որոնք առաջին հայացքից մշակութարանական ու գաղափարախոսական հզոր գարգացում էին ապահովում, փորձում պատախանել այն հարցերին, որ ենսոն պիտի բարձրացներ ճան Չարենցը՝ «ի՞նչ եք եղել երեկ և ի՞նչ պիտի լինենք վաղը»: Ո՞վ ենք մենք, որտեղից ենք զայիս և ո՞ւր ենք զնում: Մրափ գիտական հայացքը փաստում է, որ երբեմն հայ պատմիչը (արդյո՞ք հայ) աղավաղված փաստերով էր ներկայացնում հայոց պատմությունը, քանի որ զրում էր պատվերով:

Չարենցը «Գիրք ճանապարհի» ժողովածուում փորձեց յուրովի վերականգնել հայոց պատմության կորած, կեղծված, զադանագրված էջերը: Արդյունքում ստացվեց այսպիսի դաժան պատկեր. նախահայր, որի գոյությունը կասկածելի է, դաշտանանք, որն ուղղված է հիվանդ ու խեղճ աստվածներին, իսկ ախտածին զաղափարները ծնում են անկայուն կացություններ, ի սկզբանե վտանգված աշխարհաքառական բախումներ, արդյունքում՝ թղթե Ավարայր ու բորբ շերեփ:

Չարենցը տվեց «Սասնա ծոեր» էպոսի անճախաղեայ մեկնարանությունը. փառարաններով հայ ժողովրդին, նրա ստեղծագործ ներուժը՝ պատկերեց հայոց նախարարների, իշխանների, առհասարակ ղեկավարների վախկոտ, անկամ, օտարահած ու ազգադավ գործելակերպը, որի հետևանքով բանտվում են արքաներ, մորթվում սպարապետեր, դաշտան ու անքար հայտարարվում պետականության իրական պահապանները.

Օ՛, ոյուցազն Սիեր, ռամիկ դու այր,
Առյուծ-Սիերի շավի ղ պայծառ,
Դյուցազու ն վերջին ռամի կ արդար,
Ձե՛ որ ժողովրդի ստեղծարար, -
Ուժեր կործանիչ, և՛ մութ, և՛ չար
Քարայրում այն մութ, միզում խավար
Փակեցին ահով քո դեմքը վառ
Եվ գալիք քենից սարսափահար՝
Հայտարարնեցին քեզ նեռ ու չար,
Որ չելնես մի օր, նրանց համար
Չքերես անկում, ու մուժ, ու մահ ... (հ. 3, էջ 29)

Չարենցյան ժամանակների համազգային ողբերգության վերջին արարը 1937 թվականն էր. գործում էր նույն օտար ձեռքը, հայասպան նույն զաղափարը. մորթվում էր ազգի մարմինը, միտքը, հոգին: Մի նոր եղեռն եղեռնից ուշքի չեկած հայ ազգի համար:

ՍԱԹԵՆԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԵՎԻԾԵ ԶԱՐԵՆՑ ԵՎ ՎԱԶԳԵՆ ՇՈՒԾԱՆՅԱՆ (հարցադրման փորձ)

Չարենցը և Շուշանյանը ապրել են իրարից հեռու, բոլորովին տարբեր միջավայրերում, սակայն երկուսն էլ իրենց ժամանակի կրողն էին: Չարենցն ինքնատիպ երևոյթ էր Խորհրդային Հայաստանում, իսկ Շուշանյանն իր ըմբռաստ խառնվածքով, ինչպես նաև իր գրականությամբ առանձնանում էր ֆրանսահայ մտավորականության շրջանում: Որքան էլ տարբեր են այս երկու հեղինակներն իրենց ստեղծագործություններով, այնքան էլ նման են իրենց հայցըներով: Եվ այդ նմանությունը ոչ թե սուկ պատահականություն է, այլ խիստ տրամարանական է ու բնական, քանի որ երկու հեղինակներին էլ մտահոգել է այն ժամանակը, որում իրենք ապրում և ստեղծագործում էին, և այն բոլոր խմբիրները՝ թե՛ ստեղծագործական, թե՛ մշակութային, թե՛ քաղաքական, թե՛ գաղափարական, որոնք առաջադրում էր ժամանակը:

Դժվար է ասել՝ ծանոթ է եղել Չարենցը Շուշանյանի ստեղծագործություններին, բայց վստահաբար կարող ենք ասել, որ Շուշանյանը քաջատեղյակ է եղել Չարենցի ստեղծագործություններին և ուշի-ուշով հետևել է նրա ստեղծագործական կյանքի զարգացման ընթացքին. «Ոչինչ դիրին է կեանքի մէջ ու ամէն ինչ անստուգութիւն է լոկ ու մնայուն ծիգ, բոլոր անոնց համար՝ որ ընդունակ են գէք իրենց ներքին անդունդի եղերքը կենալու, առանց զլիսի պտոյսի... Այդպէս էր մեր երկրին վերջին քառորդ դարու լաւագոյն քանաստեղծը Եղիշէ Չարենց: Տարերային ու սանձարեկ երիտասարդութեամբ մը, յեղափոխութեան նորահրաշ ալիքնե-

բուն խորեն՝ նետուեցաւ կեանքին հրապարակը,- սկիզբը
վստահ ըլլալով թէ ոչ միայն կեանքը, այլև բանաստեղծու-
թիւնը դիրին էին: Այդ որոտուն, այդ աղմկարար ու սրտա-
պանիչ խուժումը՝ որով կ'ուզէր խորտակել բոլոր ամրար-
տակները: Որքան արագութեամբ մոռցաւ իր սկզբնական
ու պատիկ մեղքերը: Այն բոլոր հարուածները, որ զուարք,
աշխայժ ու յեղափոխական կշռոյթով մը կը շռայէր՝ բոլոր
միւսներուն, քիչ մը նաև իրեն չէի՞ն վերաբերեր միրէ: Զիչ մը
անկապաշտ ու քիչ մը քաղցրօրէն յուսահատ չէի՞ն միրէ իր
առաջին երգերը ևս: Ու յեղափոխութեան այս երիտասարդ
իշխանը, սկիզբը, չէ՞ր ջանացած միրէ Սիամանքոյի կշռոյթն
ու որոտը իրացնել՝ ընդօրինակելով անոր երգերուն արտա-
քին մեքենականութիւնը, - ինչպէս որ աւելի յետոյ ըրաւ Սա-
յաթ-Նովայի տաղերուն հետ: Կ'արշաւէր, ամէ՞ն ընդդիմու-
թենէ եւ ամէ՞ն խոչընդուներէ ազատ մեր գրականութեան
ճամբաներուն վրայ,- մանուկի մը պէս, որուն բարդ ու զեղե-
ցիկ մեքենաներ կը վստահի կեանքը, յեղակարծօրէն: Այդ
մանուկին պէս՝ ան կը խաղար սկիզբը հայոց լեզուին հետ,
մինչև որ այդ լեզուն իր վրէժը լուծեց, նուրք վրէժխնդրութիւն
մը սակայն,- որուն ձգած սայինները անջնջելի են: Ո՛չ, կեան-
քը դիրին չէր, բանաստեղծութիւնը դիրին չէր ու հայոց լե-
զուն դիրին չէր... Չարենց, քիչ մը ուշ թէն, բայց յաջողած էր
այրել կեանքի հանգրուանները, ու մօտեցած էր անդունդին: Այդ անդունդին եղերքն էր այլս, մարդու և արուեստագէտի
իր ամրող տառապանքովը, յուզիչ ու անձկալի»¹: Օրա-
գրային այս գրառումը արված է 1941 քվականին, սակայն
դեռևս 1925 թ. «Յառաջ»-ում տպագրված իր հոդվածներից
մեկում՝ «Խորհրդածութիւններ մեր նորագոյն գրականու-
թեան մասին», Ծուշանան առանձնացնում է երկու բանա-
ստեղծի՝ Լևոն-Զավեն Սյուրմելյան և Եղիշե Չարենց. «Մէկը
Եղիշէ Չարենցը ... առաւելութիւնը ունի ապագային բանա-

¹ Վ. Ծուշանան, Օրագիր, Երևան, «Նոր-Դար» հրատ., 1999, 412
էջ, էջ 174-176:
170

ստեղծը ըլլալու»¹: Եվ Ծուշանյանը չի սխալվել:

Զարենցի և Ծուշանյանի քաղաքական հայացքների զարգացման կորը գրեթե նույնն է: Առաջին համաշխարհային պատերազմ, իսկ հետո 1915 թվական, Մեծ ոճիր: Ֆեղաստանությունը իր ազդեցությունն ունեցավ թե՛ արևելահայ հատվածների վրա: Այն պատճառ դարձավ նոր զաղափարաբանության, ինչպես նաև հայի նոր տեսակի ճևավորման համար և միաժամանակ հիմք դրեց մի նոր գրականության, որ պիտի կոչվեր սփյուռքահայ: Երկու հատվածներն էլ ունեին իրենց մտահոգությունները, որոնք որքան տարբեր, այնքան էլ նույնական էին:

Զարենցը, ոգևորված հայրենիքի ազատազրության, փրկության զաղափարով, հայտնվում է կամավորականների շարքերում և դատնում ականատեսը Արևմտյան Հայաստանում տեղի ունեցածի: Ծուշանյանն ականատեսից բացի նաև «զոհերի» շարքում է: «Ես մէկն եմ օրինակ աղէտը իր ամրող ուժգնութեամբ ապրողներէն... Չորս մեռել ունիմ ուսերուս վրայ»²: Ապա հաջորդում է խորին հիասքափությունը և հուսահատությունը: Առաջին տպավորությունները արտացոլվեցին Զարենցի «Դանքեական առասպել», «Վահագն», «Ազգային երազ»..., իսկ հետագայում՝ «Գիրք ճանապարհիի» պոեմներում, իսկ Ծուշանյանի դեպքում արհավիրքից ստացած ցավը, կորուստը, կարուտը, ապա նաև հիասքափությունը արտացոլվեցին նրա վաղ շրջանի բանաստեղծություններում, արձակ երկերում, ինչպես նաև՝ «Երկիր հիշատակաց» պոեմում և գրեթե բոլոր ստեղծագործություններում շարունակվեցին կարմիր թելի պես, տպավորություններ ու գնահատականներ, որոնք այլևս փոփոխության չենքարկվեցին, այլ աստիճանաբար ավելի սրվեցին: Պետք է նշենք, որ այդ հիասքափությունը, ժիստովական վերաբերմունքը առաջին հերթին սկիզբ էր առել, բնականաբար, իրականությունից

¹ Յառաջ, 1925, 6 Դեկտեմբերի, էջ 2:

² Վ. Ծուշանյան, Ալեկոծ տարիներ (անտիպ), 1932-35 թթ., տետր 1-ին, էջ 51, 52:

և ամենկին էլ պայմանավորված չէր ժամանակի զաղափարախոսությամբ, թեև ժամանակաշրջանի ընդհանուր մքնություր, ընդհանուր գաղափարաբանությունը և որոշ չափով կարող էր իր ազդեցությունն ունենալ և՛ Զարենցի, և՛ Ծուշանյանի աշխարհայացքի ձևավորման վրա: Երկու հեղինակներն էլ ապրել, հենց իրենք զգացել էին հայ մարդու ողբերգությունը, և այդ գնահատականները չին բխում որևէ կուսակցության շահերից, թեև դրա համար հիմքեր կային: Ծուշանյանի, ինչպես և Զարենցի, քննադատության կիզակետում դեռևս ոչ թե այս կամ այն կուսակցության ներկայացուցիչներն էին, այլ ճրանք ողբերգության պատճառը տեսնում էին նախ և առաջ հայ ժողովրդի մեջ:

Ծուշանյանը գրում է.

...Ու բոլորս ճեր ապալեր նզերքներուն վրա,
մահվան ճամփաներ,

Եղամք վատ ու անարի:

Չեմ զիտեր, գուցն ծծած արյունիս էր հանցավոր,
մեր մայրերը

Գուցն մեզ դիեցուցած էին

Վատության և իգության սև կարով: Որովհետև կրնայինք՝

Սեր քույրերուն գլուխները զախչախող ճնոքերը խածնել...

Դժվա՞ր էր միքն ծագն ծագ, անոնց խմած ջրերը

Սեր ատելության ժահրով քունավորել...

Քաջության ճակատագրական պահերուն սակայն՝

Մեմք քույլ եղամք, հեղոգ ու դաշաճան: Ու մեր ծույլ արյունը

Սեր մանուկներուն մեկ կարի արտասուրն իսկ չէր արժեր:

Կրնայինք ինչպես ժանտ մավրիտանացին,

Այդ քշվառականները եղրայրությամբ համրութել,

Զանոնք ժանտախտով վարակելու համար:

Մեռանք ծեր ու չուառ ճիերուն պես, որ իրենց ճակտին

Ապերախտ տիրոջ մահվան մուրճը կընդունին:

...Անքափանց ու օտար հողը քրջեցինք այս զեշ արյունովը.

Ու սեփական արյան քուրումն իսկ մեզ չզիմնեց:

(ընդգ. մերն են – Ս. Մ.):¹

¹ Վ. Ծուշանյան, Երկիր հիշատակաց, Երևան, 1966, էջ 380:

Չարենցի «Դանթեական առասպելում» երբեմն նոյնիսկ նատուրալիստական երանգով ներկայացվում են պատերազմի հետևանքները, հեղինակը հասնում է ողբերգական ինքնազիտակցման. «Սենք՝ զոհ, մենք՝ դահիծ՝ ուրիշի ձեռքում»: Սակայն պոեմի վերջում Չարենցը կարողանում է գտնել աշխարհիացման իր պատուհանը.

...Ու պե՞տք է քայլե՞լ ու քայլե՞լ համառ՝

Ապրելու հսկա տեսչը բեռ արած...¹

Նոյնին է նաև *Ծուշանյանի պարագայում*.

Կարևորը

Ապրելն էր: Եւ ապրելը նպատակ էր ու բարոյական²:

Որքան էլ ցավը մեծ է, այնուամենայնիվ նրանց ստեղծագործություններում դեռևս կա հավատը:

Եթե նախորդ ստեղծագործություններում Չարենցը խոսում էր միայն ողբերգության մասին, ապա «Ազգային երազ» պոեմում արդեն փորձում է գտնել մեղավորներին. Չարենցի համար քննադատության բիրախն են դառնում մեր մտավորականությունը, կուսակցական գործիչները, նրանց վարած «քաղաքականությունը»:

Սակայն հետաքրքրականն այն է, որ նրանցից և ոչ մեկը այս շրջանում վրեժի, պայքարի կոչ չի անում (իհարկե, հետո *Ծուշանյանը* պիտի բարձրածայնի չորրորդ դասակարգի ազատագրության մասին, ինչպես նաև արյան ազատության): Ինչո՞ւ: Դժվար է որևէ լիարժեք բացատրություն տալ: Թերևս միակ պատճառը ազատագրական պայքարին չհավատալի է:

Նման վերաբերմունքի պատճառներն այդքան էլ տարրեր չեն: *Ծուշանյանի հիասքափությունը* դեռ ծնունդ էր մեծ ցավի, ողբերգության, հայրենիքի համդեա ունեցած մեծ սիրո, ափսոսանքի, այնինչ Չարենցի մոտ այն ծայրա-

¹ Եղ. Չարենց, Երկեր, ՀՊԳ, Երևան, 1983, էջ 131:

² Վ. Ծուշանյան, Երկիր հիշատակաց, էջ 403:

հեղության է հասնում: Այստեղ թերևս տեղին է հիշատակել սփյուռքի մեկ այլ հեղինակի՝ Ը. Շահնուրին, որի մեջ առաջին հերթին խոսում էր ամոռը: Բայց տարիներ անց Ծուշանյանն էլ, որ խիստ քննադատության էր ենթարկել Շահնուրին իր «Մարդ մը որ Արարատ չունի իր եղանակ խորը» հայտնի գործի մեջ՝ նրա հայաստանության, ազգուրացության համար, ինքը պետք է գրի. «Տարիներէ իվեր հայ ըլլալը պատի մը, արժանաւորութիւն մը չէ, այլ անօրինակ նուաստութիւն մը: Օտար երկրներու մէջ հասակ նետած մեր սերունդը զիտէ այդ տաժանելի ամօրը: ... Մեզմէ իրաքանչիւրը այս ազգային ամօրէն ստացած է իր լեղի բաժինը»¹: Առաջին հայացքից կարող է քվալ, թե Ծուշանյանը հակասում, ժիստում է նախ ինքն իրեն: Սակայն պետք է ասենք, որ Ծուշանյանի ստեղծագործությունների և երապարակախոսության հատվածային վերլուծությունը բերում է այն եղակացության, թե Ծուշանյան հեղինակը, երապարակախոսը և արվեստագետը հաճախ բախվում են իրենց հայացքներով ու գնահատականներով, իրենց ճակատագրերով: Եվ միայն ամբողջության մեջ է նկատելի, թե որքան միասնական է Ծուշանյան-մարդը:

Չարենցի «Գիրք ճանապարհիի» մի շարք պոեմներին իր շնչով, իր մոտեցումներով ինչ-ոչ չափով մերձենում է «Ներքին դաշտանկարը», թեև Ծուշանյանն այստեղ քննադատում է հենց Չարենցին. «...զայրույթս կոկորդս կը ճանկուե, վասնզի բոլոր մեծ «Պուետ»ները՝ Սակուցի (ընդզ. մերն է) ըլլան թե իրեական անարգ արյամբ, բոլոր ճպոտի հարվածներով երգող ճպուռները չեն կրնար արգիլել, որ մտածեմ, թե կրկին ուրիշին սվիններուն կը հենուս... ճիշտ է, հոռվմեական լեզեռնները չեն, որ սահմաններդ կը պաշտպանեն, այլ տասնըմեկերորդ զորարածնի կարմիր զինվորները»²:

Ծուշանյանը, որը խիստ քննադատության ենթարկեց Ը.

¹ Վ. Ծուշանյան, Ալեկոծ տարիներ, էջ 175:

² Վ. Ծուշանյան, Ներքին դաշտանկար, Երևան, 1995, էջ 251:

Ծահնուրին, մերժեց Զարենցին և ապա իր օրագրերում, «Ալեկոծ տարիներ»-ում ու իր եռագրության՝ «Խառնի-խուռն», «Ներքին դաշտանկար», «Քրոնիկոն քնարական», շատ էջերում գրում էր տողեր, որոնք կարծես թե Զարենցից, Ծահնուրից վերցված լինեին: Եվ այդ դեպքում ինչո՞վ էր պայմանավորված այդ անհանդուրժողական վերաբերմունքը Ծահնուրի նկատմամբ: Այսօր դժվար է որևէ կոնկրետ գնահատական տալ: Կարող ենք միայն որոշ ենթադրություններ անել: Ծուշանյանը իր օրագրում գրում է. «...հաճարտութիւն մը, որ կը զգամ, մահուան հետ քաղցր հաշտութենէ մը կու զայ: Ինձ կը թուի թէ առանց կորսնցուցած ըլլալու հոգույս խանդավառութիւնը՝ այժմ կրնամ աւելի պաղարիւնութեամբ դատել մարդիկը ու դէպքերուն ընծայել իրենց ծիշդ կարևորութիւնը»¹:

Վերը հիշատակած գործի մեջ Ծուշանյանը խոսում է մաս Զարենցի մասին՝ ի հակառակություն Ծահնուրի. «Արդարև այն անգույն ու գեշ հեղուկը, որ կհոսի Ծահնուրի մը երակներեն կրնա՝ փոխարինել միքե այս ներքին կրակներեն բոցավառ արյունը, որ կբնա ու կդղորդե, որ երբեմն ավանդության կամուրջներն ու գեղագիտական պատճենները քանձելով արշավասույր կիսուժեն՝ և եփելու և գոռալու համար Զարենցի մը գրականության մեջ»²: Զարենցին նա էլի է հիշատակում, ընդ որում միայն գովերգում է նրան և նրա գրականությունը: Ինչո՞ւ: Մի՞թե Ծուշանյանը ծանոթ չէր Զարենցի «Գիրք ճանապարհի» ժողովածուում տեղ գտած պոեմներին: Հազիվ թե: Իսկ միգուցե Զարենցի ողբերգական վախճանը նրան թույլ չէր տալիս իր քննադատության համար թիրախ դարձնել նաև նրան, նրա պոեմները: Դարձյալ կարող ենք միայն ենթադրություններ անել...

Պատմությունը Ծուշանյանի համար եղել է իր մանկության գլխավոր կրթերից մեկը, մշտապես ոգևորվել է մեր

¹ ԳԱԹ, Վ. Ծուշանյանի ֆոնդ, թիվ 10, Օրագիր, 1936-1937-1938, էջ 74:

² Նորք, 1989, թիվ 9, էջ 39:

հերոսական անցյալով։ Նա ուզում էր անցյալը վերաիմաստավորելու ճանապարհով, անցյալից դասեր քաղելով շարունակել գնալ առաջ՝ ի տարբերություն Չարենցի, որը պատկերում է մեր անցյալը միայն սև, մոայլ գույներով և քննադատում անցյալով ապրողներին։ Բայց տարիներ անց հենց Ծուշանյանն էլ պիտի կասկածի տակ դներ մեր անցյալը, մեր «ամոքապարտ պատմությունը»։ Նա քննադատում էր մեր ժողովրդին «հաւաքական գիտակցութեան ու կամքի գիտակցութեան», «հաւաքական յիշողութեան բացակայութեան» համար։ Երրեմն-երրեմն նա փորձում է մեղմել իր զայրույթը, գտնել արդարացման ինչ-որ պատճառներ։ «Մեր բարոյական անկման գլխաւոր պատճառները անշուշտ մեծ մասամբ հետևանքն են մեր դարաւոր գերութեան ու աքսորին»։ Բայց սրան հաջորդող գնահատականներն առավել խիստ են, առանց որևէ հանդուրժողականության։ «Որքան ախտածէս ու հակալրելի է այժմ՝ այս մուրացկան կնոջ ափերը աշխարհին պարզած մեր տրտում մայրը, որ կը կոչուի քափառական, աքսորական Հայատան։ Զայն իրապէս սիրելու համար հարկ է անձնուրաց յեղափոխականի հոգի ունենալ և կամ նմանիլ այն սուրբին, որ բորստներուն կը մօտենար աներկիլու սրտով, որ կը պառկէր անոնց հետ,- վասնզի անչափելի ու ամբողջական էր դէպի մեղաւոր մարդը իր տածած սէրը»¹։ Սակայն Ծուշանյանը, լինելով հեղափոխական ոռմանտիզմի դիրքերում, հաճախ է բացարձականացնում պայքարի դերը և հաճախ սուրբեկտիվ տեսանկյունից մեկնում պատմական անցքերը։

Հայացքների այդ հակասականությունը բխում է ներքին դրամայից, ինչպես արդեն նշեցինք, արվեստագետի, մտավորականի և քաղաքացու ճակատագրերի բախումից։ Պետք է ասենք նաև, որ երկու հեղինակների համար էլ առաջնային էր քաղաքացի լինելը։

Չարենց. «Ես մարդ եմ, պոետ ու քաղաքացի»,

¹ Վ. Ծուշանեան, Ալիկոծ տարիներ, էջ 180։

Ծուշանյան. «Նախ քաղաքացի, ապա պուէտ», «Քրական արուեստագէտը պիտի ըլլայ մեծ քաղաքացի»:

Եվ Զարենց, և՝ Ծուշանյան մարդը և հասարակական գործիչը իրենց գործունեության ընթացքում հաճախ են բախվել իրականությանը ու պարտություն կրել: Երկու հեղինակների ներքին տագմապը, խռովքը ազգային ճակատագրի գիտակցումից էր ծնվում: Ինչպես Զարենցի «Գիրք ճանապարհին», այնպես էլ Ծուշանյանի «Խառնիխուուն», «Ներքին դաշտանկար», «Քրոնիկոն քնարական» եռագրությունը միայն ներքին դրամայի արտահայտություն չէր:

Ենք կարող ասել նաև՝ ճախսահեղափոխական շրջանում պատկանե՞լ է Զարենցը որևէ կուսակցության, թե՞ ոչ. համենայն դեպքու ոչ մի փաստ, ոչ մի աղբյուր չկադրա մասին: Հայտնի է, որ Ծուշանյանը քունդ դաշնակցական էր: Դաշնակցության շարքերն է անցել Հայաստանում այն ժամանակ, երբ այստեղ նոր էին հաստատվել խորհրդային կարգերը: Այդ իրադարձությունների մասին նա խոսում է «Սիրոյ եւ արկածի տղաքը» վեպում: Ատելություն, հիասքափություն, սակայն տարիներ անց, երբ հիասքափում և հեռանում է Դաշնակցությունից՝ այնուամենայնիվ հոգով մնալով դաշնակցական, քննադատում է կուսակցական գործիշներին, սկսում է գովերգել հեղափոխությունը, խորհրդային կարգերի հաստատումը, պրոետարիատին, ոգևորվում դրանով, ինչպես և Զարենցը.

Ինչպես աշխարհի ճորտերին քոլոր,
Այնպես էլ զերի աշխարհին իմ հին –
Երկինք մի մաքուր, արև մի քոսոր
Լոկ հոկտեմբերյան հողմերը տվին¹:

Հեղափոխություն. խորհրդային կարգերի հաստատում: Զարենցի համար հեղափոխությունն ավելին էր. այն դառնում է ստեղծագործական մեթոդի շրջադարձի պատճառ. պոեմներ, շարքեր՝ նվիրված Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակին:

¹ Եղ. Զարենց, Երկեր, ՀՊ-Գ, Երևան, 1983, էջ 380:

Ե՞ղ Չարենցը, և՝ Ծուշանյանը կարծում էին, թե հեղափոխությունը կարող է նախապայման դառնալ մարդկային ազատագրության համար։ Խորհրդային Հայաստանը փրկություն էր բվում բոլորի համար՝ անկախ որևէ գաղափարախոսությունից կամ որևէ կուսակցության պատկանելությունից։ Կար մեկ հիմնական մոտեցում՝ հայության համար ողջ երկրագնդի վրա կա ընդամենք մի փոքրկ հողակտոր՝ Հայաստան աշխարհ, առանց որի հնարավոր չէ պատկերացնել հայության ապագան։ Այդպես էին կարծում և նրանք, ովքեր ապրում ու ստեղծագործում էին հայրենիքում, և՝ նրանք, ովքեր հեռու էին հայրենիքից։

Դաշնակցությունից հեռանալուց հետո Ծուշանյանն ավելի հստակ ըմբռնեց հայրենիքի և սիյուռքի միջև եղած քաղաքական վերաբերմունքների, մոտեցումների հարցում հանդուրժողականության կարևորությունը. «Բոլորին առջեւ՝ ըլլանք ուղղափառ Մարքսեան թէ պարզապէս յեղափոխական, ուամկավար թէ յետադիմական դրուած է նոյն հարցումը.՝ Կ'ուզես, որ ապրի ու իր կարելիութիւնները լրիւ օգտագործէ հայոց ժողովուրդը։ Կա՞րելի է յանուն որևէ վարդապետութեան մերժել, Ժխտել այդ իրաւունքը, որպէս հայ ազգ ապրելու պահանջը։ Ո՞չ, հապա ուրեմն ի՞նչու լուս, զրեք մեղսակից հանդիսատես կ'ըլլաս այս դանդաղ, յուզիչ մահուան։ Տե՛ս, ինչպէս աստիճանաբար կը մահանայ այս վաղեսի ժողովուրդը»¹։ Նա սիյուռքահայության խնդիրների լուծումը կապում էր միայն հայրենիքի հետ։ Եվ պատահական չէ, որ Ծուշանյանն էլ 1934 թ. Խորհրդային Հայաստան վերադառնալու դիմում է ներկայացրել, քանի որ «ես մէկն եմ անոնցմէ, որ աւելի քան պատրաստ են երկրի մէջ որևէ համեստ աշխատանքի լծուիլ, քնական ու պատուարեր պայմաններու մէջ, վախանակ իրենց ուկորները ձգելու ֆրանսական գերեզմանատան մը մէջ»²։ Նրա

¹ Վ. Ծուշանեան, Խառնիխուռն, Երևան, 2001, էջ 203։

² ԳԱԹ, Վ. Ծուշանյանի փոնդ, թիվ 12, Զանազան բղեկը, հաշիններ եւ այլն, Մարտկոցի առընչութեանք ի՞նչ որ անհրաժեշտ էր ըսել..., էջ 29։

դիմումը բարեբախտաբար մերժվել էր: Բարեբախտաբար, որովհետև հակառակ դեպքում նա անպայմանորեն կհայտնվեր 1937-ի զոհերի շարքում: *Ծուշանյանը* եղավ 1937 թ. դեպքերի առաջին արձագանքողմերից մեկը սփյուռքում: Նա հոդված էր ուղարկել («Բաց նամակ արտասահմանի հայ մտաւորականութեան, եթէ ողջ է դեռ») «Յառաջ»-ի խմբագրություն, սակայն հոդվածը պարզ պատճառով չէր տպագրվել: Հոդվածը գրվել է 1937 թ. հուլիսին:

Սփյուռքում ևս իրավիճակը լավագույններից չէր. սփյուռքահայությունը չգիտեր, թե որ կորմ ուղղի իր հայացը, քանի որ նրանցից շատերը «...Զեն կրնար բաժնել ոչ Խորհրդային կառավարութեան գործելու վատքար ու յետադիմական եղանակները, ոչ ալ կրնան ընդունիլ Հ. Յ. Դաշնակցութեան կորուվագուրկ ու ծերացած դեկապարութեան երկդիմի, անսույզ, անկերպարան ու մանաւանդ շուարեալ քաղաքականութինը»¹: Դրան ավելացրած նաև ծովման վտանգը:

Չարենցը, ինչպես և ֆրանսահայ երիտասարդ մտավորականների մի ողջ սերունդ, այդ քվում՝ *Ծուշանյանը*, իր համար ծրագրային խնդիր էր դարձել մարդու ներքին աշխարհի քննությունը. հայացը ուղղել դեպի ներս և սկսել «յաշունյարդար» նախ ինքներս մեզ հետ: Չարենցի համար այդ նշանակությունն ունեցավ նախ «Գիրք ճանապարհին», ապա «Էպիքական լուսաբացը», իսկ *Ծուշանյանի* համար ծրագրային արժեք ստացավ «Ամրան գիշերները», որը նաև ժամային կայացման առաջին լուրջ փորձ էր: Ամառը խորհրդանշում էր կյանքի իմաստնության շրջանը, այն էպիկական հասողությունը, որին արվում են մեր երկու հեղինակների գիշերները: Դրան հաջորդելու էին վերևում հիշատակված եռագրությունը, «Յաշունյարդարը», «Տենդերը»:

Սա առաջին անդրադարձն է Չարենց և *Ծուշանյան* ստեղծագործական, զաղափարական առնչություններին, և կարծում ենք, որ այստեղ արծարծված հարցադրությունները լուրջ զիտական ուսումնասիրության անհրաժեշտություն ունեն:

¹ ԳԱԹ, Վ. Ծուշանյան, Օրագիր, էջ 4:

ՎԱՀՐԱՄ ԴԱՆԻԵԼԹԱՆ

ԶԱՐԵՆՑԻ ՆՈՐ ԸՆՏՐԱՆԻՆ (անհրաժեշտ մի քանի լուսանցքագրումներ)

Ժամանակը «ստեղծում է» իր գրողին ու նշանավորվում իր ստեղծածով: Ժամանակը նաև եսասեր է ու դժվար է բաժանվում իր ստեղծածից: Սերունդների կոիվը անցյալից իրենց պատկանող արժեքների պեղումով է նաև նշանավորվում: Հաճախ մոլորվելով ու թյուրիմացությունների մեջ հայտնվելով է ընթանում այդ կոիվը, բայց որոնողի առաքելությունը սուրբ է, և գտնողին հաճախ ներվում են ընթացիկ վրիպումները: Եղիշե Զարենցի բանաստեղծական ժառանգության պեղումները քվում ե՝ երբեք չեն ընդհատվել ու չեն ընդհատվելու: Այս ընթացքում եղել են և՝ արժեքավոր հայտնություններ, և՝ ճախողված «զյուտեր»: Գրական մի քանի սերնդի բանավեճերի գլխավոր փորձաքարն է եղել գրողի ժառանգության հեղինակային իրավունքների ծառումն ու ծեռագրերի վերծանումը: Զարենցյան խոսքի մի չհրապարակված պատառիկ տպելը ոչ միայն գրական, այլ նաև մյուս թերթերի ու պարբերականների երազանքն է եղել: Հեղինակի ստեղծագործության վեցհատորյակը, Զարենցի դստեր՝ Անահիտ Զարենցի կազմած ու հրատարակած «Անտիպ և չհավաքված երկերը», Դավիթ Գասպարյանի կազմած «Նորահայտ էջերը» թեև ուրվագծում են գրողի ժառանգության հիմնական շրջանակը, սակայն նոր, լուրջ ու հնարավորինս անթերի ակադեմիական հրատարակության պահանջը դեռ արդիական է, որի ընթացքում կարող ուժերը ոչ թե կժխտեին, այլ կփոխլրացնեին միմյանց՝ ի շահ ընդհանուր գործի, այն է՝ մեծ գրողի գործին արժանի լիակատար հատորների պատրաստմանը: Առայժմ այս զի-

տակցությունը չկա, և որոնումները նշանավորվում են ամեատական ջանքերի գնով սահմանափակվող հորելյանական հրատարակություններով։ Վերջինը «Վեցին խոսքն» է, որը պատրաստել է գրողի դուստրը՝ Անհայտ Չարենցը¹։

«Վերջին խոսք» խորագիրը ամենահամարձակն ու ամենահավակնութն է Եղիշե Չարենցի ստեղծագործության վերջին՝ «Գիրք ճանապարհին» հաջորդող շրջանի գործերի հրատարակություններում։ Սակայն գրքի հենց առաջին էջի ծանուցումները փոքր ինչ մեղմում են հավակնությունները. գրողի ծննդյան 110 և մահվան 70 ամյակներին նվիրված «գիրք-մատյանը» լույս է տեսել «Մեղանի գիրք» մատենաշարով և չարենցյան վերջին շրջանի «ստեղծագործությունների ընտրանին է», այսինքն՝ գիտական հրատարակություն չէ։ Այսուամենայնիվ, «Գրքում առաջին անգամ տպագրվում են բազմաթիվ անտիպ բանաստեղծություններ և օրագրային գրառումներ»։ Հասորյակն ուղեկցվում է նաև նախընթաց հրատարակություններում կատարված վրիպակների խմբագրմամբ, որոշ ճեղագրերի լուսապատճենների հրապարակմամբ, յուրահատուկ մթնոլորտ են ստեղծում նաև տարրեր տարիների չարենցյան լուսանկարներն ու նշանավոր մարդկանց կարծիքները գրողի ու նրա ստեղծագործության մասին։ «Գրական բարքեր» խորագրով հրապարակումներն ել ապահովում են ժամանակի հոսք բարքերի խճանկարը։ Որպես համեմատության եզր ընտրենք գրողի ստեղծագործության քննվող շրջանի գործերն ընդգրկող գիտական համարվող հրատարակությունները և տեսնենք ինչ է ստացվում /քննվող գորքից կատարվող մեջքերումների դեպքում կնշենք միայն էջը, մյուս գրքերի դեպքում՝ էջանշումին կնախորդեն արդեն ընդունված հապավումները՝ «Անտիպ և չիավաքված երկերը»²։ ԱՉԵ, «Նորահայտ Էջերը»³, ՆԵ/։

¹ Եղիշե Չարենց, Վերջին խոսք, Երևան, 2007թ.

² Եղիշե Չարենց, Անտիպ և չիավաքված երկեր, Երևան, 1983 թ.։

³ Եղիշե Չարենց, Նորահայտ էջեր, Երևան, 1996թ.։

Անտիպ բանաստեղծություններ և օրագրային գրառումներ

Ժողովածում ընդգրկում է 16 բանաստեղծություն և երեք օրագրային գրառում, որոնք, ըստ տողատակի ծանոթագրությունների, տպագրվում կամ լույս են տեսնում առաջին անգամ:

Անտիպ բանաստեղծություններն են՝

1. «Խոհ» /Էջ 6-7/,
2. «Պռետի վիշտը» /44-46/,
3. «Սև կախաղան» /60/,
4. Ակսել Բակունցին նվիրված բանաստեղծության տարրերակը՝ «Ա. Բ.-ին» /104/,
5. «Անվերնազիր ներքող» /114/,
6. «Ստալին» /120/,
7. «Քարձրադիր կոշիկներ հազին...» /121-122/,
8. «Աղասին մեր վերջին հերոսն է, որին սպանեց վրացի Բերիան» բնարանով բանաստեղծությունը /188/,
9. «Դրբն կրե լեզու շիրիմների վրա...» /190/,
10. «26 Օգոստոսի 1936 թ.» /191/,
11. «Եվ կրեցիմք նեղություն...»՝ հատված Գրիգոր Ծերենց Խղարեցուն նվիրված պոեմից /200/. Խոսքը «Երբ բարձրանում է նա վեր...» առեմի մասին է, ԱՉԵ, էջ 358-372/,
12. «... Մենք Համլետ չենք եղել, չենք լինի, Բաժան...» /207/,
13. «Ողբ բանաստեղծի» /236/,
14. «Ամատունուն» /238-239/,
15. «Ի՞նչ ես ցանկացել դու, օ՛, ի՞նչ ես ուզել...» բանաստեղծության վերջին քառատողը /275/,
16. «Զառանցանք» /298-299/:

Օրագրային գրառումներն են՝

1. «Վերջին ողջ շրջադարձի քաղաքական իսկական իմաստն ու նշանակությունը ինձ համար պարզվեց չափազանց դանդաղ, օրը-օրին» /117/,
2. «Ողբ» /235/,
3. «Հասարակական կյանքի վերջին տասնամյա կացության...» /122/:

Բանաստեղծություններից մի քանիսի վերնագրերն արդեն ծանոթ են ընթերցողին, սակայն կարդալով համապատասխան վերնագրերի տակ ամփոփված գործերը՝ ճատեսնում է, որ սրանք պարզապես համընկնումներ են: Ավելի ուշիմ ընթերցողը, սակայն, որին «Սեղանի գիրք» մատենաշարը չի ստիպել պարզապես ընթերցել սեղանին հայտնված գիրքը կամ իր ճեղքի տակ ունի Չարենցի գործերի նախընթաց ժողովածուները, կարող է ստուգել: «Պոետի վիշտը» բանաստեղծությունը համեմատելով ԱՉԵ-ում տպագրված նույն վերնագիրն ունեցող բանաստեղծության հետ /ԱՉԵ, էջ 99/,՝ նա կտեսնի, որ նույնանում վերնագրով բանաստեղծության սկիզբը ԱՉԵ-ում համընկնում է «Վերջին խոսքում» տպագրվածի վերջին էջի սկզբնամասի հետ /էջ 46/՝ «Սեր իին հանճարեղ...-ից մինչև ...Փառքից ոսկեծայր», 16 տող/, մի պահ զուգահեռումն ընդհատվում է, սակայն բացելով ԱՉԵ-ի ծանոթագրությունները /ԱՉԵ, էջ 533/՝ կկարդա շարունակությունը.

Կանգնել եմ ճեր դիմ
Ե՛վ մենակ և՝ վեհ
Ոգով իմ՝ Վահան,
Կամքով պողպատե,-
Կանգնել եմ վերջին
Պոետ դասական
Հայացքով իմ ջինջ
Ոգով կուսական. /46/

ԱՉԵ-ում՝ **ճեր դեմ-ի փոխարեն՝ ահա, Վահան-ի փոխարեն՝ վահան:**

Հաջորդ երկու տողերը նույնությամբ կրկնվում են ԱՉԵ-ում /էջ 101/, իսկ վերջին քառատողը նորից գտնում ենք ծանոթագրություններում.

Իմ վիշտը միայն
Ես իմքս գիտեմ-
Կանգնած անազան
Այս նախիրի դեմ... /46/

ԱՉԵ-ում անագան-ի փոխարեն՝ նայիրյան, նախկիր-ի փոխարեն՝ լճակի:

Անշուշտ, հեռու եմ այն մտքից, թե Անահիտ Չարենցը չգիտի այս մասին, ճիշտ հակառակը, համոզված եմ, որ զիտի, քանի որ երկու գրքերն էլ հենց ինքն է կազմել ու ծանոթագրել: Մնում է զարմանալ, թե ինչու տողատակի ծանոթագրություններում չի նշվում, որ բանաստեղծության միայն առաջին երկու էջն է անտիպ, իսկ վերջինը վերականգնված է ըստ արդեն հայտնի ու հրապարակված տարրերակների կամ որ գտնված նոր ձեռագրի վերջին հատվածը նույնությամբ կրկնում է ԱՉԵ-ում տպված բանաստեղծության ու նրա տարրերակների այսինչ-այսինչ մասերը: Չի կարելի ասել, թե կազմողը լիովին անտեսել է ԱՉԵ-ի ծանոթագրությունները, որովհետև, ասենք, «Resignation» բանաստեղծության ծանոթագրության մեջ նշվում է, որ հրատարակվում է այս բանաստեղծության տարրերակը /26-28/, այսինքն՝ անտիպ գործ չէ /իսկ այդ տարրերակը հենց ԱՉԵ-ի ծանոթագրություններից է /էջ 521/:

Նման մի քանի թերացումներ էլի կամ: Շարունակենք զուգահեռությունը՝ օգնելով գործի ընթերցողին խուսափելու բյուրըմբռնումներից: «Վերջին խոսքի» 104-րդ էջում հայտնվել է «Ա. Բ.-ին» բանաստեղծության տարրերակը՝ հետևյալ ծանոթագրությամբ. «Ակսել Բակունցին նվիրված բանաստեղծության տարրերակը տպագրվում է առաջին անգամ» /104/: Ընթերցողը նորից բացում է ԱՉԵ-ի ծանոթագրությունների բաժինը և կարդալով այս անտիպ տարրերակը՝ ԱՉԵ, էջ 570/ տեսնում, որ նոր գործում կազմողը պարզապես ընտրություն է կատարել բառային տարրերակների մեջ, որ առկա են ծանոթագրություններում. ահա տողերի զուգահեռությունը.

Այս ամենի համար,- և քո նորական /ՎԽ/ - Այս ամենի համար և քո [դժնի-դժնի] նորական /ԱՉԵ/,-

Ես ներում եմ ահա խեղճությունը քո իրքն սովորական /ՎԽ/ - Ես ներում եմ ահա [քո հանցանքը] [Խեղճությունը քոլոր],-

[բոլոր քո] իբրև սովորական /ԱՉԵ/,

Ներում եմ վերքն անգամ անծայրածիր /ՎԽ/ - Ներում եմ
[վիշտն] վերքն անգամ անծայրածիր /ԱՉԵ/,

Որ քո ձեռքով դժնի դու իմ սրտում քացիր.../ՎԽ/ - Որ քո
[վարքով] ձեռքով դժնի դու իմ սրտում քացիր... /ԱՉԵ/:

**«Քարձրավիզ կոշիկներ հազիմ...» /121-122/ տողով
սկսվող բանաստեղծությանը շատ մոտ մի տարրերակ ըմբ-
թերցողը կարդացել էր արդեն «Նորահայտ էջերում» / ՆԷ,
Էջ 131-132/: Ծշմարտության առջև չմեղանչելու համար ա-
սենք, որ բանաստեղծության տողատակում նշված է.
«Պահպանվել են այս բանաստեղծության բազմաթիվ սևա-
գիր տարրերակներ...» /ընդգծումը՝ Վ. Դ./, բայց երևի ավելի
ճիշտ կլիներ նշել, որ տպվել է նաև մաքրագիր տարրերակը,
որը, ի դեպ, շատ չի տարրերված այս նոր տարրերակից.
Եիմնականում տողերի տեղափոխություններ են կատար-
ված և ավելացվել է մի քանի տող: Համեմատենք.**

«Վերջին խոսք»-ում

Քարձրավիզ կոշիկներ հազիմ,
Գլուխը ամպերին հասած-
Որպես ամնեի մի արձան,
Կանգնել է ամնեի, անքով
Ցածրաճակատ, չնշու մի կիմտո...

Մի ոտքը Կրեմլի վրա ծանը,
Սյուսը Ուրալի վրա,
Կոլոսի նման խորախորհուրդ
Շառացել է կերպարանքը նրա:-

Մի ոտքը դրած Վրաստան
Սյուսը-Վաղիվնոստոկ,-
Գլուխը ամպերին հասած
Բռնել է ահոնելի, անքով
Մի ցածրաճակատ...կիմտո
Զարհուրելի երևոյթ՝ չեղյալ
Աշխարհում օրերից առաջին:
.....

«Նորահայտ էջեր»-ում

Քարձրավիզ կոշիկներ հազիմ՝
Սի ոտքը Կրեմլի վրա ծանը,
Սյուսը Ուրալի վրա,
Գլուխը ամպերին հասած,-
Որպես ամնեի մի արձան,
Կոլոսի նման քարախորհուրդ
Շառացել է կերպարանքը նրա..-

Զարհուրելի երևոյթ չեղյալ
Աշխարհում օրից առաջին:

.....

Աշխարհի վեցերորդ մասում,-
Չինական պարսպից մինչև
Սևծովյան ավելքը ջերմ-
Սառուցյալ օվկիանոսից մինչ Սասիս-
Այս անծիր եզերքի վրա
Փռվել է սովերը նրա
Եվ երկիրը կրում է հազիվ...

Աշխարհի վեցերորդ մասում,
Չինական պարհսալից մինչև
Սևծովյան ափերը ջերմ

Սառուցյալ Օվկիանից մինչ Մասիս-
Այս անձիք եզերքի վրա
Փռվել է ստվերը նրա,
Եվ Երկիրը կրում է հազիվ...

Տարմանկան ածող կավա՛տ, ալազա՞կ.-
Ո՛չ-անձայրածիք
Սի ամբողջ երկիր
Սի արջի նման պարացնող է սա...

Ո՛չ.- ուսւ ցարերի՝ Իոնան Անելի
Եվ պորփյուրակիր Նիկոլայների-
Վերջին իմբնակալ
Ժառանգորդն է սա....

Հսկա առաջնո՞րդ - Մարքսին հավասար,
Մտածող, փրկի՞չ աշխարհահմա...

Ո՛չ, աշխարհացոնց կատակիզմների
Հանճարեղագոյն խոհարար է սա...
Ո՛չ, ամծայրածիք մի ամրող երկիր
Սի արջի նման պարացնող է սա...

Ո՛չ- ուսւ ցարերի՝ Իոնան Անելի
Եվ պորփյուրակիր Նիկոլայների-
Վերջին իմբնակալ
Ժառանգորդն է սա....

Իմբնակալության աշխարհասասան ժառանգորդն է սա...

Եթե այս տարրերությունները իիմք են տալիս «առանձին տարրերակ» ծանուցումով տպել այս բանաստեղծությունը, ապա հանգիստ կարելի է նոր տարրերակ համարել նաև հաջորդ՝ «Նզովք» բանաստեղծությունը /123/, որի նախնական տարրերակը կարող ենք կարդալ «Նորահայտ Էջերում» /ՆԷ, էջ 125/:

Ըստ ծանոթագրությունների՝ առաջին անգամ է տպագրվում նաև «Ի՞նչ ես ցանկացել դու, օ՛, ի՞նչ ես ուզել...» բանաստեղծությունը /275/: Արդեն վարժված ընթերցողը բացում է ԱՉԵ-ի ծանոթագրությունների բաժինը և տեսնում, որ այս բառատողը «Մայրամուտի երգ» բանաստեղծության տարրերակների մեջ արդեն իսկ տպագրված է /ԱՉԵ, էջ 605/.

Հսկա առաջնո՞րդ Մարքսին հավասար,
Մտածո՞ղ, փրկի՞չ աշխարհահմա...

Ո՛չ, աշխարհացոնց կատակիզմների
Հանճարեղագոյն խոհարար է սա...
Ո՛չ, ամծայրածիք մի ամրող երկիր
Սի արջի նման պարացնող է սա...

Ո՛չ, ուսւ ցարերի՝ Իոնան Անելի,
Ե՞վ Պետրոս Մեծի, և՝
պորփյուրակիր
Նիկոլայների-Վերջին իմբնակալ
Ժառանգորդն է սա...
Իմբնակալության աշխարհա-
սասան ժառանգորդն է սա...

«Վերջին խոսք»-ում

Թույն ու հանցանք է և երգ, և քնար,
Երգը հանցանք է, խինդի - անհնար-
Սիրտ, միայն քեզ է երբ տրված քնար...
Երբ միայն քեզ է պարզևել երկինքը -
քնար...

«Ամսիայ և չհավաքված երկեր»-ում

Թույն ու հանցանք է և երգ, և քնար-
Երգը-հանցանք է, խինդի-անհնար-
Երբ միայն քեզ է արված սուրբ քնար
Երբ միայն քեզ է պարզևել երկինքը-
քնար...

*Այս նկատումներն, աճշուշտ, չեն ճսեմացնում կատար-
ված աշխատանքը, գրքում հայտնված միշտը արժեքավոր
քերթվածներ, իսկապես, ընթերցողի համար նոր են: Կար-
ծում եմ վրիհպումը հենց ճախճական հղացման մեջ է. ճիշտ
չէ անտիպ քնազրեր, առավել ևս՝ տարրերակներ, երապա-
րակել ոչ զիտական երատարակության շրջանակներում,
ուր ծանոթագրությունները սահմանափակվում են տողա-
տակով տրվող ընդհանրական տեղեկություններով.:*

Խմբագրումներ, ուղղումներ, փոփոխություններ:

*Խմբագրումների և ուղղումների դեպքում կազմողը սո-
վորաբար ընդգծում է բառը և նշում երկու տարրերակով. Եթե
ուղղումը կատարված է ԱՉԵ-ի կամ դրա օրինակով
կազմված ընտրանիների գործերում, նշվում է. «Նախորդ
երատարակություններում՝ սխալմամբ...», իսկ «Նորահայտ
էջերի» դեպքում՝ նշվում է նաև գորի վերնագիրը: Ուղ-
ղումները հիմնականում վերաբերում են քնազրային բառե-
րի ճախճին թյուրներեցումներին, իսկ ինչ վերաբերում է
բանաստեղծի կետադրությանը, ապա փոփոխությունները
կատարվել են առանց դրանց մասին ծանոթագրելու, օրի-
նակ՝ «Թմբուկներ են խփում, հարսանիք է...» /93/ բանա-
ստեղծության վերատպման ժամանակ /առաջին անգամ
տպվել է ՆԷ-ում, էջ 115/ տպագրված առաջին տարրերակի
համեմատ կետադրական 5 փոփոխություն է կատարված՝
առանց ծանուցումների: Նման օրինակներ էլի կամ: Մի տեղ
էլ՝ «Երրեք չի եղել այսքան միայնակ...» /19/ բանաստեղ-
ծության 4-րդ տողում կարծես բառը երկու կողմից ստորա-
կետով է անցատված, այնինչ հենց նույն էջի վրա տպված
ձեռագրի լուսապատճենում այդ ստորակետերը չկան /նույն*

**բանաստեղծությունն առանց այդ նշանների է տպված նաև
ՆԷ-ում, էջ 85/:**

Ուշարժան փոփոխություն է կատարվել Չարենցի մի ստեղծագործության հետ ևս: Խոսքը պոեմի մասին է, որ մինչև այս նոր հատորյակը ՆԷ-ից ընթերցողներին հայտնի էր «Օրպես գորշ, դեղիճ տերևներ...» վերնագրով /ՆԷ, 55/ /որպես պայմանական վերնագիր էր ընտրվել պոեմի առաջին տողը/, մինչ այդ կար Ռ. Ղազարյանի տարրերակը՝ «N.S.-ի հիշատակին»: Այս պոեմի վերնագրային տարրերակների հետ կապված տարարնույթ լուծումներին անդրադարձել է Սեյրան Գրիգորյանը¹: Նոր հրատարակության մեջ առաջարկված տարրերակը՝ «Երկու Սոնտ» /146/, պոեմի վերնագրի ծշտման ճանապարհին առաջարկվող նոր լուծում է, որն, ըստ կազմողի, հեղինակային ճեռագրի հիման վրա է ընտրվել: Ի դեպ, պոեմի նոր հրատարակության մեջ կատարված բարային բյուրընթեցումների ուղղումները հիմնականում համընկնում են U. Գրիգորյանի հիշատակած գրքում կատարված ուղղումների հետ /նկատելի է, որ կազմողը այս և մյուս ուղղումների ժամանակ ճեռքի տակ ունեցել է U. Գրիգորյանի հիշատակված և «Պակազերծում»² գրքերը, հասկապես, երբ խոսքը ՆԷ-ի բյուրընթեցումներին է վերաբերել/: Պոեմը նոր հրատարակության մեջ կրօնատումների է ենթարկվել, բայց կազմողները խոստանում են, որ առաջիկայում ընթերցողի առջև կդրվի նաև ամբողջական տերստը՝ ճեռագրերի համադրմամբ և վերնագրային տարրերակների հետ կապված տարածայնությունների հետազոտությամբ:

Փոփոխություններ ու հավելումներ են կատարվել մի քանի արդեն հայտնի ու բազմիցս մեջթերված ստեղծագործությունների բնագրերում: «Նավզիկն» պոեմին ևս մի քառատող է հավելվել՝ հետևյալ ծանոթագրությամբ. «Այս քա-

¹ Տե՛ս Սեյրան Գրիգորյան, Բանասիրություն և բանավեճ, Երևան, 2002թ., էջ 37:

² Սեյրան Գրիգորյան, Պակազերծում, Երևան, 1997 թ.:

ռատողը լրացրել ենք բնօրինակից» /79/: «Ըուրայիների» առաջին բանաստեղծության երկրորդ տողը փոփոխությունների է ենթարկվել ՆԷ-ի համեմատ, ավելի ճշշտ՝ նոր տարրերակով է հրապարակվել. «Եկավ դերձակն ապագայի ձեռքին ահեղ մի արդուկ...» /61/- Ծնշեց ոզին մեր մարդկային, որպես անսիրտ մի արդուկ...» /ՆԷ, էջ 139/: Անհասկանալին Թամանյանի հիշատակին նվիրված «Մահվան տեսիլ» /144/ բանաստեղծության մեջ կատարված փոփոխությունն է: Կազմողը ծանոթագրում է. «Բանաստեղծի ձեռագրի հիման վրա փոխված է առաջին երկու տողը» /նայիր նույն տեղոր/: Բայց չէ որ ձեռագրի այդ տարրերակը հայտնի է եղել ավելի վաղ, և այն հրապարակվել է միայն ԱՉԵ-ի ծանոթագրություններում /ԱՉԵ, էջ 499/, իսկ բուն գրքում այլ, արդեն ընդունված տարրերակն է դրվել: Մնում է հարցնել՝ ի՞նչ կարիք կար այս նոր՝ ոչ զիտական հրատարակության մեջ փոխել այդ տողերը... Բերենք այդ երկու տարրերակները.

Որքա՞ն նման է եղել պահն այդ՝ մարող կանքեղի

...Նրա կոպերը երեկ երը քարացել են խաղաղ- /ԱՉԵ, էջ 25/

Որքա՞ն շոա՞յլ է եղել այդ խրախնամն անտեղի

Նրա աչքերը երեկ երը մշուշվել են խաղաղ- /144/:

Համարյա նույնը կարելի է կարդալ ԱՉԵ-ի ծանոթագրությունների 498-րդ էջում:

* * *

Համաձայն եմ, Եղիշե Զարենցի նոր բնագրերի հրատարակությունը թերևս տեքստի արվեստի քննությամբ պիտի արձագանքվեր: Սակայն արվեստի պատշաճ մատուցումն էլ արհեստավարժ մոտեցում է պահանջում: Սինչեալ հեղինակային բնագրի գոնե անթերին մոտ հրապարակումը, լիարժեք չի կարող լինել նաև տեքստի ընթերցու-

մը: Վստահ եմ, որ այդպես են մտածում նաև Չարենցի գեղարվեստական ժառանգության դեռ անհայտ էջերը սերունդների համար փրկել փորձողները։ Մնում է, որ ցանկությունը վերածվի սկզբունքի ու ջանքի։

ՏՈՒՆ՝ ՈՐՏԵՂԻՑ ՍԿՍՎՈՒՄ Է ՀԱՎԵՐԺԻ ԹԱՍՓԱՆ

Երևան: 1919 թվական: Խոդր աշում: Հայաստանի առաջին Հանրապետության լուսավորության նախարար Նիկոլ Աղբայանի ընդունարանում սպասում էր անշուք արտաքինով, վտիս ու փոքրամարմին կարսեցի մի պատաճի, որը կարդարով «Յառաջ» թերթի հաղորդագրությունը իր մասին, շտապել էր Երևան, ներկայանալու նախարարին, երբեք չմտածելով, որ մեկընդմիշտ հաստատվելու է նաիրյան փոքրիկ այս քաղաքում՝ գտնելով այնտեղ սերն իր, տունն իր ու իր հանգրվանը:

Այդ օրից ժաղովրդի հիշողության մեջ մնաց Երևանի բուլվարի նստարանի վրա նստած արևածաղիկ ուտելիս, կամ զինարկը ձեռքին Աստաֆյան (այժմ Արովյան) փողոցով գրունելիս, նէպյան մի ճաշարանում փայտե նստարանին պարզված, կեպին զինի տակ քնած, Զանգվի ձորում՝ գետափին պառկած «ջուր լսելիս», կեսզիշերին սրնզահար Ասոյի գրպանը դրամ դնելիս, Վարպետ Մարգարի, Կարաբալայի, իր գրչակից ու դարդիման ընկերների հետ գումանալի նվազով քեֆ անելիս, նոր գրած բանաստեղծությունն արտասանելիս, սիրած «գոզալի» թաղերում ման զալիս, վիճելիս և նույնիսկ հայինոյելիս՝ Հայաստան աշխարհի Մեծ բանաստեղծ Եղիշե Զարենցը:

Երևանում ո՞վ չէր ճանաչում Զարենցին: Երևանում ո՞վ չէր բարեւում Զարենցին: Ասում են՝ նա ամենաժողովրդականն էր:

Սիրում էր շրջել խուլ ու նեղլիկ փողոցներում, Զանգարեսի բարձրից նայել վար, հանգստանալ գեղատեսիլ Նորքում...

Ապրած տարիներին բարեկեցությունն ու անդորրը երբեք Զարենցի կյանքի ուղեկիցները չեղան: 1919 թվականից մինչև 1928 թվականը Երևանյան տարրեր տներում սենյակ, երրենն էլ ուղղակի անկյուն գրադեցրեց: 1928-ից մինչև 1935 թվականները ապրեց «Խնառութիւն» (այժմ՝ «Երևան») հյուրանոցի 2-րդ հարկի լուսա համարներից մեկում:

Ու մի օր, այս անսուն վիճակից ասես հոգնած, տեսակ և իրեն բնորոշ անմիջականությամբ ընտրեց Սպանդարյան-Սունդուկյան (այժմ Արամ Մանուկյանի և Մաշտոցի) փողոցների անկյունում կառուցվող «Կարմիր տունը».

- Մինչև ե՞րբ պիտի հյուրանոցներում քաշ գամ... Մի բնակարան պիտի խնդրեմ: Հենց էս կարմիր տանը:

Խնդրեց և Սունդուկյան փողոցի թիվ 60 շենքի (այժմ Մաշտոցի 17) առաջին մուտքի, երրորդ հարկի երեք սենյականոց, թիվ 12 բնակարանը Աղասի Խանջյանի կարգադրությամբ տրվեց Զարենցին: Անսահման էր բանաստեղծի ուրախությունը, նա տուն ուներ Մասիսին նայող պատշաճմբներով, լուսավոր, ընդարձակ սենյակներով, որոնցից մեկը՝ ամենասիրելին, աշխատասենյակն էր:

Ի՞նչ ոգևորությամբ էր վերանորոգում բնակարանը՝ փոխում փայտե հատակը մանրահատակով, ներկում պատերը իր ընտրած գույներով, կահավորում նուրբ և քարծր ճաշակով: Ծառապում էր, շատ էր շտապում: Երկի կախսազգում էր, որ իրեն հատկացված այս առաջին, նաև միակ տունը, որի հետ կապվեց այդպես ջերմ, լինելու է դեպի հավերժություն տանող իր «անհանգրվան» երթի վերջին կացարանը, իսկ տարիներ հետո դառնալու է ուխտատեղի:


Ընդամենը երկու տարի՝ 1935-1937թթ. ապրեց այդ տանը, որը մնաց մտերիմների, բարեկամների հիշողության մեջ՝ որպես իր «ահեղ տիրոջ» և «միշտ քախծոտ աչքերով տիրուհու» հյուրընկալ օջախ, ուր հաճախ վայելում էին չորս մրգերի ու արևելյան քաղցրավենիքների դաստախունը, սև

սուրճն ու կռնյակը, ծիթապառողը և բաստուրման: Չարենց-յան հոլշապատումներում առանձնակի տեղ են գրավում այն հոլշերը, որոնք պատմում են բանաստեղծի տան և աշխատասենյակի մասին: Պատմում են, թե Չարենցի խնդրանքով Ալեքսանդր Բաշրեուկ-Սելիքյանը սենյակի կահավորման էսքիզներ է արել (դրանք դժբախտաբար չեն պահպանվել): Պահպանվել են լուսանկարներ, որոնցում Չարենցի աշխատասենյակն է՝ լուսանկարված տարրեր անկյուններից և որոնց համադրության շնորհիվ ստացվում է աշխատասենյակի ամբողջական պատկերը: Աշխատասենյակի նկարագիրը պատկերված է նաև Չարենցի «Հերոսի հարսանիքը» դրամայում (1937 թ.):

«Տեսարանը՝ սենյակ, գրասեղան, սեղանի լամպ՝ կարմիր թավջա լուսամփոփով: Վառված է միայն այդ լամպը և նրա լույսով կիսադրտ կերպով լուսավորված սենյակում, բացի սեղանից, ուրվագծվում են գրադարակներ, Զիոնտոյի հայտնի ֆրեսկայի մի մասի արտատպությունը, որը ներկայացնում է Դանտեին և Պետրարկային՝ դրախտում: Դիմացի պատին, այսինքն գրասեղանի ետևը՝ չինական պանո, դեղին թավշի վրա նկարած չինական մի հեքիաթ: Բացի պանոյից սենյակում պարզ երևում է գրասեղանի ծախ անկյունի մոտ, բարձր պատվանդանի վրա դրված հսկայական բրոնզյա Բուդդայի գլուխը՝ դեղին, պսպղուն այտերով, ծուռ նշան աշքերով և հեղճական շրթունքներով: - Լուս է, լսվում է միայն ժամացույցի շխշնկոցը»:

Այսօր էլ նույնն է այդ սենյակը՝ գրասեղանի, թախտի, գաղտնապահարանի, Արգար աղայից ժառանգած գորգերի, պատից կախված չինական պանոյից, բրոնզյա Բուդդայի արձանիկերի, Բաժրեուկ-Սելիքյանի, Մարտիրոս Մարյանի աշխատանքների, Ֆրանց Անդելիկայի, Զիոնտոյի գործերի վերատպությունների և վերջապես ընտիր գրադարանի բարձրաճաշակ համադրումով: Եվ ամեն անգամ աշխատասենյակ մտնելիս Չարենցն է տեսլանում՝ մեկ անկյունում թիկնած, մեկ թախտին պառկած, թախծոտ ու

հուսահատ, շրջապատված իր վերջին օրերի այդ անխուս վկաներով: Վկաներ, որոնք այսօր դարձել են բանգարանային ցուցանմուշներ՝ բանաստեղծից մեզ հասած մասունքներ, ցուցադրվելով տուն-բանգարան դարձած «Կարմիր տաճր»:



Ե. Գյուղեցի տուն-բանգարան

Ե. Չարենցի տուն-թանգարանը հիմնադրվել է 1964-ին Խորհրդային Հայաստանի կառավարության որոշումով: Ծուրջ տաս տարի տևել են հավաքչական աշխատանքները և միայն 1975 թ. հունվարին թանգարանը բացել է իր դռները ժողովրդի առջև: Թանգարանի ստեղծման և կայացման գործում իրենց ավանդն են դրել Արփենիկ, Անահիտ Չարենցները, ինչպես նաև հիմնադիր տնօրեն Նվարդ Բաղդասարյանը:

Ստեղծման օրից մինչև 1980-ականների սկիզբը թանգարանն ընդգրկել է մեկ հարկարաժին՝ հոլշատունը: Վերականգնված էր միայն Չարենցի աշխատասենյակը, իսկ մյուս երկու սենյակներում և միջանցքում հիմնական ցուցադրությունն էր:

Հետագայում Կարեն Դեմիրճյանի անմիջական նախաձեռնությամբ թանգարանին հատկացվեց ևս երեք հարկարաժին: Ե. Չարենցի ծննդյան 90-ամյա հորելյանի առիթով այդ տարածքը վերակառուցվեց, վերանորոգվեց և միացվեց մեմորիալ բնակարանին: Լուծվեց նաև թանգարանի առանձին շրամուտքի հարցը:

Այսօր թանգարանը ընդգրկում է 576ք.մ տարածք՝ 4 հարկ, որից երեքում հիմնական ցուցադրությունն է, իսկ 4-րդ հարկում թանաստեղծի բնակարանը՝ վերականգնված այնպես, ինչպես եղել է նրա կենդանության օրոք:

Թանգարանում պահվում, պահպանվում են թանաստեղծից մեզ հասած մասունքներ՝ ձեռագրեր, անձնական իրեր, արխիվային նյութեր՝ այն ամենը ինչ կապված է Չարենց մարդու, քաղաքացու, գրողի հետ: Դրանց ընդիանուր թիվը հասնում է 18000-ի: Հիմնական ֆոնդն ընդգրկում է 7772 միավոր թանգարանային արժեք, որն ամեն տարի համալրվում է նոր ձեռքբերումներով:

Թանգարանի հիմնական առաքելությունը և խնդիրը 20-րդ դարի հանճարեղ բանաստեղծ Ե. Չարենցի կյանքի, հասարակական-քաղաքական, ստեղծագործական անցածությունը, գրական ժառանգության ուսումնասիրությունն է, ինչ-

պես նաև այդ ժառանգությունը ներկայացնող քանզարանային առարկաների և հավաքածուների պահում-պահպանումը, հայտնաբերումը, հավաքումը, ուսումնասիրումը և հանրահոչակումը: Մեծ է բանաստեղծի գերք ժողովրդի՝ հատկապես մատաղ սերնդի հոգևոր, բարոյական, հայրենասիրական դաստիարակության գործում:

Թանգարանում իրականացված է ժամանակակից, իհանալի մի ցուցադրություն, որն հնարավորություն է տալիս բացելու բանաստեղծի կյանքի հետ կապված ամենափոքր մանրամասներ:



«Կարմիր տունը» շարունակում է ապրել աշխույժ կյանքով, ինչպես բանաստեղծի կենդանության օրոք: Այն նույն հյուրընկալ օջախն է, որտեղ շարունակվում են չարենցյան դաստախուները, ամանորին զարդարվում է տոնածառը, ինչպես ժամանակին զարդարել է տաճտերը իր սիրելի դստրիկների՝ Բոժիկի և Ադրիկի համար: Նորից այցի են գալիս նրան գրողներ, նկարիչներ, գրականագետներ, ուսու-

ցիշմեր, աշակերտներ, ուսանողներ, տարրեր մասնագիտությունների և զրադարձի տեր մարդիկ: Գալիս են աշխարհի տարրեր ծագերից հաղորդակցվելու Զարենց բանաստեղծի հոգևոր աշխարհի հետ: Նրա տաճ կամարների տակ ամեն տարի սեպտեմբերին երդման խոսք են ասում Ե.Զարենցի անունը կրող Երևանի թիվ 67 դպրոցի առաջին դասարանցիները և իրենց մկրտությունը ստանում երիտասարդ պահապահները:

Ամեն տարի մարտի 13-ին մեծ շուրջով նշվում է բանաստեղծի ծննդյան տարեդարձը:

Այս տարի լրանում է 110 ամյակը: Տարին չարենցյան է միջոցառումներով լի տարի: Կրկին օդք լցված է Զարենցով: Հրավիրում ենք բոլորին՝ շնչելու այդ օդք Զարենցի «Տանը», «Ժանդիպելու» 110 տարին բոլորած, սակայն մեզնից յուրանշյուրի պատկերացման մեջ ընդմիշտ 40 տարեկան՝ հավերժ կենդանի, հանճարեղ բանաստեղծին:

**ԼԻԼԻԹ ՀԱԿՈԲՅԱՆ
Ե.Զարենցի տուն-թանգարանի
տնօրին**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Վազգեն Գարրիելյան

«...Հարյուր տաս տարի, հազար տաս տարի» (ներածականի փոխարեն) 3

Վազգեն Մաֆարյան

«Իմաստանքը բարքի» գոյաբանական նշանակությունը ըստ Խորենացու և Չարենցի 10

Անահիտ Չարենց

Այնքան ողբերգական և այնքան լուսավոր (Չարենցը կյանքի վերջին շրջանում) 30

Ազատ Եղիազարյան

Չարենց և Պիրանենլու 73

Ժննյա Զալանթարյան

Չարենցյան ինչ-ինչ ազդակներ արդի հայ պոեզիայում 84

Արծրուն Ավագյան

Հայոց պատմության չարենցյան և շահնության գնահատում-ները 100

Սամվել Մուրադյան

«Դանքեական» երկու ըմբռնում. Չարենց-Շիրազ 113

Սեյրան Գրիգորյան

Եղիշե Չարենց և Պարույր Սևակ 126

Նորայր Ղազարյան

Չարենցի «Իմ լիրան աղոքը» պոեմը 145

Սաքենիկ Ավետիսյան

Չարենցը հայոց պատմության քառուղիներում 157

Սաքենիկ Մանուկյան

Եղիշե Չարենց և Վազգեն Շուշանյան 169

Վահրամ Դամիելյան

Չարենցի նոր ընտրանին 180

Լիլիթ Հակոբյան

Տուն, որտեղից սկսվում է հավերժի ճամփան 191

ՉԱՐԵՆՑՅԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

8

Տեխ. խմբագիր՝ **Վ. Զ. Բդյան**
Համ. ձևավորում՝ **Ա. Խ. Աղուղումցյան**

Ստորագրված է տպագրությամ՝ 06.12.2007 թ.:
Զակսը՝ 84/108 1/32; Թուղթը՝ օֆսեք:
Հրատ. 9.2 մամուլ տպագր 6.25 մամուլ = 10.5 պայմ. մամուլի:
Տպաքանակ՝ 200; Պատվեր՝ 111:

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1

ԵՊՀ տպարան, Երևան, Արովյան 52

2-111

3-111

4-111

5-111

6-111

7-111

8-111

9-111

10-111

11-111

12-111

13-111

14-111

15-111